

**ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ**

Բովանդակային ցանկ

Անչափահասների գործերով արդարադատության իրականացման ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններ (Պեկինյան կանոններ). մեկնաբանություններով (United Nations Standard Minimum Rules for the Administration of Juvenile Justice ("The Beijing Rules", with commentaries)	25
Միավորված ազգերի կազմակերպության ուղենիշները անչափահասների հանցավորությունը կանխելու վերաբերյալ (Ռիադյան ուղենիշներ) (United Nations Guidelines for the Prevention of Juvenile Delinquency (The Riyadh Guidelines)	53
Քրեական գործերով վերականգնողական արդարադատության ծրագրերի կիրառման հիմնական սկզբունքներ (Basic principles on the use of restorative justice programmes in criminal matters)	66
Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության վերաբերյալ ՄԱԿ-ի կանոններ (Հավանայի կանոններ) (United Nations Rules for the Protection of Juveniles Deprived of their Liberty (The Havana Rules)	71
Քրեական արդարադատության համակարգում հայտնված երեխաների նկատմամբ գործողությունների ուղենիշներ (Guidelines for Action on Children in the Criminal Justice System).....	90
Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատության ուղենիշներ (Guidelines on Justice in Matters involving Child Victims and Witnesses of Crime)	104
Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններ (Տոկիոյի կանոններ) (United Nations Standard Minimum Rules for Non-custodial Measures (The Tokyo Rules)	119
Կալանքի կամ ազատազրկման որևէ ձևի ենթարկված բոլոր անձանց պաշտպանության հիմնական սկզբունքներ (Body of Principles for the Protection of All Persons under Any Form of Detention or Imprisonment).....	130
Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2008)11 հանձնարարականը անդամ երկրներին՝ Պատիժների կամ այլ միջոցների ենթարկված անչափահաս իրավախախտների վերաբերյալ եվրոպական կանոնների վերաբերյալ (Recommendation CM/Rec(2008)11 of the Committee of Ministers to member states on the European Rules for juvenile offenders subject to sanctions or measures).....	141
Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ Rec(2003)20 հանձնարարականը անդամ երկրներին՝ անչափահասների հանցավորությանն արձագանքելու նոր ուղիների և անչափահասների գործերով արդարադատության դերի վերաբերյալ (Recommendation Rec(2003)20 of the Committee of Ministers to member states concerning new ways of dealing with juvenile delinquency and the role of juvenile justice)	173
Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ Rec(2005)5 հանձնարարականը անդամ երկրներին՝ փակ հաստատություններում պահվող երեխաների իրավունքների վերաբերյալ	

(Recommendation Rec(2005)5 of the Committee of Ministers to member states on the rights of children living in residential institutions)	179
Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ R(87)20 հանձնարարականը անդամ երկրներին՝ անչափահասների հանցավորությանը սոցիալական արձագանքների վերաբերյալ (Recommendation No. R (87) 20 of the Committee of Ministers to Member States on Social Recations to Juvenile Justice)	185
Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ R(99)19 հանձնարարականը անդամ երկրներին՝ քրեական գործերով մեղիացիայի վերաբերյալ (Recommendation No. R (99) 19 of the Committee of Ministers to member States concerning mediation in penal matters).....	190
Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ R(89)12 հանձնարարականը անդամ երկրներին՝ բանտում կրթության վերաբերյալ (Recommendation No. R(89)12 of the Committee of Ministers to Member States on Education in Prison).....	195
Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)1 հանձնարարականը անդամ երկրներին՝ Եվրոպայի խորհրդի պրոբացիոն կանոնների վերաբերյալ (Recommendation CM/Rec(2010)1 of the Committee of Ministers to member states on the Council of Europe Probation Rules)	197
Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ Rec(2006)2 հանձնարարականը անդամ երկրներին՝ Եվրոպական բանտային կանոնների վերաբերյալ (Recommendation Rec(2006)2 of the Committee of Ministers to member states on the European Prison Rules)	217

Բանտարկյալների նկատմամբ վերաբերմունքի նվազագույն ստանդարտ կանոններ (United Nations Standard Minimum Rules for the Treatment of Prisoners)

Ընդունվել են հանցագործությունների կանխարգելման և իրավախախտների նկատմամբ վերաբերմունքին նվիրված ՄԱԿ-ի առաջին համագումարի կողմից, Ժնև, 1955թ.

Հավանության են արժանացել ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդի 1957թ. հուլիսի 31-ի թիվ 663 C (XXIY) և 1977թ. մայիսի 13-ի թիվ 2076 (LXII) բանաձևերով

Տնտեսական և սոցիալական խորհուրդը.

1. հավանություն է տալիս Հանցագործությունների կանխարգելման և իրավախախտների նկատմամբ վերաբերմունքի հարցերով Միավորված ազգերի կազմակերպության առաջին կոնգրեսի կողմից հաստատված՝ Բանտարկյալների նկատմամբ վերաբերմունքի նվազագույն ստանդարտ կանոններին.

2. կառավարությունների ուշադրությունն է հրավիրում այդ Կանոնների վրա և հանձնարարում՝

ա) բարյացակամորեն վերաբերվել դրանց ընդունմանն ու պատժային և ուղղիչ հաստատություններում դրանց կիրառմանը.

բ) յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ Գլխավոր քարտուղարին իրազեկել այդ կանոնների կիրառման մասին.

գ) միջոցներ ձեռնարկել այդ Կանոնները ոչ միայն համապատասխան պետական հիմնարկների, այլև սոցիալական պաշտպանությամբ շահագրգռված ոչ կառավարական կազմակերպությունների շրջանում հնարավորինս լայնորեն տարածելու ուղղությամբ.

3. Գլխավոր քարտուղարին լիազորում է անհրաժեշտության դեպքում հրապարակել 2 (բ) կետի համաձայն ստացված հաղորդումները և, անհրաժեշտության դեպքում, լրացուցիչ տեղեկություններ պահանջել:

1. Բանտարկյալների նկատմամբ վերաբերմունքի նվազագույն ստանդարտ կանոններ

Բանաձևն ընդունվել է 1955 թվականի օգոստոսի 30-ին

Հանցագործությունների կանխարգելման և իրավախախտների նկատմամբ վերաբերմունքի հարցերով Միավորված ազգերի կազմակերպության առաջին կոնգրեսը,

Ընդունելով սույն բանաձևին կից ներկայացված բանտարկյալների նկատմամբ վերաբերմունքի նվազագույն ստանդարտ կանոնները՝

1. Գլխավոր քարտուղարին խնդրում է կանոնները Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր Ասամբլեայի թիվ 415 (V) բանաձևի հավելվածի (դ) կետին համապատասխան ներկայացնել Տնտեսական և սոցիալական խորհրդի Սոցիալական հանձնաժողովի հաստատմանը,

2. Հույս է հայտնում, որ սույն կանոնները կհաստատվեն Տնտեսական և սոցիալական խորհրդի կողմից, և եթե Խորհուրդն անհրաժեշտ համարի՝ Գլխավոր ասամբլեայի կողմից, և որ դրանք կուղարկվեն կառավարություններին՝ հետևյալ հանձնարարականով.

ա) բարյացակամորեն վերաբերվել դրանց ընդունմանը և պատժային հաստատություններում դրանց կիրառմանը,

բ) յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ Գլխավոր քարտուղարին իրազեկել սույն կանոնների կիրառման ընթացքի մասին.

3. Ցանկանում է Գլխավոր քարտուղարին խնդրել «Քրեական քաղաքականության միջազգային տեսություն» պարբերականում հրապարակել 2-րդ կետին համապատասխան կառավարությունների կողմից տրամադրվող տեղեկատվությունը, որպեսզի կառավարությունները կարողանան տեղեկանալ տվյալ բնագավառի իրադարձություններին, ինչպես նաև լիազորել նրան՝ անհրաժեշտության դեպքում պահանջելու լրացուցիչ տեղեկատվություն.

4. Նաև ցանկանում է Գլխավոր քարտուղարին խնդրել, որպեսզի սույն կանոնները հնարավորինս լայնորեն տարածվեն:

Հավելված

Բանտարկյալների նկատմամբ վերաբերմունքի նվազագույն ստանդարտ կանոններ

Նախնական նկատառումներ

1. Ներքոհիշյալ կանոնները նպատակ չունեն մանրամասն նկարագրելու պատժային հաստատությունների օրինակելի համակարգը: Դրանցով սուկ փորձ է արվում արդիական մտքի ընդհանուր մոտեցումների և ներկայիս առավել կայացած համակարգերի հիմնական տարրերի հիման վրա ներկայացնել, թե բանտարկյալների նկատմամբ վերաբերմունքի և հիշյալ հաստատությունների առումով ինչն է ընդհանրապես ճիշտ սկզբունք և գործելակերպ համարվում:

2. Նկատի առնելով աշխարհում իրավական, տնտեսական և աշխարհագրական պայմանների բազմազանությունը, անկհայտ է, որ ոչ բոլոր կանոններն է հնարավոր կիրառել ամենուրեք և մշտապես: Սակայն դրանք պետք է խթանեն կանոնների իրականացման ճանապարհին առկա գործնական բարդությունները հաղթահարելու մշտական ձգտումը, քանի որ դրանք ընդհանուր առմամբ արտացոլում են Միավորված ազգերի կազմակերպության համար ընդունելի նվազագույն պայմանները:

3. Մյուս կողմից՝ կանոններն ընդգրկում են գործողության այնպիսի դաշտ, որում միտքը մշտապես առաջ է ընթանում: Դրանք նպատակ չունեն խոչընդոտելու փորձարկումները և պրակտիկան, եթե դրանք համահունչ են կանոններում նախանշված ընդհանուր նպատակներին: Եթե բանտային կենտրոնական վարչակազմը կանոններից շեղվում է այդ նկատառումներից էլնելով, ապա դրա համար միշտ արդարացում կգտնվի:

4.1. Կանոնների I մասը վերաբերում է հիմնարկների ընդհանուր ղեկավարմանը և կիրառելի է քրեական կամ քաղաքացիական գործով անցնող, չդատապարտված կամ դատապարտված

բանտարկյալների բոլոր խմբերի նկատմամբ, այդ թվում նրանց, ում նկատմամբ դատավորը «անվտանգության միջոցներ» կամ ուղղիչ միջոցներ է նշանակել:

4.2. II մասում շարադրված են միայն հատուկ խմբերի նկատմամբ կիրառելի կանոնները. այդ խմբերի մասին խոսվում է բաժիններից յուրաքանչյուրում: Սակայն դատապարտված բանտարկյալների վերաբերյալ Ա բաժնում շարադրված կանոնները պետք է հավասարապես կիրառվեն նաև այն խմբերի անձանց նկատմամբ, ում մասին խոսվում է Բ, Գ և Դ բաժիններում, եթե դրանք չեն հակասում այդ խմբերի համար մշակված կանոններին և բխում են նրանց շահերից:

5.1. Կանոնները չեն հավակնում կանոնակարգելու երիտասարդների համար նախատեսված այնպիսի հաստատությունների ղեկավարումը, ինչպիսին Բոքստալի հաստատությունը կամ ուղղիչ տներն են, սակայն I մասը կարող է ընդհանուր առմամբ հավասարապես կիրառություն գտնել նաև այդպիսի հիմնարկներում:

5.2. Երիտասարդ բանտարկյալների թվին պետք է առնվազն դասել բոլոր երիտասարդներին, որոնց վերաբերյալ գործերն ընդդատյա են անչափահասների գործերով դատարանին: Նման երիտասարդները, որպես կանոն, չպետք է ազատագրկման դատապարտվեն:

Մաս I

Համակիրառելի կանոններ

Ընդհանուր սկզբունք

6.1. Ներքոհիշյալ կանոնները պետք է կիրառվեն անկողմնակալորեն: Ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնական, քաղաքական և այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային դրության, ընտանեկան ծագման կամ սոցիալական դրության վրա հիմնված խտրականությունն անթույլատրելի է:

2) Մյուս կողմից, հարկավոր է հարգել բնակչության այս կամ այն խմբին պատկանող բանտարկյալների կրոնական համոզմունքներն ու բարոյական սկզբունքները:

Գրանցում

7.1. Բանտարկության բոլոր վայրերում պետք է լինի կարված գրանցամատյան՝ համարակալված էջերով, որում պետք է գրանցվեն հետևյալ տվյալները ընդունված յուրաքանչյուր բանտարկյալի վերաբերյալ.

ա) նրա ինքնությանը վերաբերող տեղեկություններ,

բ) նրա բանտարկության պատճառները և այդ մասին որոշումը կայացրած մարմինը,

գ) բանտարկության վայր ընդունվելու և ազատվելու օրն ու ժամը:

2) Ոչ ոք չի կարող բանտ ընդունվել առանց բանտարկության մասին ուժի մեջ մտած որոշման, որի մանրամասները նախապես պետք է գրառվեն գրանցամատյանում:

Ըստ խմբերի բաշխումը

8. Բանտարկյալների տարբեր խմբերը պահվում են առանձին հիմնարկներում կամ միևնույն հիմնարկի առանձին հատվածներում՝ հաշվի առնելով նրանց սեռը, տարիքը, դատվածությունը, բանտարկության իրավական հիմքերը և նրանց հետ տարվող աշխատանքով պայմանավորված կարիքները: Այսպիսով՝

ա) հնարավորության դեպքում կանանց և տղամարդկանց պետք է պահել առանձին հիմնարկներում. եթե կանայք և տղամարդիկ պահվում են միևնույն հիմնարկում, ապա կանանց համար նախատեսված հատվածը պետք է ամբողջությամբ առանձին լինի,

բ) չդատապարտված բանտարկյալները պետք է դատապարտյալներից անջատ պահվեն,

գ) պարտքի հանձնառությունը չկատարելու համար կամ քաղաքացիական գործի շրջանակներում բանտարկված անձինք պետք է քրեական հանցագործություն կատարած անձանցից անջատ պահվեն,

դ) երիտասարդ բանտարկյալները պետք է չափահասներից անջատ պահվեն:

Կացարանային ապահովումը

9.1. Եթե բանտարկյալները գիշերում են խցերում կամ սենյակներում, նրանցից յուրաքանչյուրը պետք է գիշերային ժամերին առանձին խուց կամ սենյակ զբաղեցնի: Եթե որոշակի պատճառներով, ինչպիսին է, ասենք, բանտի ժամանակավոր գերբեռնվածությունը, կենտրոնական բանտային վարչակազմը ստիպված է ձեռնպահ մնալ սույն կանոնի գործածությունից, միևնույն խցում կամ սենյակում երկու բանտարկյալների տեղավորելը ցանկալի չէ:

9.2. Հանրակացարանների առկայության դեպքում դրանցում բնակվելիք բանտարկյալները պետք է մանրակրկիտ ընտրություն անցնեն՝ այդպիսի պայմաններում միասին ապրելու հարցում նրանց համատեղելիությունն ապահովելու նպատակով: Գիշերային ժամերին պետք է իրականացնել հիմնարկի բնույթին համապատասխան մշտական հսկողություն:

10. Բանտարկյալներին հատկացված շինությունները, հատկապես՝ ննջարանները, պետք է համապատասխանեն առողջապահական բնույթի բոլոր պահանջներին՝ պատշաճ ուշադրություն դարձնելով կլիմայական պայմաններին և, հատկապես, այդ կառույցների ծավալներին, նվազագույն մակերեսի ապահովմանը, լուսավորությանը և օդափոխությանը:

11. Այն շինություններում, ուր ապրում և աշխատում են բանտարկյալները՝

ա) լուսամուտները պետք է ունենան բավարար չափեր, որպեսզի բանտարկյալները կարողանան կարդալ և աշխատել բնական լույսի պայմաններում, և պետք է նախագծված լինեն այնպես, որպեսզի ապահովվի թարմ օդի մուտքը՝ անկախ օդափոխման արհեստական համակարգի առկայությունից կամ բացակայությունից,

բ) արհեստական լուսավորությունը պետք է բավարար լինի, որպեսզի բանտարկյալները կարողանան կարդալ կամ աշխատել՝ առանց վտանգելու իրենց տեսողությունը:

12. Սանիտարական հանգույցները պետք է բավարար լինեն, որպեսզի յուրաքանչյուր բանտարկյալ մաքուր և կոկիկ պայմաններում կարողանա ըստ անհրաժեշտության բավարարել իր բնական պահանջմունքները:

13. Լոգարանի և ցնցուղների թիվը պետք է բավարար լինի, որպեսզի յուրաքանչյուր բանտարկյալ կարողանա և պարտավոր լինի կլիմային համապատասխանող ջերմաստիճանի պայմաններում լոգանք կամ ցնցուղ ընդունել՝ տարվա տվյալ եղանակին և աշխարհագրական տվյալ տարածաշրջանին համապատասխանող ընդհանուր հիգիենայի համար անհրաժեշտ հաճախականությամբ, սակայն ոչ պակաս, քան մեղմ կլիմայի պայմաններում շաբաթական առնվազն մեկ անգամ:

14. Հիմնարկի՝ բանտարկյալների կողմից կանոնավորապես օգտագործվող հատվածները պետք է մշտապես պահվեն անթերի մաքրության պայմաններում:

Անձնական հիգիենա

15. Բանտարկյալները պետք է պարտավորված լինեն հետևելու իրենց մաքրությանը: Դրա համար նրանք պետք է ապահովվեն ջրով և զուգարանային պարագաներով՝ մաքրությանը և առողջությանը հետևելու համար:

16. Որպեսզի բանտարկյալները կարողանան պահպանել մարդկային արժանապատվությանը հարիր արտաքին տեսքը, նրանց պետք է հնարավորություն տրվի հոգալու մազերի և դեմքի մազածածկույթի մասին, իսկ տղամարդկանց թույլ տալ կանոնավորապես սափրվել:

Հագուստ և անկողնային պարագաներ

17.1. Սեփական հագուստը կրելու թույլտվություն չունեցող բանտարկյալներին պետք է տվյալ կլիմային համապատասխանող, առողջությունը պահպանելու համար բավարար հագուստ հատկացվի: Այն չպետք է վիրավորական կամ նվաստացնող լինի:

17.2. Հագուստը պետք է պահվի մաքուր և կոկիկ վիճակում: Ներքնագգեստը պետք է լվացվի և փոխվի հիգիենայի պահանջներից բխող հաճախականությամբ:

17.3. Բացառիկ դեպքերում, երբ բանտարկյալն այս կամ այն օրինական նպատակով դուրս է գալիս հիմնարկից, նրան պետք է թույլատրել կրելու սեփական հագուստը կամ աչքի չզարնող այլ հագուստ:

18. Եթե բանտարկյալներին թույլատրվում է կրել սեփական հագուստը, ապա հիմնարկ ընդունվելիս պետք է միջոցներ ձեռնարկել, որպեսզի այն մաքուր և կրելու համար հարմար լինի:

19. Յուրաքանչյուր բանտարկյալ պետք է ապահովվի տեղական կամ ազգային նորմերին համապատասխանող առանձին մահճակալով և բավականաչափ անկողնային պարագաներով, որոնք պետք է տրամադրվելու մաքուր լինեն, պահվեն կոկիկ վիճակում և փոխվեն դրանց մաքրությունն ապահովելու համար անհրաժեշտ հաճախականությամբ:

Մտունդ

20.1. Բանտային վարչակազմը պետք է սնվելու համար սահմանված ժամերին յուրաքանչյուր բանտարկյալի ապահովի առողջությունը և ուժերը պահպանելու համար անհրաժեշտ սննդարարությամբ, լավորակ, լավ պատրաստված ու մատուցված սննդով:

20.2. Խմելու ջուրը պետք է ցանկացած պահի հասանելի լինի յուրաքանչյուր բանտարկյալի համար:

Մարմնական վարժանք և սպորտ

21.1. Բացօթյա աշխատանքում ներգրավված բոլոր բանտարկյալները պետք է օրական առնվազն մեկժամյա համապատասխան բացօթյա վարժանքի հնարավորություն ունենան, եթե եղանակը թույլ է տալիս:

21.2. Վարժանքի ժամերին երիտասարդ բանտարկյալներին և համապատասխան տարիքի և կազմվածքի այլ անձանց պետք է զբաղեցնել մարմնամարզությամբ և ժամանցային պարապմունքներով: Դրա համար պետք է ունենալ անհրաժեշտ հրապարակներ, սարքավորում և գույք:

Բուժառայություններ

22.1. Յուրաքանչյուր հիմնարկ իր տրամադրության տակ պետք է ունենա որակավորում ունեցող առնվազն մեկ բուժաշխատող՝ հոգեբուժության բնագավառի որոշակի գիտելիքներով: Բուժառայությունները պետք է կազմակերպվեն ընդհանուր առողջապահության կառավարման համայնքային կամ համապետական մարմինների հետ սերտ գործակցությամբ: Այդ ծառայությունները պետք է ներառեն հոգեկան խանգարումներ ունեցող անձանց հոգեբուժական ախտորոշման, անհրաժեշտության դեպքում՝ բուժման ծառայությունները:

22.2. Մասնագիտացված բուժման կարիք ունեցող հիվանդ բանտարկյալները պետք է փոխադրվեն հատուկ բժշկական հաստատություններ կամ քաղաքացիական հիվանդանոցներ: Հիմնարկում հիվանդանոցային հնարավորությունների առկայության դեպքում դրանցում առկա սարքավորումը, կահավորանքը և դեղորայքը պետք է բավարար լինեն հիվանդ բանտարկյալների խնամքի և բուժման համար, և համալրված՝ բավականաչափ վերապատրաստված անձնակազմով:

22.3. Յուրաքանչյուր բանտարկյալ պետք է կարողանա օգտվել բարձրակարգ ատամնաբույժի ծառայություններից:

23.1. Կանանց համար նախատեսված հիմնարկները պետք է ունենան նախաձննդյան և հետձննդյան խնամքի հատուկ մասնաշենքեր: Հնարավորության դեպքում հարկ է հոգալ, որպեսզի ծնունդն ընդունվի ոչ թե բանտային, այլ սովորական հիվանդանոցում: Իսկ եթե երեխան բանտում է ծնվել, ապա այդ մասին չպետք է նշվի ծննդյան վկայականում:

23.2. Այն դեպքերում, երբ մայրերին թույլատրվում է նորածիններին իրենց մոտ պահել, հարկավոր է բարձրակարգ անձնակազմ ունեցող մտուրներ նախատեսել, ուր երեխաներին կտեղավորվեն մայրերի խնամքի տակ չգտնվելու ընթացքում:

24. Ընդունվելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում և ըստ հետագա անհրաժեշտության՝ բուժաշխատողը պետք է գննի յուրաքանչյուր բանտարկյալի՝ նրա մոտ հնարավոր ֆիզիկական և հոգեկան առողջական խնդիրներն ի հայտ բերելու, վարակիչ հիվանդությամբ տառապելու կասկած հարուցող բանտարկյալներին մեկուսացնելու, բանտարկյալների վերականգնմանը խոչընդոտող մարմնական կամ մտավոր խանգարումներն ի հայտ բերելու և յուրաքանչյուր բանտարկյալի աշխատունակությունը որոշելու նպատակով:

25.1. Բուժաշխատողը պետք է հոգ տանի Բանտարկյալների ֆիզիկական և հոգեկան առողջության մասին և ամեն օր այցելի առողջությունից գանգատվող, ինչպես նաև հատուկ ուշադրություն պահանջող Բանտարկյալներին:

25.2. Բուժաշխատողը պարտավոր է տնօրենին զեկուցել բոլոր այն դեպքերում, երբ գտնում է, որ Բանտարկյալի ֆիզիկական կամ մտավոր առողջությունը խաթարվել է կամ կարող է խաթարվել տևական Բանտարկության կամ Բանտարկության որևէ պայմանի պատճառով:

26.1. Բժիշկը պարտավոր է կանոնավորապես տեսչական ստուգում իրականացնել և տնօրենին զեկուցել հետևյալ հարցերի մասին.

ա) սննդի որակը, քանակը, պատրաստումը և մատուցումը,

բ) հիմնարկի և Բանտարկյալների հիգիենան և մաքրությունը,

գ) սանիտարական պայմանները, ջեռուցումը, լուսավորությունն ու օդափոխությունը հիմնարկում,

դ) Բանտարկյալների հագուստի և անկողնային պարագաների պիտանիությունն ու մաքրությունը,

ե) մարմնակրթության ու սպորտի վերաբերյալ կանոնների պահպանումը, երբ դրա համար տեխնիկական անձնակազմ նախատեսված չէ:

26.2. Տնօրենը պետք է ուսումնասիրի 25.2 և 26-րդ կանոններին համապատասխան բժշկի ներկայացրած զեկուցագրերն ու խորհուրդները և դրանց համաձայնելու դեպքում անհապաղ միջոցներ ձեռնարկի դրանք իրականացնելու համար: Եթե այդ հանձնարարականները դուրս են իր իրավասության շրջանակներից կամ նա համաձայն չէ դրանց, ապա տնօրենը պետք է անհապաղ վերադաս մարմիններին ներկայացնի թե՛ սեփական զեկուցագիրը և թե՛ բժշկի հանձնարարականները:

Կարգապահություն և տույժեր

27. Կարգապահությունը և կարգուկանոնը պետք է խստագույն պահպանվեն՝ կիրառելով միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք անհրաժեշտ են հիմնարկում անվտանգ Բանտարկությունը և համակեցության ընդունված կանոնների պահպանումն ապահովելու համար:

28.1. Բանտարկյալները չպետք է հիմնարկի սպասարկման աշխատանքներում ներգրավվեն կարգապահական տույժի կարգով:

28.2. Սույն կանոնը, սակայն, չպետք է խոչընդոտի ինքնակառավարվող այն համակարգերի պատշաճ գործունեությանը, որոնցում սոցիալական, դաստիարակչական կամ մարզական որոշակի միջոցառումների պատասխանատվությունը, որոշակի վերահսկողության պայմաններում, դրված է վերականգնման նկատառումներով խմբերում ընդգրկված Բանտարկյալների վրա:

29. Ստորև շարադրված հանգամանքները պետք է սահմանվեն միայն օրենքով կամ իրավասու վարչական մարմնի կանոնակարգով.

ա) կարգապահական զանցանք համարվող վարքը,

բ) կիրառելիք տույժի տեսակն ու տևողությունը,

գ) տույժ նշանակելու իրավասություն ունեցող մարմինը:

30.1. Տույժ կարելի է նշանակել միայն համապատասխան օրենքով կամ կանոնակարգերով սահմանված պայմաններին համապատասխան, ընդ որում՝ որևէ բանտարկյալ չի կարող կրկին պատժի ենթարկվել միննույն զանցանքի համար:

30.2. Որևէ բանտարկյալ չի կարող տույժի ենթարկվել, եթե նա նախապես չի տեղեկացվել իրեն վերագրվող զանցանքի մասին և չի ունեցել իր պաշտպանությամբ հանդես գալու պատշաճ հնարավորություն: Իրավասու մարմինը նման դեպքերում պետք է մանրագնին քննություն իրականացնի:

30.3. Անհրաժեշտության և հնարավորության դեպքում բանտարկյալին պետք է թույլատրել սեփական պաշտպանությամբ հանդես գալ թարգմանչի միջոցով:

31. Հարկավոր է ընդհանրապես արգելել մարմնական պատիժները, մութ խցում տեղավորելը և պատժի դաժան, անմարդկային կամ նվաստացնող ձևերը կարգապահական զանցանքների դեպքում որպես տույժի միջոց կիրառելը:

32.1. Խիստ մեկուսացում կամ սննդակարգի կրճատում նախատեսող տույժեր չեն կարող նշանակվել, քանի դեռ բուժաշխատողը չի գննել բանտարկյալին և գրավոր չի հավաստել, որ վերջինս ի վիճակի է կրել այդ տույժը:

32.2. Նույնը վերաբերում է նաև տույժի այլ ձևերին, որոնք կարող են բանտարկյալին ֆիզիկական կամ հոգեկան վնաս պատճառել: Այդպիսի պատիժները ոչ մի դեպքում չպետք է հակասեն 31-րդ կանոնում նշված սկզբունքին կամ շեղվեն դրանից:

32.3. Բժիշկը պարտավոր է ամեն օր այցելել նման տույժերի ենթարկված բանտարկյալներին և, եթե ֆիզիկական կամ հոգեկան վիճակից ելնելով անհրաժեշտ է համարում ընդհատել կամ փոփոխել տույժի տեսակը, ապա այդ մասին խորհրդատվություն տրամադրել տնօրենին:

Զսպամիջոցներ

33. Երբևէ չի կարելի որպես տույժի միջոց այնպիսի զսպամիջոցներ կիրառել, ինչպիսիք են՝ ձեռնաշղթաները, շղթաները, երկաթե գամերը, զսպաշապիկներն ու շղթաները: Ավելին, շղթաները կամ երկաթե գամերը չպետք է գործադրվեն որպես զսպամիջոց: Այլ զսպամիջոցներ կարելի է գործադրել միայն հետևյալ դեպքերում.

ա) փոխադրման ընթացքում փախուստը կանխելու համար՝ պայմանով, որ դատական կամ վարչական մարմինների առջև կանգնելուն պես ձեռնաշղթաները հանվեն,

բ) բժշկական բնույթի պատճառներով և բժշկի ցուցումով,

գ) տնօրենի հրամանով, եթե մյուս միջոցներով հնարավոր չէ կանխել ինքնավնասումը, բանտարկյալի կողմից այլ անձանց կամ գույքին վնաս պատճառելը. նման դեպքերում տնօրենը պարտավոր է անհապաղ խորհրդակցել բժշկի հետ և զեկուցել վերադաս վարչական մարմիններին:

34. Զսպամիջոցների կիրառման ձևերն ու մեթոդները սահմանում է բանտային կենտրոնական վարչակազմը: Այդ միջոցները չպետք է կիրառվեն ավելի երկար տևողությամբ, քան խիստ անհրաժեշտ է:

Բանտարկյալների իրազեկումը և նրանց կողմից բողոքների ներկայացումը

35.1. Բանտ ընդունվելիս բանտարկյալին պետք է գրավոր տեղեկացնել իր հետ միննույն խմբին պատկանող բանտարկյալների նկատմամբ վերաբերմունքի կանոնների, տվյալ հիմնարկում սահմանված կարգապահական պահանջների, ինչպես նաև տեղեկատվություն ստանալու և բողոքներ ներկայացնելու թույլատրելի միջոցների և այլ հարցերի մասին, որոնք նրան հնարավորություն կտան գիտակցելու իր իրավունքներն ու պարտականությունները և հարմարվելու տվյալ հիմնարկի կենսապայմաններին:

35.2. Անտառաճանաչ բանտարկյալներին վերոհիշյալ տեղեկատվությունը պետք է տրամադրվի բանավոր:

36.1. Յուրաքանչյուր բանտարկյալ պետք է աշխատանքային օրերին հիմնարկի տնօրենին կամ նրա անունից հանդես գալու լիազորություն ունեցող աշխատակցին դիմումներ կամ բողոքներ ներկայացնելու հնարավորություն ունենա:

36.2. Տեսչական ստուգումների ժամանակ բանտարկյալները պետք է կարողանան դիմումներ և բողոքներ ներկայացնել տեսուչներին: Նրանք պետք է իրավունք ունենան խոսելու տեսուչի կամ տեսչական ստուգումն իրականացնող այլ աշխատակցի հետ՝ առանց հիմնարկի տնօրենի կամ մյուս աշխատողների ներկայության:

36.3. Յուրաքանչյուր բանտարկյալ պետք է կենտրոնական բանտային վարչակազմին, դատական կամ իրավասու այլ մարմիններին դիմում կամ բողոք ներկայացնելու հնարավորություն ունենա, որոնց բովանդակությունը գրաքննության ենթակա չէ, սակայն դրանք պետք է կազմված լինեն պատշաճ կերպով և ներկայացվեն դրա համար նախատեսված ուղիներով:

36.4. Ցանկացած դիմում կամ բողոք պետք է անհապաղ, առանց անհարկի ձգձգումների ընթացք կամ պատասխան ստանա, եթե դրանք մակերեսային կամ անհիմն չեն:

Շփումն արտաքին աշխարհի հետ

37. Բանտարկյալներին հարկավոր է թույլատրել թե՛ նամակագրության և թե՛ տեսակցությունների միջոցով կանոնավոր պարբերականությամբ և անհրաժեշտ հսկողության ներքո հաղորդակցվել իրենց ընտանիքների և հարգանք վայելող իրենց ընկերների հետ:

38.1. Օտարերկրյա քաղաքացի բանտարկյալներին պետք է իրենց երկրների դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցիչների հետ կապ պահպանելու ողջամիտ հնարավորություններ տրամադրել:

38.2. Տվյալ երկրում դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություն չունեցող երկրների քաղաքացի բանտարկյալները, ինչպես նաև փախստականներն ու քաղաքացիություն չունեցող անձինք պետք է իրենց շահերի պաշտպանությունը ստանձնած երկրների

դիվանագիտական ներկայացուցիչների կամ նրանց պաշտպանությամբ զբաղվող ցանկացած ներպետական կամ միջազգային մարմնի հետ կապ պահպանելու հնարավորություն ունենան:

39. Բանտարկյալները պետք է կանոնավորապես տեղեկացվեն առավել կարևոր նորությունների մասին՝ թերթեր, պարբերականներ կամ բանտային հատուկ հրատարակություններ կարդալու, ռադիո ունկնդրելու, դասախոսությունների մասնակցելու կամ տեղեկատվության ցանկացած այլ՝ վարչակազմի կողմից թույլատրված և վերահսկելի միջոցներից օգտվելու միջոցով:

Գրքեր

40. Յուրաքանչյուր հիմնարկ պետք է բանտարկյալների բոլոր խմբերի համար հասանելի գրադարան ունենա՝ համալրված ինչպես զվարճալի, այնպես էլ ուսուցողական բովանդակությամբ գրքերով, իսկ բանտարկյալների կողմից գրադարանից օգտվելը պետք է խրախուսել:

Կրոն

41.1. Եթե հիմնարկում միևնույն կրոնին պատկանող բավականաչափ թվով բանտարկյալներ կան, հարկավոր է տվյալ կրոնի պաշտոնական սպասավոր նշանակել: Եթե նման բանտարկյալների թիվը բավականաչափ մեծ է, և կան համապատասխան հնարավորություններ, այդ սպասավորը պետք է նշանակվի մշտական հիմունքներով:

41.2. 1-ին կետի հիման վրա հիմնարկում նշանակված կրոնական սպասավորը պետք է կանոնավորապես կրոնական արարողություններ անցկացնելու և սահմանված ժամանակահատվածում իր դավանանքին պատկանող բանտարկյալներին տեսակցելու հնարավորություն ունենա՝ կրոնական թեմաներով զրուցելու նպատակով:

41.3. Բանտարկյալին չի կարելի զրկել այս կամ այն կրոնի պաշտոնական ներկայացուցիչների հետ հանդիպելու հնարավորությունից: Մյուս կողմից, եթե բանտարկյալը դեմ է պաշտամունքի սպասավորի տեսակցություններին, ապա նրա որոշման հետ հարկավոր է լիովին հաշվի նստել:

42. Յուրաքանչյուր բանտարկյալ պետք է հնարավորության սահմաններում կարողանա բավարարել իր կրոնական պահանջունքները՝ հիմնարկում անցկացվող կրոնական արարողություններին մասնակցելու և իր տրամադրության տակ կրոնական բովանդակության հատուկ գրքեր ու իր դավանանքի վերաբերյալ ուսուցողական նյութեր ունենալու միջոցով:

Բանտարկյալների ունեցվածքի պահպանումը

43.1. Դրամը, թանկարժեք իրերը, հագուստն ու այլ առարկաները, որոնք տվյալ հաստատությունում գործող կանոններով բանտարկյալին արգելված է պահել իր մոտ, բանտարկյալին ընդունելիս ի պահ են վերցվում: Բանտարկյալը ստորագրում է այդ իրերի ցանկը: Հարկավոր է միջոցներ ձեռնարկել՝ դրանք հուսալի պայմաններում պահելու համար:

43.2. Տվյալ հիմնարկից բանտարկյալին ազատելիս նրան պատկանող ողջ ունեցվածքն ու դրամը պետք է վերադարձվեն, բացի այն գումարներից, որոնք նրան թույլատրվել է ծախսել, այն իրերից, որոնք նրան թույլատրվել է առաքել հիմնարկի սահմաններից դուրս, այն հագուստից, որը սանիտարական նկատառումներով անհրաժեշտ է եղել ոչնչացնել: Բանտարկյալը ստացական է ստորագրում իրեն պատկանող դրամն ու իրերը ետ ստանալիս:

43.3. Նույնը վերաբերում է բոլոր այն դրամական միջոցներին ու իրերին, որոնք բանտարկյալը սովյալ հիմնարկում գտնվելու ժամանակ ստացել է դրսից:

43.4. Եթե բանտարկյալն իր մոտ դեղորայք ունի, բուժաշխատողը պետք է որոշում կայացնի դրանց հետագա գործածման մասին:

Ծանուցում մահվան, հիվանդության, փոխադրման և այլնի մասին

44.1. Բանտարկյալի մահվան, լուրջ հիվանդության կամ վնասվածքի, կամ նրան հոգեբուժարան փոխադրելու դեպքում տնօրենն այդ մասին անհապաղ տեղեկացնում է նրա ամուսնուն կամ կնոջը, եթե նա ամուսնացած է, մերձավոր ազգականներին և, ցանկացած դեպքում՝ բանտարկյալի կողմից նախապես մատնանշված անձին:

44.2. Բանտարկյալին պետք է անհապաղ հայտնել իր որևէ մերձավոր ազգականի մահվան կամ լուրջ հիվանդության մասին: Մերձավոր ազգականի ծանր հիվանդության դեպքում բանտարկյալին պետք է թույլ տալ հնարավորության դեպքում այցելելու նրան՝ հսկողության ներքո կամ առանց դրա:

44.3. Յուրաքանչյուր բանտարկյալ պետք է իրավունք ունենա իր բանտարկության կամ այլ հիմնարկ փոխադրվելու մասին անհապաղ տեղեկացնելու ընտանիքի անդամներին:

Բանտարկյալների փոխադրումը

45.1. Բանտարկյալներին իրենց բանտարկության վայր կամ մեկ վայրից մյուսը փոխադրելիս նրանց անհրաժեշտ է պատսպարել կողմնակի աչքից և ձեռնարկել բոլոր միջոցները՝ նրանց վիրավորանքից, հետաքրքրասիրությունից և հրապարակայնության ցանկացած դրսևորումից զերծ պահելու համար:

45.2. Արգելվում է բանտարկյալներին փոխադրել՝ անբավարար օդափոխության, լուսավորության կամ անհարկի ֆիզիկական տառապանք պատճառող պայմաններում:

45.3. Բանտարկյալները փոխադրվում են վարչակազմի հաշվին, ընդ որում՝ նրանց փոխադրումը պետք է կատարվի բոլորի համար միատեսակ պայմաններում:

Հիմնարկի անձնակազմը

46.1. Բանտային վարչակազմը պետք է բոլոր մակարդակներում անձնակազմի մանրակրկիտ ընտրություն կատարի, քանի որ բանտային հիմնարկների լավ աշխատանքը կախված է այդ աշխատողների բարեխղճությունից, մարդասիրությունից, մասնագիտական կարողություններից և անձնական հատկանիշներից:

46.2. Բանտային վարչակազմը պետք է թե՛ իր աշխատողների և թե՛ ողջ հասարակայնության մոտ ձևավորի և պահպանի այն համոզմունքը, որ իր կատարած աշխատանքը կարևոր նշանակություն ունեցող սոցիալական ծառայություն է: Այդ համոզմունքն ամրապնդելու համար հարկավոր է օգտագործել հանրային լրատվության միջոցները:

46.3. Վերոհիշյալ նպատակներին հասնելու համար անձնակազմի անդամները պետք է նշանակվեն լրիվ դրույքով՝ որպես պետական ծառայողի կարգավիճակ ունեցող պրոֆեսիոնալ բանտային

ծառայողներ. նրանք պետք է համոզված լինեն, որ լավ վարքի, աշխատանքի արդյունավետության ու ֆիզիկական համապատասխանության դեպքում իրենց զբաղեցրած պաշտոնները կպահպանվեն: Աշխատավարձը պետք է բավարար լինի՝ տվյալ աշխատանքին համապատասխանող կանանց և տղամարդկանց ներգրավելու և այդ աշխատանքում նրանց պահելու համար: Նկատի առնելով տվյալ աշխատանքի պահանջկոտությունը՝ հարկավոր է աշխատանքային արտոնություններ և պայմաններ սահմանել:

47.1. Այդ անձնակազմը պետք է բավականաչափ կրթված ու զարգացած լինի:

47.2. Նախքան պարտականություններն ստանձնելն անձնակազմը պետք է դասընթաց անցնի իր ընդհանուր և հատուկ պարտականությունների կատարման վերաբերյալ, որից հետո պետք է տեսական ու գործնական ստուգարք հանձնի:

47.3. Աշխատանքի ընդունվելուց հետո և հետագա գործունեության ողջ ընթացքում անձնակազմը պետք է պահպանի ու բարձրացնի իր գիտելիքներն ու մասնագիտական կարողությունները՝ համապատասխան պարբերականությամբ աշխատանքին զուգընթաց վերապատրաստման դասընթացներ անցնելու միջոցով:

48. Անձնակազմի բոլոր անդամները պետք է դրսևորեն այնպիսի վարքագիծ և իրենց պարտականությունները կատարեն այնպես, որպեսզի օրինակ ծառայեն բանտարկյալների համար և վաստակեն նրանց հարգանքը:

49.1. Հնարավորության սահմաններում անձնակազմում պետք է ընդգրկվեն բավարար թվով այնպիսի մասնագետներ, ինչպիսիք են՝ հոգեբույժները, հոգեբանները, սոցիալական աշխատողները, մանկավարժները և արհեստավոր հրահանգիչները:

49.2. Սոցիալական աշխատողները, մանկավարժները և արհեստավոր հրահանգիչները պետք է նշանակվեն մշտական հիմունքներով՝ միաժամանակ չբացառելով ոչ լրիվ դրույքով աշխատող անձանց կամ կամավորների ներգրավումը:

50.1. Հիմնարկների տնօրենների պաշտոններում պետք է նշանակել իրենց բնավորությամբ, վարչական ունակություններով, անցած վերապատրաստումներով և փորձառությամբ այդ աշխատանքին համապատասխանող անձանց:

50.2. Տնօրենն իր ամբողջ ժամանակը պետք է նվիրի իր վրա դրված պարտականությունների կատարմանը՝ աշխատելով լրիվ աշխատանքային դրույքով:

50.3. Նա պետք է բնակվի իրեն վստահված հիմնարկի տարածքում կամ դրա մերձակայքում:

50.4. Երբ մեկ տնօրենի վրա երկու կամ ավելի հիմնարկի ղեկավարման պարտականություն է դրված, նա պետք է հաճախակի այցելի դրանցից յուրաքանչյուրը: Այդ հիմնարկներից յուրաքանչյուրի ղեկավարման պարտականությունը հարկավոր է դնել տեղում բնակվող որևէ պատասխանատու աշխատակցի վրա:

51.1. Հիմնարկի տնօրենը, նրա տեղակալը և աշխատողների մեծամասնությունը պետք է տիրապետեն այն լեզվին, որով խոսում է տվյալ հիմնարկում պահվող բանտարկյալների մեծամասնությունը, կամ այն լեզվին, որը հասկանալի է նրանց մեծ մասին:

51.2. Անհրաժեշտության դեպքում հարկավոր է օգտվել թարգմանչի ծառայություններից:

52.1. Այն հիմնարկներում, որոնց չափերից ելնելով պահանջվում է լրիվ դրույքով աշխատող մեկ կամ մի քանի բուժաշխատող, նրանցից առնվազն մեկը պետք է բնակվի հիմնարկում կամ դրա մերձակայքում:

52.2. Այլ հիմնարկներ բուժաշխատողները պետք է այցելեն ամեն օր, ընդ որում՝ բժիշկը պետք է բնակվի բավականին մոտ, որպեսզի անհետաձգելի դեպքերում հնարավոր լինի անհապաղ կանչել նրան:

53.1. Միաժամանակ տղամարդկանց և կանանց համար նախատեսված հիմնարկներում կանանց բաժանմունքը պետք է իզական սեռի պատասխանատու աշխատող ղեկավարի, ում մոտ պետք է գտնվեն այդ բաժանմունքի բոլոր հատվածների բանալիները:

53.2. Արական սեռի աշխատողները կանանց բաժանմունք կարող են մուտք գործել միայն իզական սեռի աշխատողների ուղեկցությամբ:

53.3. Բանտարկյալ կանանց սպասարկումը և հսկողությունը պետք է իրականացնեն միայն իզական սեռի աշխատողները: Սակայն դա չի բացառում արական սեռի աշխատողների, մասնավորապես՝ բժիշկների և մանկավարժների կողմից իրենց մասնագիտական պարտականությունների կատարումը կանանց համար նախատեսված հիմնարկներում կամ այլ հիմնարկների՝ կանանց հատկացված բաժանմունքներում:

54.1. Բանտարկյալների հետ իրենց հարաբերություններում հիմնարկների անձնակազմերն իրավունք ունեն ուժի դիմելու միայն ինքնապաշտպանության կամ փախուստի փորձի դեպքում, ինչպես նաև օրենքով կամ կանոնակարգերով սահմանված կարգուկանոնին բանտարկյալների ակտիվ կամ պասիվ դիմադրության պարագայում: Աշխատողները պարտավոր են ուժը գործադրել անհրաժեշտության սահմաններում և նման դեպքերի մասին անհապաղ տեղեկացնել հիմնարկի տնօրենին:

54.2. Բանտերի աշխատողները պետք է հատուկ ֆիզիկական պատրաստություն անցնեն, ինչը նրանց թույլ կտա զսպել ագրեսիվ բանտարկյալներին:

54.3. Բանտարկյալների հետ անմիջական շփում ունեցող աշխատողները զենք կարող են կրել միայն բացառիկ դեպքերում: Բացի այդ, զենք կրելու իրավունք պետք է ունենան միայն զենքի գործադրման պատրաստություն անցած աշխատողները:

Տեսչական ստուգումներ

55. Պատժային հաստատություններն ու ծառայությունները պետք է կանոնավոր տեսչական ստուգման ենթարկվեն իրավասու մարմնի կողմից նշանակված որակյալ ու փորձառու տեսուչների կողմից: Տեսուչների խնդիրը պետք է լինի ստուգել, թե որքանով են այդ հաստատությունները ղեկավարվում գործող օրենքներով ու կանոնակարգերով, ինչպես նաև այն, թե որքանով են դրանք կատարում պատժային և ուղղիչ ծառայությունների առջև դրված խնդիրները:

Մ ա ս II

Հատուկ խմբերի նկատմամբ կիրառվող կանոններ

Ա. Դատապարտված քանտարկյալներ

Ղեկավար սկզբունքներ

56. Ստորև շարադրվող ղեկավար սկզբունքներն արտացոլում են այն ոգին, որով պետք է առաջնորդվեն պատժային հիմնարկները, և այն նպատակները, որոնց իրականացմանն այդ հիմնարկները պետք է ձգտեն՝ ելնելով սույն տեքստի թիվ 1 նախնական նկատառման բովանդակությունից:

57. Բանտարկությունը և իրավախախտին արտաքին աշխարհից մեկուսացնելու այլ միջոցները նրան տառապանք են պատճառում, քանի որ ազատությունից զրկվելու արդյունքում նա զրկվում է ինքնուրույն որոշում կայացնելու իրավունքից: Ուստի, բանտային համակարգը պետք է խուսափի այդ իրավիճակով պայմանավորված տառապանքը ծանրացնելուց, բացառությամբ այն դեպքերի, երբ մեկուսացումն արդարացված է կամ դա անհրաժեշտ է՝ կարգապահական նկատառումներից ելնելով:

58. Բանտարկության կամ ազատագրկող բնույթի այլ միջոցների նպատակն ու արդարացումը, վերջին հաշվով, հասարակությանը հանցավորությունից պաշտպանելն է: Այդ նպատակներին կարելի է հասնել սոսկ այն դեպքում, երբ ազատագրկման ժամկետի ավարտին և հասարակական կյանքի վերադառնալուն պես իրավախախտը ոչ միայն պատրաստ է, այլև ունակ է օրինապահ կյանք վարել և ինքնուրույն ապահովել իր գոյությունը:

59. Այդ նպատակով հիմնարկը պետք է գործադրի բոլոր ուղղիչ, դաստիարակչական, բարոյական, հոգևոր ներուժն ու տրամադրության տակ եղած և նպատակահարմար օգնության այլ ձևերը՝ ձգտելով դրանք գործադրելիս հաշվի առնել յուրաքանչյուր բանտարկյալի անհատական պահանջմունքները:

60.1. Հիմնարկում սահմանված ռեժիմի շրջանակներում պետք է ձգտել նվազագույնի հասցնել բանտային և ազատ կյանքի միջև տարբերությունը, որը բանտարկյալի մոտ թուլացնում է պատասխանատվության ու մարդկային արժանապատվության զգացումը:

60.2. Ցանկալի է նախքան պատժի ժամկետի լրանալը միջոցներ ձեռնարկել բանտարկյալին աստիճանաբար հասարակություն վերադարձնելու համար: Այդ նպատակին, կախված տվյալ գործի առանձնահատկություններից, կարելի է հասնել տվյալ կամ մեկ այլ հիմնարկում ազատմանը նախապատրաստելու ռեժիմ ապահովելու, որոշակի հսկողության (ոչ ոստիկանական) ներքո փորձաշրջանով ազատ արձակելու միջոցով՝ այն գույակցելով արդյունավետ սոցիալական օգնության հետ:

61. Բանտարկյալների նկատմամբ վերաբերմունքով հարկավոր է ընդգծել ոչ թե նրանց օտարումը հասարակությունից, այլ այն հանգամանքը, որ նրանք շարունակում են մնալ նրա անդամները: Ուստի, հնարավոր բոլոր դեպքերում, համայնքային գործակալություններին հարկավոր է թույլատրել աջակցել հիմնարկների անձնակազմին՝ բանտարկյալների սոցիալական վերականգնման գործում: Հարկավոր է ունենալ յուրաքանչյուր բանտային հիմնարկին կցված սոցիալական աշխատողներ, ովքեր հոգ կտանեն ընտանիքի և կարևոր սոցիալական գործակալությունների հետ բանտարկյալի բոլոր ցանկալի կապերը պահպանելու և բարելավելու:

մասին: Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել, որպեսզի օրենքին և պատժի բնույթին համապատասխան՝ հնարավորինս երաշխավորվեն բանտարկյալների քաղաքացիական շահերը, սոցիալական ապահովության ոլորտի իրավունքները և սոցիալական այլ արտոնություններ:

62. Հիմնարկի բուժառայությունները պետք է ձգտեն բացահայտել բոլոր մարմնական և հոգեկան հիվանդություններն ու խանգարումները, որոնք կարող են խոչընդոտել բանտարկյալի վերադաստիարակմանը, և բուժեն դրանք: Այդ նպատակով պետք է տրամադրվեն անհրաժեշտ բոլոր բժշկական, վիրաբուժական և հոգեբուժական ծառայությունները:

63.1. Այս սկզբունքների կենսագործումը պահանջում է բանտարկյալի նկատմամբ անհատական մոտեցում, այսինքն՝ նրանց ըստ խմբերի դասակարգելու ձկուն համակարգ. ուստի, ցանկալի է, որպեսզի այդ խմբերը տեղակայվեն դրանցից յուրաքանչյուրի հետ աշխատելու համար հարմարեցված հիմնարկներում:

63.2. Այդ հիմնարկներում յուրաքանչյուր խմբի նկատմամբ անվտանգության միատեսակ միջոցառումներ ձեռնարկելը պարտադիր չէ: Ցանկալի է աստիճանակարգել այդ միջոցառումների խստությունը՝ կախված տվյալ խմբից: Բաց տիպի հիմնարկները, պայմանավորված այն հանգամանքով, որ դրանք փախուստները կանխելու նպատակով ֆիզիկական անվտանգության միջոցներ չեն ապահովում, այլ հիմնվում են զուտ բանտարկյալների կարգապահության վրա, վերականգնման առումով առավել բարենպաստ են ընտրված բանտարկյալների համար:

63.3. Ցանկալի է, որ փակ տիպի հիմնարկներում պահվող բանտարկյալների թիվը շատ մեծ չլինի, որպեսզի հնարավոր լինի նրանց հանդեպ անհատական մոտեցում ցուցաբերել: Որոշ երկրներում գտնում են, որ նման հիմնարկների բնակչությունը չպետք է գերազանցի 500-ը: Բաց տիպի հիմնարկներում բանտարկյալների թիվը պետք է հնարավորինս փոքր լինի:

63.4. Մյուս կողմից, բանտերը չպետք է այնաստիճան փոքր լինեն, որ դրանցում հնարավոր չլինի պատշաճ հնարավորություններ ապահովել:

64. Բանտարկյալի ազատմամբ հասարակության պարտավորությունները չեն դադարում: Ուստի, անհրաժեշտ է պետական կամ մասնավոր մարմիններ ունենալ, որոնք ի վիճակի կլինեն արդյունավետ խնամք ցուցաբերել ազատված բանտարկյալների նկատմամբ՝ նրանց հետ կապված նախապաշարումները նվազեցնելու և նրանց սոցիալական վերականգնման նպատակով:

Բանտարկյալների հետ տարվող աշխատանքներ

65. Բանտարկության կամ նման այլ միջոցի դատապարտված անձանց հետ տարվող աշխատանքների նպատակը պետք է պատժի տևողության սահմաններում այդ անձանց մոտ ազատվելուց հետո օրինապահ և ինքնուրույն կյանք վարելու կամքը ձևավորելը լինի: Այդ աշխատանքների ընթացքում հարկավոր է նրանց մոտ խթանել ինքնահարգանքը և պատասխանատվության զգացումը:

66.1. Այդ նպատակով պետք է ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները, այդ թվում՝ կրոնական ծառայությունները (այն երկրներում, ուր դա հնարավոր է), ուսուցումը, մասնագիտական կողմնորոշումն ու վերապատրաստումը, սոցիալական դեպքերի վարումը, աշխատանք գտնելու հարցում խորհրդատվությունը, ֆիզիկական դաստիարակությունն ու բարոյական կերպարի

ամրապնդումը՝ հաշվի առնելով բանտարկյալի անհատական պահանջմունքները, նրա սոցիալական և քրեական անցյալը, ֆիզիկական ու մտավոր ունակությունները և հնարավորությունները, խառնվածքը, պատժի ժամկետի տևողությունը, ազատվելուց հետո նրա հեռանկարները:

66.2. Քիչ թե շատ տևական ժամկետով դատապարտված յուրաքանչյուր բանտարկյալի ընդունելիս տնօրենը նրա վերաբերյալ հնարավորինս սեղմ ժամկետում պետք է սպառիչ տեղեկություններ ստանա նախորդ կետում թվարկված հարցերի վերաբերյալ: Այդ տեղեկությունները պետք է անպայման պարունակեն հոգեբուժության ոլորտում հնարավորինս գիտակ բժշկի զեկուցագիրը բանտարկյալի ֆիզիկական և հոգեկան վիճակի մասին:

66.3. Այդ զեկուցագրերը և համապատասխան այլ փաստաթղթերը պետք է ներառվեն նրա անձնական գործում: Անձնական գործը պետք է մշտապես թարմացվի և վարվի այնպես, որպեսզի պատասխանատու աշխատողները կարողանան հարկ եղած դեպքում օգտվել դրանից:

Դասակարգում և անհատականացում

67. Դասակարգման նպատակներն են՝

ա) բանտարկյալների մեկուսացումն այլ բանտարկյալներից, ովքեր իրենց հանցավոր անցյալի կամ բնավորության բացասական գծերի պատճառով կարող են նրանց վրա վատ ազդեցություն ունենալ,

բ) բանտարկյալներին ըստ խմբերի դասակարգելը, ինչը կխթանի սոցիալական վերականգնման նպատակով նրանց հետ տարվող աշխատանքը:

68. Բանտարկյալների տարբեր խմբերի հետ աշխատանքը հարկավոր է հնարավորության սահմաններում կատարել տարբեր հիմնարկներում կամ միևնույն հիմնարկի տարբեր ստորաբաժանումներում:

69. Յուրաքանչյուր բանտարկյալի ընդունելուց հետո ամենասեղմ ժամկետում անհրաժեշտ է մշակել տարվելիք աշխատանքների ծրագիր՝ ուսումնասիրելով նրա բնավորությունը և ելնելով անհատական կարիքներից, կարողություններից ու հակումներից:

Արտոնություններ

70. Յուրաքանչյուր հիմնարկում պետք է ունենալ բանտարկյալների տարբեր խմբերի համար նախատեսված արտոնությունների համակարգ և մշակել աշխատանքի տարբեր մեթոդներ՝ լավ վարքը խրախուսելու, նրանց մոտ պատասխանատվության զգացում ձևավորելու, նրանց հետ տարվող աշխատանքներում վերջիններիս շահագրգռվածությանը և համագործակցությանը հասնելու նպատակով:

Աշխատանքը

71.1. Բանտարկյալների աշխատանքը չպետք է տառապանք պատճառի նրանց:

71.2. Բոլոր դատապարտված բանտարկյալները պարտավոր են աշխատել՝ ելնելով բժշկի կողմից հաստատված ֆիզիկական և հոգեկան համապատասխանությունից:

71.3. Բանտարկյալներին պետք է այնքան օգտակար աշխատանք հանձնարարվի, որքան անհրաժեշտ է սովորական աշխատանքային օրվա ընթացքում ակտիվ աշխատելու համար:

71.4. Բանտարկյալներին տրամադրվող աշխատանքը հնարավորության սահմաններում պետք է լինի այնպիսին, որ պահպանի կամ բարձրացնի նրանց որակավորումը, ինչը թույլ կտա ազատվելուց հետո ազնիվ կյանք վարել:

71.5. Հարկավոր է արհեստներ ուսուցանել այն բանտարկյալներին, ում համար դա կարող է օգտակար լինել, հատկապես՝ երիտասարդ բանտարկյալներին:

71.6. Բանտարկյալները պետք է աշխատանքի հարցում ընտրության հնարավորություն ունենան, եթե արհեստների հնարավորությունները և հաստատության ղեկավարման ու կարգուկանոնի պահանջները դա թույլ են տալիս:

72.1. Հիմնարկներում աշխատանքի կազմակերպումն ու մեթոդները պետք է առավելագույնս նման լինեն հիմնարկներից դուրս նույնանման աշխատանքի կազմակերպմանն ու մեթոդներին, որպեսզի բանտարկյալները պատրաստվեն ազատության մեջ աշխատանքի պայմաններին:

72.2. Այդքանով հանդերձ, բանտում կազմակերպված արտադրությունից շահույթ ստանալու նպատակը չպետք է գերակայի բանտարկյալների և նրանց մասնագիտական ուսուցման շահերի նկատմամբ:

73.1. Հիմնարկներում արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրության կառավարումը գերադասելի է դնել բանտային վարչկազմի, այլ ոչ մասնավոր կապալառուների վրա:

73.2. Այն բանտարկյալները, ովքեր վարչակազմի ենթակայության ներքո չգտնվող աշխատանք են կատարում, պետք է գտնվեն հիմնարկի աշխատողների մշտական հսկողության տակ: Բացառությամբ այն դեպքերի, երբ բանտարկյալներն աշխատում են պետական այլ հիմնարկների համար, գործատուները պարտավոր են հիմնարկին վճարել համապատասխան աշխատանքի համար սահմանված լրիվ աշխատավարձ՝ հաշվի առնելով բանտարկյալների աշխատանքի արտադրողականությունը:

74.1. Ազատության ընթացքում աշխատողների առողջության և անվտանգության ապահովման կանոնները պետք է կիրառվեն նաև բանտային հիմնարկներում:

74.2. Անհրաժեշտ է սահմանել արտադրական վնասվածքներ ստանալու, այդ թվում՝ մասնագիտական հիվանդություններ ձեռք բերելու դեպքում բանտարկյալներին փոխհատուցում վճարելու մասին դրույթներ, որոնք չպետք է պակաս նպաստավոր լինեն ազատության մեջ աշխատողների համար օրենքով նախատեսված փոխհատուցման պայմաններից:

75.1. Աշխատանքային օրվա կամ շաբաթվա առավելագույն տևողությունը սահմանվում է օրենքով կամ վարչական կանոնակարգերով՝ հաշվի առնելով ազատության մեջ աշխատողների աշխատանքային գործունեության բնագավառում սահմանված տեղական կանոններն ու սովորույթները:

75.2. Աշխատաժամանակը պետք է սահմանել այնպես, որպեսզի բանտարկյալները շաբաթվա ընթացքում ունենան առնվազն մեկ հանգստյան օր և բավականաչափ ժամանակ՝ իրենց հետ

տարվող աշխատանքների և վերականգնման հետ կապված ուսուցողական և այլ միջոցառումների համար:

76.1. Անհրաժեշտ է բանտարկյալների աշխատանքի դիմաց արդարացի վարձատրության համակարգ ունենալ:

76.2. Այդ համակարգը բանտարկյալներին պետք է հնարավորություն տա իրենց աշխատած գումարի առնվազն մի մասը ծախսել անձնական օգտագործման թույլատրելի առարկաներ ձեռք բերելու համար, իսկ մյուս մասն ուղարկել ընտանիքին:

76.3. Այդ համակարգը պետք է նաև բանտարկյալների վաստակի մի մասը վարչակազմի պահպանությանը հանձնելու հնարավորություն նախատեսի, որն ազատման պահին խնայողությունների տեսքով կվերադարձվի նրանց:

Կրթություն և ժամանց

77.1. Այն բանտարկյալներին, ովքեր ընդունակ են դրանից օգուտ քաղել, պետք է կրթության հնարավորություն ընձեռել, ներառյալ կրոնական դաստիարակությունն այն երկրներում, որտեղ դա հնարավոր է: Անտառաճանաչ և երիտասարդ բանտարկյալների ուսուցումը պետք է պարտադիր լինի, և բանտային վարչակազմերը պետք է հատուկ ուշադրություն դարձնեն դրան:

77.2. Բանտարկյալների ուսուցումը պետք է հնարավորինս ինտեգրված լինի երկրում գործող կրթական համակարգին, որպեսզի ազատվող բանտարկյալները կարողանան հետագայում առանց բարդությունների շարունակել իրենց կրթությունը:

78. Բոլոր հաստատություններում բանտարկյալների համար հարկավոր է ժամանցային և մշակութային գործունեության հնարավորություն ապահովել՝ ի շահ նրանց ֆիզիկական և հոգեկան առողջության:

Սոցիալական կապեր և խնամք ազատվելուց հետո

79. Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել բանտարկյալի և նրա ընտանիքի միջև կապերի պահպանմանն ու ամրապնդմանը, ինչը բխում է երկու կողմերի շահերից:

80. Պատժի սկզբից ևեթ հարկավոր է մտածել ազատվելուց հետո բանտարկյալի ապագա կյանքի մասին, ուստի հարկավոր է խրախուսել և օգնել նրան՝ հիմնարկից դուրս գտնվող անձանց կամ հաստատությունների հետ կապեր հաստատելու և պահպանելու հարցում, ինչը կարող է ծառայել ընտանիքի շահերին և ազատվելուց հետո նրա սոցիալական վերականգնմանը:

81.1. Պետական կամ այլ ծառայություններն ու գերատեսչությունները, որոնք հնարավորության սահմաններում և անհրաժեշտության դեպքում ազատ արձակված բանտարկյալներին օգնում են վերահաստատվել հասարակությունում, պետք է հոգան, որ այդ բանտարկյալները անձը հաստատող անհրաժեշտ փաստաթղթեր ու վկայականներ ձեռք բերեն, համապատասխան բնակարան և աշխատանք գտնեն, ունենան տվյալ կլիմային ու տարվա եղանակին հարմար հագուստ և նշանակված վայր հասնելու և ազատվելուն անմիջապես հաջորդող ժամանակահատվածում գոյատևելու համար բավարար միջոցներ:

81.2. Նման գերատեսչությունների լիազոր ներկայացուցիչները պետք է բանտային հիմնարկներ և դրանցում պահվող անձանց այցելելու հնարավորություն ունենան: Ազատագրված սկզբից և եթե հարկավոր է խորհրդակցել այդ գերատեսչությունների հետ՝ բանտարկյալների հետագա կյանքի հեռանկարների մասին:

81.3. Ցանկալի է, որպեսզի այդ գերատեսչությունների աշխատանքը հնարավորինս կենտրոնացված կամ համակարգված լինի՝ դրանց աշխատանքի առավելագույն արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Բ. Հոգեկան հիվանդություններով և շեղումներով տառապող բանտարկյալներ

82.1. Հոգեկան հիվանդ համարվող անձինք չպետք է պահվեն բանտերում, ուստի հարկավոր է անհապաղ միջոցներ ձեռնարկել նրանց հոգեբուժական հաստատություն տեղափոխելու համար:

82.2. Այլ հոգեկան հիվանդություններով կամ շեղումներով տառապող բանտարկյալներին պետք է պահել հսկողության տակ և բուժել բժշկական ենթակայության հատուկ հիմնարկներում:

82.3. Բանտում գտնվելու ընթացքում նման բանտարկյալները պետք է բժշկական հատուկ հսկողության ներքո գտնվեն:

82.4. Պատժային հաստատության բժշկական և հոգեբուժական ծառայությունները պետք է ապահովեն դրա կարիքն ունեցող բոլոր բանտարկյալների բուժումը:

83. Ցանկալի է իրավասու գերատեսչությունների հետ համագործակցությամբ քայլեր ձեռնարկել ազատ արձակված բանտարկյալների բուժումը, ինչպես նաև նրանց սոցիալ-հոգեբուժական խնամքն անհրաժեշտության դեպքում ազատվելուց հետո շարունակելու ուղղությամբ:

Գ. Ձերբակալված կամ դատավարությանը սպասող բանտարկյալներ

84.1. Քրեական հանցագործության մեղադրանքի հիման վրա ձերբակալված կամ բանտարկված, ոստիկանական տեղամասերում կամ բանտային հիմնարկներում պահվող, սակայն դեռևս չդատապարտված անձինք սույն կանոններում այսուհետ կանվանվեն «չդատապարտված բանտարկյալներ»:

84.2. Չդատապարտված բանտարկյալները համարվում են անմեղ, և նրանց նկատմամբ հարկավոր է համապատասխան վերաբերմունք ցուցաբերվի:

84.3. Չդատապարտված բանտարկյալների նկատմամբ պետք է կիրառվեն ստորև շարադրված կանոններում նկարագրված հատուկ ռեժիմի հիմնական պահանջները՝ չբացառելով անձի ազատության պաշտպանությանը կամ չդատապարտված բանտարկյալների վերաբերյալ ընթացակարգերի մասին իրավական դրույթների կիրառումը:

85.1. Չդատապարտված բանտարկյալները պետք է դատապարտվածներից անջատ պահվեն:

85.2. Չդատապարտված երիտասարդ բանտարկյալներին անհրաժեշտ է չափահասներից անջատ և, որպես կանոն, առանձին հիմնարկներում պահել:

86. Չդատապարտված բանտարկյալները գիշերային ժամերին պետք է տեղաբաշխվեն միայնակ և առանձին սենյակներում՝ հաշվի առնելով կլիմայով պայմանավորված տեղական առանձնահատկությունները:

87. Հիմնարկում սահմանված կարգը չխախտելու պայմանով չդատապարտված բանտարկյալներին կարող են սեփական ցանկությամբ իրենց հաշվին, բանտային վարչակազմի, ընտանիքի կամ բարեկամների միջոցով դրսից սնունդ ստանալ: Հակառակ դեպքում բանտարկյալի սնունդն ապահովում է վարչակազմը:

88.1. Չդատապարտված բանտարկյալներն իրավունք ունեն կրելու սեփական հագուստը՝ պայմանով, որ այն մաքուր և պիտանի լինի:

88.2. Եթե չդատապարտված բանտարկյալը բանտային համազգեստ է կրում, այն պետք է տարբերվի դատապարտյալների համազգեստից:

89. Չդատապարտված բանտարկյալները պետք է աշխատելու հնարավորություն ունենան, սակայն նրանք չեն կարող պարտադրված աշխատել: Աշխատելու դեպքում բանտարկյալը պետք է վարձատրվի:

90. Չդատապարտված բանտարկյալները պետք է սեփական միջոցներով կամ երրորդ անձանց հաշվին գրքեր, լրագրեր, գրենական պիտույքներ կամ զբաղմունքի այլ պարագաներ ձեռք բերելու հնարավորություն ունենան՝ արդարադատության իրականացման շահերին չհակասելու, հիմնարկում անվտանգությունը և կարգուկանոնը պահպանելու պայմանով:

91. Չդատապարտված բանտարկյալները պետք է կարողանան բանտում գտնվելու ընթացքում օգտվել իրենց բժշկի կամ ատամնաբույժի ծառայություններից, եթե այդ մասին նրանց խնդրանքը հիմնավոր է, և եթե նրանք ի վիճակի են հոգալու դրա հետ կապված ծախսերը:

92. Չդատապարտված բանտարկյալներին պետք է թույլատրվի ընտանիքին անհապաղ տեղեկացնել իրենց բանտարկության մասին, տրամադրվեն ընտանիքի ու բարեկամների հետ կապ պահպանելու և նրանց հետ տեսակցելու պատշաճ հնարավորություններ՝ կիրառելով միայն այնպիսի սահմանափակումներ ու հսկողություն, որն անհրաժեշտ է արդարադատության իրականացման, հիմնարկում անվտանգություն ու կարգուկանոն պահպանելու համար:

93. Հնարավորության դեպքում չդատապարտված բանտարկյալները պետք է անվճար իրավաբանական խորհրդատվության հնարավորություն ունենան՝ բանտում տեսակցելով իրենց պաշտպանությունն ստանձնած իրավախորհրդատուի հետ՝ պաշտպանությունը նախապատրաստելու և վերջինիս գաղտնի հանձնարարություններ տալու նպատակով: Այդ նպատակով հարկավոր է բանտարկյալներին ըստ պահանջի գրենական պիտույքներ տրամադրել: Իրավախորհրդատուի հետ բանտարկյալի տեսակցությունը պետք է անցնի ոստիկանության կամ բանտի աշխատողների տեսադաշտում, սակայն լսելիության սահմաններից դուրս:

Դ. Քաղաքացիական գործերով բանտարկված անձինք

94. Այն երկրներում, ուր պարտքի հանձնառություն չկատարելու կամ դատարանի որոշմամբ ցանկացած այլ՝ ոչ քրեական գործի շրջանակներում թույլատրվում է անձին արգելանքի վերցնել,

նման անձինք չպետք է սահմանափակումների կամ խիստ վերաբերմունքի ենթարկվեն ավելի, քան անհրաժեշտ է հուսալի հսկողություն և պատշաճ կարգուկանոն պահպանելու համար: Նման անձանց նկատմամբ վերաբերմունքը պետք է լինի ոչ պակաս բարենպաստ, քան չդատապարտված բանտարկյալների պարագայում, միայն այն տարբերությամբ, որ նրանց աշխատանքը կարող է պարտադիր լինել:

Ե. Առանց մեղադրանք առաջադրելու ձերբակալված կամ կալանավորված անձինք

95. Չխախտելով Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածի դրույթները, առանց մեղադրանք առաջադրելու ձերբակալված կամ կալանավորված անձինք օգտվում են I և II մասերի Գ բաժնում նկարագրված պաշտպանությունից: II մասի Ա բաժնի համապատասխան դրույթները ևս կիրառելի են այն դեպքերում, երբ դրանց գործածությունը կարող է բխել բանտարկյալների այս հատուկ խմբի շահերից՝ պայմանով, որ չեն ձեռնարկվի այնպիսի միջոցներ, որոնցից ենթադրվում է, որ վերադաստիարակումը կամ վերականգնումն ամեն դեպքում կիրառելի են որևէ քրեական հանցանքի համար չդատապարտված անձանց նկատմամբ:

Անչափահասների գործերով արդարադատության իրականացման ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններ (Պեկինյան կանոններ). մեկնաբանություններով (United Nations Standard Minimum Rules for the Administration of Juvenile Justice ("The Beijing Rules", with commentaries)

Հաստատվել են ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1985թ. նոյեմբերի 29-ի թիվ 40/33 բանաձևով

Գլխավոր Ասամբլեան՝

նկատի առնելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, ինչպես նաև մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային այլ փաստաթղթեր, որոնք առնչվում են երիտասարդների իրավունքներին,

նկատի առնելով նաև, որ 1985 թվականը հայտարարված է «Երիտասարդության միջազգային տարի՝ մասնակցություն, զարգացում, խաղաղություն», և որ միջազգային հանրությունը զգալի ուշադրություն է դարձնում երիտասարդների իրավունքների պաշտպանությանը և դրանց իրականացմանը նպաստելու հարցերին, ինչի մասին վկայում է այն կարևորությունը, որ տրվում է Երեխայի իրավունքների մասին հռչակագրին,

վկայակոչելով Միավորված ազգերի կազմակերպության՝ հանցագործությունների կանխարգելման և իրավախախտների նկատմամբ վերաբերմունքի հարցերով վեցերորդ կոնգրեսի ընդունած թիվ 4 բանաձևը, որով կոչ է արվում մշակել անչափահասների գործերով արդարադատության իրականացման և անչափահասների խնամքի նվազագույն ստանդարտ կանոններ, որոնք կարող են նմուշ հանդիսանալ անդամ երկրների համար,

վկայակոչելով նաև Տնտեսական և սոցիալական խորհրդի 1984 թվականի մայիսի 25-ի թիվ 1984/153 որոշումը, որով կանոնների նախագիծը Միավորված ազգերի կազմակերպության՝ 1985 թվականի օգոստոսի 26-ից սեպտեմբերի 6-ը Միլանում (Իտալիա) կայացած հանցագործությունների կանխարգելման և իրավախախտների նկատմամբ վերաբերմունքի հարցերով յոթերորդ կոնգրեսին էր ներկայացվել 1984 թվականի մայիսի 14-18-ը Պեկինում կայացած միջտարածաշրջանային նախապատրաստական խորհրդակցության միջոցով,

ընդունելով, որ մարդկային անհատի զարգացման վաղ փուլում գտնվելու կապակցությամբ երիտասարդները կարիք ունեն առանձնակի հոգատարության և օգնության՝ ֆիզիկական, հոգևոր ու սոցիալական զարգացման հարցերում, ինչպես նաև իրավական պաշտպանության՝ խաղաղության, ազատության, արժանապատվության և անվտանգության պայմաններում,

համարելով, որ գոյություն ունեցող ներպետական օրենսդրությունը, քաղաքականությունն ու պրակտիկան կարող են վերանայման ու փոփոխման կարիք ունենալ՝ հաշվի առնելով սույն կանոններում ներառված ստանդարտները,

այնուհետ համարելով, որ թեև նման ստանդարտերը կարող են դժվար իրականանալի թվալ ներկայիս սոցիալական, տնտեսական, մշակութային, քաղաքական և իրավական պայմաններում, դրանք, այդուհանդերձ, նախատեսված են որպես քաղաքականության նվազագույն ծրագիր՝

1. երախտագիտությամբ է հիշատակում Անչափահասների գործերով արդարադատության իրականացման Միավորված ազգերի կազմակերպության նվազագույն ստանդարտ կանոնների նախապատրաստման ուղղությամբ Հանցագործությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի կոմիտեի, Գլխավոր քարտուղարի, Հանցագործությունների կանխարգելման և իրավախախտների նկատմամբ վերաբերմունքի հարցերով Միավորված ազգերի կազմակերպության Ասիայի և Հեռավոր Արևելքի ինստիտուտի և Միավորված ազգերի կազմակերպության այլ հաստատությունների կատարած աշխատանքը.

2. երախտագիտությամբ ի գիտություն է ընդունում անչափահասների գործերով արդարադատության իրականացման Միավորված ազգերի կազմակերպության նվազագույն ստանդարտ կանոնների նախագծի մասին Գլխավոր քարտուղարի զեկույցը.

3. հավանություն է տալիս կանոնների տեքստի մշակումն ավարտելու նպատակով Պեկինում անցկացված միջտարածաշրջանային նախապատրաստական խորհրդակցության արդյունքներին, որոնք քննարկման և վերջնական որոշում կայացնելու նպատակով ներկայացվել են Միավորված ազգերի կազմակերպության՝ հանցագործությունների կանխարգելման և իրավախախտների նկատմամբ վերաբերմունքի հարցերով յոթերորդ կոնգրեսին.

4. հաստատում է Անչափահասների գործերով արդարադատության իրականացման Միավորված ազգերի կազմակերպության նվազագույն ստանդարտ կանոնները, որոնք առաջարկվել են յոթերորդ Կոնգրեսի կողմից և շարադրված են սույն բանաձևի հավելվածում, և հավանություն է տալիս յոթերորդ Կոնգրեսի առաջարկությանն առ այն, որ կանոնները կոչվեն «Պեկինյան կանոններ».

5. առաջարկում է անդամ երկրներին՝ անհրաժեշտության դեպքում իրենց ներպետական օրենսդրությունը, քաղաքականությունն ու պրակտիկան համապատասխանեցնել Պեկինյան կանոններին, հատկապես անչափահասների գործերով արդարադատության իրականացմանը ներգրավված անձնակազմ ուսուցանելիս, և Կանոնները ներկայացնել համապատասխան մարմինների և լայն հասարակության ուշադրությանը.

6. կոչ է անում Հանցագործությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի հարցերով կոմիտեին՝ Միավորված ազգերի կազմակերպության՝ հանցագործությունների կանխարգելման և իրավախախտների նկատմամբ վերաբերմունքի հաստատությունների օժանդակությամբ մշակել Պեկինյան կանոնների արդյունավետ իրականացման միջոցներ.

7. առաջարկում է անդամ երկրներին՝ Գլխավոր քարտուղարին իրազեկել Պեկինյան կանոնների իրականացման ընթացքի մասին և ձեռք բերած արդյունքների մասին պարբերական հաշվատվություններ ներկայացնել Հանցագործությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի կոմիտեին.

8. խնդրում է անդամ երկրներին և Գլխավոր քարտուղարին՝ ուսումնասիրություն կատարել և մշակել տվյալների շտեմարան անչափահասների գործերով արդարադատության իրականացման արդյունավետ քաղաքականության ու պրակտիկայի վերաբերյալ.

9. խնդրում է Գլխավոր քարտուղարին և անդամ երկրներին՝ ապահովել Պեկինյան կանոնների տեքստի հնարավորինս լայն տարածումը Միավորված ազգերի կազմակերպության բոլոր պաշտոնական լեզուներով, այդ թվում՝ աշխուժացնել տեղեկատվական գործունեությունն անչափահասների գործերով արդարադատության բնագավառում.

10. խնդրում է Գլխավոր քարտուղարին՝ մշակել Պեկինյան կանոնների իրականացման փորձնական ծրագրեր.

11. խնդրում է Գլխավոր քարտուղարին և անդամ երկրներին՝ տրամադրել Պեկինյան կանոնների հաջող իրականացումն ապահովելու համար անհրաժեշտ միջոցներ, մասնավորապես՝ կադրեր հավաքագրելու և ուսուցանելու, աշխատակիցներ փոխանակելու, հետազոտություններ իրականացնելու և գնահատելու, ինչպես նաև փակ հաստատություններում պահելու նոր այլընտրանքների մշակման բնագավառներում.

12. խնդրում է Միավորված ազգերի կազմակերպության՝ հանցագործությունների կանխարգելման և իրավախախտների նկատմամբ վերաբերմունքի հարցերով ութերորդ կոնգրեսին՝ որպես անչափահասների գործերով արդարադատության ոլորտի օրակարգի առանձին տարր՝ քննության առնել Պեկինյան կանոնների և սույն բանաձևում շարադրված հանձնարարականների իրականացման գործում արձանագրված առաջընթացը.

13. կոչ է անում Միավորված ազգերի կազմակերպության համակարգի բոլոր համապատասխան մարմիններին, մասնավորապես՝ տարածաշրջանային հանձնաժողովներին և մասնագիտացված գործակալություններին, հանցագործությունների կանխարգելման և իրավախախտների նկատմամբ վերաբերմունքի հարցերով զբաղվող հաստատություններին, այլ միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպություններին՝ համագործակցել Քարտուղարության հետ և ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ իրենց մասնագիտական իրավասության համապատասխան բնագավառներում Պեկինյան կանոններով սահմանված սկզբունքների իրականացման նպատակով համաձայնեցված ու մշտական գործողություններ ապահովելու համար:

96-րդ լիագումար նիստ

29 նոյեմբերի, 1985 թվական

Հավելված

Անչափահասների գործերով արդարադատության իրականացման Միավորված ազգերի կազմակերպության նվազագույն ստանդարտ կանոնները («Պեկինյան կանոններ»)

Առաջին բաժին. Ընդհանուր սկզբունքներ

1. Հիմնական նպատակները

1.1. Անդամ երկրները իրենց համապատասխան ընդհանուր շահերից ելնելով՝ պետք է ձգտեն նպաստել անչափահասի և նրա ընտանիքի բարեկեցությանը:

1.2. Անդամ երկրները պետք է ձգտեն ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք անչափահասի համար համայնքում բովանդակալից կյանք ապահովելու հնարավորություն կտան, ինչը կխթանի հանցագործություններից և իրավախախտումներից առավելագույնս զերծ անձնական զարգացման և կրթության գործընթացը կյանքի այնպիսի փուլում, երբ տղան կամ աղջիկը առավել հակված են իրավախախտ վարքագծի:

1.3. Բավարար ուշադրություն պետք է դարձնել դրական միջոցների հնարավոր բոլոր աղբյուրներին, այդ թվում՝ ընտանիքին, կամավորներին և համայնքային այլ խմբերին, ինչպես նաև դպրոցներին, համայնքային այլ հաստատություններին, որոնց նպատակը դեռահասի բարեկեցությանն օժանդակելն է, և դրանով իսկ՝ օրենքով նախատեսված միջամտության անհրաժեշտությունը նվազագույնի հասցնելը, ինչպես նաև՝ օրենքի հետ խնդիրներ ունեցող անչափահասի նկատմամբ վերաբերմունքն արդյունավետ, արդարացի և մարդասիրական դարձնելը:

1.4. Անչափահասների գործերով արդարադատությունը պետք է յուրաքանչյուր երկրի ազգային զարգացման գործընթացի անքակտելի բաղադրիչը լինի՝ բոլոր անչափահասների համար համակողմանի սոցիալական արդարության շրջանակներում՝ դրանով միաժամանակ նպաստելով երիտասարդների պաշտպանությանը և հասարակության մեջ անդորր ու կարգուկանոն պահպանելուն:

1.5. Սույն կանոնները պետք է իրագործվեն յուրաքանչյուր անդամ երկրում գերակայող տնտեսական, սոցիալական և մշակութային պայմանների համատեքստում:

1.6. Անհրաժեշտ է պարբերաբար կատարելագործել ու համակարգել անչափահասների գործերով արդարադատության ծառայությունները՝ այդ ծառայությունների անձնակազմի որակավորումը, այդ թվում՝ նրանց կողմից կիրառվող մեթոդները, մոտեցումները և վերաբերմունքը անհրաժեշտ մակարդակի բարձրացնելու ու պահպանելու նպատակով:

Մեկնաբանություն

Այս ընդգրկուն հիմնական նպատակները վերաբերում են համապարփակ սոցիալական քաղաքականությանը՝ ընդհանուր առմամբ, և ուղղված են անչափահասների բարեկեցությունն առավելագույնս խթանելուն. դա նվազագույնի կհասցնի անչափահասների գործերով արդարադատության համակարգի կողմից միջամտությունների անհրաժեշտությունը, ինչն էլ իր հերթին կնվազեցնի ցանկացած միջամտության վնասակար ազդեցությունը: Երիտասարդների նկատմամբ նման միջոցառումները հանցավոր գործունեության սկզբից ևեթ կիրառելը հիմնական քաղաքական նախադրյալներն են սույն կանոնների կիրառման անհրաժեշտությունը վերացնելու ուղղությամբ:

1.1-1.3 կանոններով ընդգծվում է անչափահասների վերաբերյալ հիմնարար սոցիալական քաղաքականության կարևոր նշանակությունը, մասնավորապես՝ անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների և իրավախախտումների կանխման գործում: 1.4 կանոնով անչափահասների գործերով արդարադատությունը սահմանվում է որպես սոցիալական արդարության համակարգի բաղադրիչ, իսկ 1.6-ով ընդգծվում է անչափահասների գործերով

արդարադատության համակարգի անընդհատ կատարելագործման անհրաժեշտությունը՝ միննույն ժամանակ աչքաթող չանելով անչափահասների վերաբերյալ առաջադեմ սոցիալական քաղաքականության մշակումը և նկատի առնելով այդ համակարգի անձնակազմի կողմից մատուցվող ծառայությունների անընդհատ կատարելագործման անհրաժեշտությունը:

1.5 կանոնի նպատակն է՝ արտացոլել անդամ երկրներում առկա պայմանները, որոնք պայմանավորում են այս կամ այն կանոնի կիրառման ձևերը և որոնք տարբերվում են այլ երկրներում կիրառվող ձևերից:

2. Կանոնների կիրառման ոլորտը և գործածված սահմանումները

2.1. Հետևյալ նվազագույն ստանդարտ կանոններն անչափահասների նկատմամբ կիրառվում են անաչառ՝ առանց ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային, գույքային կամ այլ դրության վրա հիմնված խտրականության:

2.2. Անդամ երկրները, իրենց իրավական համակարգերին և հայեցակարգերին համապատասխան, սույն կանոնների իմաստով կիրառում են հետևյալ սահմանումները.

ա) անչափահաս է համարվում այն երեխան կամ երիտասարդը, ով տվյալ իրավական համակարգի շրջանակներում իրավախախտման համար կարող է պատասխանատվության ենթարկվել՝ չափահասի նկատմամբ կիրառվող պատասխանատվությունից տարբեր ձևով,

բ) իրավախախտում է համարվում տվյալ իրավական համակարգի շրջանակներում օրենքով պատժելի յուրաքանչյուր արարք (գործողություն կամ անգործություն),

գ) անչափահաս իրավախախտ է համարվում այն երեխան կամ երիտասարդը, ով կասկածվում կամ մեղադրվում է իրավախախտում կատարելու մեջ կամ կատարել է նման իրավախախտում:

2.3. Պետք է ջանքեր գործադրել՝ յուրաքանչյուր ներպետական իրավական համակարգի շրջանակներում այնպիսի օրենքներ, կանոններ և դրույթներ ընդունելու ուղղությամբ, որոնք հատկապես կվերաբերեն անչափահաս իրավախախտներին, անչափահասների գործերով արդարադատության իրականացման իրավասություն ունեցող հաստատություններին ու մարմիններին, և որոնք կոչված են.

ա) բավարարելու անչափահաս իրավախախտների զանազան պահանջունքները՝ միաժամանակ պաշտպանելով նրանց հիմնական իրավունքները,

բ) բավարարելու հասարակության պահանջները,

գ) անշեղորեն և անաչառ կենսագործելու սույն կանոնները:

Մեկնաբանություն

Նվազագույն ստանդարտ կանոնները միտումնավոր այնպես են ձևակերպված, որպեսզի հնարավոր լինի դրանք կիրառել իրավական տարբեր համակարգերում՝ միաժամանակ սահմանելով անչափահաս իրավախախտի հետ վարվելաձևի որոշ նվազագույն ստանդարտներ, որոնք

հնարավոր կլինի կիրառել «անչափահաս» բառի ցանկացած մեկնաբանության և անչափահաս իրավախախտների հետ աշխատող ցանկացած համակարգի պայմաններում:

Կանոնները մշտապես պետք է կիրառվեն անաչառ և առանց որևէ խտրականության:

Այդ նպատակով թիվ 2.1 կանոնով ընդգծվում է կանոնների անաչառ և առանց որևէ խտրականության կիրառման կարևորությունը: Այդ կանոնը հաջորդում է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 2-րդ սկզբունքի ձևակերպմանը:

2.2 կանոնով սահմանվում են «անչափահաս» և «իրավախախտում» հասկացությունները՝ որպես սույն նվազագույն ստանդարտ կանոնների հիմնական մեխը հանդիսացող «անչափահաս իրավախախտ» հասկացության բաղադրիչներ (տես նաև 3 և 4 կանոնները): Հարկ է նշել, որ տարիքային շեմը բացառապես կախված կլինի տվյալ իրավական համակարգից՝ դրանով իսկ լիովին հաշվի նստելով անդամ երկրների տնտեսական, սոցիալական, մշակութային և իրավական համակարգերի հետ: Դրանով «անչափահաս» հասկացության համար տարիքային լայն միջակայք է սահմանվում՝ 7-ից մինչև 18 տարեկան կամ ավելի: Այդ միջակայքն անխուսափելի է՝ նկատի առնելով ներպետական իրավական համակարգերի բազմազանությունը, մասնավորապես, որ դրանով սույն նվազագույն ստանդարտ կանոնների նշանակությունը չի նվազում:

Թիվ 2.3 կանոնում խոսվում է սույն նվազագույն ստանդարտ կանոնները թե՛ իրավական և թե՛ գործնական տեսակետից լավագույնս կյանքի կոչելուն ուղղված ներպետական հատուկ օրենսդրություն մշակելու անհրաժեշտության մասին:

3. Կանոնների կիրառման ոլորտի ընդլայնումը

3.1. Կանոնների համապատասխան դրույթները կիրառվում են ոչ միայն անչափահաս իրավախախտների, այլև այն անչափահասների նկատմամբ, ովքեր կարող են քրեական հետապնդման ենթարկվել այնպիսի արարքի համար, որը չափահասի կողմից կատարվելու դեպքում պատժելի չէ:

3.2. Հարկավոր է ջանք գործադրել կանոններում շարադրված սկզբունքները բոլոր այն անչափահասների վրա տարածելու ուղղությամբ, ում նկատմամբ սոցիալական ապահովության և խնամակալության միջոցառումներ են ձեռնարկվել:

3.3. Հարկավոր է ջանք գործադրել կանոններում շարադրված սկզբունքները նաև չափահաս երիտասարդ իրավախախտների վրա տարածելու համար:

Մեկնաբանություն

3-րդ կանոնն անչափահասների գործերով արդարադատության նվազագույն ստանդարտ կանոններով իրականացվող պաշտպանությունը տարածում է նաև հետևյալ դեպքերի վրա.

ա) ներպետական տարբեր իրավական համակարգերով նախատեսված, այսպես կոչված՝ «կարգավիճակով պայմանավորված իրավախախտումներ», երբ անչափահասների դեպքում արարքն իրավախախտում համարելն առավել հավանական է, քան մեծահասակների պարագայում (օրինակ՝ դասերից խուսափելը, դպրոցում և ընտանիքում վատ վարք դրսևորելը, հասարակական վայրերում անսթափ վիճակում հայտնվելը և այլն) (3.1 կանոն),

բ) անչափահասների սոցիալական ապահովության և խնամքի ընթացակարգեր (3.2 կանոն),

գ) չափահաս երիտասարդ իրավախախտների վերաբերյալ ընթացակարգեր՝ կախված, անշուշտ, տվյալ տարիքային շեմից (3.3 կանոն):

Հիշյալ երեք դեպքերի վրա կանոնների տարածումը, կարծեք թե, արդարացված է: 3.1 կանոնը նվազագույն երաշխիքներ է նախատեսում այդ բնագավառներում, իսկ 3.2 կանոնը դիտվում է որպես օրենքի հետ խնդիրներ ունեցող բոլոր անչափահասների համար առավել արդար, իրավահավասար և մարդասեր արդարադատության ուղղությամբ կատարվելիք ցանկալի քայլ:

4. Քրեական պատասխանատվության տարիքը

4.1. Այն իրավական համակարգերում, ուր ընդունված է «անչափահասների քրեական պատասխանատվության տարիք» հասկացությունը, այդպիսի տարիքի ստորին շեմը չպետք է խիստ ցածր լինի՝ հաշվի առնելով հուզական, հոգեկան և մտավոր հասունության գործոնները:

Մեկնաբանություն

Քրեական պատասխանատվության նվազագույն տարիքը տարբեր համակարգերում տարբեր է՝ կախված պատմական և մշակութային առանձնահատկություններից: Արդիական մոտեցումը ենթադրում է, որ անհրաժեշտ է պարզել երեխայի՝ քրեական պատասխանատվության բարոյահոգեբանական բաղադրիչները կրելու ընդունակությունը, այսինքն՝ այն, թե որքանով է անչափահասն ի վիճակի պատասխանատվություն կրել իր՝ ըստ էության հակահասարակական վարքագծի համար՝ ելնելով նրա անհատական ընկալումից և գիտակցումից: Քրեական պատասխանատվության չափազանց ցածր տարիքային շեմ սահմանելու կամ նման շեմ չսահմանելու դեպքում պատասխանատվության գաղափարը կորցնում է իմաստը: Ընդհանրապես, սերտ առնչություն կա իրավախախտման կամ հանցավոր վարքագծի համար պատասխանատվության և, անշուշտ, սոցիալական իրավունքների ու պարտականությունների միջև (ինչպիսիք են՝ ընտանեկան դրությունը, քաղաքացիական գործունակությունը և այլն):

Ուստի, հարկավոր է ջանքեր գործադրել տարիքային ողջամիտ, միջազգայնորեն ընդունված նվազագույն շեմ որոշելու համար:

5. Անչափահասների գործերով արդարադատության նպատակները

5.1. Անչափահասների գործերով արդարադատության համակարգը պետք է հատկապես կարևորի անչափահասի բարեկեցությունը և ապահովի, որպեսզի անչափահաս իրավախախտների նկատմամբ կիրառվող ցանկացած միջոց միշտ համարժեք լինի թե՛ իրավախախտների առանձնահատկություններին և թե՛ իրավախախտման հանգամանքներին:

Մեկնաբանություն

5-րդ կանոնում արտացոլված են անչափահասների գործերով արդարադատություն իրականացնելու առավել կարևոր նպատակները: Առաջին նպատակը անչափահասի բարեկեցությանը նպաստելն է: Դա գլխավոր նպատակն է իրավական այն համակարգերում, որոնցում անչափահաս իրավախախտների գործերով զբաղվում են ընտանեկան գործերով դատարանները կամ վարչական մարմինները, սակայն անչափահասների բարեկեցությանը պետք է

ձգտեն նաև այն համակարգերը, որոնք առաջնորդվում են քրեական դատարանի մոդելով՝ նպաստելով բացառապես պատժիչ միջոցներին դիմելու պրակտիկայից խուսափելուն (տես նաև 14 կանոնը):

Երկրորդ նպատակը «համարժեքության սկզբունքի» պահպանումն է: Այս սկզբունքը հայտնի է որպես պատժամիջոցների կիրառումը զսպելու միջոց, որը հիմնականում արտահայտվում է արարքին համարժեք հատուցման սկզբունքով՝ ելնելով իրավախախտման ծանրությունից: Երիտասարդ իրավախախտների արարքների նկատմամբ արձագանքը պետք է հիմնվի ոչ միայն իրավախախտման ծանրության, այլև անձի առանձնահատկությունների վրա: Իրավախախտի անձնական հանգամանքները (օրինակ՝ սոցիալական կարգավիճակը, ընտանեկան դրությունը, իրավախախտմամբ պատճառված վնասը և այլ՝ իրավախախտի անձի հետ կապված գործոններ) պետք է ազդեն արձագանքի համարժեքության վրա (օրինակ՝ հարկավոր է ուշադրություն դարձնել իրավախախտի կողմից գոհին պատճառված վնասը փոխհատուցելու ցանկությանը, արդյունավետ և օգտակար կյանք վարելու կամքի առկայությանը):

Կարող են լինել դեպքեր, երբ երիտասարդ իրավախախտի բարեկեցության ապահովմանն ուղղված պատասխան գործողությունները դուրս կգան անհրաժեշտության սահմաններից և դրանով վնաս կպատճառեն տվյալ երիտասարդի հիմնական իրավունքներին, ինչը պատահում է անչափահասների գործերով արդարադատության որոշ համակարգերում: Նման դեպքերում ևս պետք է ապահովել արձագանքի համարժեքություն թե՛ իրավախախտման ու իրավախախտի և թե՛ տուժողի հետ կապված հանգամանքներին:

5-րդ կանոնը, ըստ էության, կոչ է անում անչափահասի կողմից կատարված այս կամ այն իրավախախտման կամ հանցագործության դեպքում, ոչ ավել, ոչ պակաս՝ արդարացի պատասխան գործողություններ ձեռնարկել: Այս կանոնում ի մի բերված հարցերը կարող են օգնել խթանել զարգացումը երկու հարցում. նորարարական պատասխան գործողությունները նույնքան ցանկալի են, որքան անչափահասների սոցիալական հսկողության ցանցի չարդարացված ընդլայնման դեմ ուղղված նախազգուշական միջոցները:

6. Հայեցողական լիազորությունների ծավալը

6. Հայեցողության շրջանակը

6.1. Նկատի առնելով անչափահասների զանազան հատուկ պահանջմունքները, ինչպես նաև՝ առկա միջոցների բազմազանությունը, գործի քննության բոլոր փուլերում և արդարադատության իրականացման տարբեր մակարդակներում, այդ թվում՝ նախաքննության, դատաքննության, դատավճռի կայացման և կատարման փուլերում անհրաժեշտ է հայեցողական լիազորությունների համապատասխան շրջանակ նախատեսել:

6.2. Դրա հետ մեկտեղ, հարկավոր է ջանքեր գործադրել հայեցողական լիազորությունների իրականացման բոլոր փուլերում և մակարդակներում համապատասխան հաշվետվականություն ապահովելու համար:

6.3. Հայեցողական լիազորություններ կիրառող անձինք պետք է անհրաժեշտ որակավորում ունենան կամ վերապատրաստում անցնեն՝ այդ հայեցողությունն իրենց գործառնություններին և լիազորություններին համապատասխան ողջամտորեն կիրառելու համար:

Մեկնաբանություն

6.1, 6.2, 6.3 կանոնները մեկտեղում են անչափահասների նկատմամբ արդյունավետ, արդարացի և մարդասիրական արդարադատության իրագործման մի շարք կարևոր բաղադրիչներ. գործի քննության բոլոր նշանակալի փուլերում հայեցողական լիազորության իրականացումը թույլատրելու անհրաժեշտությունը, որպեսզի որոշում կայացնողները կարողանան տվյալ գործին առավել համարժեք գործողություններ ձեռնարկել, ինչպես նաև՝ հայեցողական լիազորությունների չարաշահումները կանխելու և երիտասարդ իրավախախտի իրավունքները երաշխավորելու նպատակով ստուգումներ և շտկումներ կատարելու անհրաժեշտությունը: Հաշվետվականությունը և պրոֆեսիոնալիզմը չափից ավելի լայն հայեցողական լիազորությունները զսպելու լավագույն միջոցն են: Ուստի, մասնագիտական որակները և վերապատրաստումն այստեղ հիշատակվում են որպես անչափահաս իրավախախտների նկատմամբ հայեցողությունը ողջամտորեն իրացնելու արժեքավոր եղանակներ (տես նաև 1.6 և 2.2 կանոնները): Այս համատեքստում ընդգծվում է հայեցողական լիազորությունների կիրառման, գործի վերանայման, բողոքարկման և որոշումների վերահսկման և հաշվետվականության այլ համակարգերի ձևավորման վերաբերյալ ուղենիշներ մշակելու կարևորությունը: Նման մեխանիզմներն այստեղ նկարագրված չեն, քանզի հեշտ չէ դրանք միջազգային նվազագույն ստանդարտ կանոններում արտացոլելը՝ պայմանավորված արդարադատության համակարգերում առկա տարբերությունները հաշվի առնելու անհնարինությամբ:

7. Անչափահասների իրավունքները

7.1. Դատավարական հիմնական երաշխիքները, ինչպիսիք են՝ անմեղության կանխավարկածը, առաջադրված մեղադրանքի մասին ծանուցվելու իրավունքը, ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունքը, ծնողների կամ խնամակալի ներկայության իրավունքը, վկաների հետ առերեսման և նրանց խաչաձև հարցաքննության իրավունքը, վերադաս մարմիններին բողոքարկելու իրավունքը, պետք է երաշխավորված լինեն գործի քննության բոլոր փուլերում:

Մեկնաբանություն

7.1. Կանոնում ընդգծված են մի շարք կարևոր հարցեր, որոնք արդար ու անկողմնակալ դատաքննության էական տարրեր են և միջազգայնորեն ճանաչված են մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերով (տես նաև 14-րդ կանոնը): Անմեղության կանխավարկած, օրինակ, զետեղված է նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 11-րդ հոդվածում և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14.2 հոդվածում:

Սույն նվազագույն ստանդարտ կանոնների 14-րդ և դրան հաջորդող կանոններում մանրամասն ներկայացված են այն հարցերը, որոնք կարևոր են անչափահասների վերաբերյալ գործերի

քննության առումով, մասնավորապես՝ 7.1 կանոնն ընդհանուր առմամբ հաստատում է առավել հիմնական դատավարական երաշխիքները:

8. Անձեռնմխելիության ապահովումը

8.1. Անչափահասի անձեռնմխելիության իրավունքը պետք է հարգել բոլոր փուլերում՝ անհարկի հրապարակայնության կամ անվանարկելու արդյունքում նրանց վնաս պատճառելուց խուսափելու համար:

8.2. Որպես սկզբունք, չպետք է հրապարակվի անչափահասի ինքնությունն ի հայտ բերող որևէ տեղեկատվություն:

Մեկնաբանություն

8-րդ կանոնում ընդգծվում է անչափահասի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության կարևորությունը: Երիտասարդությունը հատկապես խոցելի է անվանարկման առումով: Անչափահասների անվանարկման վերաբերյալ կատարված քրեաբանական հետազոտությունների արդյունքները վկայում են երիտասարդների նկատմամբ անընդհատ օգտագործվող «իրավախախտ» կամ «հանցագործ» եզրույթների վնասակար (տարբեր առումներով) ազդեցության մասին:

8-րդ կանոնում ընդգծվում է նաև անչափահասներին նրանց գործերի մասին զանգվածային լրատվության միջոցներով տեղեկություններ (օրինակ՝ կասկածյալ կամ դատապարտյալների անունները) տարածելու բացասական ազդեցությունից պաշտպանելու կարևորությունը: Անձի շահերը հարկավոր է պաշտպանել ու երաշխավորել առնվազն սկզբունքների մակարդակով (8-րդ կանոնի ընդհանուր դրույթները մանրամասնված են 21-րդ կանոնում):

9. Վերապահում

9.1. Սույն կանոններում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես ՄԱԿ-ի կողմից ընդունված Բանտարկյալների նկատմամբ վերաբերմունքի նվազագույն ստանդարտ կանոնների և միջազգային հանրության կողմից ընդունված և երիտասարդ անձանց խնամքին ու պաշտպանությանը վերաբերող այլ փաստաթղթերի և ստանդարտների բացառում:

Մեկնաբանություն

9-րդ կանոնը նախատեսված է սույն կանոնների մեկնաբանման կամ կենսագործման ընթացքում թյուրըմբռնումները բացառելու համար՝ համաձայն մարդու իրավունքների ոլորտում առկա և սպասվող համապատասխան միջազգային փաստաթղթերում և ստանդարտներում սահմանված սկզբունքների, ինչպիսիք են՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, Երեխայի իրավունքների մասին հռչակագիրը և Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի նախագիծը: Պետք է նկատի ունենալ, որ սույն կանոնների կիրառումը կասկածի տակ չի դնում միջազգային որևէ նման փաստաթղթի կիրառումը, որը կարող է առավել լայն կիրառում ունեցող դրույթներ պարունակել (տես նաև 27 կանոնը):

Երկրորդ մաս. Նախաքննություն և քրեական հետապնդում

10. Սկզբնական շփում

10.1. Անչափահասի ձերբակալման ժամանակ նրա ծնողները կամ խնամակալը պետք է անհապաղ տեղյակ պահվեն, իսկ եթե անհապաղ հնարավոր չէ՝ ծնողները կամ խնամակալը կարող են ծանուցվել ավելի ուշ, սակայն հնարավորինս սեղմ ժամկետում:

10.2. Դատավորը կամ այլ իրավասու պաշտոնական անձը կամ մարմինը պետք է անհապաղ քննարկեն ազատման հարցը:

10.3. Իրավապահ մարմինների և անչափահաս իրավախախտի միջև շփումը պետք է իրականացվի անչափահասի իրավական կարգավիճակը հաշվի առնելու, անչափահասի բարեկեցությանը նպաստելու և նրան վնաս պատճառելուց խուսափելու պայմանով՝ պատշաճ ուշադրություն դարձնելով գործի հանգամանքներին:

Մեկնաբանություն

10.1 կանոնն ըստ էության ներառված է Բանտարկյալների նկատմամբ վերաբերմունքի նվազագույն ստանդարտների 92-րդ կանոնում:

Ազատման հարցը (10.2 կանոն) անհապաղ պետք է քննարկվի դատավորի կամ իրավասու այլ անձի կողմից: Խոսքը գնում է ցանկացած անձի կամ հաստատության մասին, բառի լայն իմաստով, ներառյալ՝ համայնքային խորհուրդները կամ ոստիկանական մարմինները, որոնք օժտված են բանտարկյալին ազատ արձակելու իրավասությամբ (տես նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի և 9-րդ հոդվածի 3-րդ պարբերությունը):

10.3 կանոնը վերաբերում է անչափահասի կողմից հանցագործություն կատարելու դեպքում կիրառվող ընթացակարգերին և ոստիկանների ու իրավապահ այլ մարմինների ծառայողների պաշտոնական անձանց գործողություններին: Հարկ է նշել, որ «վնաս պատճառելուց խուսափել» արտահայտությունը ճկուն ձևակերպում է և վերաբերում է հնարավոր գործողությունների տարբեր կողմերին (օրինակ՝ կոպիտ խոսելաձևը, ֆիզիկական բռնությունը կամ հասարակական պարսավանքը): Անչափահասների գործերով արդարադատության գործընթացներին ներգրավելն ինքնին կարող է «վնաս պատճառել» անչափահասներին. «վնաս պատճառելուց խուսափել» արտահայտությունը պետք է ընդարձակ մեկնաբանություն ունենա, այսինքն այն կարող է առաջին հերթին անչափահասին նվազագույն վնաս պատճառելու, ապա և ցանկացած լրացուցիչ կամ ավելորդ ճնշումից խուսափելու իմաստ ունենալ: Դա հատկապես կարևոր է իրավապահ մարմինների հետ անչափահասի սկզբնական շփման ժամանակ, ինչը կարող է էական ազդեցություն ունենալ պետության և հասարակության նկատմամբ անչափահասի վերաբերմունքի վրա: Ցանկացած հետագա միջամտության հաջողությունը մեծապես կախված է նման սկզբնական շփումներից: Կարեկցանքը և նրբանկատ պահանջկոտությունը ևս կարևոր են նման իրավիճակներում:

11. Գործի արտադատական լուծումը

11.1. Անչափահաս իրավախախտների գործերի քննության ժամանակ հնարավորության սահմաններում պետք է ձեռնպահ մնալ ստորև՝ 14.1 կանոնում նշված իշխանության իրավասու մարմինների կողմից գործի պաշտոնական դատական քննությունից:

11.2. Ոստիկանությունը, դատախազությունը կամ անչափահասների գործեր քննող այլ մարմինները պետք է լիազորված լինեն սեփական հայեցողությամբ այդ գործերը լուծել առանց պաշտոնական դատական լուսնների՝ համապատասխան իրավական համակարգում այդ նպատակով սահմանված չափանիշների, ինչպես նաև սույն կանոններում ամփոփված սկզբունքների համաձայն:

11.3. Գործի արտադատական լուծման դեպքերում այն համապատասխան համայնքային կամ այլ ծառայությունների հանձնելիս անհրաժեշտ է ստանալ անչափահասի, նրա ծնողների կամ խնամակալի համաձայնությունը՝ պայմանով, որ գործի հանձնման ցանկացած որոշում պետք է հնարավոր լինի վերանայել համապատասխան իրավասու մարմնի միջոցով՝ դիմումի առկայության դեպքում:

11.4. Անչափահասների գործերի քննության ընթացքում հայեցողական որոշումներին նպաստելու նպատակով հարկավոր է ջանքեր գործադրել համայնքային ծրագրեր առաջարկելու ուղղությամբ, ինչպիսիք են՝ ժամանակավոր հսկողությունը կամ ուղղորդումը, տուժողին պատճառված վնասի հարթումը կամ փոխհատուցումը:

Մեկնաբանություն

Գործի արտադատական լուծումը, այդ թվում՝ քրեական վարույթը կարճելը, հաճախ նաև գործի հանձնումը համայնքային աջակցության ծառայություններին, իրավական շատ համակարգերում սովորաբար գործածվում է պաշտոնական և ոչ պաշտոնական հիմունքներով: Այդ պրակտիկան թույլ է տալիս սահմանափակել անչափահասների գործերով արդարադատության իրականացման հետագա ընթացակարգերի բացասական հետևանքները (օրինակ՝ դատվածության և պատժի հետ կապված խարանումը): Շատ դեպքերում չմիջամտելը կարող է լավագույն արդյունքը տալ: Այսպիսով՝ օպտիմալ տարբերակ կարող է հանդիսանալ գործն ի սկզբանե արտադատական կարգով լուծելը՝ առանց այն այլընտրանքային (սոցիալական) մարմիններին հանձնելու: Դա հատկապես վերաբերում է ոչ լուրջ իրավախախտումների հետ կապված գործերին, երբ ընտանիքը, դպրոցը և սոցիալական վերահսկողության ոչ պաշտոնական այլ հաստատություններն արդեն արձագանքել են դեպքին կամ պատրաստվում են ներգործության պատշաճ միջոցներ ձեռնարկել:

Ինչպես նշված է 11.2 կանոնում, գործերի արտադատական լուծումը կարող է իրականացվել ոստիկանության, դատախազության կամ այլ մարմինների, օրինակ՝ դատարանների, սրիբունալների և խորհուրդների կողմից՝ որոշման կայացման ցանկացած փուլում: Այն կարող է իրագործվել մեկ մարմնի, մի քանի կամ բոլոր մարմինների կողմից՝ ելնելով համապատասխան համակարգերում ընդունված կանոններից ու քաղաքականությունից՝ սույն կանոններին համապատասխան: Գործերի արտադատական լուծումը պարտադիր չէ, որ սահմանափակվի միայն ոչ ծանր դեպքերով՝ գործերի արտադատական լուծումը դարձնելով կարևոր միջոց:

11.3 կանոնն ընդգծում է գործի արտադատական լուծման առաջարկվող եղանակի վերաբերյալ երիտասարդ իրավախախտի (կամ նրա ծնողի կամ խնամակալի) համաձայնությունն ապահովելու կարևոր պահանջը: (Առանց նման համաձայնության գործը համայնքային ծառայությանը հանձնելը հակասում է Հարկադիր աշխատանքի վերացման վերաբերյալ կոնվենցիային): Սակայն այդ համաձայնությունը վճռորոշ չէ, քանի որ այն որոշ դեպքերում կարող է անչափահասի կողմից

տրված լինել հուսահատ վիճակում: Կանոնն ընդգծում է, որ գործի արտադատական լուծման ընթացակարգի բոլոր մակարդակներում հարկավոր է նվազագույնի հասցնել հարկադրանքի ու ահաբեկման հավանականությունը: Գործերի արտադատական լուծման վերաբերյալ համաձայնություն տալիս անչափահասները չպետք է իրենց ճնշված զգան, և նրանց վրա չպետք է ճնշում գործադրվի: Այդ նպատակով կոչ է արվում դրույթներ մշակել «դիմումի հիման վրա՝ իշխանության իրավասու մարմնի կողմից» երիտասարդ իրավախախտների վերաբերյալ որոշումների նպատակահարմարությունը գնահատելու վերաբերյալ: (Այդ «իրավասու մարմինը» կարող է տարբեր լինել 14-րդ կանոնում նշվածներից):

11.4 կանոնով առաջարկվում է անչափահասների գործերով արդարադատության գործուն ալլընտրանքներ ունենալ՝ գործերի համայնքային լուծման տեսքով: Հատկապես խորհուրդ են տրվում այնպիսի ծրագրերը, որոնք տուժողներին պատճառված վնասի փոխհատուցում են նախատեսում և նպատակաուղղված են ժամանակավոր հսկողության և ուղղորդման միջոցով ապագա կոնֆլիկտներից խուսափելուն: Կախված տվյալ գործի բնույթից՝ գործի արտադատական լուծումը կարող է նպատակահարմար լինել անգամ լուրջ իրավախախտումների դեպքում (օրինակ՝ առաջին անգամ կամ հասակակիցների դրդմամբ իրավախախտումը կատարելու և այլ դեպքերում):

12. Ոստիկանության մասնագիտացումը

12.1. Իրենց պարտականությունները լավագույնս կատարելու համար ոստիկանության այն ծառայողները, ովքեր հաճախակի կամ բացառապես զբաղվում են անչափահասների հարցերով կամ ի սկզբանե ներգրավված են անչափահասների հանցավորության կանխարգելման մեջ, պետք է հատուկ հրահանգավորում և վերապատրաստում անցնեն: Խոշոր քաղաքներում այդ նպատակով անհրաժեշտ է ոստիկանության հատուկ ստորաբաժանումներ ստեղծել:

Մեկնաբանություն

12-րդ կանոնում ուշադրություն է դարձվում անչափահասների գործերով արդարադատության իրականացմանն առնչվող իրավապահ մարմինների աշխատողների մասնագիտացված վերապատրաստմանը: Քանի որ ոստիկանությունը անչափահասների գործերով արդարադատության համակարգի հետ շփման առաջին օղակն է, խիստ անհրաժեշտ է, որ նրանք իրենց գործունեությունն իրականացնեն իրազեկ ու պատշաճ ձևով:

Թեպետ ուրբանիզացիայի և հանցավորության միջև կապն անկասկած բազմակողմ է, անչափահասների հանցավորության աճը կապվում է խոշոր քաղաքների մեծացման, մասնավորապես՝ դրանց արագ և չնախատեսված աճի հետ: Ուստի ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանումներ ունենալը պարտադիր է, ընդ որում՝ ոչ միայն սույն փաստաթղթում սահմանված հատուկ սկզբունքների տեսակետից (օրինակ՝ 1.6 կանոնը), այլև անչափահասների հանցավորության կանխումը և վերահսկողությունը բարելավելու և անչափահաս իրավախախտների հետ աշխատելու առումով:

13. Մինչդատական կալանքը

13.1. Մինչդատական կալանքը պետք է կիրառվի միայն որպես ծայրահեղ միջոց և ամենակարճ ժամկետով:

13.2. Մինչդատական կալանքը հնարավորության սահմաններում պետք է փոխարինվի այլընտրանքային այնպիսի միջոցներով, ինչպիսիք են՝ խիստ հսկողությունը, ինտենսիվ խնամքը կամ ընտանիքում, դաստիարակչական հաստատությունում տեղավորելը:

13.3. Մինչդատական կալանքի տակ գտնվող անչափահասն օժտված է ՄԱԿ-ի կողմից ընդունված Բանտարկյալների նկատմամբ վերաբերմունքի նվազագույն ստանդարտ կանոններով սահմանված բոլոր իրավունքներից ու երաշխիքներից:

13.4. Մինչդատական կալանքի տակ գտնվող անչափահասները պետք է պահվեն չափահասներից անջատ կամ առանձին հիմնարկում կամ նաև չափահասների համար նախատեսված հիմնարկի հատուկ մասնաշենքում:

13.5. Կալանքի տակ գտնվելու ընթացքում անչափահասները պետք է ապահովվեն խնամքով, պաշտպանությամբ և սոցիալական, կրթական, մասնագիտական ուսուցման, հոգեբանական, բժշկական, ֆիզիկական պատրաստվածության հարցերում անհատական օժանդակությամբ, որի կարիքը նրանք կարող են ունենալ՝ պայմանավորված իրենց տարիքով, սեռով և անհատական բնութագրով:

Մեկնաբանություն

Չի կարելի թերագնահատել «քրեական ազդեցության» վտանգավորությունը մինչդատական կալանքի տակ գտնվող անչափահասների վրա: Ուստի կարևոր է ընդգծել այլընտրանքային միջոցների անհրաժեշտությունը: 13.1 կանոնն ընդգծում է դա և խրախուսում նորարարական միջոցների մշակումը՝ մինչդատական կալանքից անչափահասների բարեկեցության շահերի բերումով խուսափելու նպատակով:

Մինչդատական կալանքի տակ գտնվող անչափահասները պետք է օգտվեն Բանտարկյալների նկատմամբ վերաբերմունքի նվազագույն ստանդարտ կանոններով, ինչպես նաև՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով նախատեսված բոլոր իրավունքներից ու երաշխիքներից, հատկապես՝ 9-րդ և 10-րդ հոդվածների 2բ և 3 պարբերություններում նշվածներից:

13.4 կանոնով չի բացառվում, որ երկրները կարող են այլ՝ կանոնում նշվածներից ոչ պակաս արդյունավետ միջոցներ ձեռնարկել չափահաս իրավախախտների նկատմամբ բացասական ազդեցության դեմ:

Թվարկված են օժանդակության տարբեր տեսակները, որոնք կարող են անհրաժեշտ լինել կալանքի տակ գտնվող երիտասարդ բանտարկյալների բազմատեսակ հատուկ կարիքների (օրինակ՝ պատանիների կամ աղջիկների, թմրամոլների, հարբեցողների, հոգեկան խանգարմամբ տառապող անչափահասների, բանտարկության հետևանքով խեղվածների և այլն) վրա ուշադրություն գրավելու համար:

Կալանքի տակ գտնվող երիտասարդների զանազան ֆիզիկական և հոգեբանական առանձնահատկությունները կարող են հիմք ծառայել միջոցների դասակարգման համար, որոնց հիման վրա որոշ երիտասարդներ մինչդատական կալանքի տակ մյուսներից անջատ կպահվեն,

ինչը հնարավորություն կտա խուսափել վիկտիմիզացիայից և առավել պատշաճ օժանդակություն ցուցաբերել:

Հանցավորության կանխման և իրավախախտների նկատմամբ վերաբերմունքի հարցերով ՄԱԿ-ի 6-րդ կոնգրեսը Անչափահասների գործերով արդարադատության ստանդարտների մասին իր թիվ 4 բանաձևում պարզաբանել է, որ կանոնը, ի թիվս այլ հարցերի, պետք է արտացոլի այն հիմնական սկզբունքը, որ մինչդաստական կալանքը պետք է կիրառվի միայն որպես ծայրահեղ միջոց, և որ անչափահաս իրավախախտներին չի կարելի պահել այնպիսի հաստատություններում, որտեղ նրանք չափահաս բանտարկյալների կողմից կարող են բացասական ազդեցության ենթարկվել, և որ մշտապես պետք է հաշվի առնել նրանց զարգացման փուլին բնորոշ պահանջմունքները:

Երրորդ մաս. Դատավճռի կայացումը և ներգործության միջոցների ընտրությունը

14. Դատական վճիռ կայացնող իրավասու մարմինը

14.1. Եթե անչափահաս իրավախախտի գործն արտադատական կարգով չի լուծվել (11-րդ կանոնով սահմանված կարգով), ապա նրա գործով պետք է զբաղվի իրավասու մարմինը (դատարան, տրիբունալ, խորհուրդ և այլն)՝ արդար և անկողմնակալ դատաքննության սկզբունքներին համապատասխան:

14.2. Դատական քննությունը պետք է բարենպաստ լինի անչափահասի լավագույն շահերի տեսակետից և իրականացվի փոխըմբռնման մթնոլորտում, ինչն անչափահասին դատաքննությանը մասնակցելու և ազատ արտահայտվելու հնարավորություն կտա:

Մեկնաբանություն

Դժվար է տալ իրավասու մարմնի կամ անձի այնպիսի սահմանում, որը համակողմանի կրթությամբ դատավճիռ կայացնող իրավասու մարմինը: «Իրավասու մարմին» արտահայտությունը վերաբերում է (միանձնյա կամ մի քանի անդամ ունեցող) դատարանների կամ տրիբունալների նախագահներին, ովքեր ղեկավարում են դատարանը կամ տրիբունալը, ներառյալ՝ պրոֆեսիոնալ և հաշտարար մագիստրոսներին, ինչպես նաև՝ վարչական խորհուրդներին (օրինակ՝ շտաբանական և սկանդինավյան համակարգերում) կամ այլ՝ կոնֆլիկտների լուծման առավել ոչ պաշտոնական, դատական բնույթի համայնքային գործակալությունները:

Անչափահաս իրավախախտների վերաբերյալ գործերի քննության ընթացքում ամեն դեպքում հարկավոր է հետևել նվազագույն ստանդարտներին, որոնք գրեթե անխտիր կիրառվում են քրեական գործով անցնող բոլոր անձանց նկատմամբ՝ այսպես ասած՝ «օրենքով սահմանված կարգով»: Օրենքով սահմանված կարգով «արդար և անկողմնակալ դատաքննություն» արտահայտությունը ներառում է այնպիսի հիմնական երաշխիքներ, ինչպիսիք են՝ անմեղության կանխավարկածը, ապացույցների ներկայացումը և ուսումնասիրությունը, ընդհանուր իրավական պաշտպանությունը, ցուցմունքներ տալուց հրաժարվելու իրավունքը, գործի քննության ժամանակ վերջին խոսքի իրավունքը, բողոքարկման իրավունքը և այլն (տես նաև 7.1 կանոնը):

15. Պաշտպանը, ծնողները և խնամակալները

15.1. Դատաքննության ողջ ընթացքում անչափահասն իրավունք ունի պաշտպանությունն իրականացնել իրավախորհրդատուի միջոցով կամ դիմել իրավական անվճար օգնության ստանալու հարցով, եթե նման օգնությունը նախատեսված է տվյալ երկրի օրենսդրությամբ:

15.2. Ծնողները կամ խնամակալն իրավունք ունեն մասնակցելու դատաքննությանը, և, անչափահասների շահերից ելնելով՝ իրավասու մարմինը կարող է պահանջել նրանց մասնակցությունը: Սակայն իրավասու մարմինը կարող է մերժել նրանց մասնակցությունը, եթե հիմքեր կան ենթադրելու, որ դա բխում է անչափահասի շահերից:

Մեկնաբանություն

15.1 կանոնում գործածվել են Բանտարկյալների նկատմամբ վերաբերմունքի նվազագույն ստանդարտ կանոնների 93-րդ կանոնի շարադրանքին նման տերմիններ: Եթե պաշտպանը և անվճար իրավական օգնությունն անհրաժեշտ են անչափահասին իրավական օգնությամբ ապահովելու համար, ապա ծնողների կամ խնամակալի մասնակցությունը, ինչպես նշված է 15.2 կանոնում, պետք է համարել որպես ընդհանուր հոգեբանական և հուզական աջակցություն անչափահասին. գործառույթ, որը պետք է կատարվի քննության ամբողջ ընթացքում:

Իրավասու մարմինների կողմից տվյալ գործով ներգործության պատշաճ միջոցի ընտրությունը կհեշտանար հատկապես անչափահասի օրինական ներկայացուցիչների (կամ, որոշ դեպքերում, մեկ այլ անձնական օգնականի, որին անչափահասը կարող է վստահել կամ իսկապես վստահում է) հետ համագործակցությամբ: Այս դրույթն իր նշանակությունը կարող է կորցնել այն դեպքերում, եթե ծնողների կամ խնամակալի ներկայությունը բացասաբար է ազդում գործի քննության վրա, ասենք, երբ նրանք թշնամար են տրամադրված անչափահասի նկատմամբ, ուստի անհրաժեշտ է նրանց մասնակցությունը մերժելու հնարավորություն նախատեսել:

16. Սոցիալական հետազոտության եզրակացություն

16.1. Մանր իրավախախտումներից բացի, մնացած բոլոր դեպքերում, նախքան իրավասու մարմնի կողմից պատիժ նշանակելը ներգործության միջոց նշանակելիս անհրաժեշտ է մանրամասն ուսումնասիրել անչափահասի կենսագրությունն ու կենսապայմանները կամ իրավախախտումը կատարելու հանգամանքները՝ իրավասու մարմնի կողմից տվյալ գործով ողջամիտ վճիռ կայացնելուն նպաստելու նպատակով:

Մեկնաբանություն

Սոցիալական հետազոտության եզրակացությունները (սոցիալական զեկույցներ կամ պատժի նշանակմանը նախորդող եզրակացություններ) անփոխարինելի են անչափահասների գործերի մեծ մասի քննության ընթացքում: Իրավասու մարմինը պետք է տիրապետի անչափահասների վերաբերյալ համապատասխան տեղեկությունների, ինչպես, ասենք՝ անչափահասի սոցիալական և ընտանեկան միջավայրը, ուսումը դպրոցում, դաստիարակության պայմանները և այլն: Այդ նպատակով իրավական մի շարք համակարգեր օգտվում են դատարաններին կամ խորհուրդներին առընթեր հատուկ սոցիալական ծառայությունների կամ աշխատակիցների ծառայություններից: Այդ պարտականությունները կարող են կատարվել այլ անձնակազմի, այդ թվում՝ պրոբացիոն

ծառայողների կողմից: Ուստի, տվյալ կանոնը ցույց է տալիս, թե որակյալ սոցիալական զեկույցներ տրամադրելու համար որքանով են անհրաժեշտ պատշաճ սոցիալական ծառայությունները:

17. Դատավճռի կայացման և ներգործության միջոցների ընտրության ղեկավար սկզբունքներ

17.1. Ներգործության միջոցների ընտրության ժամանակ իրավասու մարմինը պետք է առաջնորդվի հետևյալ սկզբունքներով.

ա) ձեռնարկված միջոցները միշտ պետք է համարժեք լինեն ոչ միայն իրավախախտման հանգամանքներին ու ծանրությանը, այլև անչափահասի դրությանը և պահանջումներին, ինչպես նաև՝ հասարակության կարիքներին,

բ) անչափահասի անձնական ազատության սահմանափակման մասին որոշումը պետք է կայացվի միայն հարցի մանրագնին քննարկումից հետո, և սահմանափակումը հնարավորության սահմաններում պետք է հասցվի նվազագույնի.

գ) անչափահաս իրավախախտին անձնական ազատությունից զրկել կարելի է միայն այն դեպքերում, երբ նա մեղավոր է ճանաչվել այլ անձի դեմ բռնությամբ զուգորդված լուրջ արարք կատարելու կամ բազմաթիվ լուրջ իրավախախտումներ կատարելու մեջ, ինչպես նաև ներգործության համապատասխան այլ միջոցի բացակայության դեպքում.

դ) անչափահասի գործի քննության ժամանակ նրա բարեկեցության հարցը պետք է որոշիչ գործոն լինի:

17.2. Անչափահասների կատարած որևէ հանցագործության համար մահապատիժ չի կարող նշանակվել:

17.3. Անչափահասները չեն կարող ենթարկվել մարմնական պատիժների:

17.4. Իրավասու մարմինը պետք է իրավունք ունենա ցանկացած ժամանակ կասեցնելու կամ կարճելու գործի քննությունը:

Մեկնաբանություն

Երիտասարդների նկատմամբ դատավճիռ կայացնելու ղեկավար սկզբունքների մշակման գլխավոր դժվարությունը բխում է փիլիսոփայական բնույթի անլուծելի հակասություններից, մասնավորապես.

ա) վերականգնման և արդարացի պատժի միջև,

բ) օժանդակության և հակազդեցության ու պատժի միջև,

գ) այս կամ այն գործի բացառիկ հանգամանքներից բխող հակազդեցության և հասարակության պաշտպանության ընդհանուր նկատառումներից բխող հակազդեցության միջև,

դ) ընդհանուր զսպման և անհատին որոշ իրավունքներից զրկելու միջև:

Այս մոտեցումների միջև հակասությունն անչափահասների նկատմամբ առավել պարզորոշ է դրսևորվում, քան չափահասների: Անչափահասների գործերին բնորոշ պատճառների և

հետևանքների բազմազանության պատճառով այդ այլընտրանքները բարդ փոխազդեցության մեջ են հայտնվում:

Անչափահասների գործերով արդարադատության իրականացման նվազագույն ստանդարտ կանոնները չի հավակնում ինչ-ինչ մոտեցումներ պարտադրել, այլ, ավելի շուտ, փորձում է պարզել միջազգայնորեն ընդունված սկզբունքներին առավել համապատասխանող միջոցը: Ուստի, 17.1 կանոնում, մասնավորապես՝ ա) և դ) ենթակետերում շարադրված հիմնական դրույթները գլխավորապես պետք է ընդունել որպես գործնական ուղենիշներ, որոնք կծառայեն որպես ընդհանուր մեկնակետ. համապատասխան մարմինների կողմից դրանք ընդունվելու դեպքում (տես նաև 5-րդ կանոնը) դրանք էապես կնպաստեն անչափահաս իրավախախտների հիմնարար իրավունքների պաշտպանությանը, հատկապես՝ անձնական զարգացման և կրթության մասով:

17.1 կանոնի բ) ենթակետում նշվում է, որ բացառապես պատժիչ բնույթի մոտեցումը նպատակահարմար չէ: Եթե չափահասների դեպքում կամ անչափահասների կողմից լուրջ իրավախախտումներ կատարելու պարագայում նման պատիժները կարող են ինչ-որ չափով հիմնավորվել, ապա անչափահասների գործերում երիտասարդի բարեկեցության և ապագայի ապահովումը պետք է գերակայի նման միտումների համեմատ:

ՄԱԿ-ի 6-րդ կոնգրեսի 8-րդ բանաձևին համապատասխան, 17.1 կանոնի բ) ենթակետով խրախուսվում է փակ հաստատությունում տեղավորելու այլընտրանքների առավելագույն կիրառումը՝ նկատի առնելով երիտասարդության հատուկ պահանջմունքները բավարարելու անհրաժեշտությունը: Ուստի, պետք է լիովին օգտագործել այլընտրանքային միջոցների բոլոր տարատեսակները և նոր այլընտրանքներ մշակել՝ հաշվի առնելով հասարակական անվտանգության պահանջները: Առավելագույնս պետք է գործի դրվի պրոբացիայի համակարգը՝ պատիժը պայմանական չկիրառելու, պայմանական պատիժների, հսկողության հանձնելու և ներգործության այլ միջոցների օգնությամբ:

17.1 կանոնի գ) ենթակետը համապատասխանում է 6-րդ կոնգրեսի 4-րդ բանաձևի ղեկավար սկզբունքներից մեկին և ուղղված է նրան, որպեսզի անչափահասները բանտարկվեն միայն այն դեպքերում, երբ հասարակական անվտանգությունը պահպանելու համապատասխան այլ միջոց չկա:

17.2 կանոնի՝ մահապատժի արգելման մասին դրույթը համապատասխանում է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 6-րդ հոդվածի 5-րդ պարբերությանը:

Մարմնական պատժի արգելման մասին դրույթը համապատասխանում է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 7-րդ հոդվածին, Խոշտանգումներից ու դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից բոլոր անձանց պաշտպանելու մասին կոնվենցիային և Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի նախագծին:

Ցանկացած ժամանակ դատաքննությունը կարճելու կամ կասեցնելու իրավունքը (17.4 կանոն) անչափահաս իրավախախտների նկատմամբ վերաբերմունքը չափահասների նկատմամբ վերաբերմունքից տարբերակող հատկանիշ է: Իրավասու մարմինը կարող է ցանկացած պահի

տեղեկանալ այնպիսի հանգամանքների մասին, որոնց հիման վրա գործի լիակատար կարճումը կարող է լավագույն որոշումը լինել:

18. Ներգործության զանազան միջոցառումներ

18.1. Իրավասու մարմինն իր տրամադրության տակ պետք է ներգործության միջոցների լայն ընտրություն ունենա, ինչը կարող է ճկունություն հաղորդել փակ հաստատություններում տեղավորելուց հնարավորինս խուսափելու հարցում: Այդ միջոցներից են (դրանց մի մասը կարող է համակցվել).

- ա) խնամքը, կողմնորոշումը և հսկողությունը,
- բ) պրոբացիան,
- գ) համայնքի ծառայության մասին որոշումը,
- դ) դրամական տույժերը, փոխհատուցումը և վնասի հարթումը,
- ե) միջանկյալ և այլ միջոցառումների մասին որոշումը,
- զ) խմբային խորհրդատվության և նման այլ միջոցառումների մասնակցելու մասին որոշումը,
- է) խնամատարության, այս կամ այն համայնքում կամ կրթական հաստատությունում տեղավորելու մասին որոշումը,
- ը) համապատասխան այլ որոշումներ:

18.2. Որևէ անչափահասի չի կարելի մասամբ կամ լրիվ վերցնել ծնողների հսկողությունից, եթե նրա գործի հանգամանքներից ելնելով՝ դա անհրաժեշտ չէ:

Մեկնաբանություն

18.1 կանոնում փորձ է արվում թվարկել ներգործության մի քանի կարևոր միջոցներ և պատժատեսակներ, որոնք հաջողությամբ կիրառվում են զանազան իրավական համակարգերում: Ընդհանրապես, դրանք հեռանկարային են և արժանի են կիրառման ու հետագա զարգացման: Այդ կանոնում անձնակազմի վերաբերյալ պահանջներ չեն թվարկվում՝ որոշ տարածաշրջաններում համապատասխան անձնակազմի հնարավոր պակասի պատճառով. այդ տարածաշրջաններում կարելի է առավել փոքրաթիվ անձնակազմ պահանջող միջոցառումներ մշակել ու կիրառել:

18.1 կանոնում նշված օրինակները, ներգործության այլընտրանքային միջոցների արդյունավետ իրականացման և դրանց հետ կապված բողոքների գործում, ամեն ինչից զատ, ընդհանուր առմամբ հիմնվում են համայնքի վրա: Վերադաստիարակմանը համայնքների ներգրավումն ավանդական միջոց է, որը շատ ասպեկտներ է ներառում: Այդ կապակցությամբ հարկավոր է խրախուսել համապատասխան մարմինների կողմից համայնքային ծառայությունների տրամադրումը:

18.2 կանոնում ընդգծվում է ընտանիքի կարևոր դերը, որը Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 10.1 հոդվածի համաձայն՝ համարվում է «հասարակության բնական և հիմնական բջիջը»:

Ընտանիքի ներսում ծնողները ոչ միայն իրավունք ունեն, այլև պարտավոր են ապահովել իրենց երեխաների խնամքն ու հսկողությունը: 18.2 կանոնի համաձայն՝ ծնողներից երեխաներին բաժանելը համարվում է ծայրահեղ միջոց: Դրան կարելի է դիմել միայն այն դեպքերում, երբ գործի փաստերը հիմնավորում են այդ լուրջ քայլը (օրինակ՝ երեխաների նկատմամբ չարաշահումները):

19. Փակ հիմնարկներում տեղավորելու հնարավորինս հազվադեպ կիրառումը

19.1. Անչափահասին որևէ հիմնարկում տեղավորելը միշտ պետք է որպես ծայրահեղ միջոց կիրառվի՝ անհրաժեշտ նվազագույն ժամկետով:

Մեկնաբանություն

Առաջադեմ քրեագիտությունը հանդես է գալիս հիմնարկներում պահելու հետ չկապված միջոցների կիրառման օգտին: Հաստատված է, որ հիմնարկներում տեղավորելու միջոցով ձեռք բերված արդյունքները, լավագույն դեպքում, աննշան են՝ այդ միջոցները չկիրառելու հետևանքների համեմատությամբ:

Անհատի համար անբարենպաստ բազմաթիվ հետևանքները, որ անխուսափելի են ուղղիչ հիմնարկներում պահելու ցանկացած ձևի պայմաններում, չեն կարող հակակշռվել ուղղիչ գործունեությամբ: Այս պնդումը հատկապես տեղին է անչափահասների պարագայում, ովքեր բացասական ազդեցության առումով խոցելի են: Բացի այդ, ոչ միայն ազատագրկման, այլև հասարակությունից մեկուսացնելու հետ կապված բացասական հետևանքներն են անչափահասների վրա ազդում ավելի, քան չափահասների դեպքում, քանի որ այդ ժամանակ անչափահասները գտնվում են զարգացման սկզբնական փուլում:

19-րդ կանոնի նպատակը փակ հիմնարկներում պահելը երկու կողմից սահմանափակելն է. քանակական («որպես ծայրահեղ միջոց») և ժամանակային («նվազագույն ժամկետով»): 19-րդ կանոնում արտացոլված է ՄԱԿ-ի 6-րդ կոնգրեսի բանաձևի ղեկավար սկզբունքներից մեկը. անչափահաս իրավախախտը կարող է բանտարկվել միայն այն դեպքերում, երբ համապատասխան այլ միջոցները բացակայում են: Այդ պատճառով, տվյալ կանոնով կոչ է արվում, որպեսզի անչափահասին փակ հաստատությունում տեղավորելու դեպքում նրա ազատությունը սահմանափակվի անհրաժեշտ նվազագույն ժամկետով, իրականացվի անչափահասին պահելու հատուկ հնարավորությունների առկայության պայմաններում՝ հաշվի առնելով իրավախախտների, իրավախախտման և հիմնարկների զանազան տեսակները: Փաստորեն, «փակ» հիմնարկների փոխարեն նախապատվությունը պետք է տրվի «բաց» հիմնարկներին: Ավելին, բոլոր հիմնարկները պետք է լինեն ոչ թե բանտային, այլ ուղղիչ կամ ուսուցողական բնույթի:

20. Անհարկի ձգձգումների բացառումը

20.1. Ցանկացած գործ սկզբից ևեթ պետք է արագ ընթացք ստանա՝ առանց անհարկի ձգձգումների:

Մեկնաբանություն

Անչափահասների գործերով պաշտոնական ընթացակարգերի արագ իրականացումն առաջնահերթ խնդիր է: Հակառակ դեպքում կարող է վտանգվել ամեն դրականը, ինչ կարելի է ակնկալել գործի քննության և վճռի կայացման ընթացքում: Անչափահասի համար ժամանակի

ընթացքում գնալով ավելի դժվար, երբեմն՝ անհնար կլինի տրամաբանորեն և հոգեբանորեն գործի քննությունը և վճռի կայացումը կապակցել կատարված իրավախախտմանը:

21. Անձնական գործերը

21.1. Անչափահաս իրավախախտների անձնական գործերը պետք է խիստ գաղտնի պահվեն և չփոխանցվեն երրորդ անձի: Այդ նյութերից օգտվելու իրավունք ունեցող անձանց շրջանակը պետք է սահմանափակվի տվյալ գործի քննությամբ անմիջապես զբաղվող կամ համապատասխան լիազորություններ ունեցող այլ անձանցով:

21.2. Անչափահաս իրավախախտների գործերի նյութերը չպետք է օգտագործվեն չափահաս իրավախախտների վերաբերյալ այն գործերով, որոնցում ներգրավված է նույն իրավախախտը:

Մեկնաբանություն

Այս կանոնով փորձ է արվում հավասարակշռություն հաստատել անձնական գործերի կամ դրանցում առկա նյութերի կապակցությամբ միմյանց հակասող շահերի միջև, հատկապես՝ ոստիկանության, դատախազության և այլ մարմինների՝ իրենց կողմից վերահսկողությունը կատարելագործելու շահագրգռվածության և անչափահաս իրավախախտի շահերի միջև (տես նաև 8-րդ կանոնը): «Համապատասխան լիազորություններ ունեցող այլ անձինք» արտահայտությունը, ի թիվս այլ անձանց, որպես կանոն վերաբերում է նաև հետազոտողներին:

22. Պրոֆեսիոնալիզմի և վերապատրաստման անհրաժեշտությունը

22.1. Անչափահասների գործերով զբաղվող ողջ անձնակազմին անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ փոխանցելու և պահպանելու համար հարկավոր է կազմակերպել պրոֆեսիոնալ ուսուցում, աշխատանքին զուգընթաց ուսուցում, վերապատրաստման դասընթացներ և կրթության համապատասխան այլ տեսակներ:

22.2. Անչափահասների գործերով արդարադատության մարմինների անձնակազմը պետք է ձևավորել՝ հաշվի առնելով անչափահասների գործերով արդարադատության համակարգին առնչվող անչափահասների բազմազանությունը: Անհրաժեշտ է ջանքեր ներդնել անչափահասների գործերով զբաղվող արդարադատության մարմիններում կանանց և ազգային փոքրամասնությունների պատշաճ ներկայացվածությունն ապահովելու համար:

Մեկնաբանություն

Անչափահասների վերաբերյալ որոշում կայացնելու իրավասություն ունեցող մարմինները կարող են կազմված լինել ամենատարբեր մասնագիտության տեր անձանցից (մագիստրոսներ՝ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում և հանրային իրավունքի համակարգի հետևորդ տարածաշրջաններում, իրավագիտական կրթություն ունեցող դատավորներ՝ հռոմեական իրավունքի հետևորդ երկրներում և դրանց ազդեցության ներքո գտնվող տարածաշրջաններում, այլ երկրներում՝ ընտրովի կամ նշանակված անձինք՝ սիրողական մակարդակի իրավաբաններ կամ իրավագետներ, համայնքային խորհուրդների անդամներ և այլն): Բոլոր նրանցից պահանջվում է նվազագույն ուսուցում անցնել իրավունքի, սոցիոլոգիայի, հոգեբանության, քրեաբանության և վարքաբանության ասպարեզներում: Այդ պահանջն ունի

նույնքան կարևոր նշանակություն, որքան կազմակերպական մասնագիտացումը և իրավասու մարմնի անկախությունը:

Իրատեսական չէր լինի սոցիալական աշխատողներից և պրոբացիոն համակարգի պաշտոնյաներից, որպես անչափահաս իրավախախտների հետ կապված որևէ պարտականություն ստանձնելու նախապայման՝ պրոֆեսիոնալ մասնագիտացում պահանջել: Այդ պատճառով միակ որակավորումը, որ կարող է պահանջվել՝ աշխատանքին զուգահեռ հրահանգավորումն է:

Պրոֆեսիոնալ որակավորումն անչափահասների գործերով անաչառ և արդյունավետ արդարադատություն իրականացնելու անհրաժեշտ տարրերից է: Դրա համար անհրաժեշտ է բարելավել անձնակազմի ընտրությունը, առաջխաղացումը և մասնագիտական ուսուցումը, անձնակազմին ապահովել անհրաժեշտ պայմաններով, որոնք թույլ կտան հավուր պատշաճի կատարել իրենց պարտականությունները:

Անչափահասների գործերով արդարադատություն իրականացնելիս անկողմնակալությունն ապահովելու համար հարկավոր է խուսափել քաղաքական, սոցիալական, սեռական, ռասայական, կրոնական, մշակութային կամ այլ բնույթի խտրականությունից՝ անչափահասների գործերով արդարադատության հարցերով զբաղվող անձնակազմի ընտրության, նշանակման և առաջխաղացման գործում: Սա բխում է 6-րդ կոնգրեսի հանձնարարականից: Ավելին, 6-րդ կոնգրեսն անդամ երկրներին կոչ է անում քրեական արդարադատության համակարգում կին աշխատողների նկատմամբ ապահովել արդարացի և իրավահավասար վերաբերմունք և հանձնարարում է հատուկ միջոցներ ձեռնարկել՝ անչափահասների գործերով արդարադատության համակարգում կին աշխատողների ընտրությանը, ուսուցմանը, առաջխաղացմանն աջակցելու համար:

Չորրորդ մաս. Փակ հաստատություններում պահելու հետ չկապված միջոցներ

23. Որոշման արդյունավետ կատարումը

23.1. Անհրաժեշտ է համապատասխան դրույթներ նախատեսել 14.1 կանոնում նշված իրավասու մարմնի որոշումն այդ մարմնի կողմից կամ մեկ այլ մարմնի միջոցով իրագործելու մասին՝ էլնելով հանգամանքներից:

23.2. Այդ դրույթներով իրավասու մարմնին պետք է ժամանակ առ ժամանակ ըստ անհրաժեշտության որոշումները վերանայելու իրավասություն վերապահվի՝ պայմանով, որ պահպանվեն կանոններում ամփոփված սկզբունքները:

Մեկնաբանություն

Անչափահասների գործով որոշումը, առավել, քան չափահասների պարագայում, նպատակ ունի երկարատև ներգործություն ունենալ անչափահասի կյանքի վրա: Ուստի կարևոր է, որպեսզի իրավասու մարմինը կամ որևէ անկախ մարմին (պայմանական ազատման հարցերի հանձնաժողով, պրոբացիոն ծառայություն, երիտասարդության սոցիալական ապահովության հիմնարկներ կամ այլ), որը կարգով հավասար է տվյալ որոշումը կայացնող իրավասու մարմնին, պետք է մոնիթորինգի ենթարկի որոշման իրականացումը: Այդ նպատակով մի քանի երկրներում հիմնված է պատժի կատարումը վերահսկող դատավորի (*juge de L' execution des peines*) պաշտոնը:

Իրավասու այդ մարմնի կազմը, լիազորություններն ու գործառույթները պետք է ճկուն լինեն. 23-րդ կանոնում տրված է դրանց ընդհանուր նկարագրությունը՝ լայն ճանաչում ապահովելու նպատակով:

24. Անհրաժեշտ օժանդակության տրամադրումը

24.1. Պետք է ջանք գործադրել դատավարության բոլոր փուլերում անչափահասներին կացարան գտնելու, կրթություն ստանալու, մասնագիտական ուսուցում ստանալու, աշխատանքի տեղավորվելու և նման այլ հարցերում անհրաժեշտ օգնություն տրամադրելու ուղղությամբ, ինչը գործնական օգուտ կրերի վերականգնման գործընթացին:

Մեկնաբանություն

Անչափահասների բարեկեցությանն աջակցելն առաջնային նշանակություն ունի: Այդ առումով 24-րդ կանոնում ընդգծված է անչափահասների վերականգնման ողջ ընթացքում անչափահասների շահերի ապահովման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու, ծառայություններ և անհրաժեշտ այլ օժանդակություն տրամադրելու կարևորությունը:

25. Կամավորների և համայնքային այլ ծառայությունների մոբիլիզացիան

25.1. Պետք է կոչ անել կամավորներին, կամավորական կազմակերպություններին, տեղական հաստատություններին և համայնքային այլ ուժերին, որպեսզի նրանք իրենց շոշափելի ավանդը ներդնեն համայնքի և, հնարավորության սահմաններում ընտանիքի ներսում անչափահասների վերականգնման գործում:

Մեկնաբանություն

Այս կանոնն արտացոլում է անչափահաս իրավախախտների հետ տարվող ողջ աշխատանքի վերականգնողական ուղղվածության անհրաժեշտությունը: Իրավասու մարմինների հրահանգներն արդյունավետ կատարելու համար բացառիկ կարևոր նշանակություն ունի համայնքների հետ համագործակցությունը: Մասնավորապես, կամավորները և կամավորական գործունեությունը չափազանց արժեքավոր ծառայություններ են մատուցում, սակայն ներկայումս նրանց հնարավորություններն ամբողջությամբ չեն օգտագործվում: Որոշ դեպքերում զգալի օգնություն կարող են ցուցաբերել նախկին իրավախախտները (այդ թվում՝ նախկին թմրամոլները):

25-րդ կանոնը կառուցված է 1.1-1.6 կանոններում շարադրված սկզբունքների հիման վրա՝ հետևելով նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի համապատասխան կանոններին:

Հինգերորդ մաս. Իրավախախտների հետ աշխատանքը փակ հիմնարկներում

26. Փակ հիմնարկներում իրավախախտների հետ աշխատանքի նպատակները

26.1. Փակ հիմնարկներում պահվող անչափահասների վերապատրաստման և նրանց հետ տարվող աշխատանքի նպատակը խնամք, պաշտպանություն, կրթություն և մասնագիտական ուսուցում ապահովելն է՝ հանրօգուտ և արդյունավետ դեր ստանձնելու հարցում նրանց օգնելու համար:

26.2. Փակ հիմնարկներում պահվող անչափահասները պետք է ապահովվեն իրենց տարիքին, սեռին, անձին համապատասխանող և լիարժեք զարգացման համար անհրաժեշտ խնամքով, պաշտպանությամբ և աջակցությամբ՝ սոցիալական, հոգեբանական, բժշկական, ֆիզիկական, կրթական և մասնագիտական ուսուցման հարցերում:

26.3. Ուղղիչ հիմնարկներում անչափահասները պետք է պահվեն մեծահասակներից անջատ՝ առանձին հիմնարկում կամ չափահասների համար նախատեսված հիմնարկի առանձին մասնաշենքում:

26.4. Փակ հիմնարկներում պահվող իրավախախտ աղջիկները պետք է հատուկ ուշադրության արժանանան՝ հաշվի առնելով նրանց անձնական կարիքներն ու խնդիրները: Նրանք պետք է ապահովվեն նույնպիսի խնամքով, օգնությամբ, պրոֆեսիոնալ պատրաստությամբ, ինչպիսին տրամադրվում է արական սեռի երիտասարդ իրավախախտներին: Նրանց նկատմամբ պետք է արդարացի վերաբերմունք դրսևորվի:

26.5. Փակ հիմնարկներում պահվող անչափահասների բարեկեցության շահերից ելնելով՝ ծնողները կամ խնամակալները պետք է նրանց այցելելու իրավունք ունենան:

26.6. Անհրաժեշտ է խթանել միջգերատեսչական ու միջուլորտային համագործակցությունը փակ հիմնարկներում պահվող անչափահասներին համապատասխան հանրակրթությամբ կամ, հնարավորության դեպքում՝ մասնագիտական ուսուցմամբ ապահովելու հարցերում՝ որպեսզի հիմնարկը լքելիս նրանց կրթությունը թերի չլինի:

Մեկնաբանություն

Փակ հիմնարկներում պահվող իրավախախտների նկատմամբ վերաբերմունքի՝ 26.1 և 26.2 կանոններում ձևակերպված նպատակները պետք է ընդունելի լինեն ցանկացած համակարգի և մշակույթի համար: Այդքանով հանդերձ, ամենուրեք չէ, որ դրանք կիրառվում են, և այդ կապակցությամբ շատ անելիքներ կան:

Փակ հիմնարկներում պահվող թմրամոլ, բռնության հակումներ ունեցող, հոգեկան հիվանդ երիտասարդների համար հատկապես կարևոր նշանակություն ունի բժշկական և հոգեբանական օգնությունը:

Ինչպես սահմանված է 26.3 կանոնում, անչափահասների նկատմամբ չափահաս իրավախախտների բացասական ազդեցությունից խուսափելը և փակ հիմնարկում անչափահասների բարեկեցության ապահովումը համահունչ է Վեցերորդ համագումարի թիվ 4 բանաձևում զետեղված հիմնական կանոններից մեկին: Այդ կանոնը որևէ կերպ չի խանգարում, որպեսզի երկրները չափահաս իրավախախտների բացասական ազդեցության դեմ ձեռնարկեն այլ միջոցներ ևս, որոնք առնվազն նույնքան արդյունավետ կլինեն, որքան այդ կանոնում նշվածները (տես նաև 13.4 կանոնը):

Ինչպես նշվել է 6-րդ համագումարում, 26.4 կանոնով արձանագրվում է այն փաստը, որ իրավախախտ կանանց ավելի քիչ ուշադրություն է դարձվում, քան տղամարդկանց: Մասնավորապես, 6-րդ կոնգրեսի 9-րդ բանաձևով կոչ է արվում քրեական արդարադատության իրականացման յուրաքանչյուր փուլում արդարացի վերաբերմունք ցուցաբերել կին իրավախախտների նկատմամբ, իսկ բանտարկության ընթացքում առանձնակի ուշադրություն

դարձնել նրանց հատուկ խնդիրներին ու պահանջումներին: Ավելին, այս կանոնը պետք է քննարկվի նաև այնպիսի փաստաթղթերի լույսի ներքո, ինչպիսիք են՝ 6-րդ կոնգրեսի կարակապյան հռչակագիրը (որով, մասնավորապես, կոչ է արվում համահավասար մոտեցում ցուցաբերել քրեական արդարադատության իրականացման ընթացքում), Կանանց հանդեպ խտրականության վերացման մասին հռչակագիրը և Կանանց հանդեպ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան:

Բանտարկյալներին այցելելու իրավունքը (26.5 կանոն) բխում է 7.1, 10.1, 15.2 և 18.2 կանոնների դրույթներից: Միջգերատեսչական և միջոլորտային համագործակցությունը (26.6 կանոն) հատկապես կարևոր նշանակություն ունի փակ հիմնարկներում անչափահասների նկատմամբ վերաբերմունքի և վերապատրաստումների որակն ընդհանուր առմամբ բարձրացնելու առումով:

27. ՄԱԿ-ի կողմից ընդունված Բանտարկյալների նկատմամբ վերաբերմունքի նվազագույն ստանդարտ կանոնների կիրառումը

27.1. Բանտարկյալների նկատմամբ վերաբերմունքի նվազագույն ստանդարտ կանոնները և համապատասխան հանձնարարականները հնարավոր բոլոր դեպքերում պետք է կիրառվեն փակ հիմնարկներում պահվող անչափահաս իրավախախտների, ներառյալ՝ նախքան դատավճռի կայացումը կալանքի տակ գտնվողների նկատմամբ:

27.2. Անհրաժեշտ է ջանքեր գործադրել Բանտարկյալների նկատմամբ վերաբերմունքի նվազագույն ստանդարտ կանոններում շարադրված համապատասխան սկզբունքներն իրականացնելու ուղղությամբ՝ անչափահասների՝ տարիքով, սեռով և անձնական բնութագրով պայմանավորված բազմազան կարիքներն առավելագույնս բավարարելու նպատակով:

Մեկնաբանություն

Բանտարկյալների նկատմամբ վերաբերմունքի նվազագույն ստանդարտ կանոնները ՄԱԿ-ի կողմից հռչակված նման առաջին փաստաթղթերից է: Ընդունված է կարծել, որ դրանց ազդեցությունը զգալի է ողջ աշխարհում: Թեև որոշ երկրներում դրանց կիրառումը մինչ օրս ցանկության, այլ ոչ փաստացի իրականացման մակարդակի վրա է, այնուամենայնիվ, այդ կանոնների կիրառումը շարունակում է ուղղիչ հիմնարկների արդարացի և մարդասիրական կառավարման կարևոր գործոններից մեկը հանդիսանալ:

Բանտարկյալների նկատմամբ վերաբերմունքի նվազագույն ստանդարտ կանոններում շարադրված են հիմնարկներում անչափահաս իրավախախտների պաշտպանությանն առնչվող մի շարք հիմնական միջոցներ (կացարանները, շինությունների կառուցվածքը, անկողնային պարագաները, հագուստը, դիմումների և բողոքների քննարկումը, արտաքին աշխարհի հետ կապը, սնունդը, բուժապասարկումը, կրոնական ծեսերը, տարիքային բաշխումը, անձնակազմը, աշխատանքը և այլն), ինչպես նաև դրույթներ տույժերի, կարգապահության, վտանգավոր իրավախախտներին զսպելու վերաբերյալ: Նպատակահարմար չէր լինի փոփոխություններ կատարել այդ նվազագույն ստանդարտ կանոններում՝ ելնելով Անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացման նվազագույն ստանդարտ կանոններով անչափահաս իրավախախտների համար նախատեսված հիմնարկների համար սահմանված առանձին բնութագրիչներից:

27-րդ կանոնում շարադրված են հաստատություններում գտնվող անչափահասների (27.1 կանոն), ինչպես նաև՝ նրանց տարիքից, սեռից և անձնական բնութագրից բխող զանազան կարիքների հետ կապված (27.2 կանոն) անհրաժեշտ պահանջները: Հետևաբար, այդ կանոնի նպատակներն ու բովանդակությունը փոխկապակցված են Բանտարկյալների նկատմամբ վերաբերմունքի նվազագույն ստանդարտ կանոնների համապատասխան դրույթներին:

28. Պայմանական ազատման հաճախակի կիրառումը

28.1. Հիմնարկից պայմանական ազատումը համապատասխան մարմնի կողմից պետք է կիրառվի հնարավորին լայնորեն և հնարավորին վաղ փուլում:

28.2. Համապատասխան մարմինը պետք է օժանդակություն ցուցաբերի հիմնարկից պայմանական ազատված անչափահասներին և վերահսկողություն իրականացնի նրանց նկատմամբ. համայնքները ևս պետք է լիովին աջակցեն նրանց:

Մեկնաբանություն

Պայմանական ազատման որոշում կայացնելու իրավունքով կարող է օժտվել 14.1 կանոնում նշված իրավասու մարմինը կամ մեկ այլ մարմին: Այստեղ նպատակահարմար է «իրավասու» բառի փոխարեն գործածել «համապատասխան» բառը:

Եթե հանգամանքները թույլ են տալիս, պետք է նախապատվությունը տալ պայմանական ազատմանը՝ պատժի ժամկետը լրիվ կրելու փոխարեն: Վերականգնման բավարար ընթացքի մասին վկայող ցուցանիշների առկայության դեպքում պայմանական կարող են ազատվել անգամ այն իրավախախտները, ովքեր հիմնարկ ընդունվելիս վտանգավոր են համարվել:

Ինչպես և պրոբացիայի դեպքում, ազատման այդ եղանակը կարող է պայմանավորված լինել համապատասխան մարմինների կողմից որոշակի ժամկետով սահմանված պայմանների կատարմամբ, օրինակ՝ իրավախախտի «լավ վարքագծի», համայնքային ծրագրերին մասնակցության, ուղղիչ տներում տեղավորվելու և այլ դեպքերում:

Իրավախախտին հաստատությունից պայմանական ազատելու դեպքում անհրաժեշտ է նախատեսել օգնություն և վերահսկողություն պրոբացիոն կամ այլ ծառայողի կողմից (հատկապես այն երկրներում, ուր պրոբացիոն համակարգ դեռևս առկա չէ), ինչպես նաև՝ խրախուսել համայնքային աջակցությունը:

29. Կիսափակ հիմնարկներ

29.1. Պետք է ջանքեր գործադրել կիսափակ հիմնարկներ ունենալու ուղղությամբ, ինչպիսիք են՝ ուղղիչ և դաստիարակչական տները, ցերեկային ուսումնական կենտրոնները և համանման այլ միջոցները, որոնք կարող են նպաստել հասարակության մեջ անչափահասների պատշաճ ինտեգրմանը:

Մեկնաբանություն

Չպետք է թերագնահատել հիմնարկից ազատվելուց հետո խնամքի կարևորությունը: Այս կանոնում հատուկ նշվում է կիսափակ հիմնարկների ցանց ստեղծելու անհրաժեշտությունը:

Այս կանոնով ևս ընդգծվում է հասարակությունն վերադարձող երիտասարդ իրավախախտների զանազան կարիքներին համապատասխանող տարբեր հիմնարկների և ծառայությունների ստեղծման, ինչպես նաև ուղղորդում և համակարգված աջակցություն ապահովելու անհրաժեշտությունը՝ որպես հասարակական կյանքում նրանց վերաինտեգրման կարևոր միջոց:

Վեցերորդ մաս. Հետազոտություն, պլանավորում, քաղաքականության մշակում և գնահատում

30. Հետազոտությունը՝ որպես պլանավորման, քաղաքականության մշակման և գնահատման հիմք

30.1. Պետք է ջանքեր գործադրել անհրաժեշտ հետազոտություններ կազմակերպելու և դրանք խթանելու ուղղությամբ, որը կդրվի պլանավորման և քաղաքականության մշակման հիմքում:

30.2. Պետք է ջանքեր գործադրել անչափահասների հանցավորության միտումների, հիմնախնդիրների և պատճառների, ինչպես նաև՝ ազատությունից զրկված անչափահասների տարբեր հատուկ կարիքները պարբերաբար ուսումնասիրելու և գնահատելու ուղղությամբ:

30.3. Պետք է ջանքեր գործադրել անչափահասների գործերով արդարադատության համակարգում գնահատողական հետազոտությունների կանոնավոր մեխանիզմ ստեղծելու, պատշաճ գնահատման, կառավարման հետագա կատարելագործման և բարեփոխման համար անհրաժեշտ սովյալներ ու տեղեկություններ հավաքելու և վերլուծելու ուղղությամբ:

30.4. Անչափահասների գործերով արդարադատության իրականացման ընթացքում ծառայությունների մատուցումը պետք է պլանավորել և իրականացնել որպես ներպետական զարգացման միջոցառումների բաղկացուցիչ մաս:

Մեկնաբանություն

Անչափահասների գործերով արդարադատության հիմնավոր քաղաքականության հիմք ձևավորելու համար հետազոտությունների կիրառումն ընդունվում է որպես պրակտիկայի ու գիտական ձեռքբերումների համապատասխանությունն ապահովելու կարևոր մեխանիզմ՝ ի շահ անչափահասների գործերով արդարադատության շարունակական զարգացման և կատարելագործման: Անչափահասների գործերով արդարադատության ասպարեզում հետազոտությունների ու քաղաքականության փոխադարձ կապը հատկապես կարևոր նշանակություն ունի: Երիտասարդների կյանքում տեղի ունեցող և անչափահասների հանցավորության ձևերի ու միտումների կայծակնային և հաճախ՝ կտրուկ փոփոխությունները, անչափահասների հանցավորությանը հասարակության և արդարադատության համակարգի արձագանքներն արագորեն կորցնում են արդիականությունն ու նպատակահարմարությունը:

Այդ առումով 30-րդ կանոնը ստանդարտներ է սահմանում հետազոտությունները քաղաքականության մշակման և անչափահասների գործերով արդարադատության իրականացման գործընթացում ներդնելու համար: Այդ կանոնով հատուկ ուշադրություն է հրավիրվում առկա ծրագրերի և միջոցառումների պարբերական վերանայման, ինչպես նաև՝ զարգացման համընդհանուր նպատակների համատեքստում պլանավորման անհրաժեշտության վրա:

Անչափահասների կարիքների, նրանց շրջանում հանցավորության խնդիրների ու միտումների մշտական գնահատումը համապատասխան քաղաքականության մշակման և պատշաճ

միջամտությունների մեթոդները կատարելագործելու նախապայման է թե՛ պաշտոնական, և թե՛ ոչ պաշտոնական մակարդակներում: Այս առումով պատասխանատու գերատեսչությունները պետք է աջակցեն անկախ անձանց և մարմինների կողմից իրականացվող հետազոտություններին: Օգտակար կլիներ ստանալ և հաշվի առնել անչափահասների, ընդ որում՝ ոչ միայն համակարգի հետ առնչություն ունեցողների տեսակետները:

Պլանավորման ընթացքում, մասնավորապես, պետք է կարևորել անհրաժեշտ ծառայությունների մատուցման առավել արդյունավետ ու արդարացի համակարգի ստեղծումը: Այդ նպատակով պետք է կատարել անչափահասների բազմազան հատուկ կարիքների և խնդիրների համալիր ու կանոնավոր վերլուծություն և վերհանել գերակայությունները: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է նաև համակարգել առկա ներուժը, այդ թվում՝ այլընտրանքները և համայնքային աջակցությունը, ինչը կօգնի առկա ծրագրերի կատարման ու մոնիթորինգի ընթացակարգ սահմանել:

Միավորված ազգերի կազմակերպության ուղենիշները անչափահասների հանցավորությունը կանխելու վերաբերյալ (Ռիադյան ուղենիշներ) (United Nations Guidelines for the Prevention of Juvenile Delinquency (The Riyadh Guidelines))

Գլխավոր Ասամբլեան՝

Նկատի առնելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, ինչպես նաև երիտասարդների իրավունքներին ու բարեկեցությանն առնչվող այլ միջազգային փաստաթղթերը, այդ թվում՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից հաստատված համապատասխան ստանդարտները,

Նկատի առնելով նաև Երեխայի իրավունքների մասին հռչակագիրը, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, ինչպես նաև՝ Անչափահասների գործերով արդարադատություն իրականացնելու վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները (Պեկինյան կանոններ),

Վկայակոչելով Գլխավոր Ասամբլեայի 1985 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 40/33 բանաձևը, որով Ասամբլեան հաստատել է Հանցավորության կանխարգելման և իրավախախտների նկատմամբ վերաբերմունքի վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության համագումարի կողմից առաջարկված Պեկինյան կանոնները,

Հիշեցնելով, որ Գլխավոր Ասամբլեան, 1985 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 40/35 բանաձևով կոչ է արել մշակել անչափահասների հանցավորության կանխարգելման ստանդարտներ, որոնք կաջակցեն անդամ երկրներին այնպիսի մասնագիտացված ծրագրեր ու քաղաքականություն մշակելու և իրականացնելու հարցում, որոնցով շեշտը կդրվի աջակցության, խնամքի և համայնքի ներգրավման հարցերին. ինչպես նաև կոչ է արել Տնտեսական և սոցիալական խորհրդին՝ սույն ստանդարտների իրականացման վերաբերյալ զեկույց ներկայացնել Հանցավորության կանխարգելման և իրավախախտների նկատմամբ վերաբերմունքի վերաբերյալ Միավորված ազգերի ութերորդ համագումարին՝ ուսումնասիրելու և քայլեր ձեռնարկելու նպատակով,

Հիշեցնելով, որ Տնտեսական և սոցիալական խորհուրդը, 1986 թվականի մայիսի 21-ի թիվ 1986/10 բանաձևի II բաժնում խնդրել է Ութերորդ համագումարին՝ քննության առնել անչափահասների հանցավորության կանխման վերաբերյալ ստանդարտների նախագիծը՝ դրանք ընդունելու նպատակով,

Ընդունելով անչափահասների հանցավորության կանխման վերաբերյալ ներպետական, տարածաշրջանային և միջազգային մոտեցումներ մշակելու անհրաժեշտությունը,

Հաստատելով, որ յուրաքանչյուր երեխա ունի հիմնական մարդկային իրավունքներ, այդ թվում, մասնավորապես, անվճար կրթության մատչելիության իրավունքը,

Մտահոգված լինելով օրենքի հետ խնդիր ունեցող կամ նման խնդիրներ չունեցող, սակայն լքված, անտեսված, բռնության ենթարկված կամ թմրանյութեր գործածելու հակումներ ունեցող, ծայրահեղ

իրավիճակներում գտնվող կամ ընդհանուր սոցիալական ռիսկի ենթակա երիտասարդների մեծ թվով,

Հաշվի առնելով հանցավորությունը կանխելու և հանրության բարօրությունն ապահովելու հարցերում արդյունավետ քաղաքականություն իրականացնելու օգտակարությունը՝

1. Գոհունակությամբ հիշատակում է Հանցավորության կանխարգելման և դրա դեմ պայքարի կոմիտեի և Գլխավոր քարտուղարի ծավալուն աշխատանքը՝ անչափահասների հանցավորության կանխման ուղենիշների ձևակերպման ուղղությամբ.

2. Արժեքավոր գործակցության համար երախտագիտություն է հայտնում Ռիադում գտնվող Արաբական անվտանգության հետազոտությունների և վերապատրաստման կենտրոնին՝ Անչափահասների հանցավորությունը կանխելու մասին ՄԱԿ-ի ուղենիշների նախագիծը մշակելու վերաբերյալ միջազգային փորձագիտական հանդիպումը հյուրընկալելու համար, որը տեղի է ունեցել 1998 թվականի փետրվարի 18-ից մարտի 1-ը՝ Ռիադում՝ Վիեննայում Միավորված ազգերի կազմակերպության գրասենյակի հետ համագործակցությամբ.

3. Հաստատում է Անչափահասների հանցավորության կանխման վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության ուղենիշները, որոնք կանվանվեն Ռիադյան ուղենիշներ.

4. Անդամ երկրներին կոչ է անում հանցավորության կանխարգելման վերաբերյալ իրենց համապարփակ ծրագրերում նախատեսել քայլեր՝ Ռիադյան ուղենիշները ներպետական օրենսդրությունում, քաղաքականության մեջ և պրակտիկայում կիրառելու և համապատասխան մարմինների, այդ թվում՝ քաղաքականություն մշակողների, անչափահասների գործերով արդարադատության ոլորտի անձնակազմի, մանկավարժների, լրատվամիջոցների, պրակտիկ աշխատողների և ուսանողների ուշադրությունը գրավելու ուղղությամբ.

5. Խնդրում է Գլխավոր քարտուղարին և կոչ է անում անդամ երկրներին՝ ապահովել Ռիադյան ուղենիշների տեքստի հնարավորինս լայն տարածումը՝ ՄԱԿ-ի բոլոր պաշտոնական լեզուներով.

6. Խնդրում է Գլխավոր քարտուղարին և կոչ է անում ՄԱԿ-ի բոլոր համապատասխան գրասենյակներին ու շահագրգիռ հաստատություններին, մասնավորապես՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամին, ինչպես նաև անհատ փորձագետներին, միահամուռ ջանքեր գործադրել Ռիադյան ուղենիշների կիրառումը խթանելու ուղղությամբ.

7. Նաև խնդրում է Գլխավոր քարտուղարին՝ խորացնել հետազոտությունները սոցիալական ռիսկային իրադրությունների և երեխաների շահագործման, այդ թվում՝ երեխաներին որպես հանցագործության գործիք օգտագործելու բնագավառներում՝ հակազդման միջոցներ մշակելու և դրանից հետո Հանցավորության կանխարգելման և իրավախախտների նկատմամբ վերաբերմունքի հարցերով ՄԱԿ-ի իններորդ համագումարին այդ մասին զեկուցելու նպատակով.

8. Այնուհետ խնդրում է Գլխավոր քարտուղարին՝ լույս ընծայել ձեռնարկ անչափահասների գործերով արդարադատության ստանդարտների վերաբերյալ, որը կընդգրկի Անչափահասների գործերով արդարադատության իրականացման ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները (Պեկինյան կանոնները), Անչափահասների հանցավորությունը կանխելու վերաբերյալ ՄԱԿ-ի ուղենիշները (Ռիադյան ուղենիշները) և Ազատությունից զրկված անչափահասների

պաշտպանության վերաբերյալ ՄԱԿ-ի կանոնները, ինչպես նաև՝ դրանց դրույթների լիարժեք մեկնաբանությունների ժողովածու.

9. Հորդորում է Միավորված ազգերի կազմակերպության համակարգում ընդգրկված բոլոր մարմիններին՝ սույն բանաձևի իրականացումն ապահովելու համար պատշաճ միջոցներ ձեռնարկելու հարցում համագործակցել Գլխավոր քարտուղարի հետ.

10. Հրավիրում է Մարդու իրավունքների հանձնաժողովին առընթեր Փոքրամասնությունների նկատմամբ խտրականության կանխարգելման և վերջիններիս պաշտպանության ենթահանձնաժողովին՝ քննության առնել այս նոր միջազգային փաստաթուղթը՝ դրա դրույթների կիրառումը խթանելու նպատակով.

11. Անդամ երկրներին հրավիրում է մեծապես աջակցելու Ռիադյան ուղենիշների դրույթների կիրառման գործնական և քաղաքական հարցերի վերաբերյալ տեխնիկական և գիտական քննարկումների կազմակերպմանը և փորձնական ու ցուցադրական ծրագրերի մշակմանը, ինչպես նաև՝ երիտասարդների հատուկ կարիքներին, հիմնախնդիրներին և մտահոգություններին արձագանքելու առաքելություն ունեցող համայնքային ծառայությունների ստեղծման ուղղությամբ ձեռնարկվող կոնկրետ քայլերին, և խնդրում է Գլխավոր քարտուղարին՝ համակարգել այս ոլորտներում գործադրվող ջանքերը.

12. Նաև հրավիրում է անդամ երկրներին՝ Գլխավոր քարտուղարին տեղեկացնել Ռիադյան կանոնների իրականացման վերաբերյալ, իսկ Հանցավորության կանխարգելման և դրա դեմ պայքարի կոմիտեին պարբերաբար հաշվետվություններ ներկայացնել ձեռք բերած արդյունքների մասին.

13. Հանցավորության կանխարգելման և դրա դեմ պայքարի կոմիտեին առաջարկում է դիմել Իններորդ համագումարին՝ Ռիադյան ուղենիշների և սույն բանաձևում ներառված հանձնարարականների կատարման գործում արձանագրված առաջընթացը որպես անչափահասների գործերով արդարադատության հիմնախնդրի օրակարգի առանձին կետ քննության առնելու հարցով՝ առաջարկելով նաև այդ խնդիրը պահել մշտական ուշադրության կենտրոնում:

Հավելված

**Միավորված ազգերի ուղենիշները անչափահասների հանցավորությունը կանխելու վերաբերյալ
(Ռիադյան ուղենիշներ)**

I. Հիմնարար սկզբունքներ

1. Անչափահասների հանցավորության կանխարգելումը հասարակությունում հանցավորության կանխարգելման էական մասն է: Օրինական և սոցիալական տեսակետից օգտակար գործունեության մեջ ներգրավվելը և հասարակության և կյանքի հանդեպ մարդասեր վերաբերմունք որդեգրելը երիտասարդների մոտ կարող է ոչ քրեական վարք ձևավորել:

2. Անչափահասների հանցավորության արդյունավետ կանխարգելման համար հասարակության մի մասից պահանջվում է ջանք գործադրել դեռահասների ներդաշնակ զարգացումն ապահովելու

ուղղությամբ՝ վաղ մանկությունից խթանելով նրանց անհատականությունը և հարգանքը նրանց անձի նկատմամբ:

3. Սույն ուղենիշները մեկնաբանելիս հարկավոր է երեխայամետ մոտեցում որդեգրել: Երիտասարդները պետք է ակտիվ փոխգործակցող դերակատարություն ունենան հասարակությունում և չպետք է դիտվեն սուսկ որպես սոցիալիզացիայի կամ վերահսկողության օբյեկտներ:

4. Սույն ուղենիշներն իրականացնելիս երիտասարդների բարեկեցությունը սկսած վաղ մանկությունից, պետք է ցանկացած կանխարգելիչ ծրագրի ուշադրության կենտրոնում գտնվի՝ ներպետական իրավական համակարգերում սահմանված կարգով:

5. Պետք է ընդունել հանցավորության կանխարգելման առաջադեմ քաղաքականության, կանոնավոր հետազոտությունների և համապատասխան միջոցների մշակման անհրաժեշտությունը և կարևորությունը: Ընդ որում, հարկավոր է խուսափել երեխայի այնպիսի վարքագծի քրեականացումից և պատժումից, որի արդյունքում երեխայի զարգացումը չի վտանգվում կամ այլոց վնաս չի պատճառվում: Այդ քաղաքականությունը և միջոցները պետք է ներառեն.

(ա) ուսումնական, հատկապես՝ կրթական հնարավորությունների ընձեռումը, որոնք կբավարարեն երիտասարդների փոփոխվող կարիքները և կծառայեն որպես օժանդակ միջավայր բոլոր, առաջին հերթին՝ ակնհայտորեն վտանգված կամ սոցիալական տեսակետից ռիսկային, հատուկ խնամքի և պաշտպանության կարիք ունեցող երիտասարդների անձնական զարգացման համար,

(բ) հանցավորության կանխարգելման մասնագիտացված դոկտրինները և մոտեցումները, որոնք հիմնված են օրենքների, ընթացակարգերի, հաստատությունների, հիմնարկների և ծառայություն մատուցողների ամբողջության վրա, և որոնց նպատակն է՝ նվազեցնել իրավախախտումներ կատարելու դրդապատճառները, անհրաժեշտությունը, հնարավորությունները կամ դրանց նպաստող պայմանները,

(գ) առաջին հերթին երիտասարդի շահերից ելնելով իրականացվող պաշտոնական միջամտությունը՝ առաջնորդվելով արդարացիությամբ և անկողմնակալությամբ,

(դ) երիտասարդների բարօրությունը, զարգացումը, իրավունքներն ու շահերը երաշխավորելը,

(ե) ենթադրությունը, որ երիտասարդական վարքագիծը կամ պահվածքը, որը չի համապատասխանում համընդհանուր սոցիալական նորմերին և արժեքներին, հաճախ պայմանավորված է հասունացմամբ և աճով և չափահասության հասնելու անցումային տարիքի անձանց մոտ ինքնըստիներքյան անցում է,

(զ) գիտակցումը, որ երիտասարդին որպես «շեղված», «զանցառու» կամ «իրավախախտ հակումներ ունեցող» պիտակավորելը հաճախ հանգեցնում է երիտասարդների մոտ անցանկալի վարքագծի զարգացմանը:

6. Անհրաժեշտ է մշակել անչափահասների հանցավորության կանխարգելման համայնքային ծառայություններ և ծրագրեր, հատկապես՝ համապատասխան գերատեսչությունների

բացակայության պայմաններում: Սոցիալական հսկողության պաշտոնական գերատեսչությունները պետք է գործի անցնեն միայն որպես ծայրահեղ միջոց:

II. Ուղենիշների կարգավորման շրջանակը

7. Սույն ուղենիշները պետք է մեկնաբանվեն և իրականացվեն Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի, Երեխայի իրավունքների հռչակագրի և Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի լայն շրջանակներում և Անչափահասների գործերով արդարադատության իրականացման ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտների (Պեկինյան կանոններ), ինչպես նաև երեխաների և երիտասարդների իրավունքներին, շահերին և բարօրությանն առնչվող այլ միջազգային փաստաթղթերի և նորմերի համատեքստում:

8. Սույն ուղենիշները պետք է նաև իրականացվեն անդամ երկրներից յուրաքանչյուրում ընդունված տնտեսական, սոցիալական և մշակութային պայմանների համատեքստում:

III. Ընդհանուր կանխարգելումը

9. Կառավարման բոլոր մակարդակներում պետք է մշակվեն կանխարգելման համապարփակ ծրագրեր, որոնք պետք է ներառեն հետևյալը.

(ա) խնդրի խոր վերլուծություն և առկա ծրագրերի, ծառայությունների, հնարավորությունների և ներուժի հաշվառում,

(բ) կանխարգելիչ գործառույթ իրականացնող, որակավորում ունեցող գերատեսչությունների, հաստատությունների և անձնակազմի հստակ սահմանված պարտականությունները,

(գ) կառավարական գերատեսչությունների և ոչ կառավարական գործակալությունների կախարգելիչ գործողությունների պատշաճ համակարգման մեխանիզմները,

(դ) տեսական հետազոտությունների վրա հիմնված քաղաքականությունը, ծրագրերը և ռազմավարությունը, որոնք պետք է շարունակաբար մոնիթորինգի ենթարկվեն և մանրամասն գնահատվեն իրականացման ընթացքում,

(ե) հակաօրինական գործողություններ կատարելու հնարավորությունն արդյունավետ նվազեցնելու մեթոդները,

(զ) համայնքի ներգրավումը ամենատարբեր ծառայությունների և ծրագրերի միջոցով,

(է) սերտ միջմասնագիտական համագործակցությունը համապետական և մարզային կառավարման և տեղական ինքնակառավարման մակարդակներում՝ մասնավոր հատվածի, տվյալ համայնքը ներկայացնող քաղաքացիների և երեխայի խնամքի, առողջապահական, կրթական, սոցիալական, իրավապահ և դատական մարմինների ներգրավմամբ՝ անչափահասների և երիտասարդների շրջանում հանցավորությունը կանխելուն ուղղված միահամուռ ջանքեր գործադրելու նպատակով,

(ը) հանցավորության կանխարգելման քաղաքականությանը և գործընթացներին երիտասարդների մասնակցությունը, այդ թվում՝ համայնքի ներուժից օգտվելու, երիտասարդական ինքնօգնության, տուժողներին փոխհատուցման և օժանդակության ծրագրերի միջոցով,

(թ) մասնագիտացված անձնակազմի առկայությունը բոլոր մակարդակներում:

IV. Սոցիալիզացիայի գործընթացները

10. Շեշտը պետք է դրվի կանխարգելիչ քաղաքականության վրա, որը խթանում է բոլոր երեխաների և երիտասարդների բարեհաջող սոցիալիզացիան և ինտեգրումը, մասնավորապես՝ ընտանիքի, համայնքի, տարեկիցների միավորումների, դպրոցների, մասնագիտական ուսուցման և աշխատանքային ծրագրերի, ինչպես նաև՝ կամավորական կազմակերպությունների միջոցով:

Պատշաճ ուշադրություն պետք է դարձնել երեխաների և երիտասարդների պատշաճ անձնական զարգացմանը, և նրանք պետք է ընդունվեն որպես սոցիալիզացիայի և ինտեգրման գործընթացի հավասար կողմ:

Ա. Ընտանիքը

11. Յուրաքանչյուր հասարակությունում պետք է մեծ կարևորություն տրվի ընտանիքի և հասարակության բոլոր անդամների բարեկեցությանը:

12. Քանզի ընտանիքը երեխաների առաջնային սոցիալիզացիայի համար պատասխանատու կենտրոնական միավորն է, անհրաժեշտ է կառավարական մակարդակով սոցիալական միջոցներ ձեռնարկել ընտանիքի, այդ թվում՝ ազգականների հետ կապերի լիարժեքությունը պահպանելու ուղղությամբ:

Հասարակությունը պատասխանատու է երեխաների ֆիզիկական և հոգեկան բարօրությունն ապահովելու հարցում ընտանիքին աջակցելու համար:

Հարկավոր է տրամադրել պատշաճ հնարավորություններ, այդ թվում՝ ցերեկային խնամք:

13. Կառավարությունները պետք է ձևավորեն այնպիսի քաղաքականություն, որը հարմար է երեխաներին կայուն և ամուր ընտանեկան միջավայրում մեծացնելու համար: Անկայունության կամ կոնֆլիկտների հաղթահարման հարցում օժանդակության կարիք ունեցող ընտանիքներին հարկավոր է անհրաժեշտ ծառայություններ մատուցել:

14. Կայուն և ամուր ընտանեկան միջավայրի բացակայության և ծնողներին այդ հարցում օգնելու՝ համայնքի ջանքերը ձախողվելու պարագայում, և եթե ազգականները չեն կարող ստանձնել այդ դերը, հարկավոր է քննարկել այլընտրանքային տեղավորման տարբերակները, այդ թվում՝ խնամատար ընտանիքը և որդեգրումը: Այդ տեղավորման պայմանները պետք է հնարավորինս նման լինեն կայուն և ամուր ընտանեկան միջավայրին՝ միևնույն ժամանակ երեխաների մոտ ձևավորելով տևականության զգացողություն՝ դրանով իսկ խուսափելով «խնամատարներից բաժանվելու» հետ կապված խնդիրներից:

15. Հատուկ ուշադրություն պետք է դարձնել կտրուկ տնտեսական, սոցիալական և մշակութային փոփոխությունների ենթարկված, մասնավորապես՝ տեղաբնիկների, ներգաղթյալների և փախստականների ընտանիքների երեխաներին: Քանի որ նման փոփոխությունները կարող են

քայքայել ընտանիքների՝ երեխաների խնամքի և դաստիարակության ավանդական կարողությունները, հաճախ՝ դերերի և մշակույթների միջև առկա հակասությունների արդյունքում, անհրաժեշտ է մշակել երեխաների սոցիալիզացիայի՝ սոցիալապես կառուցողական տարբերակներ:

16. Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել և ծրագրեր մշակել՝ ծնողներին երեխայի զարգացման և խնամքի հարցում ծնողական դերի ու պարտականությունների վերաբերյալ ուսուցում անցնելու հնարավորություն ընձեռնելու ուղղությամբ՝ խթանելով ծնող-երեխա դրական հարաբերությունները, բարձրացնելով երեխաների ու երիտասարդների խնդիրների նկատմամբ ծնողների սրտացավությունը և խթանելով նրանց ներգրավումն ընտանեկան և համայնքային միջոցառումներին:

17. Կառավարությունները պետք է միջոցներ ձեռնարկեն ընտանիքի միասնությունն ու ներդաշնակությունը խթանելու ուղղությամբ և քարոզեն երեխաներին ծնողներից բաժանելու անցանկալիության օգտին, եթե երեխաների բարօրության և ապագայի տեսակետից այլ ակնհայտ այլընտրանք չկա:

18. Անհրաժեշտ է ընդգծել սոցիալիզացիայի հարցում ընտանիքի և ազգականների գործառույթի կարևորությունը. հավասարապես կարևոր է նաև ընդունել հասարակությունում երիտասարդների ապագա դերի, պարտականությունների, մասնակցության և փոխգործակցության կարևորությունը:

19. Պատշաճ սոցիալիզացիայի հարցում երեխայի իրավունքներն ապահովելիս կառավարությունները և այլ գերատեսչությունները պետք է հենվեն առկա սոցիալական և իրավական գործակալությունների վրա, իսկ երբ ավանդական հաստատությունները և սովորույթներն այլևս արդյունավետ չեն, նրանք պետք է նաև նորարարական միջոցներ առաջարկեն կամ թույլատրեն նման միջոցների իրականացումը:

Բ. Կրթությունը

20. Կառավարությունները պարտավոր են հանրակրթությունը մատչելի դարձնել բոլոր երիտասարդների համար:

21. Կրթական համակարգերը, իրենց կրթական և մասնագիտական ուսուցման գործունեությունից բացի, պետք է առանձնակի ուշադրություն դարձնեն հետևյալին.

(ա) ուսուցանել հիմնական արժեքները և բարելավել հարգանքը երեխայի մշակութային ինքնության և պատկերացումների, երեխայի բնակության երկրում ընդունված սոցիալական արժեքների, երեխայի սեփական երկրից տարբերվող քաղաքակրթությունների և մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ,

(բ) երիտասարդների ներուժի չափով խթանել և զարգացնել նրանց ինքնությունը, տաղանդները, հոգեկան և ֆիզիկական կարողությունները,

(գ) երիտասարդների մասնակցությունը կրթական գործընթացին՝ որպես ակտիվ և արդյունավետ մասնակիցներ, այլ ոչ որպես կրթության օբյեկտ,

(դ) միջոցառումների նախաձեռնում, ինչը տվյալ դպրոցին կամ համայնքին պատկանելության զգացողություն կձևավորի,

(ե) տարբեր տեսակետները և կարծիքները, ինչպես նաև՝ մշակութային և այլ տարբերություններն ընկալելու և հարգելու՝ երիտասարդների կարողության խթանումը,

(զ) մասնագիտական ուսուցման, աշխատանք գտնելու հնարավորությունների և մասնագիտական առաջընթացի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը և ուղղորդումը,

(է) երիտասարդներին դրական հուզական աջակցության տրամադրումը և հոգեբանական վատ վերաբերմունքից խուսափելը,

(ը) կոպիտ կարգապահական միջոցներից, մասնավորապես՝ մարմնական պատիժներից խուսափելը:

22. Կրթական համակարգերը պետք է ձգտեն աշխատել ծնողների, երիտասարդների գործունեության հետ առնչություն ունեցող համայնքային կազմակերպությունների և գերատեսչությունների հետ միասին:

23. Երիտասարդները և նրանց ընտանիքները պետք է տեղեկացված լինեն օրենսդրության, իրենց իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև՝ համընդհանուր արժեքային համակարգի մասին, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության փաստաթղթերին:

24. Կրթական համակարգերը պետք է առանձնակի խնամքով և ուշադրությամբ վերաբերվեն սոցիալական տեսակետից ռիսկային երիտասարդներին: Անհրաժեշտ է մշակել և լիարժեք գործի դնել մասնագիտացված ծրագրեր, ուսուցողական նյութեր, ուսումնական ծրագիր, մոտեցումներ և գործիքներ:

25. Առանձնակի ուշադրություն պետք է դարձվի երիտասարդների կողմից ալկոհոլի, թմրանյութերի և այլ նյութերի չարաշահումը կանխարգելելու քաղաքականությանն ու ռազմավարությանը: Մանկավարժները և այլ մասնագետները պետք է ստանան համապատասխան միջոցներ ու գիտելիքներ՝ նման խնդիրները կանխելու և դրանք լուծելու համար: Աշակերտական և ուսանողական մարմիններն իրենց տամադրության տակ պետք է տեղեկատվություն ունենան թմրանյութերի և ալկոհոլի գործածման և չարաշահման վերաբերյալ:

26. Դպրոցները պետք է ծառայեն որպես ռեսուրսային և ուղղորդման կենտրոններ՝ երիտասարդներին բժշկական, խորհրդատվական և այլ ծառայություններ մատուցելու համար, մասնավորապես՝ այն երիտասարդներին, ովքեր հատուկ կարիքներ ունեն և ենթարկվել են չարաշահման, անտեսման, վիկտիմիզացիայի և շահագործման:

27. Ուսուցողական տարբեր ծրագրերի միջոցով անհրաժեշտ է բարձրացնել մանկավարժների, չափահաս այլ անձանց և աշակերտական և ուսանողական մարմինների զգայնությունը երիտասարդների խնդիրների, կարիքների և զգացմունքների նկատմամբ, մասնավորապես՝ նրանց, ովքեր սերում են չքավոր, էթնիկ կամ այլ փոքրամասնություններից կամ ներկայացնում են ցածր եկամուտ ունեցող խավը:

28. Դպրոցական համակարգերը պետք է փորձեն տիրապետել առավելագույն մասնագիտական և կրթական ստանդարտների՝ կապված ուսումնական ծրագրի, ուսուցողական և ուսումնական մեթոդների և մոտեցումների, բարձր որակավորում ունեցող մանկավարժների հավաքագրման և վերապատրաստման հետ: Հարկավոր է ապահովել վերը նշված անձանց աշխատանքի պարբերական մոնիթորինգը և գնահատումը համապատասխան մասնագիտական կազմակերպությունների և իշխանության մարմինների կողմից:

29. Դպրոցական համակարգերը պետք է համայնքային խմբերի հետ համագործակցությամբ ծրագրեն, մշակեն և իրականացնեն արտաուսումնական միջոցներ՝ ըստ երիտասարդների նախասիրությունների:

30. Հատուկ օժանդակություն պետք է ստանան այն երեխաները և երիտասարդները, ովքեր դժվարանում են հաճախելիության հարցում կամ դուրս են մնացել կրթությունից:

31. Դպրոցները պետք է խթանեն արդար և անկողմնակալ մոտեցումները. աշակերտները և ուսանողները պետք է ներկայացված լինեն դպրոցի քաղաքականությունը, այդ թվում՝ կարգուկանոնի և որոշումների կայացման վերաբերյալ քաղաքականությունը մշակող մարմիններում:

Գ. Համայնքը

32. Անհրաժեշտ է ստեղծել երիտասարդների հատուկ կարիքները բավարարող, խնդիրները լուծող, հետաքրքրություններին և մտահոգություններին համապատասխանող համայնքային ծառայություններ և ծրագրեր, որոնց շրջանակներում նաև պատշաճ խորհրդատվություն և ուղղորդում կիրականացվի, իսկ այնտեղ, ուր նման ծառայություններ ու ծրագրեր առկա են՝ զարգացնել կամ ամրապնդել դրանք:

33. Համայնքները պետք է երիտասարդներին ապահովեն համայնքային աջակցության բազմազան միջոցներով, այդ թվում՝ համայնքային զարգացման կենտրոններով, ժամանցի հաստատություններով և սոցիալապես ռիսկային երեխաների հատուկ խնդիրների լուծման ծառայություններով, իսկ եթե այդպիսիք առկա են՝ ամրապնդել դրանք: Այդ օժանդակ միջոցները տրամադրելիս անհրաժեշտ է երաշխավորել անհատի իրավունքների նկատմամբ հարգանքը:

34. Հատուկ հարմարություններ պետք է ստեղծվեն այն երիտասարդներին պատշաճ կացարանով ապահովելու համար, ովքեր այլևս չեն կարող ապրել իրենց տանը կամ տուն չունեն:

35. Պետք է տրամադրվեն չափահասության հասնելու անցումային տարիքում երիտասարդներին հանդիպող դժվարությունները հաղթահարելուն ուղղված բազմազան ծառայություններ և օժանդակ միջոցներ: Այդ ծառայությունները պետք է ներառեն երիտասարդ թմրամոլների համար նախատեսված հատուկ ծրագրեր, որոնցում շեշտը դրվում է խնամքի, խորհրդատվության, օժանդակության և թերապիայի հետ կապված միջամտությունների վրա:

36. Կառավարությունները և այլ հաստատությունները պետք է ֆինանսական և այլ աջակցություն ցուցաբերեն երիտասարդներին ծառայություններ մատուցող կամավորական կազմակերպություններին:

37. Տեղական մակարդակում պետք է ստեղծել երիտասարդական կազմակերպություններ կամ ամրապնդել դրանք, որոնք պետք է լիարժեք մասնակցեն համայնքային գործերի կառավարմանը:

Այդ կազմակերպությունները պետք է խրախուսեն երիտասարդների մասնակցությունը խմբային և կամավորական, հատկապես՝ աջակցության կարիք ունեցող երիտասարդներին օգնելու նպատակով իրականացվող ծրագրերում:

38. Պետական գերատեսչությունները պետք է հատուկ պատասխանատվություն ստանձնեն տնանկ կամ փողոցում ապրող երեխաների համար և նրանց անհրաժեշտ ծառայություններ տրամադրեն. տեղերում առկա հնարավորությունների, կացարանների, աշխատանքի մասին տեղեկատվությունը և օգնության այլ եղանակները պետք է մշտապես հասանելի լինեն երիտասարդների համար:

39. Երիտասարդների համար հատուկ հետաքրքրություն ներկայացնող զանազան ժամանցային հնարավորություններ պետք է ստեղծվեն, որոնք պետք է հեշտ հասանելի լինեն նրանց համար:

Դ. Լրատվամիջոցները

40. Անհրաժեշտ է խրախուսել լրատվամիջոցներին, որպեսզի վերջիններս երիտասարդներին ապահովեն տեղեկատվությամբ և նյութերով՝ ներպետական և միջազգային տարբեր աղբյուրներից:

41. Անհրաժեշտ է խրախուսել լրատվամիջոցներին, որպեսզի վերջիններս դրական լույսի ներքո ներկայացնեն երիտասարդների ներդրումը հասարակությունում:

42. Անհրաժեշտ է խրախուսել լրատվամիջոցներին, որպեսզի վերջիններս տեղեկատվություն տարածեն հասարակությունում երիտասարդների համար նախատեսված ծառայությունների, հարմարությունների և հնարավորությունների վերաբերյալ:

43. Անհրաժեշտ է խրախուսել լրատվամիջոցներին, մասնավորապես՝ հեռուստաընկերություններին և կինոարդյունաբերողներին, որպեսզի վերջիններս նվազագույնի հասցնեն պոռնոգրաֆիայի, թմրանյութերի և բռնության ցուցադրումը, իսկ բռնությունը և շահագործումը ներկայացնեն բացասական լույսի ներքո, ինչպես նաև՝ խուսափել նվաստացնող և վիրավորական բովանդակությամբ ցուցադրություններից, հատկապես՝ երեխաների, կանանց և միջանձնային հարաբերությունների առումով, և դերերի և իրավունքների հավասարության սկզբունքներ քարոզել:

44. Լրատվամիջոցները պետք է տեղյակ լինեն երիտասարդների կողմից թմրանյութերի և ակոհոլի չարաշահման հետ կապված հարցերում իրենց ծավալուն սոցիալական դերի և պատասխանատվության, ինչպես նաև ազդեցության մասին: Լրատվամիջոցները պետք է գործի դնեն իրենց ուժը թմրանյութերի չարաշահումը կանխելու համար՝ հավասարակշռված մոտեցմամբ հետևողական հաղորդագրություններ տարածելու միջոցով:

Անհրաժեշտ է խթանել բոլոր մակարդակներում թմրանյութերի մասին իրազեկվածության քարոզարշավներ:

V. Սոցիալական քաղաքականությունը

45. Պետական գերատեսչությունները պետք է առաջնահերթություն տան երիտասարդների համար նախատեսված ծրագրերին և բավարար ֆինանսական ու այլ միջոցներ տրամադրեն

ծառայությունների արդյունավետ մատուցման և պատշաճ բժշկական խնամքի, սնուցման, կացարանային հարմարությունների և համապատասխան այլ ծառայությունների, այդ թվում՝ թմրանյութերից և ակլոնոլից կախվածության կանխարգելման և բուժման համար՝ ապահովելով, որպեսզի այդ միջոցները հասնեն և իսկապես ծառայեն երիտասարդներին:

46. Երիտասարդներին հաստատություններում տեղավորելը պետք է կիրառվի որպես ծայրահեղ միջոց և նվազագույն անհրաժեշտ տևողությամբ, իսկ երիտասարդների լավագույն շահերին պետք է գերազույն կարևորություն տրվի: Միջամտության այդ տեսակի թույլատրման չափանիշները պետք է խստագույնս սահմանված լինեն և սահմանափակվեն հետևյալ դեպքերով. (ա) երբ երեխային կամ երիտասարդին ծնողների կամ խնամակալների կողմից վնաս է պատճառվել, (բ) երբ երեխան կամ երիտասարդը ծնողների կամ խնամակալների կողմից սեռական, ֆիզիկական կամ հոգեբանական չարաշահման է ենթարկվել, (գ) երբ երեխան կամ երիտասարդն անտեսվել, լքվել կամ շահագործվել է ծնողների կամ խնամակալների կողմից, (դ) երբ ծնողների կամ խնամակալների վարքագծի պատճառով երեխան կամ երիտասարդը ֆիզիկական կամ բարոյական վտանգի է ենթարկվում, (ե) երբ երեխայի կամ երիտասարդի վարքը վկայում է նրանց սպառնացող լուրջ ֆիզիկական կամ հոգեբանական վտանգի մասին և ծնողները, խնամակալները, անչափահասն ինքը կամ հաստատությունում տեղավորելու հետ չկապված համայնքային ծառայությունները չեն կարող դիմագրավել այդ վտանգն այլ կերպ, քան հաստատությունում տեղավորելով:

47. Պետական գերատեսչությունները պետք է երիտասարդներին հնարավորություն ընձեռեն լիարժեք շարունակելու կրթությունը, որը պետք է ֆինանսավորվի պետության կողմից, եթե ծնողները կամ խնամակալներն ի վիճակի չեն այդ անել, ինչպես նաև՝ աշխատանքային փորձ ձեռք բերելու հնարավորությամբ ապահովեն:

48. Հարկավոր է նախատեսել հանցավորության կանխարգելման ծրագրեր, որոնք պետք է մշակվեն հավաստի գիտական հետազոտությունների արդյունքների հիման վրա և պարբերաբար մոնիթորինգի, գնահատման և համապատասխան շտկումների ենթարկվեն:

49. Մասնագիտական շրջանակներում և հանրության շրջանում հարկավոր է գիտական տեղեկատվություն տարածել այնպիսի վարքագծի կամ իրադրության մասին, որը վկայում է երիտասարդների ֆիզիկական և հոգեբանական վիկտիմիզացիայի, վնասի և չարաշահման, ինչպես նաև՝ շահագործման մասին կամ կարող է հանգեցնել դրան:

50. Որպես կանոն, նման ծրագրերում մասնակցությունը պետք է կամավոր լինի:

Երիտասարդները պետք է ներգրավվեն այդ ծրագրերի ձևակերպմանը, մշակմանն ու իրականացմանը:

51. Կառավարությունները պետք է սկսեն կամ շարունակեն քրեական արդարադատության համակարգի ներսում և դրանից դուրս իրականացվող քաղաքականության, միջոցների և ռազմավարության ուսումնասիրությունը, մշակումը և իրականացումը՝ երիտասարդների նկատմամբ ընտանեկան բռնությունը կանխելու և ընտանեկան բռնությունից տուժածների նկատմամբ արդարացի վերաբերմունքը երաշխավորելու նպատակով:

VI. Օրենսդրությունը և անչափահասների գործերով արդարադատության իրականացումը

52. Կառավարությունները պետք է բոլոր երիտասարդների իրավունքները և բաօրությունը խթանելու և պաշտպանելու մասին հատուկ օրենքներ և ընթացակարգեր մշակեն ու իրականացնեն:

53. Անհրաժեշտ է ընդունել և կենսագործել երեխաների և երիտասարդների վիկտիմիզացիան, շահագործումը, նրանց նկատմամբ չարաշահումները և քրեական գործողություններում նրանց ներգրավումը կանխարգելող օրենսդրություն:

54. Որևէ երեխա կամ երիտասարդ չպետք է տանը, դպրոցներում կամ այլ հաստատություններում ենթարկվի ուղղման կամ պատժիչ այնպիսի միջոցների, որոնք իրենց բնույթով կոպիտ կամ նվաստացնող են:

55. Անհրաժեշտ է մշակել և կենսագործել գենքի որևէ տեսակի հասանելիությունը երեխաների և երիտասարդների համար սահմանափակելու մասին օրենսդրություն:

56. Երիտասարդների լրացուցիչ խարանումը, վիկտիմիզացիան և քրեականացումը կանխելու նպատակով հարկավոր է օրենսդրություն ընդունել, որը կերաշխավորի, որ չափահասի կողմից կատարվելու դեպքում հանցագործություն չհամարվող և քրեորեն ոչ պատժելի այս կամ այն գործողությունը չհամարվի հանցագործություն և քրեորեն չպատժվի երիտասարդի կողմից կատարվելու դեպքում:

57. Անհրաժեշտ է քննարկել օմբուդսմենի գրասենյակ կամ նման անկախ մարմին ստեղծելու նպատակահարմարությունը, ինչը կապահովեր, որպեսզի երիտասարդների կարգավիճակը, իրավունքներն ու շահերը պահպանվեն և վերջիններս պատշաճ կերպով ուղղորդվեն գոյություն ունեցող ծառայություններ: Օմբուդսմենը կամ լիազորված այլ մարմինը կվերահսկեին նաև Ռիադյան ուղենիշների, Պեկինյան կանոնների և Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության վերաբերյալ կանոնների իրականացումը: Օմբուդսմենը կամ այլ մարմինը պարբերաբար զեկույց կիրապարակեին կատարված առաջընթացի կամ տվյալ փաստաթղթի իրականացման ընթացքում առաջացած դժվարությունների վերաբերյալ: Հարկավոր է նաև հիմնել երեխաների պաշտպանության ծառայություններ:

58. Իրավապահ և համապատասխան այլ մարմինների՝ երկու սեռերը ներկայացնող անձնակազմը պետք է վերապատրաստվի երիտասարդների հատուկ կարիքները բավարարելու թեմայով և պետք է առավելագույնս տիրապետի երիտասարդներին արդարադատության համակարգից զերծ պահելու նպատակով կատարվող ուղղորդման ծրագրերին ու հնարավորություններին:

59. Անհրաժեշտ է ընդունել և իրականացնել երեխաներին և երիտասարդներին թմրանյութերի չարաշահումից և թմրանյութ տարածողներից պաշտպանելու մասին օրենսդրություն:

VII. Հետազոտություններ, քաղաքականության մշակում և համակարգում

60. Անհրաժեշտ է ջանքեր գործադրել և համապատասխան մեխանիզմներ ստեղծել, որոնք կխթանեն բազմամասնագիտական և ներմասնագիտական փոխգործակցությունը և համակարգումը տնտեսական, սոցիալական, կրթական և առողջապահական գերատեսչությունների և ծառայությունների, արդարադատության համակարգի, երիտասարդության, համայնքի, զարգացման գործակալությունների և համապատասխան հաստատությունների միջև:

61. Հարկավոր է բարելավել անչափահասների հանցավորության և հանցագործությունների կանխարգելման վերաբերյալ ծրագրերի, պրակտիկ գործունեության և նախաձեռնությունների արդյունքում ձևավորված փորձի մասին տեղեկատվության փոխանակումը ներպետական, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում:

62. Անչափահասների հանցավորության, հանցավորության կանխարգելման և անչափահասների գործերով արդարադատության թեմաներով տարածաշրջանային և միջազգային համագործակցությունը պետք է զարգացվի և ամրապնդվի՝ ներգրավելով պրակտիկ աշխատողների, փորձագետների և որոշում կայացնողների:

63. Պրակտիկ գործունեությանը և քաղաքականությանն առնչվող հարցերի, մասնավորապես՝ վերապատրաստման, փորձնական և ցուցադրական ծրագրերի, անչափահասների հանցավորության կանխարգելման շուրջ տեխնիկական և գիտական համագործակցությունը պետք է լուրջ աջակցություն ստանա կառավարություններից ՄԱԿ-ի համակարգից և շահագրգիռ այլ կազմակերպություններից:

64. Անհրաժեշտ է խրախուսել փոխգործակցությունն անչափահասների հանցավորության կանխարգելման արդյունավետ եղանակների վերաբերյալ գիտական հետազոտություններ իրականացնելիս, իսկ նման հետազոտությունների արդյունքները պետք է լայնորեն տարածվեն ու զնահատվեն:

65. Միավորված ազգերի կազմակերպության համապատասխան մարմինները, հաստատությունները, գործակալությունները և գրասենյակները պետք է ձգտեն սերտ համագործակցություն կայացնել երեխաներին, անչափահասների գործերով արդարադատության և անչափահասների հանցավորության կանխարգելման տարբեր հարցերի շուրջ և համակարգել այդ ջանքերը:

66. Սույն ուղենիշների հիման վրա Միավորված ազգերի կազմակերպության քարտուղարությունը, շահագրգիռ հաստատությունների հետ համագործակցությամբ, պետք է ակտիվ դերակատարություն ունենա հետազոտությունների իրականացման, գիտական փոխգործակցության, քաղաքականության ուղղությունների ձևակերպման և դրանց իրականացման վերանայման և մոնիթորինգի հետ կապված հարցերում, և ծառայի որպես հանցավորության կանխարգելման արդյունավետ մոտեցումների վերաբերյալ հավաստի տեղեկատվության աղբյուր:

Քրեական գործերով վերականգնողական արդարադատության ծրագրերի կիրառման հիմնական սկզբունքներ (Basic principles on the use of restorative justice programmes in criminal matters)

Տնտեսական և սոցիալական խորհուրդը.

Վկայակոչելով 1999թ. հուլիսի 28-ի՝ «Քրեական արդարադատությունում մեղիացիայի և վերականգնողական արդարադատության միջոցների մշակման և իրականացման վերաբերյալ» թիվ 1999/26 բանաձևը, որով Խորհուրդը Հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության հարցերով հանձնաժողովին խնդրում է նկատի առնել մեղիացիայի և վերականգնողական արդարադատության բնագավառում ՄԱԿ-ի չափանիշներ ձևակերպելու նպատակահարմարությունը,

Հիշատակելով 2000թ. ապրիլի 10-ից 17-ը Վիեննայում կայացած Հանցավորության կանխարգելման և իրավախախտների նկատմամբ վերաբերմունքի վերաբերյալ ՄԱԿ-ի տասներորդ համագումարի ընթացքում վերականգնողական արդարադատության վերաբերյալ քննարկումները, մասնավորապես՝ օրակարգի «Իրավախախտներ և տուժողներ. պատասխանատվությունն ու արդարացիությունը արդարադատության գործընթացում» կետի մասով.

Ընդունելով, որ վերականգնողական արդարադատության միջոցառումների կիրառումը չի բացառում պետությունների՝ ենթադրյալ իրավախախտների նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու իրավունքը.

1. *Ի գիտություն է ընդունում* սույն բանաձևին կից ներկայացվող՝ քրեական գործերով վերականգնողական արդարադատության ծրագրերի հիմնական սկզբունքների հռչակագրի նախնական դրույթներ,
2. *Խնդրում է Գլխավոր քարտուղարին՝* պահանջել Անդամ երկրներից և համապատասխան միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների, ինչպես նաև՝ ՄԱԿ-ի Հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության ծրագրային ցանցում ընդգրկված հաստատությունների նկատառումները՝ քրեական գործերով վերականգնողական արդարադատության ծրագրեր կիրառելու համընդհանուր միջոցներ ու սկզբունքներ սահմանելու անհրաժեշտության, այդ թվում՝ այնպիսի փաստաթղթի մշակման նպատակահարմարության վերաբերյալ, ինչպիսիք են՝ սույն բանաձևին կից ներկայացվող հռչակագրի նախնական նախագիծը, ինչպես նաև՝ սույն բանաձևի բովանդակության վերաբերյալ.
3. *Նաև խնդրում է Գլխավոր քարտուղարին՝* կամավոր հատկացումների առկայության դեպքում կազմակերպել աշխարհագրական հավասար ներկայացվածության հիմունքներով ընտրված փորձագետների հանդիպում՝ ներկայացված դիտարկումները և վերականգնողական արդարադատության, այդ թվում՝ մեղիացիայի ոլորտում իրականացնելիք գործողությունները, ինչպես նաև՝ այնպիսի փաստաթուղթ մշակելու հնարավորությունը քննարկելու համար, ինչպիսին է վերականգնողական արդարադատության ծրագրերի կիրառման հիմնական սկզբունքների

վերաբերյալ հռչակագիրը՝ հաշվի առնելով սույն բանաձևին կից ներկայացվող նախնական հռչակագրի նախագիծը.

4. *Սյնուհետ խնդրում է* Գլխավոր քարտուղարին՝ Հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության հարցերով հանձնաժողովի տասնմեկերորդ նիստում ներկայացնել զեկույց՝ ստացված դիտողությունների և փորձագետների հանդիպման արդյունքների վերաբերյալ.

5. *Խնդրում է* Հանձնաժողովին՝ Գլխավոր քարտուղարի զեկույցի հիման վրա քայլեր ձեռնարկել տասնմեկերորդ նիստի ընթացքում.

6. *Կոչ է անում* անդամ երկրներին՝ 2000թ. ապրիլի 10-ից 17-ը Վիեննայում կայացած Հանցավորության կանխարգելման և իրավախախտների նկատմամբ վերաբերմունքի հարցերով ՄԱԿ-ի տասներորդ համագումարի արդյունքների հիման վրա շարունակել վերականգնողական արդարադատության, այդ թվում՝ մեդիացիայի ոլորտում ծրագրերի իրականացման և գնահատման վերաբերյալ տեղեկատվության փոխանակումը:

Հավելված

Քրեական գործերով վերականգնողական արդարադատության ծրագրերի կիրառման հիմնական սկզբունքների վերաբերյալ հռչակագրի նախնական դրույթներ

I. Սահմանումներ

1. «Վերականգնողական արդարադատության ծրագիր»՝ ցանկացած ծրագիր, որի շրջանակներում իրականացվում են վերականգնողական գործընթացներ կամ ակնկալվում են վերականգնողական բնույթի արդյունքներ:

2. «Վերականգնողական բնույթի արդյունք»՝ վերականգնողական գործընթացում արձանագրված արդյունքները: Վերականգնողական բնույթի արդյունքի օրինակ են՝ պատճառված վնասի հարթումը, համայնքային ծառայությունները և ցանկացած այլ ծրագիր կամ միջոցառում, որի նպատակը տուժողին և համայնքին պատճառված վնասը փոխհատուցելը և տուժողի և/կամ իրավախախտի վերաինտեգրացիան է:

3. «Վերականգնողական գործընթացներ»՝ ցանկացած գործընթաց, որի ընթացքում տուժողը, իրավախախտը և/կամ հանցանքից տուժած այլ անձինք կամ համայնքի անդամները միասին ակտիվորեն մասնակցում են հանցագործության հետ կապված խնդիրների լուծմանը, հաճախ նաև արդար և անկողմնակալ երրորդ կողմի օգնությամբ: Վերականգնողական գործընթացի օրինակներ են մեդիացիան, տուժողների, իրավախախտների և համայնքի միջև բազմակողմ խորհրդակցությունները և իրավախախտի կողմից պատասխանատվությունն ընդունելուն և վերջինիս վերականգմանն ուղղված միջամտությունները:

4. «Կողմեր»՝ տուժողը, իրավախախտը և հանցանքից տուժած այլ անձինք կամ համայնքի անդամները, ովքեր կարող են ընդգրկվել վերականգնողական արդարադատության ծրագրում:

5. «Ֆասիլիտատր»՝ արդար և անկողմնակալ երրորդ կողմ, ով ապահովում է տուժողների և իրավախախտների մասնակցությունը կազմակերպվելիք հանդիպմանը:

II. Վերականգնողական արդարադատության ծրագրերի կիրառումը

6. Վերականգնողական արդարադատության ծրագրերի կիրառումը պետք է հնարավոր լինի քրեական արդարադատության բոլոր փուլերում:

7. Վերականգնողական գործընթացները պետք է կիրառվեն միայն կողմերի ազատ և կամավոր համաձայնությամբ: Կողմերը պետք է կարողանան գործընթացի ցանկացած փուլում հրաժարվել այդ համաձայնությունից: Կողմերի համաձայնությունը պետք է կրի կամավոր բնույթ և պարունակի միայն ողջամիտ ու համարժեք պարտավորություններ:

8. Բոլոր կողմերը սովորաբար պետք է ընդունեն գործի հիմնական փաստերը՝ որպես վերականգնողական գործընթացին մասնակցելու հիմք: Մասնակցությունը չպետք է դիտվի որպես մեղքն ընդունելու ապացույց՝ հետագա իրավական գործընթացների ժամանակ:

9. Գործի կապակցությամբ վերականգնողական գործընթաց սկսելիս և այն իրականացնելիս հարկավոր է ուշադրություն դարձնել այնպիսի գործոնների հետ կապված ակնհայտ անհավասարություններին, ինչպիսիք են՝ կողմերի տարիքները, հասունությունը կամ մտավոր կարողությունը: Նույն կերպ հարկավոր է գործի կապակցությամբ վերականգնողական գործընթաց սկսելիս և այն իրականացնելիս ուշադրություն դարձնել կողմերին սպառնացող ակնհայտ վտանգներին: Այդ ընթացքում պետք է մեծ նշանակություն տրվի վերականգնողական գործընթացների կամ դրանց արդյունքների նպատակահարմարության մասին կողմերի կարծիքներին:

10. Այն դեպքերում, երբ վերականգնողական գործընթացներ իրականացնելը և/կամ դրանց արդյունքներին հասնելը հնարավոր չէ՝ քրեական արդարադատության ոլորտի պաշտոնյաները պետք է անեն հնարավորը՝ տուժողի և տուժած համայնքների առջև սեփական պատասխանատվությունն ընդունելու հարցում իրավախախտին համոզելու, ինչպես նաև՝ համայնքում տուժողին և/կամ իրավախախտին վերաինտեգրելու համար:

III. Վերականգնողական արդարադատության ծրագրերի իրագործումը

11. Անհրաժեշտ է մշակել վերականգնողական արդարադատության ծրագրերի կիրառումը կարգավորող ուղենիշներ և ստանդարտներ, եթե անհրաժեշտ է՝ օրենքի ուժով: Այդ ուղենիշները և ստանդարտները պետք է անդրադառնան հետևյալին.

(ա) Գործի կապակցությամբ վերականգնողական ծրագրեր սկսելու պայմանները,

(բ) Գործի վարումը՝ վերականգնողական գործընթացի հիման վրա,

(գ) Ֆասիլիտատորների որակավորումը, վերապատրաստումը և գնահատումը,

(դ) Վերականգնողական արդարադատության ծրագրերի իրականացումը,

(ե) Վերականգնողական արդարադատության ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ հմտությունների ստանդարտները և էթիկայի կանոնները:

12. Վերականգնողական արդարադատության ծրագրերի, հատկապես՝ վերականգնողական գործընթացների նկատմամբ պետք է հիմնարար ընթացակարգային երաշխիքներ կիրառվեն.

(ա) կողմերը պետք է իրավունք ունենան վերականգնողական գործընթացից առաջ և դրա ընթացքում ստանալու իրավական խորհրդատվություն, անհրաժեշտության դեպքում՝ նաև թարգմանչական ծառայություններ: Փոքրահասակները, բացի այդ, պետք է իրավունք ունեն օգտվելու իրենց ծնողների աջակցությունից,

(բ) նախքան վերականգնողական գործընթացներին մասնակցելու համաձայնություն տալը կողմերը պետք է լիարժեք տեղեկացվեն իրենց իրավունքների, գործընթացի բնույթի և իրենց որոշման հնարավոր հետևանքների մասին,

(գ) տուժողը և իրավախախտը չպետք է ենթարկվեն անարդարացի հարկադիր միջոցների՝ վերականգնողական գործընթացներին մասնակցելու կամ դրանց արդյունքների կապակցությամբ:

13. Վերականգնողական գործընթացների ընթացքում անցկացվող քննարկումները պետք է գաղտնի անցկացվեն և հետագայում ևս չհրապարակվեն, բացառությամբ կողմերի համաձայնության առկայության դեպքերի:

14. Վերականգնողական արդարադատության ծրագրերի հիման վրա դատական կարգով մեղադանքը հանելը պետք է ունենա նույն նշանակությունը, ինչ դատական որոշումները կամ դատավճիռները, և պետք է բացառվի միննույն փաստերի հիման վրա կրկնակի քրեական հետապնդումը (*non bis in idem*):

15. Կողմերի միջև համաձայնության բացակայության դեպքում գործը պետք է վերադարձվի դատական մարմիններին և անհապաղ որոշում կայացվի դրա հետագա ընթացքի վերաբերյալ: Համաձայնության բացակայությունը չի կարող հետագա դատական գործընթացներում առավել խիստ պատիժ սահմանելու հիմք հանդիսանալ:

16. Վերականգնողական գործընթացում ձեռք բերված համաձայնությունը չիրականացնելու դեպքում գործը պետք է վերադարձվի վերականգնողական ծրագրի անձնակազմին կամ դատական մարմիններին և անհապաղ որոշում կայացվի դրա հետագա ընթացքի վերաբերյալ: Ձեռք բերված համաձայնությունը չիրականացնելը չի կարող հետագա դատական գործընթացներում առավել խիստ պատիժ սահմանելու հիմք հանդիսանալ:

IV. Ֆասիլիտատորները

17. Ֆասիլիտատորները պետք է հավաքագրվեն հասարակության բոլոր հատվածներից և պետք է տիրապետեն տեղական մշակույթի և համայնքների առանձնահատկություններին: Նրանք պետք է կարողանան դրսևորել վերականգնողական գործընթացները վարելու համար անհրաժեշտ մտածելակերպ և անձնական հմտություններ:

18. Ֆասիլիտատորներն իրենց պարտականությունները պետք է կատարեն անկողմնակալորեն՝ գործի փաստերի և կողմերի կարիքների և ցանկությունների հիման վրա: Նրանք պետք է մշտապես հարգեն կողմերի արժանապատվությունը և ապահովեն կողմերի հարգանքը միմյանց հանդեպ:

19. Ֆասիլիտատորները պետք է ապահով և պատշաճ միջավայր ձևավորեն վերականգնողական գործընթացում: Նրանք պետք է սրտացավ լինեն կողմերի խոցելիության առումով:

20. Նախքան իրենց պարտականություններն ստանձնելը ֆասիլիտատորները պետք է նախնական ուսուցում և ծառայությանը զուգահեռ վերապատրաստում անցնեն: Վերապատրաստման արդյունքում պետք է կոնֆլիկտների լուծման հմտություններ փոխանցվեն՝ հաշվի առնելով տուժողների և իրավախախտների կարիքները, ինչպես նաև ընդհանուր գիտելիքներ փոխանցվեն քրեական արդարադատության համակարգի և հիմնավոր գիտելիքներ՝ ապագայում կատարելիք վերականգնողական ծրագրի իրագործման վերաբերյալ:

V. Վերականգնողական արդարադատության ծրագրերի շարունակական զարգացումը

21. Քրեական արդարադատության ոլորտի մարմինների և վերականգնողական արդարադատության ծրագրերի պատասխանատուների միջև պետք է անցկացվեն պարբերական խորհրդակցություններ՝ վերականգնողական գործընթացների և արդյունքների վերաբերյալ ընդհանուր մոտեցումներ մշակելու, վերականգնողական արդարադատության կիրառման ծավալներն ավելացնելու և քրեական արդարադատության ոլորտում վերականգնողական մոտեցումները ներդնելու ուղիների վերաբերյալ:

22. Անդամ երկրները պետք է խթանեն վերականգնողական արդարադատության ծրագրերի ուսումնասիրությունները և գնահատումները՝ գնահատելու համար վերջիններիս արդյունավետությունը, ինչպես նաև այն, թե որքանով են դրանք քրեական արդարադատության այլընտրանք հանդիսանում կամ բոլոր կողմերի համար դրական արդյունք ապահովում:

23. Վերականգնողական արդարադատության գործընթացները կարող են ժամանակի ընթացքում փոփոխությունների կարիք ունենալ: Ուստի, անդամ երկրները պետք է խրախուսեն նման ծրագրերի կանոնավոր, խիստ գնահատումը և վերանայումը՝ վերոհիշյալ սահմանումների լույսի ներքո:

**Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության վերաբերյալ ՄԱԿ-ի կանոններ
(Հավանայի կանոններ) (United Nations Rules for the Protection of Juveniles Deprived of their Liberty
(The Havana Rules)**

14-րդ դեկտեմբերի, 1990թ.

ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան՝

Ի գիտություն ընդունելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի կանխարգելման մասին կոնվենցիան, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, ինչպես նաև երեխաների բարեկեցությանն ու պաշտպանությանը վերաբերող միջազգային այլ փաստաթղթերը,

Ի գիտություն ընդունելով նաև Բանտարկյալների նկատմամբ վերաբերմունքի նվազագույն ստանդարտ կանոնները, որոնք ընդունվել են ՄԱԿ-ի Հանցավորության կանխարգելման և իրավախախտների նկատմամբ վերաբերմունքի հարցերով առաջին համագումարում,

Ի գիտություն ընդունելով նաև Ազատագրված կամ կալանավորված բոլոր անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածուն, որը հավանության է արժանացել Գլխավոր Ասամբլեայի կողմից (43/173, 1988թ. դեկտեմբերի 9),

Վկայակոչելով Անչափահասների գործերով արդարադատության իրականացման ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները,

Վկայակոչելով ՄԱԿ-ի յոթերորդ համագումարի 21-րդ բանաձևը՝ իրավախախտների նկատմամբ վերաբերմունքի և հանցավորության կանխարգելման մասին, որով համագումարը կոչ է արել ՄԱԿ-ին՝ մշակել Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության վերաբերյալ կանոններ,

Այնուհետ հիշեցնելով, որ Տնտեսական և սոցիալական խորհուրդն իր 1986թ. մայիսի 21-ի թիվ 1986/10 բանաձևով Գլխավոր քարտուղարին խնդրել է Հանցավորության կանխարգելման և դրա դեմ պայքարի կոմիտեի 10-րդ նստաշրջանի ժամանակ զեկույց ներկայացնել կանոնների մշակման գործում ձեռքբերումների մասին, ինչպես նաև՝ խնդրելով ՄԱԿ-ի Հանցավորության կանխարգելման և իրավախախտների նկատմամբ վերաբերմունքին նվիրված ութերորդ համագումարին՝ քննարկել ներկայացվող կանոնները,

Մտահոգված լինելով այն պայմաններով և հանգամանքներով, որոնց դեպքում անչափահասներն ամբողջ աշխարհում զրկվում են ազատությունից,

Գիտակցելով, որ ազատագրված արդյունքում անչափահասները դառնում են խիստ խոցելի չարաշահումների, վիկտիմիզացիայի և իրավունքների խախտման առումով,

Մտահոգված լինելով, որ մի շարք համակարգերում տարբերություն չի դրվում չափահասների և անչափահասների միջև՝ արդարադատության իրականացման տարբեր փուլերում, և այդ պատճառով անչափահասները չափահասների հետ պահվում են բանտերում կամ ուղղիչ հաստատություններում՝

1. հաստատում է, որ անչափահասներին ուղղիչ հաստատություններում պահելը պետք է միշտ կիրառվի որպես ծայրահեղ միջոց և հնարավորինս կարճ ժամկետով.

2. ընդունում է, որ ազատազրկված անչափահասներն իրենց բարձր խոցելիության պատճառով հատուկ ուշադրության և պաշտպանության կարիք ունեն, և որ նրանց իրավունքներն ու բարեկեցությունը պետք է երաշխավորվեն ազատազրկման ընթացքում, ինչպես նաև՝

3. երախտագիտությամբ նշում է սույն կանոնների մշակման ընթացքում ՄԱԿ-ի քարտուղարության գնահատելի աշխատանքը և Քարտուղարության ու փորձագետների, մասնագետների, միջկառավարական կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների ներդաշնակ համագործակցությունը, հատկապես՝ Միջազգային համաներում, Միջազգային շարժում հանուն երեխաների պաշտպանության և Ռեդդի Բարնեն ինթըրնեշնըլ (Երեխաների օժանդակության շվեդական ֆեդերացիա) կազմակերպությունների, ինչպես նաև երեխաների իրավունքների և անչափահասների գործերով արդարադատության հարցերով զբաղվող գիտական հաստատությունների համագործակցությունը.

4. հաստատում է սույն բանաձևի հավելվածում շարադրված Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության ՄԱԿ-ի կանոնները.

5. կոչ է անում Հանցավորության կանխարգելման և դրա դեմ պայքարի կոմիտեին՝ մշակել միջոցառումներ հանցավորության կանխարգելման և իրավախախտների նկատմամբ վերաբերմունքի կանոնների արդյունավետ իրականացման ուղղությամբ՝ համագործակցելով ՄԱԿ-ի այլ հաստատությունների հետ.

6. առաջարկում է անդամ-երկրներին՝ անհրաժեշտության դեպքում իրենց ներպետական օրենսդրությունը, քաղաքականությունն ու պրակտիկան, հատկապես՝ անչափահասների գործերով արդարադատության հարցերով զբաղվող բոլոր աշխատողների հմտությունները համապատասխանեցնել կանոնների ոգուն և կանոնների մասին տեղեկացնել իշխանության համապատասխան մարմիններին և հանրությանն ընդհանուր առմամբ.

7. առաջարկում է նաև անդամ երկրներին՝ Գլխավոր քարտուղարին տեղեկացնել սույն կանոններն օրենսդրության և քաղաքականության մեջ կիրառելու ուղղությամբ իրենց գործադրած ջանքերի մասին, ինչպես նաև՝ պարբերաբար զեկույցներ ներկայացնել Հանցավորության կանխարգելման և դրա դեմ պայքարի կոմիտեին՝ կանոնների իրականացման գործում արձանագրած հաջողությունների մասին.

8. խնդրում է Գլխավոր քարտուղարին և առաջարկում անդամ երկրներին՝ ապահովել կանոնների տեքստի լայն տարածումը ՄԱԿ-ի պաշտոնական բոլոր լեզուներով.

9. խնդրում է Գլխավոր քարտուղարին՝ անցկացնել համեմատական հետազոտություններ, հասնել անհրաժեշտ համագործակցության և մշակել ռազմավարություն՝ լուրջ հանցագործություն

կատարած կամ կրկնահանցագործ անչափահասների նկատմամբ վերաբերմունքի վերաբերյալ, և պատրաստել քաղաքական բնույթի զեկույց՝ ՄԱԿ-ի Հանցավորության կանխարգելման և իրավախախտների նկատմամբ վերաբերմունքի հարցերով իններորդ համագումարին ներկայացնելու համար.

10. խնդրում է Գլխավոր քարտուղարին և հորդորում անդամ երկրներին՝ տրամադրելու միջոցներ՝ կանոնների բարեհաջող կիրառումն ու իրականացումն ապահովելու համար, հատկապես անչափահասների գործերով արդարադատության հարցերով զբաղվող աշխատակիցների հավաքագրման ու պատրաստման, ինչպես նաև՝ վերջիններիս փոխանակման համար.

11. հորդորում է ՄԱԿ-ի համակարգի բոլոր գործակալություններին, հատկապես՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամին, տարածաշրջանային հանձնաժողովներին ու մասնագիտացված հաստատություններին, ՄԱԿ-ի հանցավորության կանխարգելման և իրավախախտների նկատմամբ վերաբերմունքի հարցերով զբաղվող հաստատություններին և բոլոր շահագրգիռ միջկառավարական ու հասարակական կազմակերպություններին՝ համագործակցելու Գլխավոր քարտուղարի հետ և իրենց իրավասության սահմաններում անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու կանոնների կիրառման ուղղությամբ՝ համաձայնեցված և մշտական գործունեություն ապահովելու համար.

12. առաջարկում է Մարդու իրավունքների հանձնաժողովի Խտրականության կանխարգելման և փոքրամասնությունների պաշտպանության ենթահանձնաժողովին՝ վերանայել այս նոր միջազգային փաստաթուղթը՝ դրա դրույթների կիրառմանն աջակցելու համար.

13. խնդրում է իններորդ համագումարին՝ անչափահասների գործերով արդարադատությանը վերաբերող օրակարգում առանձին կետով անդրադառնալ սույն բանաձևում շարադրված կանոնների և հանձնարարականների իրականացման գործում արձանագրված հաջողությունների ամփոփմանը:

Հավելված

Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության վերաբերյալ ՄԱԿ-ի կանոններ

I. Հիմնական նպատակները

1. Անչափահասների գործերով արդարադատությունը պետք է պաշտպանի նրանց իրավունքներն ու անվտանգությունը և նպաստի նրանց բավարար ֆիզիկական ու մտավոր վիճակին: Անչափահասներին ազատությունից զրկելը պետք է կիրառվի միայն որպես ծայրահեղ միջոց:

2. Անչափահասների բանտարկումը պետք է կատարվի որպես ներգործության ծայրահեղ միջոց և հնարավորինս կարճ ժամկետով, և պետք է սահմանափակվի բացառիկ դեպքերով: Պատժի ժամկետը պետք է որոշվի դատական մարմնի կողմից՝ չբացառելով անչափահասի վաղաժամկետ ազատման հնարավորությունները:

3. Կանոնների նպատակն է՝ սահմանել ազատությունից զրկված անչափահասներին ցանկացած ձևով պաշտպանելու՝ ՄԱԿ-ի կողմից ընդունելի նվազագույն ստանդարտ կանոններ, որոնք համահունչ կլինեն մարդու իրավունքներին ու հիմնարար ազատություններին՝ բանտարկության

բոլոր տարատեսակների անցանկալի հետևանքներին հակազդելու և հասարակության մեջ վերաինտեգրվելու նպատակով:

4. Սույն կանոնները պետք է կիրառվեն անաչառ կերպով՝ առանց ռասայի, մաշկի գույնի, սեռի, տարիքի, լեզվի, դավանանքի, ազգության, քաղաքական կամ այլ համոզմունքների, մշակութային հայացքների կամ ծիսակարգերի, գույքային դրության, ազգային կամ սոցիալական ծագման և հաշմանդամության հետ կապված որևէ խտրականության: Անհրաժեշտ է հարգանք ապահովել անչափահասի կրոնական կամ մշակութային հայացքների, ծեսերի և հոգևոր համոզմունքների նկատմամբ:

5. Սույն կանոնները նախատեսված են ծառայելու որպես պիտանի տեղեկատու նորմեր, ինչպես նաև՝ աջակցություն և ուղեցույց հանդիսանալու այն մասնագետների համար, ովքեր զբաղվում են անչափահասների ուղղիչ հիմնարկների կառավարմամբ:

6. Հարկավոր է ապահովել սույն կանոնների՝ ազգային լեզվով հասանելիությունն ուղղիչ հաստատության անձնակազմի համար: Այն անչափահասները, ովքեր ազատ չեն տիրապետում ուղղիչ հաստատության անձնակազմի լեզվին, պետք է անհրաժեշտության դեպքում, մասնավորապես՝ բժշկական ստուգման և կարգապահական խախտումների ժամանակ ունենան թարգմանչի անվճար ծառայություններից օգտվելու իրավունք:

7. Պետությունները պետք է համապատասխան դեպքերում սույն կանոնները ներառեն իրենց օրենսդրության մեջ կամ դրանում կատարեն համապատասխան փոփոխություններ և ապահովեն արդյունավետ միջոցներ՝ սույն կանոնների խախտումից խուսափելու, այդ թվում՝ անչափահասին վնաս պատճառելու դեպքում փոխհատուցում նախատեսելու նպատակով: Պետությունը պետք է վերահսկի սույն կանոնների կիրառումը:

8. Իրավասու մարմինները պետք է մշտապես ձգտեն ապահովել, որպեսզի հասարակությունն ընկալի, որ ուղղիչ հաստատություններում պահվող անչափահասների նկատմամբ հոգածությունը և նրանց դեպի հասարակություն վերադարձի նախապատրաստելը հույժ կարևոր սոցիալական գործունեություն է, և այդ նպատակով հարկավոր է ձեռնարկել ակտիվ քայլեր՝ անչափահասների ու տեղի համայնքի բնակիչների միջև ազատ շփումները խրախուսելու ուղղությամբ:

9. Սույն կանոններում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես մարդու իրավունքների վերաբերյալ ՄԱԿ-ի՝ անչափահասների, երեխաների և բոլոր երիտասարդների իրավունքների պաշտպանությանը և նրանց նկատմամբ հոգատարությանը նպաստող միջազգային փաստաթղթերի և ստանդարտների կիրառման խոչընդոտ:

10. Եթե սույն կանոնների 2-5-րդ մասերում պարունակվող որևէ կանոնի գործնական կիրառման ընթացքում ծագում է հակասություն 1-ին մասում պարունակվող կանոնների հետ, ապա գերակայում է 1-ին մասում սահմանված կանոնների պահպանումը:

II. Կանոնների գործողության ոլորտը և դրանց կիրառումը

11. Սույն կանոնների իմաստով կիրառվում են հետևյալ սահմանումները.

ա) անչափահաս է համարվում տասնութ տարին չլրացած ցանկացած անհատ: Երեխային ազատությունից զրկելու համար սահմանված տարիքային ստորին շեմը որոշվում է օրենքով:

բ) ազատությունից զրկելը դատական, վարչական կամ այլ պետական մարմնի որոշման հիման վրա որևէ անհատի կալանավորման կամ ազատազրկման ցանկացած ձևի ենթարկելն է կամ նրա տեղավորումը այլ պետական կամ մասնավոր ուղղիչ հաստատությունում, որն անչափահասը չի կարող լքել իր սեփական ցանկությամբ:

12. Ազատությունից զրկելը պետք է իրականացվի անչափահասների՝ մարդկային իրավունքներն ապահովող պայմաններում և հանգամանքներում: Ուղղիչ հաստատություններում տեղավորված անչափահասների շահերից ելնելով՝ հարկավոր է երաշխավորել այնպիսի արդյունավետ միջոցառումների ու ծրագրերի իրականացումը, որոնք կծառայեն նրանց առողջությունը, արժանապատվության զգացումը պահպանելուն, պատասխանատվության զգացում դաստիարակելուն և նրանց մոտ այնպիսի հայացքներ ու հմտություններ ձևավորելուն, որոնք կօգնեն նրանց զարգացնել իրենց հնարավորությունները՝ որպես հասարակության լիարժեք անդամ:

13. Ազատազրկված անչափահասներին կարգավիճակի պատճառով չի կարելի զրկել իրենց քաղաքացիական, տնտեսական, քաղաքական, սոցիալական կամ մշակութային իրավունքներից, որոնցով նրանք օժտված են ներպետական կամ միջազգային իրավունքների ուժով, և որոնց իրականացումը համատեղելի է ազատազրկման հետ: Դրանք են՝ սոցիալական ապահովության համակարգի հետ կապված իրավունքներն ու արտոնությունները, ամուսնության իրավունքը, եթե հասել է օրենքով սահմանված նվազագույն տարիքը:

14. Անչափահասների անձնական իրավունքների պաշտպանությունը՝ կալանավորման ժամանակ օրինականության հատուկ շեշտադրմամբ, պետք է իրականացվի իշխանության իրավասու մարմնի կողմից, իսկ հասարակությունում սոցիալական կյանքի մեջ ներգրավելու նպատակների իրականացումը պետք է ապահովվի պարբերական ստուգումներով և հսկողության՝ միջազգային նորմերին համապատասխան իրականացվող այլ միջոցներով՝ ներպետական օրենքների ու որոշումների հիման վրա ստեղծված մարմինների կողմից, որոնք լիազորված են այցելելու անչափահասներին և ներգրավված են ուղղիչ հաստատության վարչակազմում:

15. Սույն կանոնները կիրառվում են բոլոր տեսակի ու ձևի ուղղիչ հաստատությունների նկատմամբ, որոնցում պահվում են ազատությունից զրկված անչափահասներ: Սույն կանոնների 1, 2, 4, 5 մասերը կիրառվում են ուղղիչ հաստատությունների ու բոլոր այն կալանավայրերի նկատմամբ, որտեղ պահվում են անչափահասներ, իսկ 3-րդ մասը կիրառվում է միայն ձերբակալված կամ կալանավորված անչափահասների նկատմամբ:

16. Սույն կանոնները կիրառվում են յուրաքանչյուր անդամ երկրի սոցիալական, մշակութային համատեքստին համապատասխան:

III. Ձերբակալված կամ կալանավորված անչափահասներ

17. Ձերբակալված կամ կալանավորված (չդատապարտված) անչափահասները համարվում են անմեղ և պետք է արժանանան համապատասխան վերաբերմունքի: Անհրաժեշտ է

հնարավորության սահմաններում խուսափել մինչև դատական քննությունը կալանքի տակ պահելուց և այդ միջոցին դիմել միայն ծայրահեղ դեպքերում: Հարկավոր է ամեն կերպ ձգտել օգտագործելու այլընտրանքային միջոցները: Այն դեպքերում, երբ որպես խափանման միջոց, այնուամենայնիվ, կիրառվում է կալանավորումը, անչափահասների գործերով զբաղվող դատարանները կամ քննչական մարմինները պետք է առաջնահերթ ուշադրություն դարձնեն գործի առավելագույնս արագ քննությանը, որպեսզի կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածը հնարավորինս կարճատև լինի: Չդատապարտված անչափահասները պետք է դատապարտված անչափահասներից անջատ պահվեն:

18. Չդատապարտված անչափահասներին պահելու պայմանները պետք է համապատասխանեն ստորև շարադրված նորմերին, ինչպես նաև այլ դրույթների, որոնք անհրաժեշտ և տեղին են անմեղության կանխավարկածի, կալանքի տևողության, անչափահասի իրավական կարգավիճակի և գործի առանձնահատկությունների իմաստով: Այստեղ կիրառելի են հետևյալ դրույթները (ցանկը սպառիչ չէ).

ա) անչափահասները պետք է ունենան իրավական պաշտպանության իրավունք և հնարավորություն՝ ստանալու անվճար իրավաբանական օգնություն այն դեպքերում, երբ նման օգնություն հնարավոր է տրամադրել, ինչպես նաև դատապաշտպանի հետ պարբերաբար շփվելու իրավունք: Այդպիսի շփումների ժամանակ պետք է ապահովվեն անձնական կյանքին չմիջամտելու և գաղտնիության սկզբունքները.

բ) հնարավորության դեպքում անչափահասները պետք է ունենան վարձատրվող աշխատանքով զբաղվելու կամ ուսումը (մասնագիտական ուսուցումը) շարունակելու իրավունք, որը, սակայն, չպետք է պարտադիր լինի: Նրանց աշխատանքի, կրթության կամ մասնագիտական ուսուցման արդյունքում կալանքի ժամկետը չպետք է երկարացվի.

գ) անչափահասներին պետք է թույլատրվի ստանալ և ունենալ ժամանցի ու հանգստի համար նախատեսված առարկաներ, եթե դա չի հակասում արդարադատության իրականացման շահերին:

IV. Անչափահասների համար նախատեսված ուղղիչ հաստատությունների կառավարումը

Ա. Փաստաթղթային տվյալներ

19. Բոլոր հաշվետվությունները, այդ թվում՝ գործի նյութերը, բժշկական հետազոտությունների, կարգապահական խախտումների քննության վերաբերյալ արձանագրությունները, ինչպես նաև վերաբերմունքի ձևին ու բովանդակությանն առնչվող բոլոր այլ փաստաթղթերը պետք է պահպանվեն պարբերաբար թարմացվող անձնական գաղտնի գործում, որը պետք է կազմվի ընթեռնելի ձևով: Հնարավորության դեպքում յուրաքանչյուր անչափահաս պետք է ունենա իր գործում առկա ցանկացած փաստ կամ կարծիք վիճարկելու իրավունք՝ ցանկացած ոչ ճիշտ, անհիմն կամ անարդարացի ցուցմունք ճշգրտելու նպատակով: Այդ իրավունքի իրականացման համար նախատեսվում են ընթացակարգեր, որոնք թույլ են տալիս անչափահասին կամ համապատասխան երրորդ կողմին՝ իրենց խնդրանքով ծանոթանալ գործի նյութերին: Անչափահասի ազատման ժամանակ գործը կնքվում է և սահմանված ժամկետում ոչնչացվում:

20. Որևէ անչափահաս չպետք է ընդունվի ուղղիչ հաստատություն՝ առանց դատական, վարչական և պետական իշխանության այլ մարմնի՝ իրավաբանորեն ուժի մեջ մտած որոշման: Նման որոշման տվյալները պետք է անմիջապես գրառվեն գրանցամատյանում: Որևէ անչափահաս չի կարող պահվել նման գրանցամատյան չունեցող ուղղիչ հաստատությունում:

Բ. Ուղղիչ հաստատություններում տեղավորելը, գրանցելը, տեղափոխելը, փոխադրելը

21. Անչափահասների համար նախատեսված ցանկացած հիմնարկ ընդունվող յուրաքանչյուր անչափահասի համար պետք է կատարի լիարժեք և ճշգրիտ գրառումներ, որոնք պետք է պարունակեն հետևյալ տեղեկատվությունը.

ա) անչափահասի անձի մասին տեղեկատվություն.

բ) հիմնարկ բերելու հիմքերը և այդ որոշումը կայացրած մարմինը.

գ) տեղավորման, փոխադրման և ազատման օրն ու ժամը.

դ) ծնողներին կամ խնամակալներին իրենց խնամարկյալներին տեղավորելու, փոխադրման կամ ազատման մասին ծանուցելու վերաբերյալ տվյալներ.

ե) տվյալներ պարզված ֆիզիկական ու հոգեկան խնդիրների, այդ թվում՝ ալկոհոլի կամ թմրանյութերի չարաշահման մասին:

22. Հիմնարկ ընդունելու, դրա գտնվելու վայրի, փոխադրման և ազատման մասին վերոհիշյալ տեղեկատվությունը պետք է անհապաղ փոխանցվի տվյալ անչափահասի ծնողներին, խնամակալներին կամ մերձավոր ազգականներին:

23. Ընդունելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում պետք է պատրաստվեն և հիմնարկի վարչակազմին ներկայացվեն լիարժեք հաշվետվություն և տեղեկատվություն յուրաքանչյուր անչափահասին պահելու պայմանների և վերջինիս դրության մասին:

24. Ուղղիչ հաստատությունում տեղավորվելիս բոլոր անչափահասներին պետք է իրենց համար մատչելի լեզվով տրամադրվի այդ հաստատության ներքին կանոնակարգի օրինակը և վերջիններիս իրավունքների ու պարտականությունների գրավոր նկարագրությունը. այդ տեղեկատվությունը պետք է ներառի նաև բողոքներ ընդունելու իրավասություն ունեցող մարմինների, ինչպես նաև իրավաբանական օգնություն ցուցաբերող պետական և մասնավոր գերատեսչությունների ու կազմակերպությունների հասցեները: Անտառաճանաչ կամ տվյալ լեզվին չտիրապետող անչափահասներին այդ տեղեկատվությունը պետք է տրամադրվի նրանց համար լիովին մատչելի լեզվով:

25. Բոլոր անչափահասներին պետք է օգնություն ցուցաբերվի հաստատության ներքին կազմակերպական կանոնակարգը, տրամադրվող խնամքի նպատակներն ու մեթոդոլոգիան, կարգապահական պահանջներն ու ընթացակարգերը, տեղեկատվություն ստանալու և բողոքներ ներկայացնելու այլ թույլատրելի ձևերը, ինչպես նաև այն ամենը ըմբռնելու հարցում, ինչը հարկավոր է, որպեսզի նրանք ազատությունից զրկված լինելու ընթացքում լիովին տիրապետեն իրենց իրավունքներին ու պարտականություններին:

26. Անչափահասների փոխադրումը պետք է կատարվի վարչակազմի հաշվին՝ պատշաճ օդափոխություն և լուսավորություն ունեցող փոխադրամիջոցներով և այնպիսի պայմաններում, որպեսզի նրանց անհարմարություն չպատճառվի և նրանց արժանապատվությունը չնվաստացվի: Անչափահասները չպետք է կամայականորեն մեկ հաստատությունից մյուսը փոխադրվեն:

Գ. Դասակարգումը և տեղավորումը

27. Հաստատություն ընդունվելուց հետո հնարավորինս վաղ յուրաքանչյուր անչափահասի հետ պետք է զրույց անցկացվի, և պետք է պատրաստվի հոգեբանական-սոցիալական եզրակացություն, որում պետք է նշվեն անչափահասի համար պահանջվող խնամքի տվյալ տեսակին ու մակարդակին բնորոշ բոլոր գործոնները: Այդ եզրակացությունը, անչափահասին ընդունելիս նրան բուժզննության ենթարկած բուժաշխատողի եզրակացության հետ միասին, պետք է ուղարկվի տնօրենին՝ հաստատության ներսում անչափահասին տեղավորելու լավագույն տարբերակը որոշելու և խնամքի համապատասխան ծրագիրն ընտրելու և իրականացնելու համար: Հատուկ վերականգնողական աշխատանքների անհրաժեշտության դեպքում, և եթե այդ հաստատությունում մնալու ժամկետը դա թույլ է տալիս, հաստատության՝ համապատասխան վերապատրաստում անցած անձնակազմը պետք է կազմի տարվելիք աշխատանքների անհատականացված ծրագիր, որում պետք է նշվեն առաջադրված խնդիրները, ժամանակացույցը և այն միջոցները, փուլերն ու հնարավոր դադարները, որ պետք է հաշվի առնվեն այդ խնդիրները լուծելիս:

28. Անչափահասների բանտարկությունը պետք է կիրառվի միայն այնպիսի պայմաններում, որոնք թույլ են տալիս հաշվի առնել նրանց առանձնահատուկ կարիքները, կարգավիճակը և նրանց տարիքից, անհատականությունից, սեռից և կատարված իրավախախտման բնույթից, ինչպես նաև հոգեկան և ֆիզիկական առողջությունից բխող առանձնակի պահանջմունքները, և որոնք ապահովում են նրանց պաշտպանությունը վնասակար ազդեցությունից և ռիսկային իրադրություններից: Ազատությունից զրկված անչափահասների տարբեր խմբերին միմյանցից տարանջատելու սկզբունքային չափանիշ պետք է հանդիսանա տվյալ անհատին առավել համապատասխան խնամքի տրամադրումը և նրա ֆիզիկական, հոգեկան և բարոյական ապահովությունը և բարեկեցությունը:

29. Բանտարկության բոլոր հաստատություններում անչափահասները պետք է անջատ պահվեն չափահասներից, եթե նրանք միևնույն ընտանիքի անդամներ չեն: Եթե պայմանները վերահսկելի են, անչափահասները կարող են պահվել մանրակրկիտ ընտրված չափահասների հետ մեկտեղ՝ որպես հատուկ ծրագիր, որը վստահաբար օգտակար կլինի տվյալ անչափահասների համար:

30. Հարկավոր է հիմնել բաց տիպի բանտեր անչափահասների համար: Բաց բանտերն այն հաստատություններն են, որոնցում անվտանգության միջոցները նվազագույնի են հասցված կամ ընդհանրապես բացակայում են: Նման բանտերում պահվողների թիվը պետք է հնարավորինս փոքր լինի: Փակ տիպի հաստատություններում պահվող անչափահասների թիվը պետք է փոքր լինի այնքան, որպեսզի հնարավոր լինի անհատական աշխատանք տանել նրանց հետ: Անչափահասների համար նախատեսված բանտերը պետք է ապակենտրոնացված լինեն և այնպիսի չափեր ունենան, որպեսզի հնարավոր լինի ապահովել անափահասների և նրանց ընտանիքների

միջև շփումները: Պետք է ստեղծվեն համայնքի տնտեսական և մշակութային միջավայրին հարմարեցված փոքր բանտեր:

Դ. Պահելու պայմանները և կացարանային ապահովումը

31. Ազատությունից զրկված անչափահասներն ունեն կացարանի և իրենց առողջությանն ու մարդկային արժանապատվությանը հարիր ծառայությունների իրավունք:

32. Անչափահասների համար նախատեսված բանտերի շինությունները և դրանց պայմանները պետք է համապատասխանեն այնտեղ պահվող անչափահասների դաստիարակության նպատակներին՝ պատշաճ ուշադրություն դարձնելով նրանց՝ առանձնանալու, զգացմունքային ազդակների, հասակակիցների հետ շփվելու և մարզական և ֆիզիկական վարժանքներին և ժամանցային միջոցառումներին մասնակցելու կարիքները: Անչափահասների համար նախատեսված բանտերի շինությունները և կառուցվածքը պետք է լինեն այնպիսին, որպեսզի նվազագույնի հասցվի հրդեհի վտանգը և շինություններից անվտանգ տարհանելու հնարավորություն ապահովվի: Պետք է առկա լինի արդյունավետ հակահրդեհային ազդանշանային համակարգ, ինչպես նաև պաշտոնական և փորձական անվտանգության միջոցառումներ՝ անչափահասների անվտանգությունը երաշխավորելու համար: Բանտերը չպետք է տեղակայվեն այնպիսի տեղանքներում, որտեղ կան առողջության համար վտանգավոր կամ այլ ռիսկային գործոններ:

33. Ննջարանային շինությունները, որպես կանոն, պետք է կազմված լինեն փոքր խմբային հանրակացարաններից կամ անհատական ննջասենյակներից՝ հաշվի առնելով տեղական ստանդարտները: Քնելու ժամերին պետք է կատարվի քնելու համար նախատեսված տարածքների, այդ թվում՝ անհատական սենյակների և խմբային հանրակացարանների կանոնավոր և չխանգարող հսկողություն՝ անչափահասներից յուրաքանչյուրի պաշտպանությունն ապահովելու համար: Յուրաքանչյուր անչափահաս, տեղական կամ ներպետական չափանիշներին համապատասխան, պետք է ապահովվի առանձին և բավարար անկողնային պարագաներով, որոնք տրամադրման պահին պետք է լինեն մաքուր, պահվեն պատշաճ պայմաններում և փոխվեն մաքրությունն ապահովելու համար բավարար հաճախականությամբ:

34. Սանիտարական հանգույցները պետք է տեղակայված լինեն այնպես, որպեսզի յուրաքանչյուր անչափահաս կարողանա մեկուսի և մաքուր ու պատշաճ պայմաններում բավարարել իր կենսական կարիքները:

35. Անձնական իրեր տնօրինելու հնարավորությունն անձնական կյանքի իրավունքի հիմնական տարրերից է և այն անչափահասի հոգեբանական վիճակի առումով կարևոր նշանակություն ունի: Անհրաժեշտ է անվերապահ ընդունել և հարգել անձնական իրեր տնօրինելու և այդ իրերի համապատասխան պահոցներ ունենալու՝ յուրաքանչյուր անչափահասի իրավունքը: Անձնական իրերը, որոնք անչափահասը չի ցանկանում իր մոտ պահել կամ առգրավված իրերը պետք է պահվեն ապահով տեղում: Գույքի ցանկը ստորագրվում է անչափահասի կողմից: Անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել դրանք լավ պայմաններում պահելու ուղղությամբ: Նման բոլոր իրերն ու գումարը պետք է ազատվելիս վերադարձվեն անչափահասին, բացառությամբ այն դեպքերի, երբ նրան թույլատրվել է ծախսել այդ գումարը կամ նման գույքն առաքել հիմնարկի սահմաններից

դուրս: Եթե անչափահասը ստանում է կամ նրա մոտ հայտնաբերվում է որևէ դեղորայք, բուժաշխատողը պետք է դրանց հետագա գործածումը թույլատրելու կամ արգելելու մասին որոշում կայացնի:

36. Հնարավորության սահմաններում անչափահասները պետք է սեփական հագուստը կրելու իրավունք ունենան: Բանտերը պետք է ապահովեն, որ յուրաքանչյուր անչափահաս ունենա կլիմային համապատասխանող և առողջական լավ վիճակն ապահովող անհատական հագուստ, որը չպետք է որևէ կերպ նվաստացնող կամ վիրավորական լինի: Որևէ նպատակով հաստատությունից դուրս եկող անչափահասներին հարկավոր է թույլատրել կրել սեփական հագուստը:

37. Ցանկացած բանտ պետք է ապահովի, որ յուրաքանչյուր անչափահաս սնունդ ընդունելու նորմալ ժամերին ստանա պատշաճ պատրաստված և մատուցված, դիետայի, հիգիենայի և առողջության ստանդարտներին բավարարող, իսկ հնարավորության դեպքում՝ նաև կրոնական և մշակութային պահանջներին համապատասխանող սնունդ: Մաքուր ջուրն անչափահասներին պետք է հասանելի լինի ցանկացած ժամանակ:

Ե. Կրթությունը, մասնագիտական ուսուցումը և աշխատանքային գործունեությունը

38. Պարտադիր դպրոցական կրթության տարիքի յուրաքանչյուր անչափահաս ունի իր կարիքներին և ունակություններին հարմարեցված, նրան հասարակություն վերադարձնելու համար մշակված կրթության իրավունք: Այդ կրթությունը պետք է հնարավորության դեպքում տրամադրվի բանտից դուրս՝ համայնքային դպրոցներում, և այդ կրթությունն անպայման պետք է տրամադրվի որակավորում ունեցող ուսուցիչների կողմից՝ երկրի կրթության համակարգում ընդգրկված ծրագրերով, որոնք ազատվելուց հետո անչափահասներին հնարավորություն կտան առանց դժվարությունների շարունակելու իրենց կրթությունը: Բանտի վարչակազմն առանձնակի ուշադրություն պետք է դարձնի այլազգի անչափահասների կրթությանը, ովքեր առանձին մշակութային և էթնիկ պահանջմունքներ ունեն: Անտառաճանաչ կամ ճանաչողության և ուսանելու հետ կապված խնդիրներ ունեցող անչափահասները պետք է հատուկ կրթության իրավունք ունենան:

39. Պարտադիր դպրոցական կրթության տարիքից բարձր անչափահասները, ովքեր ցանկանում են շարունակել իրենց կրթությունը, պետք է ստանան նման թույլտվություն, և դա պետք է խրախուսվի. պետք է ամեն ջանք գործադրվի՝ համախառնապես կրթական ծրագրերը նրանց համար հասանելի դարձնելու ուղղությամբ:

40. Բանտարկության ընթացքում անչափահասներին տրամադրված դիպլոմները կամ կրթական հավաստագրերը չպետք է որևէ նշում պարունակեն այն մասին, որ անչափահասը գտնվել է այդ հաստատությունում:

41. Յուրաքանչյուր բանտ պետք է անչափահասների համար նախատեսված դասագրքերով, ժամանցային գրականությամբ և պարբերական հրատարակություններով համալրված գրադարանի հասանելիություն ապահովի, իսկ գրադարանից անչափահասների լիարժեք օգտվելը պետք է խրախուսվի:

42. Ցանկացած անչափահաս պետք է իրավունք ունենա անցնելու մասնագիտական ուսուցում այնպիսի մասնագիտությունների գծով, որոնք նրան հետագայում կօգնեն աշխատանք գտնել:

43. Անչափահասները պետք է կարողանան ընտրել իրենց ցանկացած աշխատանքը՝ պատշաճ ուշադրություն դարձնելով մասնագիտության ընտրությանը և հաստատության վարչակազմի պահանջները:

44. Անչափահասների և երիտասարդների աշխատանքային գործունեության պաշտպանության բնագավառում գործող ներպետական և միջազգային չափանիշները կիրառելի են ազատությունից զրկված անչափահասների նկատմամբ:

45. Որպես համայնք վերադառնալուն պես հարմար աշխատանք գտնելու նպատակով իրականացվող մասնագիտական ուսուցման լրացում, անչափահասները հնարավորության սահմաններում պետք է կարողանան կատարել վարձատրվող աշխատանք, և հնարավորության դեպքում՝ տեղի համայնքում: Աշխատանքի բնույթը պետք է լինի այնպիսին, որ անչափահաս անցնի պատշաճ վերապատրաստում, որն ազատվելուց հետո օգտակար կլինի նրա համար: Բանտում առաջարկվող աշխատանքի կազմակերպումը և մեթոդները պետք է հնարավորինս նման լինեն համայնքում նույնանման աշխատանքի պարագայում ենթադրվող մեթոդներին, որպեսզի անչափահասները պատրաստվեն նորմալ աշխատանքային գործունեության պայմաններին:

46. Աշխատանք կատարող յուրաքանչյուր անչափահաս համարժեք վարձատրության իրավունք ունի: Անչափահասների շահերը և նրանց մասնագիտական ուսուցման նպատակները չպետք է ստորադասվեն բանտի կամ երրորդ կողմի օգտին շահույթ ստանալու նպատակին: Անչափահասի վաստակի մի մասը, որպես կանոն, պետք է առանձնացվի որպես խնայողություն՝ ազատվելուն պես այն անչափահասին վերադարձնելու նպատակով: Անչափահասը պետք է իրավունք ունենա օգտագործելու այդ վաստակի մնացած մասը՝ սեփական կարիքների համար պիտույքներ ձեռք բերելու, իրավախախտման արդյունքում վնաս կրած անձին իր պատճառած վնասը հարթելու, սեփական ընտանիքին կամ բանտից դուրս գտնվող այլ անձանց ուղարկելու ձևով:

Չ. Հանգիստը

47. Յուրաքանչյուր անչափահաս պետք է ունենա բավականաչափ ազատ ժամանակի իրավունք՝ ամենօրյա ֆիզիկական վարժանքի համար, ընդ որում, եթե եղանակային պայմանները թույլ են տալիս, դրանք պետք է լինեն բացօթյա: Այդ ժամանակի ընթացքում հարկավոր է ապահովել համապատասխան լիցքաթափող կամ ֆիզիկական վարժությունների անցկացումը: Այդ միջոցառումների համար պետք է ապահովել համապատասխան շենք, պարագաներ ու սարքավորում: Յուրաքանչյուր անչափահաս պետք է ունենա լրացուցիչ ժամանակ՝ ամենօրյա ժամանցի համար, որի մի մասն անչափահասի ցանկությամբ հարկավոր է տրամադրել արվեստի ու արհեստի հետ կապված պարապմունքներին: Բանտը պետք է ապահովի, որ յուրաքանչյուր անչափահաս ֆիզիկապես ի վիճակի լինի մասնակցելու ֆիզիկական պատրաստության առկա ծրագրերին: Վերականգնողական ֆիզկուլտուրայի և թերապիայի կարիք ունեցող անչափահասները պետք է համապատասխան կուրս անցնեն՝ բժշկական հսկողության ներքո:

Է. Կրոնը

48. Յուրաքանչյուր անչափահասի պետք է թույլատրվի բավարարելու իր կրոնական և հոգևոր կյանքից բխող կարիքները, մասնավորապես՝ բանտում կազմակերպվող ծեսերին կամ հավաքություններին մասնակցելու կամ ինքնուրույն այդ ծեսերը կազմակերպելու, տրամադրության տակ իր դավանանքին համապատասխանող անհրաժեշտ կրոնական գրականություն կամ պաշտամունքի պարագաներ ունենալու միջոցով: Եթե բանտում կան բավարար թվով այս կամ այն կրոնի հետևորդ անչափահասներ, ապա պետք է նշանակվի տվյալ կրոնի մեկ կամ մի քանի համապատասխան կարգ ունեցող ներկայացուցիչ և նրանց թույլատրվի պարբերաբար արարողություններ կազմակերպել, անչափահասների խնդրանքով՝ նաև առանձին հանդիպումներ ունենալ վերջիններիս հետ: Յուրաքանչյուր անչափահաս պետք է իր ընտրությամբ այս կամ այն կրոնի՝ կարգ ունեցող ներկայացուցիչների հետ հանդիպելու, ինչպես նաև կրոնական արարողություններին չմասնակցելու և կրոնական բնույթի ցանկացած կրթությունից, խորհրդատվությունից կամ քարոզչությունից հրաժարվելու իրավունք:

Ը. Բուժապասարկումը

49. Յուրաքանչյուր անչափահասի տրամադրվում է համապատասխան բժշկական սպասարկում, ինչպես կանխարգելիչ, այնպես էլ՝ վերականգնողական, այդ թվում՝ ատամնաբուժական, ակնաբուժական և հոգեբուժական սպասարկում, դեղագործական պատրաստուկներ և բժշկական ցուցումներին համապատասխան՝ հատուկ սննդակարգ: Հնարավորության դեպքում նման բուժապասարկումը պետք է բանտարկված անչափահասներին տրամադրվի բանտի գտնվելու վայրի համայնքի համապատասխան առողջապահական հիմնարկների ու ծառայությունների միջոցով՝ անչափահասի խարանումը կանխելու և վերջինիս մոտ ինքնահարգանքը և համայնքում ինտեգրվելու գործընթացը խթանելու նպատակով:

50. Յուրաքանչյուր բանտարկյալ իրավունք ունի բանտ ընդունվելուն պես գննվելու բժշկի կողմից՝ հնարավոր վատ վերաբերմունքի մասին վկայող փաստերն արձանագրելու և բժշկական միջամտություն պահանջող ցանկացած ֆիզիկական կամ հոգեկան դրությունը պարզելու նպատակով:

51. Անչափահասներին տրամադրվող բժշկական ծառայությունները պետք է ցանկացած ֆիզիկական կամ հոգեկան հիվանդություն, թրամոլություն կամ հասարակական կյանքում անչափահասի ներգրավմանը խոչընդոտող այլ շեղումներն ի հայտ բերելու նպատակ ունենան: Յուրաքանչյուր բանտում պետք է առկա լինեն բժշկական միջոցներ ու սարքավորումներ, որոնք համապատասխանում են այնտեղ պահվող անձանց թվին ու պահանջմունքներին, ինչպես նաև՝ կանխարգելիչ խնամք ու անհետաձգելի բժշկական օգնություն ցուցաբերող հմուտ անձնակազմ: Հիվանդացած, առողջական գանգատներ, ֆիզիկական կամ հոգեկան հիվանդության ախտանիշներ ունեցող յուրաքանչյուր անչափահաս պետք է գննվի բուժաշխատողի կողմից:

52. Ցանկացած բուժաշխատող, ով հիմքեր ունի կարծելու, որ անչափահասի ֆիզիկական կամ հոգեկան առողջությունը կարող է լրջորեն վնասվել տևական բանտարկության, հացադուլի կամ բանտարկությունից բխող ցանկացած այլ հանգամանքի արդյունքում, պետք է այդ փաստի մասին անմիջապես զեկուցի տվյալ բանտի տնօրենին և անչափահասի բարեկեցության համար պատասխանատու անկախ մարմնին:

53. Հոգեկան հիվանդությամբ տառապող անչափահասը պետք է բուժվի անկախ բժշկական ղեկավարություն ունեցող մասնագիտացված հաստատությունում: Հարկավոր է համապատասխան գերատեսչությունների հետ համաձայնեցված քայլեր ձեռնարկել ազատվելուց հետո հոգեբուժական սպասարկումը շարունակելու ուղղությամբ:

54. Անչափահասների համար նախատեսված բանտերը պետք է կանխարգելման և վերականգնողական մասնագիտացված ծրագրեր նախաձեռնեն, որոնք պետք է ղեկավարվեն որակավորում ունեցող անձնակազմի կողմից: Այդ ծրագրերը պետք է հարմարեցվեն տվյալ անչափահասների տարիքային, սեռային և այլ պահանջմունքներին, իսկ թմրամոլությամբ կամ ալկոհոլամոլությամբ տառապող անչափահասների համար պետք է առկա լինեն դետոքսիֆիկացիոն հարմարություններ ու ծառայություններ՝ վերապատրաստում անցած անձնակազմով:

55. Դեղորայքը պետք է կիրառվի միայն բժշկական տեսակետից անհրաժեշտ բուժման նպատակով, և, հնարավորության դեպքում, տվյալ անչափահասի գիտակցված համաձայնությունը ձեռք բերելուց հետո: Մասնավորապես, դրանք չպետք է գործածվեն տեղեկատվություն կամ խոստովանություն կորզելու նպատակով, կամ որպես պատժի կամ զսպման միջոց: Անչափահասները երբևէ չպետք է ներգրավվեն դեղամիջոցների կամ բուժական փորձարկումների: Որևէ դեղորայքի կիրառումը միշտ պետք է թույլատրված լինի և իրականացվի որակավորում ունեցող բուժանձնակազմի կողմից:

Թ. Հիվանդության, վնասվածքի կամ մահվան մասին ծանուցելը

56. Անչափահասի ընտանիքի անդամները կամ խնամակալը, կամ անչափահասի նշած ցանկացած այլ անձ իրավունք ունեն ըստ անհրաժեշտության կամ անչափահասի առողջական վիճակի էական փոփոխությունների դեպքում տեղեկանալու անչափահասի առողջական վիճակի մասին: Բանտի տնօրենը պետք է անչափահասի ընտանիքի անդամներին, խնամակալին կամ անչափահասի կողմից նշված ցանկացած այլ անձի անհապաղ ծանուցի տվյալ անչափահասի մահվան, այնպիսի հիվանդության մասին, որը պահանջում է դրսույն գտնվող բուժհաստատություն փոխադրել, կամ այնպիսի դրության մասին, որը պահանջում է 48 ժամից ավելի կլինիկական խնամք բանտի ներսում: Ծանուցումը պետք է ուղարկվի նաև այն երկրի հյուպատոսական մարմիններին, որի քաղաքացի է հանդիսանում տվյալ օտարերկրացի անչափահասը:

57. Ազատությունից զրկված լինելու ժամանակաընթացքում անչափահասի մահվան դեպքում վերջինիս մերձավորագույն ազգականը պետք է իրավունք ունենա ստուգելու մահվան վկայականը, տեսնելու դին և որոշելու մարմինը հուղարկավորելու եղանակը: Ազատությունից զրկված լինելու ընթացքում անչափահասի մահվան դեպքում պետք է իրականացվի մահվան պատճառների անկախ քննություն, որի արձանագրությունը պետք է հասանելի դարձվի մերձավորագույն ազգականին: Նման քննություն պետք է իրականացվի նաև այն դեպքերում, երբ անչափահասի մահը վրա է հասել բանտից ազատ արձակվելուց հետո վեց ամսվա ընթացքում, և եթե հիմքեր կան ենթադրելու, որ մահվան պատճառը կապ ունի բանտարկության մեջ անցկացրած ժամանակահատվածի հետ:

58. Անչափահասը պետք է հնարավորինս վաղ տեղեկացվի ընտանիքի անմիջական անդամի մահվան, ծանր հիվանդության կամ լուրջ վնասվածքի մասին, և նրան պետք է հնարավորություն տրվի մասնակցելու հանգուցյալի հուղարկավորությանը կամ այցելելու մահամերձ ազգականին:

Ժ. Շփումը լայն հանրության հետ

59. Հարկավոր է ապահովել բոլոր միջոցները, որպեսզի անչափահասները հավուր պատշաճի հաղորդակցվեն արտաքին աշխարհի հետ, ինչը համարվում է արդարացի և մարդկային վերաբերմունքի իրավունքի անքակտելի մասը և կարևորագույն նշանակություն ունի անչափահասներին հասարակություն վերադարձնելու գործում: Անչափահասներին պետք է թույլատրվի շփվել իրենց ընտանիքների, ընկերների և այլ անձանց կամ հեղինակավոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, տուն կամ ընտանիքին այցելելու համար դուրս գալ բանտից կամ կրթական, մասնագիտական ուսուցման կամ այլ կարևոր պատճառներով բանտից դուրս գալու հատուկ թույլտվություն ստանալ: Պատիժ կրելու ընթացքում բանտից դուրս անցկացրած ժամանակը պետք է հաշվարկվի պատժի ժամկետի մեջ:

60. Յուրաքանչյուր անչափահաս պետք է մերձավորների կողմից պարբերական և հաճախակի այցելությունների իրավունք ունենա, որպես կանոն՝ շաբաթական մեկ անգամ, սակայն ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ՝ այնպիսի պայմաններում, որը հնարավորություն կտա մեկուսի և առանց սահմանափակման հաղորդակցվելու ընտանիքի կամ պաշտպանի հետ:

61. Յուրաքանչյուր անչափահաս պետք է իրավունք ունենա գրավոր կամ հեռախոսով շաբաթական առնվազն երկու անգամ իր ընտրությամբ հաղորդակցվելու ցանկացած անձի հետ, եթե օրենքով նախատեսված սահմանափակումներ չկան. հնարավորության դեպքում նրանց անհրաժեշտ է աջակցել այդ իրավունքից արդյունավետ օգտվելու հարցում: Յուրաքանչյուր անչափահաս պետք է նամակներ ստանալու իրավունք ունենա:

62. Անչափահասները պետք է հնարավորություն ունենան պարբերաբար ինքնուրույն ծանոթանալու նորություններին՝ լրագրեր, պարբերական կամ այլ հրատարակություններ ընթերցելու, ռադիո կամ հեռուստահաղորդումներ և ֆիլմեր դիտելու, անչափահասների հետաքրքրությունների ոլորտում օրինական գործունեություն ծավալող ակումբի կամ կազմակերպության ներկայացուցիչների այցելությունների միջոցով:

ԺԱ. Ֆիզիկական զսպման և ուժի գործադրման հետ կապված սահմանափակումներ

63. Որևէ նպատակով զսպման միջոցների և ուժի գործադրումը պետք է արգելվի, բացառությամբ ստորև շարադրված 64-րդ կանոնում նախատեսված դեպքերի:

64. Զսպման միջոցներ կամ ուժ կարող են գործադրվել միայն բացառիկ դեպքերում, երբ սպառվել և ձախողվել են իրավիճակը վերահսկելու այլ միջոցները, և այն էլ միայն օրենքով և կանոնակարգերով հստակ թույլատրված դեպքերում: Դրանք չպետք է վիրավորական կամ նվաստացնող լինեն, և պետք է բացառապես գործադրվեն հնարավորինս կարճ տևողությամբ: Վարչակազմի ղեկավարի կարգադրությամբ նման միջոցները կարող են գործի դրվել՝ կանխելու համար անչափահասի կողմից ինքնավնասման, այլ անձանց վնաս պատճառելու կամ գույքի լուրջ վնասման փորձերը: Նման դեպքերում տնօրենը պետք է միաժամանակ խորհրդակցի

բուժաշխատողի և անձնակազմի այլ ներկայացուցիչների հետ և այդ մասին զեկուցի վերադաս վարչական մարմնին:

65. Անձնակազմի կողմից զենքի գործադրումը պետք է արգելվի բոլոր այն հաստատություններում, ուր անչափահասներ են պահվում:

ԺԲ. Կարգապահական միջոցառումներ

66. Կարգապահական բոլոր միջոցառումներն ու ընթացակարգերը պետք է անվտանգության հասարակական կարգի պահպանման նպատակ հետապնդեն, և պետք է համատեղելի լինեն անչափահասի արժանապատվությունը պահպանելու և հաստատությունում անչափահասին պահելու հիմնարար նպատակի հետ, այն է՝ արդարության, ինքնահարգանքի և այլոց հիմնական իրավունքների նկատմամբ հարգանքի զգացման ձևավորումը:

67. Կարգապահական այն միջոցները, որոնք դրսևորվում են դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ձևով պետք է խստիվ արգելվեն, այդ թվում՝ խմբային պատիժները, մութ խցում կամ մենախցում տեղավորելը կամ տույժի ցանկացած այլ ձև, որը կարող է սպառնալ տվյալ անչափահասի ֆիզիկական կամ հոգեկան առողջությանը: Սննդակարգի կրճատումը կամ ընտանիքի անդամների հետ շփումները որևէ նպատակով սահմանափակելը կամ չթույլատրելը պետք է արգելվեն: Աշխատանքը պետք է միշտ դիտարկվի որպես կրթության գործիք և անչափահասի մոտ ինքնահարգանք ձևավորելու և նրան հասարակություն վերադառնալուն նախապատրաստող միջոց, և այն չպետք է կիրառվի որպես կարգապահական տույժ: Որևէ անչափահաս չպետք է միևնույն կարգապահական խախտման համար պատժվի մեկից ավելի անգամ: Խմբային պատիժները պետք է արգելվեն:

68. Իշխանության իրավասու մարմնի կողմից հաստատված օրենսդրությունը կամ կանոնակարգերը պետք է սահմանեն հետևյալ նորմերը՝ խստագույնս հաշվի առնելով անչափահասների հիմնական բնութագրիչները, կարիքներն ու իրավունքները.

- (ա) կարգապահական խախտում համարվող վարքագիծը,
- (բ) կիրառվելիք կարգապահական տույժերի տեսակները և տևողությունը,
- (գ) նման տույժեր կիրառելու իրավասություն ունեցող մարմինը,
- (դ) բողոքներ քննելու իրավասություն ունեցող մարմինը:

69. Վարքագծի խախտման վերաբերյալ անհապաղ պետք է զեկուցագիր ներկայացվի իրավասու մարմին, որը պետք է առանց անհարկի ձգձգումների որոշում կայացնի: Իրավասու մարմինը պետք է գործի մանրագնին ուսումնասիրություն կատարի:

70. Որևէ անչափահաս չպետք է ենթարկվի կարգապահական տույժի այլ կերպ, քան գործող օրենքներին և կանոնակարգերին համապատասխան: Որևէ անչափահաս չպետք է տույժի ենթարկվի, քանի դեռ նրան լիարժեք ընկալելի ձևով չեն տեղեկացրել վերագրվող արարքի մասին՝ տրամադրելով պաշտպանությունը կազմակերպելու, այդ թվում՝ համապատասխան անկախ մարմին բողոք ներկայացնելու պատշաճ հնարավորություն:

71. Որևէ անչափահասի չպետք է կարգապահական գործառույթներ հանձնարարվեն՝ բացառությամբ նշանակված սոցիալական, կրթական կամ մարզական միջոցառումների կամ առաջնորդության ծրագրերի ընթացքում իրականացվող հսկողության:

ԺԳ. Տեսչական ստուգումներ և բողոքներ

72. Որակավորում ունեցող տեսուչներին կամ համարժեք լիազորություններ ունեցող, օրենքով սահմանված կարգով ստեղծված և բանտի վարչակազմի մեջ չմտնող մարմնին պետք է իրավասություն վերապահվի պարբերական կամ սեփական նախաձեռնությամբ նախօրոք չհայտարարված տեսչական ստուգումներ անցկացնել. այդ տեսուչներին կամ մարմնին պետք է իրենց գործառույթն իրականացնելու համար անկախության երաշխիքներ տրամադրվեն: Տեսուչները պետք է անսահմանափակ հնարավորություն ունենան այցելելու ազատությունից զրկված անչափահասներին պահելու համար նախատեսված բանտում աշխատող բոլոր անձանց, դրանցում պահվող բոլոր անչափահասներին, և ծանոթանալու այդ բանտում վարվող բոլոր փաստաթղթերին:

73. Տեսչական մարմնին կցված, որակավորում ունեցող բուժաշխատողները կամ առողջապահական մարմինները պետք է մասնակցեն տեսչական ստուգումներին՝ գնահատելով պահելու պայմանների, հիգիենայի, կացարանի, սննդի, վարժանքների և բուժառայությունների համապատասխանությունը սահմանված կանոններին, ինչպես նաև բանտում անչափահասների ֆիզիկական և հոգեկան առողջության հետ կապված ցանկացած պայմանների: Յուրաքանչյուր անչափահաս պետք է իրավունք ունենա մեկուսի պայմաններում գրուցելու ստուգումն իրականացնող ցանկացած տեսուչի հետ:

74. Ստուգումն ավարտելուց հետո տեսուչը պարտավոր է իր եզրակացությունների վերաբերյալ հաշվետվություն ներկայացնել: Հաշվետվությունը պետք է ներառի սույն կանոններին և ներպետական օրենսդրությանը համապատասխան դրույթներին բանտերի համապատասխանության գնահատականը և հանձնարարականներ՝ այդ կանոններին ու դրույթներին համապատասխանությունն ապահովելու համար անհրաժեշտ քայլերի վերաբերյալ: Տեսուչի բացահայտած ցանկացած փաստ, որը վկայում է անչափահասների իրավունքների կամ բանտի գործունեության վերաբերյալ իրավական դրույթների խախտման մասին, պետք է փոխանցվի իրավասու մարմիններին՝ համապատասխան քննություն իրականացնելու համար:

75. Յուրաքանչյուր անչափահաս պետք է հնարավորություն ունենա դիմումներ կամ բողոքներ ներկայացնելու բանտի տնօրենին կամ վերջինիս կողմից լիազորված անձին:

76. Յուրաքանչյուր անչափահաս պետք է իրավունք ունենա առանց բովանդակության գրաքննության, օրենքով սահմանված եղանակով դիմում կամ բողոք ներկայացնելու բանտերի ղեկավարման կենտրոնական մարմնին, դատական կամ այլ մարմիններին և անհապաղ տեղեկանալու դրանց պատասխանների մասին:

77. Անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել ազատությունից զրկված անչափահասների ներկայացրած բողոքները ստանալու և քննելու, ինչպես նաև՝ այդ բողոքների արդարացի լուծման նպատակով

միջոցներ ձեռնարկելու իրավասություն ունեցող անկախ օդակ (օմբուդսմեն) ձևավորելու ուղղությամբ:

78. Յուրաքանչյուր անչափահաս պետք է իրավունք ունենա հնարավորության դեպքում խնդրելու ընտանիքի անդամների, իրավապաշտպանների, մարդասիրական և այլ կազմակերպությունների օժանդակությունը՝ բողոքներ ներկայացնելու հարցում: Անտառաճանաչ անչափահասներին պետք է օգնություն ցուցաբերվի, եթե նրանք կարիք ունեն դիմելու իրավական պաշտպանության ծառայություններ մատուցող կամ բողոքներ ընդունելու իրավասություն ունեցող պետական կամ մասնավոր գերատեսչություններին և կազմակերպություններին:

ԺԴ. Վերադարձ համայնք

79. Բոլոր անչափահասները պետք է օգտվեն ազատվելուց հետո իրենց հասարակություն, ընտանիք վերադարձնելու և կրթության կամ աշխատանքի վերադառնալու համար նախատեսված հնարավորություններից: Այդ նպատակով պետք է սահմանվեն համապատասխան ընթացակարգեր, այդ թվում՝ վաղաժամկետ ազատման կամ հատուկ դասընթացների ձևով:

80. Իրավասու մարմինները պետք է տրամադրեն անչափահասներին հասարակությունում վերականգնելու և նման անչափահասների նկատմամբ կանխակալ կարծիքը նվազագույնի հասցնելու ծառայություններ կամ ապահովեն այդ ծառայությունների տրամադրումը: Այդ ծառայությունները պետք է հնարավորության սահմաններում ապահովեն, որպեսզի անչափահասին տրամադրվեն պատշաճ կացարան, աշխատանք, հագուստ և ազատվելուց հետո բարեհաջող վերաինտեգրվելու համար անհրաժեշտ այլ միջոցներ: Հարկավոր է խորհրդակցել նման ծառայություններ մատուցող գործակալությունների հետ և վերջիններիս թույլատրել բանտարկության ընթացքում շփվել անչափահասների հետ՝ համայնք վերադառնալու ճանապարհին նրանց աջակցելու նպատակով:

ԺԵ. ԱՆՁՆԱԿԱԶՄԸ

81. Անձնակազմը պետք է ունենա որակավորում և բավարար թվով այնպիսի մասնագետներ, ինչպիսիք են՝ մանկավարժները, մասնագիտական ուսուցման հրահանգիչները, սոցիալական աշխատողները, հոգեբույժներն ու հոգեբանները: Այս և մասնագիտացված այլ անձնակազմը, որպես կանոն, պետք է աշխատի մշտական հիմունքներով: Դա չի բացառում ոչ մշտական կամ կամավորության հիմունքներով աշխատողների ներգրավումը, եթե աջակցության և ուսուցանման այն մակարդակը, որ նրանք կարող են ապահովել, պատշաճ է և օգտակար: Բանտերը պետք է օգտվեն համայնքում առկա վերականգնողական, կրթական, բարոյական, հոգևոր և այլ ներուժից՝ բանտարկված անչափահասների անհատական կարիքներին ու խնդիրներին համապատասխան:

82. Վարչակազմը պետք է ապահովի ցանկացած մակարդակի ու տեսակի անձնակազմի մանրակրկիտ ընտրությունը և նրանց ծառայությունների օգտագործումը, քանի որ բանտերի պատշաճ կառավարումը կախված է անձնակազմի ամբողջականությունից, մարդասիրությունից, անչափահասների հետ աշխատելու ունակությունից և մասնագիտական հմտություններից, ինչպես նաև՝ տվյալ աշխատանքը կատարելու համար անձի անհատական համապատասխանությունից:

83. Վերոհիշյալ նպատակներին հասնելու համար անձնակազմի անդամները պետք է նշանակվեն որպես պատշաճ վարձատրվող պրոֆեսիոնալ աշխատողներ, որպեսզի այդ աշխատանքը գրավիչ լինի սահմանված պահանջներին համապատասխանող կանանց ու տղամարդկանց համար: Անչափահասների համար նախատեսված բանտերի անձնակազմի անդամները պետք է շարունակաբար խրախուսվեն, որպեսզի վերջիններս իրենց պարտականությունները կատարեն մարդասիրաբար, նվիրվածությամբ, արհեստավարժորեն, արդարացի և արդյունավետ, մշտապես դրսևորեն այնպիսի վարքագիծ, որպեսզի վաստակեն անչափահասների հարգանքը, վերջիններիս համար դրական օրինակ ծառայեն և ճիշտ կողմնորոշեն նրանց:

84. Վարչակազմը պետք է կառավարումը կազմակերպի այնպես, որ հեշտացվի շփումը յուրաքանչյուր բանտի անձնակազմի տարբեր խմբերի միջև՝ անչափահասների խնամքում ներգրավված տարբեր ծառայությունների, ինչպես նաև անձնակազմի և վարչակազմի միջև համագործակցությունը խթանելու նպատակով, որպեսզի անչափահասների հետ անմիջական շփվող անձնակազմն ի վիճակի լինի գործելու իրենց պարտականություններն արդյունավետ իրականացնելու համար նպաստավոր պայմաններում:

85. Անձնակազմը պետք է անցնի այնպիսի վերապատրաստում, որը հնարավորություն կտա արդյունավետ իրականացնել պարտականությունները, մասնավորապես՝ մանկական հոգեբանության, երեխայի բարեկեցության, մարդու իրավունքների և երեխայի իրավունքների միջազգային ստանդարտների ու նորմերի, այդ թվում՝ սույն կանոնների վերաբերյալ: Անձնակազմը պետք է պահպանի և կատարելագործի իր գիտելիքներն ու մասնագիտական կարողությունները՝ ծառայության ողջ ընթացքում համապատասխան պարբերականությամբ ծառայությանը զուգընթաց վերապատրաստման դասընթացների մասնակցելու միջոցով:

86. Բանտի տնօրենը պետք է ունենա իր առջև դրված խնդիրները կատարելու համար անհրաժեշտ որակավորում և ղեկավարման կարողություններ, համապատասխան կրթություն և փորձառություն, և իր պարտականությունների կատարմանը ներգրավվի լրիվ դրույքով:

87. Իր պարտականությունները կատարելիս բանտի անձնակազմը պետք է հարգի ու պաշտպանի բոլոր անչափահասների մարդկային արժանապատվությունը և հիմնարար իրավունքները, մասնավորապես.

(ա) բանտի անձնակազմի որևէ անդամ չպետք է որևէ պատրվակով կամ որևէ իրադրությունում կիրառի, հրահրի կամ հանդուրժի խոշտանգման կամ կոպիտ, դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի, պատժի, ուղղման կամ կարգապահական միջոցի տարրեր պարունակող գործողություններ,

(բ) ողջ անձնակազմը պետք է վճռականորեն դեմ լինի կոռուպցիային և պայքարի դրա դեմ՝ նման երևույթների մասին անհապաղ տեղեկացնելով իրավասու մարմիններին,

(գ) ողջ անձնակազմը պետք է հարգի սույն կանոնները: Անձնակազմի անդամը, ով բավարար հիմք ունի պնդելու, որ տեղի է ունեցել կամ նախատեսվում է սույն կանոնների լուրջ խախտում, պետք է այդ մասին տեղեկացնի նման իրավիճակները քննելու և շտկելու լիազորություններով օժտված վերադաս մարմիններին,

(դ) ողջ անձնակազմը պետք է ապահովի անչափահասների ֆիզիկական և հոգեկան առողջության լիարժեք պաշտպանությունը, այդ թվում՝ պաշտպանությունը ֆիզիկական, սեռական և հուզական բնույթի չարաշահումներից ու շահագործումից, և պետք է անհրաժեշտության դեպքում անմիջապես քայլեր ձեռնարկի բժշկական միջամտություն ապահովելու ուղղությամբ,

(ե) ողջ անձնակազմը պետք է հարգի անչափահասի անձնական կյանքի իրավունքը, մասնավորապես, պետք է պահպանվի անչափահասների կամ նրանց ընտանիքների վերաբերյալ մասնագիտական գործունեության բերումով իրենց հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը,

(զ) ողջ անձնակազմը պետք է ձգտի նվազագույնի հասցնել բանտի ներսում և բանտից դուրս կյանքի միջև առկա այն տարբերությունները, որոնք կարող են նվազեցնել անչափահասների՝ որպես մարդկային էակների արժանապատվության նկատմամբ հարգանքը:

Քրեական արդարադատության համակարգում հայտնված երեխաների նկատմամբ գործողությունների ուղենիշներ (Guidelines for Action on Children in the Criminal Justice System)

Առաջարկվել է Տնտեսական և սոցիալական խորհրդի 1997թ. հուլիսի 21-ի թիվ 1997/30 բանաձևով

1. Համաձայն Տնտեսական և սոցիալական խորհրդի 1996թ. հուլիսի 23-ի թիվ 1996/13 բանաձևի, 1997թ. փետվարի 23-ից 25-ը Վիեննայում կայացած փորձագիտական խմբի հանդիպման ընթացքում մշակվեցին Քրեական արդարադատության համակարգում հայտնված երեխաների նկատմամբ գործողությունների սույն ուղենիշները՝ Ավստրիայի կառավարության ֆինանսական օժանդակությամբ: Գործողությունների ուղենիշները մշակելիս փորձագետները հաշվի են առել Կառավարությունների կողմից ներկայացված կարծիքները և տրամադրված տեղեկատվությունը:
2. Հանդիպմանը մասնակցել են տարբեր տարածաշրջանների տասնմեկ երկրների քսանինը փորձագետներ, Քարտուղարության մարդու իրավունքների կենտրոնի, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեի ներկայացուցիչներ, ինչպես նաև անչափահասների գործերով արդարադատությանն առնչվող ոչ կառավարական կազմակերպությունների դիտորդներ:
3. Գործողությունների ուղենիշները հասցեագրված են Գլխավոր քարտուղարին և ՄԱԿ-ի տարբեր գործակալություններին ու ծրագրերին, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի մասնակից երկրներին՝ դրա իրականացման մասով, ինչպես նաև՝ անդամ երկրներին՝ Անչափահասների գործերով արդարադատության իրականացման նվազագույն ստանդարտ կանոնների (Պեկինյան կանոններ), Անչափահասների հանցավորության կանխարգելման ՄԱԿ-ի ուղենիշների (Ռիադյան ուղենիշներ) և Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության ՄԱԿ-ի կանոնների կիրառման մասով (այսուհետ բոլորը միասին՝ Անչափահասների գործերով արդարադատության վերաբերյալ ՄԱԿ-ի ստանդարտներ և նորմեր):

I. Նպատակները, խնդիրները և հիմնական նկատառումներ

4. Գործողությունների ուղենիշների նպատակն է՝ ձևավորել հետևյալ խնդիրների լուծման համար անհրաժեշտ շրջանակը.

(ա) Իրականացնել Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան և հետամուտ լինել կոնվենցիայում ամրագրված նպատակների իրականացմանը՝ անչափահասների գործերով արդարադատության համատեքստում, ինչպես նաև՝ գործածել և կիրառել անչափահասների գործերով արդարադատության վերաբերյալ ՄԱԿ-ի ստանդարտներն ու նորմերը և հարակից այլ փաստաթղթերը ինչպիսին է Հանցագործություններից և լիազորությունների չարաշահումից տուժած անձանց գործերով արդարադատության հիմնական սկզբունքների հռչակագիրը.

(բ) Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի և հարակից այլ փաստաթղթերի արդյունավետ իրականացման հարցում խթանել մասնակից երկրներին աջակցության ցուցաբերումը:

5. Գործողությունների ուղենիշների արդյունավետ կիրառումն ապահովելու հարցում կառավարությունների, ՄԱԿ-ի համակարգի հաստատությունների, ոչ կառավարական կազմակերպությունների, մասնագիտական խմբերի, զանգվածային լրատվամիջոցների, ուսումնական հաստատությունների, երեխաների և քաղաքացիական հասարակության այլ անդամների միջև համագործակցությունը չափազանց կարևոր է:

6. Գործողությունների ուղենիշները պետք է ելնեն այն սկզբունքից, որ Կոնվենցիայի իրականացման պատասխանատվությունը միանշանակ դրվում է դրան մասնակցող երկրների վրա:

7. Գործողությունների ուղենիշների կիրառման հիմքը Երեխայի իրավունքների կոմիտեի հանձնարարականներն են:

8. Գործողությունների ուղենիշները միջազգային և ներպետական մակարդակով կիրառելիս պետք է ուշադրություն դարձվի հետևյալին.

(ա) մարդկային արժանապատվության նկատմամբ հարգանքը՝ Կոնվենցիայի հիմքում ընկած չորս ընդհանուր սկզբունքներին համապատասխան, մասնավորապես՝ զգայունությունը գենդերային հարցերում, երեխայի լավագույն շահերը հաշվի առնելը, կյանքի, գոյատևման և զարգացման իրավունքը և երեխայի կարծիքը հարգելը.

(բ) իրավունքների վրա հիմնված դիրքորոշումը.

(գ) իրականացմանը համակողմանի մոտեցում ցուցաբերելը՝ ներուժի և ջանքերի առավելագույն ներդրմամբ.

(դ) ծառայությունների միջուկորտային համախմբումը.

(ե) երեխաների և հասարակության համապատասխան հատվածի մասնակցությունը.

(զ) զարգացման գործընթացի միջոցով համագործակիցների իրավագործումը.

(է) շարունակականությունը՝ առանց արտաքին մարմիններից տևական կախվածության.

(ը) անկողմնակալ կիրառումը և ուշադրությունն առավել կարիքավորներին.

(թ) գործողությունների հաշվետվականությունը և թափանցիկությունը.

(ժ) գործուն արձագանքը՝ արդյունավետ կանխարգելիչ և փոխհատուցման միջոցառումներով:

9. Հարկավոր է բոլոր մակարդակներում (միջազգային, տարածաշրջանային, համապետական, տարածքային և համայնքային) հատկացնել և գործի դնել համապատասխան (մարդկային, կազմակերպական, տեխնոլոգիական, ֆինանսական և տեղեկատվական) միջոցներ՝ համապատասխան գործընկերների, այդ թվում՝ կառավարությունների, ՄԱԿ-ի հաստատությունների, ոչ կառավարական կազմակերպությունների, մասնագիտական խմբերի, զանգվածային լրատվամիջոցների, ուսումնական հաստատությունների, երեխաների և քաղաքացիական հասարակության այլ անդամների, ինչպես նաև՝ այլ գործընկերների հետ համագործակցությամբ:

II. Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի իրականացման ծրագրերը, դրանում սահմանված նպատակների իրականացումը և անչափահասների գործերով արդարադատության միջազգային ստանդարտների և նորմերի գործածումը և կիրառությունը

Ա. Ընդհանուր կիրառման միջոցառումներ

10. Պետք է ընդունվի անչափահասների գործերով արդարադատության ոլորտում համակողմանի և հետևողական պետական մոտեցման կարևորությունը՝ երեխայի բոլոր իրավունքների փոխկապակցվածության և անքակտելիության առումով:

11. Պետք է ձեռնարկվեն քաղաքականությանը, որոշումների կայացմանը, առաջնորդությանը և բարեփոխումներին վերաբերող միջոցառումներ, որոնց նպատակը պետք է լինի ապահովել, որպեսզի.

(ա) Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի սկզբունքներն ու դրույթները և անչափահասների գործերով արդարադատության ոլորտում ՄԱԿ-ի ստանդարտներն ու նորմերն ամբողջությամբ արտացոլված լինեն համապետական և տեղական օրենսդրությունում, քաղաքականության մեջ և պրակտիկայում, մասնավորապես՝ անչափահասների գործերով արդարադատության այնպիսի երեխայամետ համակարգ ձևավորելու միջոցով, որը կերաշխավորի երեխաների իրավունքները, կկանխի երեխաների իրավունքների խախտումները, կխթանի երեխաների մոտ արժանապատվության և կարևորության զգացողությունը և լիովին կհարգի նրանց տարիքը, զարգացման աստիճանը և հասարակական կյանքում իմաստալից մասնակցություն ունենալու և հասարակությանը նպաստ բերելու՝ վերջիններիս իրավունքը.

(բ) վերոհիշյալ փաստաթղթերի բովանդակության համապատասխան մասը լայնորեն ներկայացվի երեխաներին՝ նրանց համար հասկանալի լեզվով: Բացի այդ, ելնելով անհրաժեշտությունից՝ պետք է հաստատվեն ընթացակարգեր, որոնք կապահովեն, որպեսզի յուրաքանչյուր երեխա և բոլոր երեխաները համապատասխան տեղեկատվություն ստանան այդ փաստաթղթերում սահմանված իրավունքների մասին՝ առնվազն քրեական արդարադատության համակարգի հետ նրանց առաջին առնչության պահին, ինչպես նաև՝ հիշեցվեն օրենքը հարգելու իրենց պարտավորության մասին.

(գ) խթանվի երեխայամետ արդարադատության ոգու, նպատակների ու սկզբունքների ընկալումը հանրության և լրատվամիջոցների կողմից՝ անչափահասների գործերով արդարադատության վերաբերյալ ՄԱԿ-ի ստանդարտներին և նորմերին համապատասխան:

Բ. Հատուկ նպատակներ

12. Պետությունները պետք է ապահովեն ծնունդների գրանցման հետ կապված իրենց ծրագրերի արդյունավետությունը: Այն դեպքերում, երբ արդարադատության համակարգում ներգրավված երեխայի տարիքը հայտնի չէ, հարկավոր է միջոցներ ձեռնարկել՝ երեխայի իրական տարիքը անկախ և օբյեկտիվ գնահատման միջոցով պարզելու ուղղությամբ:

13. Անկախ այն բանից, թե քրեական պատասխանատվության, չափահասության և գործունակության տարիքներն ինչպես են սահմանված ներպետական օրենսդրությունում, պետությունները պետք է ապահովեն, որպեսզի երեխաներն օգտվեն միջազգային իրավունքով

երաշխավորված իրենց բոլոր իրավունքներից, հատկապես՝ Կոնվենցիայի 3-րդ, 37-րդ և 40-րդ հոդվածներով սահմանված իրավունքների համատեքստում:

14. Առանձնակի ուշադրություն պետք է դարձվի հետևյալին.

(ա) պետք է սահմանված լինի անչափահասների գործերով արդարադատության համակողմանի երեխայամետ ընթացակարգ.

(բ) անկախ փորձագիտական կամ այլ խմբերը պետք է վերանայեն անչափահասների գործերով արդարադատության վերաբերյալ գործող և առաջարկվող օրենսդրությունը և դրա ազդեցությունը երեխաների վրա.

(գ) քրեական պատասխանատվության տարիքից ցածր որևէ երեխայի չպետք է քրեական մեղադրանք առաջադրվի.

(դ) պետությունները պետք է ստեղծեն անչափահասների գործերով զբաղվող դատարաններ, որոնց առաջնահերթ իրավասությունը քրեական արարք կատարած անչափահասների վերաբերյալ գործերի քննությունը պետք է լինի, ինչպես նաև մշակեն հատուկ ընթացակարգեր՝ երեխաների առանձնահատուկ կարիքները հաշվի առնելու նպատակով: Որպես այլընտրանք՝ սովորական դատարանները կարող են համապատասխան դեպքերում զբաղվել նման ընթացակարգերով: Ըստ անհրաժեշտության՝ պետք է ձևավորվեն միջոցներ՝ Կոնվենցիայի 3-րդ, 37-րդ և 40-րդ հոդվածներին համապատասխան երեխայի բոլոր իրավունքները ներդաշնակեցնելու և նրա պաշտպանությունն ապահովելու ուղղությամբ՝ այն դեպքերում, երբ երեխան ներկայացվել է դատարան, որը նախատեսված չէ անչափահասների գործերով զբաղվելու համար:

15. Անհրաժեշտ է գործող ընթացակարգերի վերանայում ձեռնարկել, իսկ հնարավորության դեպքում՝ մշակել գործերի լուծման արտադատական կամ քրեական արդարադատության դասական համակարգերից տարբերվող այլընտրանքային այլ նախաձեռնություններ՝ քրեական հանցանք կատարած երիտասարդ անձանց քրեական արդարադատության համակարգեր ուղղորդելուց խուսափելու համար: Անհրաժեշտ է համապատասխան քայլեր ձեռնարկել՝ նախքան կալանավորումը, դատաքննությունը, դատաքննության ընթացքում և դրանից հետո երկրի ողջ տարածքով մեկ այլընտրանքային և կրթական միջոցները հասանելի դարձնելու ուղղությամբ՝ կրկնահանցավորությունը կանխելու և իրավախախտ երեխաների սոցիալական վերականգնումը խթանելու նպատակով: Համապատասխան դեպքերում պետք է գործի դրվեն երեխաներին առնչվող վեճերի լուծման ոչ պաշտոնական եղանակներ, ներառյալ՝ մեդիացիան և վերականգնողական արդարադատության գործընթացները, հատկապես այն դեպքերում, երբ տուժողները ևս ներգրավված են: Սահմանվելիք տարբեր միջոցառումներին ընտանիքները պետք է ներգրավել այնքանով, որքանով դա բխում է իրավախախտ երեխայի շահերից: Պետությունները պետք է ապահովեն այլընտրանքային միջոցների համապատասխանությունը Կոնվենցիային, անչափահասների գործերով արդարադատության ոլորտում ՄԱԿ-ի սահմանած ստանդարտներին և նորմերին, ինչպես նաև հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության ոլորտի այլ գործող ստանդարտներին ու նորմերին, ինչպիսին է Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները (Տոկիոյի

կանոնները)՝ առանձնակի ուշադրություն դարձնելով նման միջոցների կիրառման պատշաճ ընթացակարգերի և նվազագույն միջամտության սկզբունքի պահպանմանը:

16. Առաջնահերթությունը պետք է տրվի այնպիսի գերատեսչությունների և ծրագրերի ստեղծմանը, որոնք իրավական և այլ (ինչպիսին են թարգմանչական ծառայությունները) օգնություն կցուցաբերեն երեխաներին, անհրաժեշտության դեպքում՝ անվճար, և, մասնավորապես, գործնականում կապահովեն արգելանքի վերցվելու պահից նման օգնություն ստանալու՝ յուրաքանչյուր երեխայի իրավունքի հարգումը:

17. Համապատասխան գործողություններ պետք է կատարվեն՝ պաշտպանության հատուկ միջոցների կարիք ունեցող երեխաների (ինչպիսիք են՝ աշխատող կամ փողոցում ապրող երեխաները, ընտանեկան միջավայրից զրկված երեխաները, հաշմանդամություն ունեցող երեխաները, փոքրամասնություններին պատկանող երեխաները, ներգաղթյալների, տեղաբնիկ ժողովուրդներին պատկանող կամ այլ խոցելի խմբերի երեխաները) հիմնախնդիրը մեղմելու համար:

18. Երեխաներին փակ հաստատություններում տեղավորելու դեպքերը պետք է կրճատվեն: Երեխաներին նման հաստատություններում տեղավորելը պետք է կատարվի միայն Կոնվենցիայի 37 (բ) հոդվածի դրույթներին համապատասխան՝ որպես վերջին միջոց և հնարավորինս կարճ ժամկետով: Երեխաների հարցերով զբաղվող արդարադատության և սոցիալական ապահովության համակարգերում խմբային պատիժները պետք է արգելվեն:

19. Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության ՄԱԿ-ի կանոնները և Կոնվենցիայի 37 (բ) հոդվածը կիրառելի են նաև ցանկացած պետական կամ մասնավոր հիմնարկի պարագայում, որոնցից երեխաները չեն կարող ինքնակամ դուրս գալ, այլ կարող են լքել դրանք դատական, վարչական կամ պետական իշխանության այլ մարմինների կարգադրությամբ:

20. Կալանքի վերցված երեխայի, նրա ընտանիքի և համայնքի միջև կապը պահպանելու, ինչպես նաև նրա սոցիալական վերաինտեգրումը խթանելու նպատակով կարևոր է ապահովել ազգականների կամ երեխայի օրինական շահերով հետաքրքրվող անձանց դյուրին մուտքը երեխաներին անազատության մեջ պահելու հաստատություններ, եթե երեխայի լավագույն շահերից այլ բան չի բխում:

21. Անհրաժեշտության դեպքում պետք է հիմնել անազատության մեջ պահելու վայրերի պայմանները մշտադիտարկող և պարբերաբար զեկույցներ ներկայացնող անկախ մարմին: Մշտադիտարկումը պետք է տեղի ունենա անչափահասների գործերով արդարադատության ոլորտում ՄԱԿ-ի ստանդարտների և նորմերի, մասնավորապես՝ Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության ՄԱԿ-ի կանոնների շրջանակներում: Պետությունները պետք է երեխաներին թույլ տան ազատորեն և մեկուսի պայմաններում շփվել մշտադիտարկման մարմինների հետ:

22. Պետությունները պետք է համապատասխան դեպքերում դրական արձագանքեն անազատության մեջ պահելու վայրեր այցելելու վերաբերյալ մարդասիրական, մարդու իրավունքներով զբաղվող և այլ կազմակերպությունների դիմումներին:

23. Քրեական արդարադատության համակարգում գտնվող երեխաների առումով պատշաճ ուշադրություն պետք է դարձվի միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների և շահագրգիռ այլ կողմերի մտահոգություններին, մասնավորապես՝ համակարգային խնդիրներին, այդ թվում՝ սահմանված կարգի խախտումներով երեխաների ընդունմանը և ազատությունից զրկված երեխաների վրա ազդեցություն գործող տևական ձգձգումներին:

24. Քրեական արդարադատության համակարգում գտնվող երեխաների հետ առնչվող կամ նրանց համար պատասխանատու բոլոր անձինք պետք է ուսուցանվեն և վերապատրաստվեն մարդու իրավունքների, Կոնվենցիայի սկզբունքների և դրույթների և անչափահասների գործերով արդարադատության բնագավառում ՄԱԿ-ի ստանդարտների և նորմերի թեմաներով՝ որպես իրենց վերապատրաստման ծրագրերի բաղկացուցիչ մաս: Այդ անձինք են՝ ոստիկանները և իրավապահ այլ մարմինների պաշտոնյաները, դատավորները և ատենակալները, դատախազները, փաստաբանները և կարգադրիչները, բանտային պաշտոնյաները և այլ մասնագետներ, ովքեր աշխատում են այնպիսի հաստատություններում, որտեղ պահվում են ազատությունից զրկված անչափահասները, առողջապահական ոլորտի անձնակազմը, սոցիալական աշխատողները, խաղաղապահները և անչափահասների գործերով արդարադատության ոլորտին առնչվող այլ մասնագետներ:

25. Գոյություն ունեցող միջազգային ստանդարտների լույսի ներքո պետությունները պետք է ձևավորեն մեխանիզմներ՝ ապահովելու համար պաշտոնատար անձանց կողմից երեխաների հիմնարար իրավունքների և ազատությունների դիտավորյալ խախտումների կապակցությամբ ներկայացված գանգատների անհապաղ, լիարժեք և անկողմնակալ քննությունը: Պետությունները պետք է նաև ապահովեն, որ այդ անձանց պատասխանատվությունը հաստատվելու դեպքում վերջիններս պատշաճ պատժի ենթարկվեն:

Գ Միջազգային մակարդակով ձեռնարկվելիք միջոցառումներ

26. Անչափահասների գործերով արդարադատությանը միջազգային, տարածաշրջանային և ներպետական մակարդակով պատշաճ ուշադրություն պետք է դարձվի, այդ թվում՝ ՄԱԿ-ի համակարգի մակարդակով ձեռնարկվող գործողությունների շրջանակներում:

27. Հրատապ անհրաժեշտություն է այս ոլորտում գործող բոլոր մարմինների, մասնավորապես՝ Քարտուղարության հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության հարցերի բաժնի, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի/Մարդու իրավունքների կենտրոնի, ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, Երեխայի իրավունքների կոմիտեի, Աշխատանքի միջազգային կազմակերպության, ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության և Առողջապահության համաշխարհային կազմակերպության սերտ համագործակցությունն ապահովելը: Բացի այդ, Համաշխարհային բանկին և այլ միջազգային և տարածաշրջանային ֆինանսական հաստատություններին ու կազմակերպություններին, ինչպես նաև ոչ կառավարական կազմակերպություններին ու գիտական հաստատություններին կոչ է արվում աջակցել անչափահասների գործերով արդարադատության ոլորտում խորհրդատվական ծառայությունների և տեխնիկական օժանդակության տրամադրմանը:

Ուստի, հարկավոր է ուժեղացնել համագործակցությունը, հատկապես՝ հետազոտությունների, տեղեկատվության տարածման, վերապատրաստումների, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի իրականացման և մշտադիտարկման, գոյություն ունեցող ստանդարտների կիրառման, ինչպես նաև տեխնիկական խորհրդատվության և օժանդակության ծրագրերի հետ կապված հարցերում, ասենք՝ անչափահասների գործերով արդարադատության բնագավառում գործող միջազգային ցանցերի գործունեությունից օգտվելու միջոցով:

28. Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի արդյունավետ իրականացումը, ինչպես նաև՝ տեխնիկական համագործակցության և խորհրդատվական ծառայությունների վերաբերյալ ծրագրերի միջոցով միջազգային ստանդարտների գործածումը և կիրառումը պետք է ապահովվի ազատությունից զրկված երեխաների մարդկային իրավունքների պաշտպանությանը և խթանմանը, օրենքի գերակայության ամրապնդմանը և անչափահասների գործերով արդարադատության համակարգի կառավարման բարելավելմանն առնչվող հետևյալ խնդիրներին առանձնակի ուշադրություն դարձնելու միջոցով.

(ա) օժանդակություն իրավական բարեփոխումներին,

(բ) ներպետական հնարավորությունների և ենթակառուցվածքների հզորացում,

(գ) վերապատրաստման ծրագրեր ոստիկանների և իրավապահ այլ մարմինների պաշտոնյաների, դատավորների և ատենակալների, դատախազների, փաստաբանների և կարգադրիչների, բանտային պաշտոնյաների և ազատությունից զրկված անչափահասներին պահելու համար նախատեսված հաստատությունների այլ մասնագետների, առողջապահական ոլորտի անձնակազմի, սոցիալական աշխատողների, խաղաղապահների և անչափահասների գործերով արդարադատության ոլորտին առնչվող այլ մասնագետների համար.

(դ) վերապատրաստման ձեռնարկների պատրաստում.

(ե) տեղեկատվական և կրթական նյութերի պատրաստում՝ անչափահասների գործերով արդարադատության ոլորտում իրենց իրավունքների մասին երեխաներին իրազեկելու համար.

(զ) օժանդակություն տեղեկատվական և կառավարման համակարգերի մշակմանը:

29. Մերտ համագործակցություն պետք է ապահովվի Քարտուղարության Հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության հարցերի բաժնի և Խաղաղարար առաքելությունների վարչության միջև՝ հաշվի առնելով խաղաղարար առաքելությունների ընթացքում երեխայի իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը, այդ թվում՝ խաղաղարար գործունեության և հետկոնֆլիկտային և նման այլ իրադրությունների ժամանակ հանցագործությունից տուժած և հանցանք կատարած երեխաների ու պատանիների խնդիրները:

Դ. Տեխնիկական խորհրդատվության և օժանդակության ծրագրերի իրականացման մեխանիզմները

30. Կոնվենցիայի 43, 44 և 45-րդ հոդվածների համաձայն Երեխայի իրավունքների կոմիտեն քննության է առնում Կոնվենցիայի իրականացման վերաբերյալ մասնակից երկրների ներկայացրած զեկույցները: Կոնվենցիայի 44-րդ հոդվածի համաձայն այդ զեկույցներում պետք է

նշվեն այն գործուններն ու բարդությունները (եթե այդպիսիք առկա են), որոնք անդրադառնում են Կոնվենցիայով սահմանված պարտավորությունների կատարման մակարդակի վրա:

31. Կոնվենցիայի մասնակից երկրներին կոչ է արվում իրենց նախնական և պարբերական զեկույցներում ներառել համապարփակ տեղեկատվություն, տվյալներ և ցուցիչներ՝ Կոնվենցիայի դրույթների իրականացման, ինչպես նաև անչափահասների գործերով արդարադատության ոլորտում ՄԱԿ-ի ստանդարտների և նորմերի գործադրման և կիրառության մասին:

32. Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման գործում մասնակից երկրների արձանագրած առաջընթացը քննարկելու գործընթացի արդյունքում Կոմիտեն կարող է առաջարկություններ և ընդհանուր հանձնարարականներ ներկայացնել մասնակից երկրին՝ Կոնվենցիային վերջինիս լիակատար համապատասխանությունն ապահովելու նպատակով (համաձայն Կոնվենցիայի 45(դ) հոդվածի): Կոնվենցիայի արդյունավետ իրականացումը խթանելու և անչափահասների գործերով արդարադատության ոլորտում միջազգային համագործակցությունը խրախուսելու նպատակով Կոմիտեն, ըստ նպատակահարմարության, մասնագիտացված գործակալություններին, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամին և իրավասու մարմիններին փոխանցում է մասնակից երկրների այն զեկույցները, որոնցում խնդրվում է խորհրդատվական ծառայություններ և տեխնիկական օժանդակություն ցուցաբերել կամ արտացոլված է դրանց անհրաժեշտությունը՝ այդ խնդրանքների և անհրաժեշտության վերաբերյալ Կոմիտեի նկատառումների և առաջարկությունների հետ միասին (համաձայն Կոնվենցիայի 45(բ) հոդվածի), եթե այդպիսիք առկա են:

33. Համապատասխանաբար, եթե մասնակից երկրի զեկույցից պարզ է դառնում կամ Կոմիտեի կողմից դրա քննարկման արդյունքում ի հայտ է բերվում անչափահասների գործերով արդարադատության ոլորտի բարեփոխումների անհրաժեշտություն, այդ թվում՝ ՄԱԿ-ի կամ մասնագիտացված գործակալությունների տեխնիկական խորհրդատվության և օժանդակության ծրագրերի միջոցով, մասնակից երկիրը կարող է նման օժանդակություն խնդրել, այդ թվում՝ Հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության բաժնից, Մարդու իրավունքների կենտրոնից և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամից:

34. Այդ խնդրանքներին ի պատասխան՝ պատշաճ օժանդակություն ցուցաբերելու նպատակով հարկավոր է հիմնել տեխնիկական խորհրդատվության և օժանդակության համակարգող խորհուրդ, որի ժողովները պետք է գումարվեն տարեկան առնվազն մեկ անգամ՝ Գլխավոր քարտուղարի կողմից: Խորհուրդը պետք է կազմված լինի Բաժնի, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների զերագույն հանձնակատարի գրասենյակի/Մարդու իրավունքների կենտրոնի, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, Երեխայի իրավունքների կոմիտեի, Հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության ծրագրի ՄԱԿ-ի ցանցի և ՄԱԿ-ի այլ հարակից միավորների, ինչպես նաև շահագրգիռ այլ միջկառավարական, տարածաշրջանային և ոչ-կառավարական կազմակերպությունների, ներառյալ՝ անչափահասների գործերով արդարադատության միջազգային ցանցերի և տեխնիկական խորհրդատվություն և օժանդակություն ցուցաբերող գիտական հաստատությունների ներկայացուցիչներից՝ ստորև շարադրված 39-րդ պարբերությանը համապատասխան:

35. Նախքան համակարգող խորհրդի առաջին հանդիպումը գումարելը պետք է մշակել ռազմավարություն՝ անչափահասների գործերով արդարադատության ասպարեզում միջազգային համագործակցությունն ակտիվացնելու վերաբերյալ: Համակարգող խորհուրդը պետք է նաև խթանի ընդհանուր խնդիրների վերհանումը, դրական փորձի օրինակների ամփոփումը և առկա փորձի ու կարիքների վերլուծությունը, որն իր հերթին կհանգեցնի կարիքների գնահատմանը առավել ռազմավարական մոտեցումների և հետագա գործողությունների վերաբերյալ արդյունավետ առաջարկությունների: Նման ամփոփումը թույլ կտա ի մի բերել անչափահասների գործերով արդարադատության ասպարեզում առկա խորհրդատվական ծառայություններն ու տեխնիկական օժանդակությունը, այդ թվում՝ նման օժանդակություն խնդրող երկրի կառավարության, ինչպես նաև տվյալ երկրի վերաբերյալ ծրագրի տարբեր բաղադրիչներն իրագործելու կարողություն և լիազորություն ունեցող այլ գործընկերների հետ շուտափույթ ձեռք բերել համաձայնություն՝ դրանով իսկ ապահովելով առավելագույնս արդյունավետ և նպատակաուղղված գործողություններ: Այդ մեկտեղումը պետք է իրականացվի շարունակաբար՝ ներգրավված բոլոր կողմերի հետ սերտ համագործակցությամբ: Դրանում պետք է հաշվի առնվեն գործերի արտադատական լուծման ծրագրերի հնարավոր ներդրման հարցերը՝ անչափահասների գործերով արդարադատության իրականացումը կատարելագործելու, կալանքի կիրառումը նվազեցնելու, ազատությունից զրկված երեխաների նկատմամբ վերաբերմունքը բարելավելու և վերաինտեգրման և վնասի հատուցման արդյունավետ ծրագրեր հիմնելու նպատակով:

36. Հարկավոր է շեշտադրում կատարել կանխարգելման համապարփակ ծրագրերի ձևակերպման վրա՝ ինչպես նշված է Անչափահասների հանցավորության կանխարգելման ՄԱԿ-ի ուղենիշներում (Ռիադյան ուղենիշներ): Ծրագրերը պետք է կենտրոնացնել բոլոր երեխաներին ու երիտասարդներին բարեհաջող սոցիալականացնելու և ինտեգրելու ռազմավարությունների վրա, մասնավորապես՝ ընտանիքի, համայնքի, տարեկիցների խմբերի, դպրոցների, մասնագիտական ուսուցման և աշխատանքային ծրագրերի միջոցով: Այդ ծրագրերի իրականացման ընթացքում հարկավոր է առանձնակի ուշադրություն դարձնել պաշտպանության հատուկ միջոցների կարիք ունեցող երեխաներին, ինչպիսիք են՝ աշխատող կամ փողոցում ապրող երեխաները, ընտանեկան միջավայրից զրկված երեխաները, հաշմանդամություն ունեցող երեխաները, փոքրամասնություններին պատկանող երեխաները, ներգաղթյալների, տեղաբնիկ ժողովուրդներին պատկանող կամ այլ խոցելի խմբերի երեխաները: Մասնավորապես, այս խմբերի երեխաներին հաստատություններում տեղավորելը պետք է հնարավորինս արգելվի: Հարկավոր է մշակել սոցիալական պաշտպանության միջոցառումներ՝ այդ երեխաների քրեականացման ռիսկը սահմանափակելու նպատակով:

37. Ռազմավարությամբ նաև պետք է սահմանվի Կոնվենցիայի մասնակից երկրներին համատեղ իրականացվելիք առաքելությունների հիման վրա միջազգային խորհրդատվական ծառայությունների և տեխնիկական օժանդակություն տրամադրելու համակարգված գործընթաց, անհրաժեշտության դեպքում՝ ներգրավված տարբեր կազմակերպությունների և գործակալությունների անձնակազմի կողմից՝ տեխնիկական օժանդակության առավել երկարաժամկետ ծրագրեր մշակելու նպատակով:

38. Երկրի մակարդակով խորհրդատվական ծառայություններ և տեխնիկական օժանդակության ծրագրեր իրականացնող կարևոր դերակատարներ են ՄԱԿ-ի մշտական համակարգողները, ովքեր կարևոր դերակատարություն ունեն ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի/Մարդու իրավունքների կենտրոնի, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի տեղական գրասենյակների գործունեության առումով: Կարևոր է ընդգծել անչափահասների գործերով արդարադատության բնագավառում տեխնիկական համագործակցությունը երկրի պլանավորման և ծրագրերի մշակման գործընթացում ներառելու կենսական կարևորությունը, այդ թվում՝ երկրի վերաբերյալ ՄԱԿ-ի ռազմավարական հուշագրի միջոցով:

39. Հարկավոր է միջոցներ հայթայթել համակարգող խորհրդի համակարգիչ մեխանիզմի և տարածաշրջանային կամ ներպետական այն ծրագրերի համար, որոնք մշակվել են Կոնվենցիայի կենսագործումը բարելավելու նպատակով: Այդ նպատակներով միջոցներ կարող են ստացվել սովորական կամ արտաբյուջետային միջոցներից (տես վերը՝ 34-րդ և 38-րդ պարբերությունները): Հատուկ ծրագրերի համար միջոցների մեծամասնությունը պետք է հայթայթվի արտաքին աղբյուրներից:

40. Համակարգող խորհուրդը կարող է խրախուսել համակազմած մոտեցումը այս ոլորտում միջոցների հայթայթմանը. այն կարող է նաև այդ գործընթացի փաստացի շարժիչ ուժը հանդիսանալ: Միջոցների հայթայթումը պետք է կատարվի այս ոլորտը կարգավորող համընդհանուր ծրագրի իրականացմանն աջակցելու նպատակով մշակված ծրագրային փաստաթղթում արձանագրված ընդհանուր ռազմավարության հիման վրա: ՄԱԿ-ի բոլոր շահագրգիռ մարմիններն ու գործակալությունները, ինչպես նաև՝ այս ոլորտում տեխնիկական համագործակցության ծառայություններ մատուցելու իրական կարողություններ ունեցող ոչ կառավարական կազմակերպությունները պետք է հրավիրվեն մասնակցելու այդ գործընթացին:

Ե. Լրացուցիչ նկատառումներ երկրում իրականացվող ծրագրերի վերաբերյալ

41. Անչափահասների հանցավորության կանխարգելման և անչափահասների գործերով արդարադատության նշանակալի սկզբունքներից է այն, որ տևական փոփոխությունների կարելի է հասնել ոչ միայն նախանշաններին, այլև ծնող պատճառներին արձագանքելով: Օրինակ, անչափահասների կալանավորման չափից ավելի կիրառման հարցին պատշաճ լուծում կարելի է տալ միայն համապարփակ մոտեցում ցուցաբերելու դեպքում, որը պետք է ներառի քննության, քրեական հետապնդման, դատական և քրեակատարողական համակարգի բոլոր կազմակերպական և դեկավար կառույցները: Դրա համար, ի թիվս այլ գործոնների, հարկավոր է հաղորդակցություն ապահովել ոստիկանության, դատախազների, դատավորների և ատենակալների, տեղական համայնքային իշխանությունների, վարչական մարմինների և ազատագրկման վայրերի համապատասխան մարմինների միջև: Բացի այդ, անհրաժեշտ են միմյանց հետ սերտ համագործակցելու կամք և կարողություն:

42. Անչափահասների վարքագծի կապակցությամբ քրեական արդարադատության միջոցառումների հետագա չափից ավելի կիրառումը կանխելու համար պետք է ջանքեր գործադրվեն սոցիալական աջակցության ամրապնդման այնպիսի ծրագրեր ստեղծելու և կիրառելու

ուղղությամբ, որոնք թույլ կտան համապատասխան դեպքերում երեխաներին զերծ պահել դատական համակարգից, ինչպես նաև՝ բարելավել ազատազրկման հետ չկապված միջոցների և վերաինտեգրման ծրագրերի կիրառումը: Նման ծրագրեր ստեղծելու և կիրառելու համար անհրաժեշտ է խթանել սերտ համագործակցությունը երեխաների վերաբերյալ գործերով արդարադատության տարբեր հատվածների, իրավապահ գործունեություն իրականացնող տարբեր ծառայությունների, սոցիալական ապահովության և կրթական ոլորտի կազմակերպությունների միջև:

III. Տուժող և վկա երեխաների հետ կապված ծրագրեր

43. Հանցագործությունից և լիազորությունների չարաշահումից տուժած անձանց գործերով արդարադատության հիմնական սկզբունքների հռչակագրին համապատասխան՝ պետությունները պետք է փորձեն ապահովել, որ տուժող և վկա երեխաների համար ապահովվի արդարադատության պատշաճ մատչելիություն և արդարացի վերաբերմունք, վնասի հարթում, փոխհատուցում և սոցիալական օժանդակություն: Համապատասխան դեպքերում հարկավոր է միջոցներ ձեռնարկել՝ կանխելու համար քրեական բնույթի գործերի՝ փոխհատուցման միջոցով դատական համակարգից դուրս լուծումն այն դեպքերում, եթե դա չի բխում երեխայի լավագույն շահերից:

44. Ոստիկանությունը, փաստաբանները, դատական համակարգը և դատական այլ ծառայողները պետք է վերապատրաստումներ անցնեն այնպիսի դեպքերի վերաբերյալ, երբ տուժողները երեխաներ են: Պետությունները պետք է նկատի ունենան երեխաների դեմ ուղղված հանցագործություններով մասնագիտացված գրասենյակների և ստորաբաժանումների ստեղծումը, եթե այդպիսիք ստեղծված չեն: Պետություններն ըստ անհրաժեշտության պետք է ձևավորեն գործնական ուղեցույց՝ տուժած երեխաների վերաբերյալ գործերի պատշաճ վարման վերաբերյալ:

45. Անչափահաս տուժողների նկատմամբ պետք է ցուցաբերվի կարեկից մոտեցում և հարգանք նրանց արժանապատվության նկատմամբ: Նրանք իրավունք ունեն օգտվելու ներպետական օրենսդրությամբ սահմանված արդարադատության և իրենց պատճառված վնասի անհապաղ փոխհատուցման մեխանիզմներից:

46. Տուժող երեխաները պետք է կարողանան օգտվել իրենց կարիքներին համապատասխանող օժանդակությունից, ինչպիսիք են՝ իրավական օգնությունը, պաշտպանությունը, տնտեսական օժանդակությունը, խորհրդատվությունը, առողջապահական և սոցիալական ծառայությունները, սոցիալական վերաինտեգրման և ֆիզիկական և հոգեբանական վերականգնման ծառայությունները: Շեշտը պետք է դրվի ընտանիքի և համայնքի վրա հիմնված վերականգնմանը՝ հաստատություններում տեղավորելու փոխարեն:

47. Անհրաժեշտության դեպքում հարկավոր է հիմնել և ամրապնդել դատական և վարչական մեխանիզմներ, որոնք տուժող երեխաներին հնարավորություն կտան պաշտոնական և ոչ պաշտոնական ընթացակարգերով հասնել պատճառված վնասի անհապաղ, արդարացի և մատչելի հարթման: Տուժող երեխաները և/կամ նրանց օրինական ներկայացուցիչները պետք է համապատասխանաբար իրազեկվեն:

48. Պետք է ապահովվի արդարացի և պատշաճ փոխհատուցման հնարավորությունը մարդու իրավունքների խախտումներից, հատկապես՝ խոշտանգումներից և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից, այդ թվում՝ բռնաբարությունից և սեռական չարաշահումներից, ազատությունից ապօրինաբար կամ կամայական զրկումից, չարդարացված կալանավորումից կամ արդարադատության իրականացման հետ կապված չարաշահումներից տուժած երեխաների համար: Պետք է առկա լինեն համապատասխան դատարան կամ տրիբունալ բողոք ներկայացնելու և անհրաժեշտության դեպքում՝ երեխայի մայրենի լեզվով թարգմանություն ապահովելու հնարավորություններ:

49. Վկա երեխաները դատական կամ վարչական ընթացակարգերի ժամանակ օժանդակության կարիք ունեն: Պետությունները պետք է անհրաժեշտության դեպքում ուսումնասիրեն, գնահատեն և բարելավեն հանցագործությունից տուժած երեխաների հետ կապված իրադրությունն իրենց նյութական և դատավարական օրենսդրությունում՝ ապահովելու համար երեխաների իրավունքների լիարժեք պաշտպանությունը: Տարբեր իրավական ավանդույթներին, պրակտիկային և իրավական շրջանակներին համապատասխան՝ քննության և քրեական հետապնդման, ինչպես նաև դատական լսումների ընթացքում հարկավոր է հնարավորինս խուսափել տուժող երեխայի և իրավախախտի ուղղակի շփումից: Պետք է արգելել տուժող երեխայի անվանարկումը լրատվամիջոցներով եթե դա անհրաժեշտ է երեխայի ինքնության գաղտնիությունը պաշտպանելու համար: Եթե արգելումը հակասում է անդամ երկրների հիմնարար իրավական սկզբունքներին, հարկավոր է հնարավորինս խուսափել անվանարկումից:

50. Պետություններն անհրաժեշտության դեպքում պետք է քննարկեն քրեական դատավարության օրենսգրքերում փոփոխություններ կատարելու նպատակահարմարությունը՝ դատարանում երեխայի ցուցմունքների տեսագրումը և տեսագրված ցուցմունքը, ի թիվս այլ միջոցների, որպես պաշտոնական ապացույց ներկայացնելը թույլատրելու կապակցությամբ: Մասնավորապես, ոստիկանությունը, դատախազները, դատավորները և ատենակալները պետք է կիրառեն երեխաների համար առավել նպաստավոր միջոցներ, ասենք՝ ոստիկանական գործողությունների և վկա երեխաների հարցաքննությունների ժամանակ:

51. Տուժող և վկա երեխաների կարիքներին դատական և վարչական ընթացակարգերի համապատասխանությանը հարկավոր է նպաստել հետևյալ միջոցներով.

(ա) տուժող երեխաներին տեղեկացնել իրենց դերակատարության, ընթացակարգերի շրջանակի, տևողության և ընթացքի, ինչպես նաև իրենց վերաբերյալ գործի դիսպոզիցիայի մասին հատկապես այն դեպքերում, երբ խոսքը գնում է լուրջ հանցագործությունների մասին.

(բ) խրախուսել վկաներին նախապատրաստելու մեխանիզմների մշակումը՝ նախքան ցուցմունք տալը երեխաներին ծանոթացնելով քրեական արդարադատության ընթացակարգերին: Իրավական գործընթացի ողջ ժամանակահատվածում պատշաճ օժանդակություն պետք է ցուցաբերվի տուժող և վկա երեխաներին.

(գ) թույլ տալ, որպեսզի տուժող երեխայի տեսակետները և մտահոգությունները ներկայացվեն և ուսումնասիրվեն ընթացակարգերի այն փուլերում, երբ քննարկվում են նրանց շահերին առնչվող

հարցեր՝ առանց մեղադրյալի (ամբաստանյալի) նկատմամբ կանխակալ կարծիք ձևավորելու և քրեական արդարադատության ներպետական համակարգին համաձայն.

(դ) միջոցներ ձեռնարկել քրեական արդարադատության ընթացքում ձգձգումները նվազագույնի հասցնելու ուղղությամբ՝ պաշտպանելով տուժող և վկա երեխաների ինքնության գաղտնիությունը և անհրաժեշտության դեպքում ապահովելով նրանց պաշտպանվածությունն ահաբեկումից և վրեժխնդրությունից:

52. Ապօրինաբար տարհանված կամ սահմանը հատած երեխաները, որպես ընդհանուր կանոն, պետք է վերադարձվեն իրենց ծագման երկիր: Պատշաճ ուշադրություն պետք է դարձվի նրանց ապահովությանը, և վերադարձին սպասելու ընթացքում նրանք պետք է արժանանան մարդասիրական վերաբերմունքի և ստանան անհրաժեշտ օժանդակություն: Նրանք պետք է վերադարձվեն անհապաղ՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային համապատասխանությունն ապահովելու նպատակով: Այն դեպքերում, երբ կիրառելի են Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական ասպեկտների մասին Հաագայի 1980թ. կոնվենցիան կամ Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին Հաագայի 1993թ. կոնվենցիան՝ հաստատված Միջազգային մասնավոր իրավունքի հարցերով Հաագայի համաժողովի կողմից, Ծնողական պարտականությունների և երեխայի պաշտպանությանն ուղղված միջոցների առնչությամբ իրավասության, կիրառելի իրավունքի, ճանաչման, իրականացման և համագործակցության մասին կոնվենցիան՝ պետք է անհապաղ կիրառվեն այս կոնվենցիաների՝ երեխաների վերադարձմանն առնչվող դրույթները: Երեխայի վերադարձին պես նրա ծագման երկիրը պետք է երեխայի նկատմամբ ցուցաբերի հարգալից վերաբերմունք՝ մարդու իրավունքների միջազգային սկզբունքներին համապատասխան, և ընտանիքի վրա հիմնված վերականգնողական միջոցառումներ առաջարկի:

53. Միավորված ազգերի կազմակերպության հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության ծրագիրը, այդ թվում՝ Ծրագրային ցանցը կազմող հաստատությունները, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակը/Մարդու իրավունքների կենտրոնը, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը, ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը, Երեխայի իրավունքների կոմիտեն, ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությունը, Համաշխարհային բանկը և շահագրգիռ ոչ կառավարական կազմակերպությունները պետք է անդամ երկրների խնդրանքով ՄԱԿ-ի բյուջեներից կատարվող ընդհանուր հատկացումների շրջանակներում կամ արտաբյուջետային միջոցներից աջակցեն վերջիններիս՝ իրավապահ մարմինների և քրեական արդարադատությունում ներգրավված այլ անձնակազմի, այդ թվում՝ ոստիկանության ծառայողների, դատախազների, դատավորների և ատենակալների տարաբնույթ վերապատրաստումների, կրթության և տեղեկատվական գործողությունների մշակման նպատակով:

¹ Իր 1997/30 բանաձևի 1-ին պարբերությունում Տնտեսական և սոցիալական խորհուրդը ողջունել է բանաձևի հավելվածում ներկայացված Քրեական արդարադատության համակարգում հայտնված երեխաների նկատմամբ գործողությունների ուղենիշները և առնչվող բոլոր կողմերին կոչ է արել

անչափահասների գործերով արդարադատության մասով Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան իրականացնելիս օգտվել ուղենիշներից:

**Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով
արդարադատության ուղենիշներ (Guidelines on Justice in Matters involving Child Victims and
Witnesses of Crime)**

Բանաձև 2005/20

Տնտեսական և սոցիալական խորհուրդը,

Հիշատակելով իր 1996թ. հուլիսի 23-ի թիվ 1996/16 բանաձևը, որում Գլխավոր քարտուղարին խնդրել էր շարունակել հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության ոլորտում ՄԱԿ-ի ստանդարտների և նորմերի գործածման և կիրառման խթանումը,

Հիշատակելով նաև հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատության ուղենիշների մասին իր 2004թ. հուլիսի 21-ի թիվ 2004/27 բանաձևը, որով խնդրել էր Գլխավոր քարտուղարին՝ ձևավորել միջկառավարական փորձագիտական խումբ՝ հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատության ուղենիշներ մշակելու նպատակով,

Այնուհետ հիշատակելով Գլխավոր Ասամբլեայի 1985թ. նոյեմբերի 29-ի թիվ 40/34 բանաձևը, որով Ասամբլեան հաստատել էր բանաձևին կից ներկայացված Հանցագործություններից և լիազորությունների չարաշահումից տուժած անձանց գործերով արդարադատության հիմնական սկզբունքների հռչակագիրը,

Հիշատակելով Գլխավոր Ասամբլեայի 1989թ. նոյեմբերի 20-ի թիվ 44/25 բանաձևով ընդունված Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, մասնավորապես՝ դրա 3-րդ և 39-րդ հոդվածները, ինչպես նաև՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի՝ Գլխավոր Ասամբլեայի 2000թ. մայիսի 25-ի թիվ 54/263 արձանագրությամբ ընդունված Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամրնտիր արձանագրության դրույթները, մասնավորապես՝ դրա 8-րդ հոդվածը,

Ընդունելով, որ հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատությունը պետք է իրականացվի մեղադրվող անձանց իրավունքների երաշխավորման պայմաններում,

Ընդունելով նաև, որ տուժող և վկա երեխաները հատկապես խոցելի են և իրենց տարիքին, հասունության աստիճանին և առանձնակի կարիքներին համապատասխան հատուկ պաշտպանության, օժանդակության և աջակցության կարիք ունեն՝ հետագա բարդությունները և խեղումը կանխելու նպատակով, որոնք կարող են առաջանալ քրեական արդարադատության գործընթացներին նրանց մասնակցության արդյունքում,

Գիտակցելով հանցագործությունների և վիկտիմիզացիայի լուրջ ֆիզիկական, հոգեբանական և հուզական հետևանքները տուժող և վկա երեխաների համար, հատկապես սեռական շահագործման հետ կապված դեպքերում,

Գիտակցելով նաև այն փաստը, որ քրեական արդարադատության գործընթացում տուժող և վկա երեխաների մասնակցությունն անհրաժեշտ է արդյունավետ քրեական հետապնդում իրականացնելու համար, մասնավորապես այն դեպքերում, երբ տուժող երեխան կարող է միակ վկան լինել,

Ընդունելով Երեխաների իրավունքների հարցերով միջազգային բյուրոյի գործադրած ջանքերը՝ հանցագործությունից տուժած կամ հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատության ուղենիշների մշակման համար հող նախապատրաստելու ուղղությամբ,

Երախտագիտությամբ նշելով Հանցագործությունից տուժած կամ հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատության ուղենիշների մշակման հարցերով միջկառավարական փորձագիտական խմբի հանդիպման ժամանակ կատարված աշխատանքը, որը տեղի է ունեցել Վիեննայում՝ 2005թ. մարտի 16-ին, և որի համար արտաբյուջետային միջոցներ է հատկացրել Կանադայի կառավարությունը, ինչպես նաև՝ ի գիտություն ընդունելով Միջկառավարական փորձագիտական խմբի զեկույցը¹,

Ի գիտություն ընդունելով 2005թ. ապրիլի 18-ից 25-ը Բանգկոկում կայացած Հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության հարցերով, «Ինչպես գործի դնել ստանդարտները. հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության ստանդարտների ներդրման հիսնամյակ» խորագրով ՄԱԿ-ի տասնմեկերորդ համագումարի զեկույցը,

Ողջունելով «Համատեղ ջանքեր և արձագանք. հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության ոլորտի ռազմավարական դաշինքներ» բանգկոկյան հռչակագիրը², որը հաստատվել է Հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության հարցերով ՄԱԿ-ի տասնմեկերորդ համագումարի բարձրաստիճան սեզմենտում, մասնավորապես՝ 17-րդ և 33-րդ պարբերություններում, որոնցում ընդունվում է հանցագործության վկաներին և հանցագործությունից տուժածներին աջակցություն և ծառայություններ տրամադրելու կարևորությունը.

1. *Ընդունում է* սույն բանաձևին կից ներկայացվող Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատության ուղենիշները՝ որպես օգտակար հիմք, որը կարող է օգնել անդամ երկրներին՝ քրեական արդարադատության համակարգում տուժող և վկա երեխաների պաշտպանությունը բարելավելու գործում.

2. *Հորդորում է* անդամ երկրներին՝ քրեական դատավարությունում ներգրավված տուժող և վկա երեխաներին առնչվող օրենսդրություն, ընթացակարգեր, քաղաքականություն մշակելիս և պրակտիկա ձևավորելիս հիմք ընդունել սույն ուղենիշները.

¹ E/CN.15/2005/14/Add.1.

² A/CONF.203/18, chap. I, resolution 1.

3. *Կոչ է անում* այն անդամ երկրներին, որոնք արդեն իսկ մշակել են տուժող և վկա երեխաների վերաբերյալ օրենսդրություն, ընթացակարգեր, քաղաքականություն և պրակտիկա՝ այդ մասին տեղեկատվությունը տրամադրել այլ երկրներին՝ վերջիններիս խնդրանքով և ըստ անհրաժեշտության, ինչպես նաև օժանդակել նրանց՝ վերապատրաստումներ նախապատրաստելու և իրականացնելու, կամ ուղենիշների կիրառումից բխող այլ գործողություններ իրականացնելու գործում:

4. *Կոչ է անում* Թմրանյութերի և հանցավորության հարցերով ՄԱԿ-ի գրասենյակին՝ առկա արտաբուժետային միջոցների հաշվին անդամ երկրներին վերջիններիս խնդրանքով ցուցաբերել տեխնիկական օժանդակություն, որը չի բացառում Թմրանյութերի և հանցավորության հարցերով ՄԱԿ-ի գրասենյակի կանոնավոր բյուջեում առկա միջոցների օգտագործումը³, ինչպես նաև խորհրդատվական ծառայություններ՝ ուղենիշների կիրառման հարցում նրանց օժանդակելու նպատակով:

5. *Խնդրում է* Գլխավոր քարտուղարին՝ ապահովել ուղենիշների հնարավորինս լայն տարածումն անդամ երկրների, ՄԱԿ-ի հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության հարցերով ծրագրային ցանցի և այլ միջազգային, տարածաշրջանային և ոչ կառավարական կազմակերպությունների և հաստատությունների շրջանում:

6. *Առաջարկում է*, որպեսզի անդամ երկրներն ուղենիշները ներկայացնեն համապատասխան կառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների և հաստատությունների ուշադրությանը:

7. *Հորդորում է* ՄԱԿ-ի հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության հարցերով ծրագրային ցանցում ընդգրկված հաստատություններին՝ վերապատրաստում անցկացնել ուղենիշների վերաբերյալ և տեղեկատվություն ամփոփել ներպետական մակարդակում հաջողված մոդելների վերաբերյալ և տարածել այն:

8. *Խնդրում է* Գլխավոր քարտուղարին՝ Հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության հարցերի հանձնաժողովի տասնյոթերորդ նիստի ժամանակ զեկույց ներկայացնել սույն բանաձևի իրականացման վերաբերյալ:

Հավելված

Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատության ուղենիշներ

I. Նպատակները

1. Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատության վերաբերյալ սույն ուղենիշները շարադրում են արդիական գիտելիքների և

³ Այս նոր շարադրանքը հիմք չէ կանոնավոր բյուջեն ավելացնելու կամ լրացուցիչ հավելումներ պահանջելու համար:

համապատասխան միջազգային ու տարածաշրջանային նորմերի, ստանդարտների և սկզբունքների վրա հիմնված դրական փորձը:

2. Ուղենիշները պետք է իրականացվեն համապատասխան ներպետական օրենսդրության և դատական ընթացակարգերի համաձայն, ինչպես նաև՝ հաշվի առնելով իրավական, սոցիալական, տնտեսական, մշակութային և աշխարհագրական պայմանները: Այդուհանդերձ, պետությունները պետք է շարունակաբար ձգտեն հաղթահարել ուղենիշների կիրառման ընթացքում առաջացող գործնական բարդությունները:

3. Ուղենիշները սահմանում են գործնական շրջանակ՝ հետևյալ նպատակներին հասնելու համար.

(ա) օժանդակել ներպետական օրենսդրության, ընթացակարգերի ու պրակտիկայի վերանայմանը, որպեսզի դրանք ապահովեն հանցագործությունից տուժած կամ հանցագործության վկա երեխաների իրավունքների հարգումը և նպաստեն Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի⁴ մասնակից երկրների կողմից այդ կոնվենցիայի իրականացմանը.

(բ) օժանդակել կառավարություններին, միջազգային կազմակերպություններին, հանրային գործակալություններին, ոչ կառավարական և համայնքային կազմակերպություններին ու այլ շահագրգիռ կողմերին՝ հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների հետ կապված հիմնախնդիրների վերաբերյալ օրենսդրություն, քաղաքականություն, ծրագրեր և պրակտիկա մշակելու և իրականացնելու գործում.

(գ) հանցագործությունից տուժած կամ հանցագործության վկա երեխաների հետ աշխատող մասնագետներին, անհրաժեշտության դեպքում՝ նաև կամավորներին ներպետական, տարածաշրջանային և միջազգային մակարդակով ուղղություն ցույց տալ չափահասների և անչափահասների գործերով արդարադատության գործընթացներում՝ հիմնվելով Հանցագործություններից և լիազորությունների չարաշահումից տուժած անձանց գործերով արդարադատության հիմնական սկզբունքների հռչակագրի վրա⁵.

(դ) երեխաների խնամք իրականացնողներին օժանդակություն և աջակցություն տրամադրել՝ հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների հանդեպ սրտացավ վերաբերմունք ցուցաբերելու հարցերում:

4. Ուղենիշներն իրականացնելիս յուրաքանչյուր իրավական համակարգում հարկավոր է ապահովել, որպեսզի ներդրված լինեն վերապատրաստումների և ընտրության չափանիշներ ու ընթացակարգեր՝ պաշտպանելու համար հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաներին և բավարարելու նրանց հատուկ կարիքները՝ այն դեպքերում, երբ վիկտիմիզացիայի բնույթը տարբեր կերպ է անդրադառնում երեխաների տարբեր խմբերի, ասեմք՝ սեռական ոտնձգությունների (հատկապես՝ աղջիկների նկատմամբ) ենթարկվածների վրա:

5. Ուղենիշները վերաբերում են մի ոլորտի, որտեղ գիտելիքներն ու պրակտիկան զարգանում ու կատարելագործվում են: Ուղենիշները չեն հավակնում սպառիչ լինել և ոչ էլ բացառում են հետագա

⁴ Գլխավոր Ասամբլեայի թիվ 44/25 բանաձևի հավելված.

⁵ Գլխավոր Ասամբլեայի թիվ 40/34 բանաձևի հավելված.

զարգացումները, եթե դրանք համահունչ են ուղենիշների հիմքում ընկած նպատակներին ու սկզբունքներին:

6. Ուղենիշները կարող են նաև կիրառվել արդարադատության ոչ ֆորմալ և ավանդական համակարգերում իրականացվող ընթացակարգերի նկատմամբ, ինչպիսիք են՝ վերականգնողական արդարադատությունը և իրավունքի ոչ քրեական բնագավառները, ներառյալ՝ խնամակալության, ամուսնալուծության, որդեգրման, երեխայի պաշտպանության, հոգեկան առողջության, քաղաքացիության, ներգաղթյալների և փախստականների վերաբերյալ օրենսդրությունը (ցանկը սպառիչ չէ):

II. Հատուկ նկատառումներ

7. Ուղենիշները մշակվել են՝

(ա) գիտակցելով, որ աշխարհում միլիոնավոր երեխաներ տուժում են հանցագործությունների և լիազորությունների չարաշահման արդյունքում, և որ այդ երեխաների իրավունքները հավուր պատշաճի ընդունված չեն, ուստի նրանք կարող են հավելյալ զրկանքներ կրել արդարադատության գործընթացին մասնակցելիս.

(բ) ընդունելով, որ երեխաները խոցելի են և իրենց տարիքին, հասունության աստիճանին և անհատական հատուկ կարիքներին համապատասխան հատուկ պաշտպանության կարիք ունեն.

(գ) ընդունելով, որ աղջիկները հատկապես խոցելի են և արդարադատության համակարգի բոլոր փուլերում կարող են խտրականության երևույթների բախվել.

(դ) վերահաստատելով, որ հարկավոր է գործադրել բոլոր ջանքերը՝ երեխաների վիկտիմիզացիան կանխելու համար, ներառյալ՝ Հանցավորության կանխարգելման ուղենիշների իրականացման միջոցով⁶.

(ե) գիտակցելով, որ հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաները կարող են հավելյալ զրկանքներ կրել՝ սխալմամբ իրավախախտ համարվելու դեպքում, երբ նրանք իրականում տուժողներ ու վկաներ են.

(զ) հիշատակելով, որ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան սահմանում է երեխաների իրավունքների արդյունավետ ճանաչումը երաշխավորելու պահանջներ ու սկզբունքներ, ինչպես նաև այն, որ Հանցագործություններից և լիազորությունների չարաշահումից տուժած անձանց գործերով արդարադատության հիմնական սկզբունքների հոչակագիրը սահմանում է սկզբունքներ՝ տուժողներին տեղեկատվության, մասնակցության, վնասի հարթման և օժանդակության իրավունք վերապահելու վերաբերյալ.

(է) հիշատակելով միջազգային և տարածաշրջանային նախաձեռնությունները՝ Հանցագործություններից և լիազորությունների չարաշահումից տուժած անձանց գործերով արդարադատության հիմնական սկզբունքների հոչակագրի իրականացման վերաբերյալ, ներառյալ՝ *«Արդարադատություն տուժողների համար»* ձեռնարկը և քաղաքականություն մշակողների համար նախատեսված *«Հիմնական սկզբունքների հոչակագիր»* խորագրով ուղեցույցը,

⁶ 2002/13 բանաձևի հավելված.

որոնք երկուսն էլ լույս են ընծայվել Թմրանյութերի վերահսկողության և հանցավորության կանխարգելման ՄԱԿ-ի գրասենյակի կողմից՝ 1999 թվականին.

(ը) ընդունելով Երեխաների իրավունքների հարցերով միջազգային բյուրոյի գործադրած ջանքերը՝ հանցագործությունից տուժած կամ հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատության ուղենիշների մշակման համար հող նախապատրաստելու ուղղությամբ,

(թ) նկատի առնելով, որ հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների խնդիրներին բարելավված արձագանքի արդյունքում երեխաները և նրանց ընտանիքներն առավել հոժարակամ կհայտնեն վիկտիմիզացիայի դեպքերի մասին և ավելի լավ կօժանդակեն արդարադատության գործընթացին.

(ժ) հիշեցնելով, որ հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատությունը պետք է երաշխավորվի՝ մեղադրվող և դատապարտված իրավախախտների իրավունքների երաշխավորման պայմաններում.

(ի) հաշվի առնելով իրավական համակարգերի և սովորույթների բազմազանությունը, ինչպես նաև հիշատակելով, որ հանցավորությունը գնալով ավելի անդրազգային երևույթ է դառնում, և որ անհրաժեշտ է ապահովել, որպեսզի հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաները բոլոր երկրներում հավուր պատշաճի պաշտպանություն ստանան:

III. Սկզբունքները

8. Ինչպես նշված է միջազգային փաստաթղթերում, մասնավորապես՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում, և ինչպես արտացոլված է Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեի աշխատություններում, հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատությունն ապահովելու նպատակով, այդ երեխաների բարեկեցության համար պատասխանատու մասնագետները պետք է հարգեն հետևյալ փոխկապակցված սկզբունքները.

(ա) *արժանապատվությունը*. յուրաքանչյուր երեխա յուրօրինակ և բարձրարժեք մարդկային էակ է, և որպես այդպիսին՝ նրա անհատական արժանապատվությունը, հատուկ կարիքները, հետաքրքրությունները և անձնական կյանքը պետք է հարգվեն և պաշտպանվեն.

(բ) *խտրականության բացառումը*. յուրաքանչյուր երեխա արդարացի և հավասար վերաբերմունքի իրավունք ունի՝ անկախ իր, իր ծնողի կամ օրինական ներկայացուցչի ռասայից, ծագումից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գույքային դրությունից, հաշմանդամությունից, ծննդյան կամ այլ կարգավիճակից.

(գ) *երեխայի լավագույն շահերը*. մեղադրյալ և դատապարտյալ իրավախախտների իրավունքները երաշխավորելու հետ մեկտեղ՝ յուրաքանչյուր երեխա իրավունք ունի պահանջելու, որպեսզի իր լավագույն շահերին առաջնային ուշադրություն դարձվի: Դա ներառում է պաշտպանության և ներդաշնակ զարգացման հնարավորությունների իրավունքը.

(i) *պաշտպանությունը*. յուրաքանչյուր երեխա ունի կյանքի և գոյատևելու, զրկանքի, չարաշահման կամ անտեսման ցանկացած դրսևորումից, ներառյալ՝ ֆիզիկական, հոգեբանական, հոգեկան և հուզական չարաշահումից և անտեսումից գերծ մնալու իրավունք,

(ii) *ներդաշնակ զարգացումը*. յուրաքանչյուր երեխա ներդաշնակ զարգացման հնարավորության և ֆիզիկական, հոգեկան, հոգևոր, բարոյական և սոցիալական աճին համարժեք կենսապայմանների իրավունք ունի: Երեխային վնաս պատճառելու դեպքում պետք է ձեռնարկվեն բոլոր քայլերը՝ երեխայի առողջ զարգացումն ապահովելու ուղղությամբ:

(դ) *մասնակցության իրավունքը*. յուրաքանչյուր երեխա, ներպետական դատավարական օրենսդրությամբ սահմանված կարգով պետք է իրավունք ունենա ազատորեն, սեփական բառերով արտահայտելու իր տեսակետները, կարծիքները և համոզումները, և հատկապես՝ ներազդելու իր կյանքին առնչվող որոշումների ընդունման վրա, ներառյալ դատական գործընթացների արդյունքում կայացվող որոշումները. նրանց կարծիքները պետք է հաշվի առնվեն՝ ելնելով վերջիններիս ունակություններից, տարիքից, մտավոր հասունությունից և զարգացման աստիճանից:

IV. Սահմանումներ

9. Սույն ուղենիշներում գործածվել են հետևյալ սահմանումները.

(ա) «հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխա» արտահայտությունը վերաբերում է 18 տարին չլրացած երեխաներին ու դեռահասներին, ովքեր տուժել են հանցագործությունից կամ ականատես են եղել հանցագործությանը՝ անկախ կատարված իրավախախտման մեջ նրանց ունեցած դերից կամ ենթադրյալ իրավախախտների կամ իրավախախտների խմբերի՝ քրեական հետապնդման ընթացքում ունեցած կարգավիճակից:

(բ) «մասնագետներ» արտահայտությունը վերաբերում է այն անձանց, ովքեր իրենց աշխատանքի բերումով շփվում են հանցագործությունից տուժած կամ հանցագործության վկա երեխաների հետ՝ արդարադատության համակարգում հայտնված այն երեխաների կարիքները բավարարելու նպատակով, ում վերաբերում են սույն ուղենիշները: Այդ անձանց թվին են դասվում. երեխայի և վկայի գործերով պաշտպանները և օժանդակող անձինք, երեխայի պաշտպանության ծառայության աշխատողները, երեխայի սոցիալական ապահովության գործակալության անձնակազմը, դատախազները, ըստ անհրաժեշտության՝ նաև փաստաբանները, դիվանագիտական և հյուպատոսական անձնակազմը, ընտանեկան բռնության ծրագրերի անձնակազմը, դատավորները, դատական ծառայողները, իրավապահ մարմինների ծառայողները, բժշկական և հոգեբուժական ոլորտի մասնագետները և սոցիալական աշխատողները:

(գ) «արդարադատության գործընթաց» արտահայտությունը ներառում է հանցագործության բացահայտումը, բողոքի ներկայացումը, քննությունը, քրեական հետապնդումը և դատական ու հետդատական ընթացակարգերը՝ անկախ այն հանգամանքից՝ գործը վարվում է չափահասների կամ անչափահասների համար նախատեսված քրեական արդարադատության ներպետական, միջազգային կամ տարածաշրջանային համակարգում, թե՛ արդարադատության ավանդական կամ ոչ պաշտոնական համակարգում:

(դ) «Երեխաների հանդեպ զգայուն» արտահայտությունը վերաբերում է այնպիսի մոտեցմանը, որը հավասարակշռում է պաշտպանություն ստանալու՝ երեխայի իրավունքը, և որի ժամանակ հաշվի են առնվում երեխայի անհատական կարիքներն ու տեսակետները:

V. Արժանապատիվ ու կարեկից վերաբերմունքի արժանանալու իրավունքը

10. Տուժող և վկա երեխաներն արդարադատության գործընթացում պետք է արժանանան հոգատար և զգայուն վերաբերմունքի՝ հաշվի առնելով նրանց անձնական իրավիճակից և անմիջական կարիքներից, տարիքից, սեռից, հաշմանդամության առկայությունից և հասունության մակարդակից՝ լիարժեք հարգելով նրանց ֆիզիկական, հոգեկան և բարոյական անձեռնմխելիությունը:

11. Յուրաքանչյուր անչափահասի պետք է վերաբերվել որպես անհատի, որն ունի անհատական կարիքներ, ցանկություններ և զգացմունքներ:

12. Երեխայի անձնական կյանքին միջամտությունը պետք է հասցվի անհրաժեշտ նվազագույնի՝ միաժամանակ պահպանելով ապացույցների ձեռքբերման բարձր ստանդարտները՝ արդարադատության գործընթացի արդարացի և անկողմնակալ արդյունքների հասնելու նպատակով:

13. Երեխային հետագա զրկանքներ պատճառելուց խուսափելու համար հարցաքննությունները, խուզարկությունները և քննչական այլ գործողությունները պետք է կատարվեն վերապատրաստում անցած մասնագետների կողմից, ովքեր դա կատարում են զգայուն, հարգալից և հիմնավոր կերպով:

14. Սույն ուղենիշներում նկարագրված բոլոր գործողությունները պետք է կատարվեն երեխաների հանդեպ զգայուն կերպով՝ երեխայի հատուկ կարիքներին համապատասխանող միջավայրում՝ ելնելով նրա ունակություններից, տարիքից, մտավոր հասունությունից և զարգացման աստիճանից: Դրանք պետք է կատարվեն երեխայի կողմից կիրառվող և նրա համար հասկանալի լեզվով:

VI. Խտրականությունից պաշտպանված լինելու իրավունքը

15. Տուժող և վկա երեխաները պետք է կարողանան օգտվել արդարադատության այնպիսի գործընթացից, որը նրանց պաշտպանում է երեխայի, նրա ծնողի կամ օրինական ներկայացուցչի ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գույքային դրությունից, հաշմանդամությունից, ծննդյան կամ այլ կարգավիճակից բխող խտրականությունից:

16. Արդարադատության գործընթացը և տուժող կամ վկա երեխաների ու նրանց ընտանիքների համար հասանելի օժանդակ ծառայությունները պետք է մատուցվեն՝ դյուրագրգաց մոտեցում ցուցաբերելով երեխայի տարիքին, ցանկություններին, ընկալունակությանը, սեռին, սեռական կողմնորոշմանը, էթնիկ, մշակութային, կրոնական, լեզվական և սոցիալական ծագմանը, հասարակությունում զբաղեցրած դիրքին, սոցիալ-տնտեսական պայմաններին, ներգաղթյալի կամ փախստականի կարգավիճակին, ինչպես նաև՝ երեխայի հատուկ կարիքներին, ներառյալ՝ առողջությանը, ունակություններին ու կարողություններին: Մասնագետները պետք է վերապատրաստում անցնեն այս կարգի տարբերությունների վերաբերյալ:

17. Որոշակի դեպքերում կարող է անհրաժեշտ լինել հատուկ ծառայություններ և պաշտպանության միջոցներ ձեռնարկել՝ գենդերային հարցերը և երեխաների դեմ ուղղված որոշ հանցագործությունների, ինչպիսիք են՝ երեխաների ներգրավմամբ սեռական ոտնձգությունները, առանձնահատկությունները հաշվի առնելու նպատակով:

18. Տարիքի գործոնը չպետք է խոչընդոտի արդարադատության գործընթացին լիարժեք մասնակցելու՝ երեխայի իրավունքը: Յուրաքանչյուր երեխա պետք է դիտվի որպես լիարժեք վկա, որը կարող է հարցաքննվել, իսկ նրա տված ցուցմունքները չպետք է անվավեր կամ ոչ արժանահավատ համարվեն՝ ելնելով միայն երեխայի տարիքից, քանի դեռ նրա տարիքը և հասունությունը թույլ են տալիս ողջամիտ և արժանահավատ ցուցմունք տալ՝ հաղորդակցման կամ այլ հարցում օգնություն ստանալով կամ առանց դրա:

VII. Տեղեկացված լինելու իրավունքը

19. Տուժող և վկա երեխաները, նրանց ծնողները կամ խնամակալներն ու օրինական ներկայացուցիչները, արդարադատության գործընթացին իրենց առաջին շփումից սկսած և ողջ գործընթացի ժամանակ պետք է անհապաղ և պատշաճ կերպով հնարավորինս տեղեկացվեն հետևյալի մասին (ցանկը սպառիչ չէ).

(ա) առողջապահական, հոգեբանական, սոցիալական և համապատասխան այլ ծառայությունների, ինչպես նաև նման ծառայություններից օգտվելու հնարավորության, անհրաժեշտության դեպքում իրավական կամ այլ խորհրդատվության կամ ներկայացուցչության, փոխհատուցման և արտակարգ դեպքերում՝ ֆինանսական աջակցության հնարավորությունների հետ մեկտեղ.

(բ) չափահասների և անչափահասների համար նախատեսված քրեական արդարադատության գործընթացի իրականացման ընթացակարգեր, ներառյալ՝ տուժող և վկա երեխաների դերակատարության և նշանակալիության, ցուցմունք տալու տևողության և եղանակի, ինչպես նաև քննության և դատավարության ընթացքում «հարցաքննություն» իրականացնելու ձևերի վերաբերյալ.

(գ) բողոք ներկայացնելիս և քննության ու դատական ընթացակարգերի ժամանակ երեխային աջակցելու առկա մեխանիզմները.

(դ) լսումների և համապատասխան այլ միջոցառումների առանձին վայրերը և ժամանակը.

(ե) պաշտպանության միջոցների առկայությունը.

(զ) տուժող և վկա երեխաներին առնչվող որոշումների վերանայման՝ գոյություն ունեցող մեխանիզմները.

(է) Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով և Հանցագործություններից և լիազորությունների չարաշահումից տուժած անձանց գործերով արդարադատության հիմնական սկզբունքների հռչակագրով տուժող և վկա երեխաների համար սահմանված իրավունքները:

20. Բացի այդ, տուժող վկաները, նրանց ծնողները կամ խնամակալները և օրինական ներկայացուցիչները պետք է հնարավորինս անհապաղ և պատշաճ կերպով տեղեկացվեն հետևյալի մասին.

(ա) տվյալ գործի ընթացքը և բնույթը, ներառյալ՝ մեղադրյալի ձեռքարկությունը, կալանավորումը և նման այլ կարգավիճակը և այդ կարգավիճակի ցանկացած սպասելի փոփոխություն, մեղադրող կողմի որոշումները և համապատասխան հետադատական զարգացումները և գործի ելքը.

(բ) արդարադատության գործընթացում իրավախախտի կամ պետության կողմից վնասի հարթման առկա հնարավորությունները՝ այլընտրանքային քաղաքացիական վարույթի կամ այլ ընթացակարգերի միջոցով:

VIII. Լսված լինելու և տեսակետներ ու մտահոգություններ արտահայտելու իրավունքը

21. Մասնագետները պետք է գործադրեն բոլոր ջանքերը՝ տուժող և վկա երեխաներին արդարադատության գործընթացում իրենց ներգրավման վերաբերյալ տեսակետներն ու մտահոգություններ հայտնելու հնարավորություն ընձեռելու ուղղությամբ, այդ թվում՝ հետևյալ միջոցներով.

(ա) ապահովելով, որ տուժող, անհրաժեշտության դեպքում՝ նաև վկա երեխաներին խորհրդատվություն տրամադրվի վերը՝ 19-րդ պարբերությունում նշված հարցերի շուրջ.

(բ) ապահովելով, որ տուժող և վկա երեխաները հնարավորություն ունենան ազատորեն և սեփական ոճով արտահայտելու իրենց տեսակետներն ու մտահոգությունները արդարադատության գործընթացում իրենց ներգրավման, մեղադրյալի կողմից իրենց սպառնացող վտանգի, ինչպես նաև ցուցմունք տալու նախընտրելի եղանակի և այն զգացողությունների մասին, որ նրանք ունեն գործընթացի հետ կապված եզրակացությունների առնչությամբ.

(գ) պատշաճ ուշադրության առնել երեխայի տեսակետներն ու մտահոգությունները, իսկ եթե նրանք ի վիճակի չեն ընթացք տալ դրան՝ պատճառները բացատրել երեխային:

IX. Արդյունավետ օժանդակություն ստանալու իրավունքը

22. Տուժող և վկա երեխաները, համապատասխան դեպքերում՝ նաև նրանց ընտանիքի անդամները պետք է կարողանան օգտվել ստորև՝ 40-րդ և 42-րդ պարբերություններում նշված վերապատրաստումներ անցած մասնագետների կողմից ցուցաբերվող օժանդակությունից: Դա կարող է ներառել օժանդակության և աջակցության հետևյալ ծառայությունները. ֆինանսական, իրավական, խորհրդատվական, առողջապահական, սոցիալական ու կրթական, ֆիզիկական ու հոգեբանական վերականգնման, ինչպես նաև՝ երեխայի վերաինտեգրման համար անհրաժեշտ այլ ծառայություններ: Օժանդակության բոլոր այդ տարատեսակները պետք է արձագանքեն երեխայի կարիքներին և նրան հնարավորություն ընձեռեն արդյունավետորեն մասնակցելու արդարադատության գործընթացի բոլոր փուլերում:

23. Տուժող և վկա երեխաներին օժանդակություն ցուցաբերելիս մասնագետները պետք է գործադրեն աջակցությունը համակարգելուն ուղղված բոլոր ջանքերը, որպեսզի երեխան չենթարկվի չափից ավելի միջամտության:

24. Տուժող և վկա երեխաներն օժանդակությունը պետք է ստանան օժանդակող այնպիսի անձանցից, ինչպիսիք են՝ տուժող/վկա երեխաների հարցերով մասնագետները, ովքեր

աշխատանքը սկսում են նախնական զեկույցից և շարունակում են մինչև այն պահը, երբ այդ ծառայություններն այլևս անհրաժեշտ չեն:

25. Մասնագետները պետք է մշակեն և իրականացնեն այնպիսի միջոցառումներ, որոնք ուղղված են վկայություն կամ ցուցմունք տալը երեխաների համար հեշտացնելուն, մինչդատական և դատական փուլերում հաղորդակցությունը և ընկալումը բարելավելուն: Այդ միջոցները կարող են ներառել հետևյալը.

(ա) ներգրավել տուժող և վկա երեխաների հարցերով մասնագետների՝ երեխայի հատուկ կարիքները բավարարելու նպատակով.

(բ) ներգրավել օժանդակող անձանց, այդ թվում՝ մասնագետների և ընտանիքի համապատասխան անդամների, ովքեր ցուցմունք տալու պահին գտնվում են երեխայի հետ.

(գ) անհրաժեշտության դեպքում խնամակալ նշանակել՝ երեխայի իրավական շահերը պաշտպանելու նպատակով:

X. Մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքը

26. Տուժող և վկա երեխայի մասնավոր կյանքի գաղտնիությունը պետք է պաշտպանվի՝ որպես առաջնային կարևորության խնդիր:

27. Արդարադատության գործընթացում երեխայի ներգրավման մասին տեղեկատվության գաղտնիությունը պետք է պահպանվի: Դա կարող է իրականացվել այն տեղեկատվությունը գաղտնի պահելու կամ դրա հրապարակումը սահմանափակելու միջոցով, որը կարող է հանգեցնել արդարադատության գործընթացում որպես տուժող կամ վկա ներգրավված երեխայի ինքնության բացահայտման:

28. Հարկավոր է միջոցներ ձեռք առնել՝ երեխաներին անհարկի անվանարկումից պաշտպանելու ուղղությամբ, օրինակ՝ երեխայի հարցաքննության ժամանակ բացառելով հանրության և լրատվամիջոցների ներկայությունը դատական նիստերի դահլիճում, եթե դա թույլատրվում է ներպետական օրենսդրությամբ:

XI. Արդարադատության գործընթացում զրկանքներից պաշտպանված լինելու իրավունքը

29. Մասնագետները պետք է միջոցներ ձեռնարկեն կալանքի, քննության և քրեական հետապնդման ընթացքում զրկանքները բացառելու ուղղությամբ՝ տուժող և վկա երեխաների լավագույն շահերը և արժանապատվությունը հարգելու նպատակով:

30. Մասնագետները պետք է տուժող և վկա երեխաների հանդեպ զգայուն մոտեցում ցուցաբերեն, որպեսզի.

(ա) աջակցություն ցուցաբերվի տուժող և վկա երեխաներին, ներառյալ՝ արդարադատության գործընթացում ներգրավվածության ողջ ընթացքում երեխային ուղեկցելը, եթե դա բխում է նրա լավագույն շահերից.

(բ) ապահովվի գործընթացի որոշակիությունը, ներառյալ՝ գործընթացից տուժող և վկա երեխաների ակնկալիքների առավելագույն հնարավոր հստակեցումը: Լսումներին և դատավարությանը

երեխայի մասնակցությունը պետք է ծրագրվի նախապես, և բոլոր ջանքերը պետք է գործադրվեն՝ ապահովելու համար երեխաների և գործընթացի ողջ ընթացքում նրանց հետ առնչվող անձանց շփումների անընդհատությունը.

(գ) ապահովվի դատական քննության հնարավորինս վաղ իրականացումը, եթե ձգձգումները չեն բխում երեխայի լավագույն շահերից: Տուժող և վկա երեխաներին առնչվող հանցագործությունների քննությունը ևս պետք է արագացվի և պետք է առկա լինեն տուժող և վկա երեխաների մասնակցությամբ գործերի արագացված դատաքննության կարգ սահմանող ընթացակարգեր, օրենքներ ու դատական կանոններ.

(դ) կիրառվեն երեխայի հանդեպ զգայուն ընթացակարգեր, այդ թվում՝ երեխաների համար նախատեսված հարցաքննության սենյակները, մեկ վայրում գործող բազմամասնագիտական ծառայությունները տուժող և վկա երեխաների համար, վերանայված դատական միջավայրը, որն ուշադրություն է դարձնում վկա երեխաներին, երեխայի հարցաքննությունների ընդմիջումները, լսումների նշանակումն այնպիսի ժամերի, որը համապատասխանում է երեխայի տարիքին և հասունությանը, ծանուցման պատշաճ համակարգը, որն ապահովում է, որպեսզի երեխան դատարան գնա միայն անհրաժեշտության դեպքում, ինչպես նաև երեխայի կողմից ցուցմունք տալու առումով նպաստավոր համապատասխան այլ միջոցները:

31. Մասնագետները պետք է նաև իրականացնեն այնպիսի միջոցառումներ, որոնք.

(ա) կնվազեցնեն հարցաքննությունների թիվը: Պետք է սահմանել տուժող և վկա երեխաներից ցուցմունք ստանալու հատուկ ընթացակարգեր՝ հարցաքննությունների, ցուցմունքների, լսումների, և հատկապես՝ արդարադատության գործընթացի հետ անհարկի շփումների թիվը նվազեցնելու նպատակով, այդ թվում՝ տեսաձայնագրման կիրառմամբ.

(բ) եթե դա նախատեսված է տվյալ իրավական համակարգով՝ կապահովեն տուժող և վկա երեխաների պաշտպանությունը հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի կողմից հարցաքննվելուց՝ միաժամանակ հարգելով երեխայի՝ պաշտպանության իրավունքը: Անհրաժեշտության դեպքում տուժող և վկա երեխաները պետք է հարցաքննվեն (այդ թվում՝ դատարանում) հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի տեսադաշտից դուրս պայմաններում. պետք է նաև տրամադրվեն առանձին դատական սպասասրահներ և մեկուսի հարցաքննության տարածքներ.

(գ) կապահովեն, որ տուժող և վկա երեխաները հարցաքննվեն երեխայի հանդեպ զգայուն եղանակով՝ դատավորների կողմից հսկողության հնարավորությամբ, նպաստելով ցուցմունքներ տալու գործընթացին և կրճատելով ահաբեկման հնարավորությունը, օրինակ՝ ցուցմունք տալիս օգնելու կամ հոգեբան փորձագետներ նշանակելու միջոցով:

XII. Անվտանգության իրավունքը

32. Այն դեպքերում, երբ տուժող կամ վկա երեխայի անվտանգությանը վտանգ է սպառնում, հարկավոր է պատշաճ միջոցներ ձեռնարկել՝ իշխանության համապատասխան մարմիններին այդ սպառնալիքի մասին տեղեկացնելու պահանջ սահմանելու և երեխային այդ ռիսկից նախքան արդարադատության գործընթացը, դրա ընթացքում և դրանից հետո պաշտպանելու նպատակով:

33. Երեխաների հետ առնչություն ունեցող մասնագետներից պետք է պահանջվի, որպեսզի վերջիններս իշխանության համապատասխան մարմիններին հայտնեն տուժող կամ վկա երեխային պատճառված, պատճառվող կամ պատճառվելիք վնասի մասին:

34. Մասնագետները պետք է վերապատրաստվեն՝ տուժող և վկա երեխաների նկատմամբ ահաբեկումը, սպառնալիքն ու վնասները ճանաչելու և կանխելու թեմաներով: Այն դեպքերում, երբ տուժող կամ վկա երեխաները կարող են ենթարկվել ահաբեկման ու սպառնալիքների կամ վնասվել՝ պետք է սահմանել երեխայի անվտանգությունն ապահովող պայմաններ: Այդ երաշխիքները կարող են ներառել.

(ա) տուժող և վկա երեխաների և հանցագործություն կատարելու մեջ մեղադրվողների միջև ուղղակի շփումներից արդարադատության գործընթացի ցանկացած փուլում խուսափելը.

(բ) դատարանի որոշմամբ նշանակվող սահմանափակումները և հաշվառման համակարգը.

(գ) մեղադրյալի մինչդատական կալանավորումը և նրա նկատմամբ «շփումների արգելման» պայմանով գրավի կիրառումը.

(դ) մեղադրյալին տնային կալանքի վերցնելը.

(ե) Հնարավոր և նպատակահարմար բոլոր դեպքերում տուժող և վկա երեխաներին ոստիկանության կամ համապատասխան այլ գերատեսչությունների պաշտպանությանը հանձնելը՝ ապահովելով նրանց գտնվելու վայրի գաղտնիությունը:

XIII. Պատճառված վնասի հարթման իրավունքը

35. Լիարժեք փոխհատուցման, վերաինտեգրման և վերականգնման հասնելու համար պետք է հնարավորության դեպքում հարթվի տուժող երեխաներին պատճառված վնասը: Վնասի հարթումն ստանալու և իրականացնելու ընթացակարգերը պետք է մատչելի և երեխաների հանդեպ զգայուն լինեն:

36. Եթե այդ ընթացակարգերը երեխաների հանդեպ զգայուն են և դրանցում հարգվել են սույն ուղենիշները, հարկավոր է խրախուսել քրեական և վնասի հարթման ընթացակարգերի համակցումը ոչ պաշտոնական և համայնքային արդարադատության այնպիսի ընթացակարգերի հետ, ինչպիսին վերականգնողական արդարադատությունն է:

37. Վնասի հարթումը պետք է ներառի քրեական գործեր քննող դատարանի որոշմամբ իրավախախտի նկատմամբ նշանակված վերականգնման պարտավորությունը, պետության կողմից իրականացվող տուժողների փոխհատուցման ծրագրերը և քաղաքացիական վարույթի կարգով վնասների փոխհատուցումը: Հնարավոր դեպքերում սոցիալական և կրթական վերաինտեգրման, բուժման, հոգեկան առողջության հետ կապված խնամքի և իրավաբանական ծառայությունների ծախսերը պետք է փոխհատուցվեն: Հարկավոր է սահմանել ընթացակարգեր, որոնք կապահովեն վնասի հարթման որոշումների և վնասի գումարի գանձման կատարումը՝ նախքան տուգանքների նշանակումը:

XIV. Հատուկ կանխարգելիչ միջոցների իրավունքը

38. Բոլոր երեխաների համար սահմանվելիք կանխարգելիչ միջոցներից զատ, պահանջվում են հատուկ ռազմավարություններ տուժող և վկա այն երեխաների վերաբերյալ, ովքեր առանձնապես խոցելի են կրկնակի վիկտիմիզացիայի կամ հանցավորության առումով:

39. Մասնագետները պետք է մշակեն և իրականացնեն համապարփակ և հատուկ հարմարեցված ռազմավարություններ և միջամտություններ՝ այն դեպքերում, երբ տուժող երեխաների հետագա վիկտիմիզացիան հնարավոր է: Այդ ռազմավարությունները և միջամտություններն իրականացնելիս հարկավոր է հաշվի առնել վիկտիմիզացիայի բնույթը, այդ թվում՝ վիկտիմիզացիան՝ պայմանավորված ընտանեկան չարաշահումներով, սեռական շահագործմամբ, հաստատություններում կատարված չարաշահումներով և թրաֆիքինգով: Ռազմավարությունները կարող են նախաձեռնված լինել կառավարության մակարդակով, հարևանների կամ քաղաքացիների կողմից:

XV. Իրականացումը

40. Տուժող և վկա երեխաների հետ աշխատող մասնագետների համար պետք է հասանելի լինեն համապատասխան վերապատրաստումները, կրթությունը և տեղեկատվությունը՝ տուժող և վկա երեխաներին պաշտպանելուն և նրանց նկատմամբ արդյունավետ ու զգայուն վերաբերմունք ցուցաբերելուն ուղղված մասնագիտացված մեթոդները բարելավելու և պահպանելու նպատակով:

41. Մասնագետները պետք է արդյունավետ վերապատրաստում անցնեն՝ տուժող և վկա երեխային պաշտպանելու և նրա կարիքները բավարարելու վերաբերյալ, այդ թվում՝ մասնագիտացված ստորաբաժանումներում և ծառայություններում:

42. Այդ վերապատրաստումը պետք է ներառի.

(ա) մարդու իրավունքների համապատասխան նորմերը, ստանդարտներն ու սկզբունքները, այդ թվում՝ երեխայի իրավունքները.

(բ) այդ անձանց աշխատանքի սկզբունքները և աշխատավայրում ընդունված էթիկայի կանոնները.

(գ) երեխաների դեմ ուղղված հանցագործությունների մասին վկայող նշանները.

(դ) ճգնաժամային գնահատման հմտություններն ու տեխնիկան, հատկապես՝ ուղղորդման հետ կապված՝ շեշտը դնելով գաղտնիությունը պահպանելու անհրաժեշտության վրա.

(ե) երեխաների դեմ ուղղված հանցագործությունների ազդեցությունը, հետևանքները, ներառյալ՝ բացասական ֆիզիկական և հոգեբանական ներգործությունը և պատճառած վնասը.

(զ) արդարադատության գործընթացում տուժող և վկա երեխաներին օժանդակելու հատուկ միջոցներն ու տեխնիկան.

(է) միջմշակութային և տարիքային, լեզվական, կրոնական, սոցիալական ու գենդերային հարցերը.

(ը) չափահաս-երեխա հաղորդակցման հմտությունները.

(թ) հարցազրույցի վարման և գնահատման տեխնիկան, որը նվազագույնի է հասցնում երեխային հասցվող վնասը՝ միաժամանակ առավելագույնի հասցնելով երեխայից ստացված տեղեկատվության որակը.

(ժ) տուժող և վկա երեխաների հետ զգայուն, ընկալունակ, կառուցողական և համոզման վրա հիմնված վարվեցողության հմտությունները.

(ի) ապացույցները պահպանելու ու ներկայացնելու, և վկա երեխաներին հարցաքննելու մեթոդները.

(լ) տուժող և վկա երեխաների հետ աշխատող մասնագետների դերակատարությունը և նրանց կողմից կիրառվող մեթոդները:

43. Մասնագետները պետք է գործադրեն բոլոր ջանքերը՝ երեխաներին աջակցելիս միջմասնագիտական և համագործակցված մոտեցում ցուցաբերելու ուղղությամբ՝ ծանոթանալով առկա այնպիսի ծառայությունների լայն շրջանակին, ինչպիսիք են՝ տուժողների աջակցությունը, պաշտպանությունը, տնտեսական օժանդակությունը, խորհրդատվությունը, կրթությունը, առողջապահությունը, իրավական և սոցիալական ծառայությունները: Այդ մոտեցումը կարող է ներառել արդարադատության գործընթացի տարբեր փուլերում արձանագրությունների ընդունումը, որոնք կխթանեն տուժող և վկա երեխաներին ծառայություններ մատուցող սուբյեկտների միջև համագործակցությունը, ինչպես նաև բազմամասնագիտական աշխատանքի այլ ձևերը, որոնք առնչվում են ոստիկանությանը, դատախազությանը, առողջապահական, սոցիալական ծառայություններին և հոգեբանական անձնակազմին, և որոնք իրենց գործունեությունը ծավալում են մեկ վայրում:

44. Անհրաժեշտ է ամրապնդել միջազգային համագործակցությունը պետության և հասարակության բոլոր հատվածների միջև՝ թե՛ ներպետական, և թե՛ միջազգային մակարդակներով, այդ թվում՝ տեղեկատվության հավաքումը և փոխանակումը խթանելու և տուժող և վկա երեխաներին առնչվող անդրազգային հանցագործությունների բացահայտման, քննության և քրեական հետապնդման նպատակով փոխադարձ օգնության միջոցով:

45. Արդարադատության գործընթացում ներգրավված տուժող և վկա երեխաներին առնչվող օրենքներ և քաղաքականություն, ստանդարտներ և արձանագրություններ մշակելիս մասնագետները պետք է օգտվեն սույն ուղենիշներից:

46. Մասնագետները, արդարադատության գործընթացում ներգրավված այլ գերատեսչությունների հետ համատեղ պետք է կարողանան պարբերաբար վերանայել և գնահատել իրենց դերակատարությունը՝ երեխայի իրավունքների պաշտպանության և սույն ուղենիշների արդյունավետ իրականացման գործում:

36-րդ լիազուսմար հանդիպում, 22-ը հուլիսի, 2005թ.

Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններ (Տոկիոյի կանոններ) (United Nations Standard Minimum Rules for Non-custodial Measures (The Tokyo Rules))

Հաստատվել են Գլխավոր Ասամբլեայի 1990թ. դեկտեմբերի 14-ի թիվ 45/110 բանաձևով

I. Ընդհանուր սկզբունքներ

1. Հիմնական նպատակները

1.1. Սույն ստանդարտ կանոններում շարադրված է հիմնական սկզբունքների ամբողջություն, որի նպատակն ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների կիրառումը խթանելն է, ինչպես նաև բանտարկության այլընտրանքների ենթարկվող անձանց վերաբերյալ նվազագույն երաշխիքներ սահմանելը:

1.2. Կանոնները նախատեսված են քրեական արդարադատության կառավարմանը, հատկապես՝ իրավախախտների հետ աշխատանքներին համայնքի առավել նշանակալի ներգրավվածությունը, ինչպես նաև իրավախախտների մոտ հասարակության հանդեպ պատասխանատվության զգացումը խթանելու համար:

1.3. Կանոնները պետք է իրականացվեն՝ հաշվի առնելով յուրաքանչյուր երկրի քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային պայմանները և տվյալ երկրի քրեական արդարադատության համակարգի նպատակներն ու խնդիրները:

1.4. Կանոններն իրականացնելիս անդամ երկրները պետք է ձգտեն ապահովել պատշաճ հավասարակշռությունն անհատ իրավախախտների իրավունքների, տուժողների իրավունքների և հանրային անվտանգության և հանցավորության կանխարգելման կապակցությամբ հասարակության մտահոգությունների միջև:

1.5. Անդամ երկրները պետք է իրենց իրավական համակարգերում որպես այլընտրանք ձևավորեն ազատությունից զրկելու հետ չկապված այլ միջոցներ՝ դրանցով կրճատելով բանտարկության կիրառումը և բարելավելով քրեական արդարադատության քաղաքականությունները՝ հաշվի առնելով մարդու իրավունքները, սոցիալական արդարության պահանջները և իրավախախտի վերականգնման հետ կապված կարիքները:

2. Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների շրջանակը

2.1. Սույն կանոնների համապատասխան դրույթները պետք է կիրառվեն քրեական հետապնդման, դատաքննության կամ դատավճռի կատարման ենթակա բոլոր անձանց նկատմամբ՝ քրեական արդարադատության իրականացման բոլոր փուլերում: Կանոնների տեքստում «իրավախախտ» արտահայտությունը վերաբերում է այդ անձանց՝ անկախ այն հանգամանքից՝ նրանք կասկածյալ են, մեղադրյալ, թե՛ դատապարտյալ:

2.2. Կանոնները պետք է կիրառվեն առանց խտրականության՝ պայմանավորված ռասայով, մաշկի գույնով, սեռով, տարիքով, լեզվով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքով, ազգային կամ սոցիալական ծագումով, գույքային դրությամբ, ծննդով և այլ կարգավիճակով:

2.3. Իրավախախտման բնույթի և ծանրության, իրավախախտի անձի և կենսագրության, ինչպես նաև՝ հասարակության պաշտպանության նկատառումներից ելնելով առավել ճկունություն և պահովելու և բանտարկության անհարկի կիրառումից խուսափելու նպատակով քրեական արդարադատության համակարգը պետք է ապահովի ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների առկայությունը՝ մինչդատական փուլից մինչև դատավճռի կայացումից հետո ընկած ժամանակահատվածը կիրառելու համար: Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների թիվը և տեսակները պետք է նշանակվեն այնպես, որպեսզի հետագայում պատժի կիրառումը հնարավոր լինի:

2.4. Ազատագրված հետ չկապված նոր միջոցների մշակումը պետք է խրախուսվի և մանրակրիտ մշտադիտարկման ենթարկվի, իսկ դրանց կիրառումը պետք է կանոնավորապես գնահատվի:

2.5. Պետք է նկատի ունենալ իրավախախտներին համայնքում պահելու տարբերակը՝ հնարավորինս խուսափելով պաշտոնական գործընթացներից կամ գործի դատական քննությունից՝ իրավական երաշխիքների և օրենքի գերակայության պայմաններում:

2.6. Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցները պետք է կիրառվեն նվազագույն միջամտության սկզբունքին համապատասխան:

2.7. Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցները, պատիժներից և քրեականացումից խուսափելու համընդհանուր շարժմանը խոչընդոտելու կամ այդ ուղղությամբ ջանքերի գործադրումը հետաձգելու փոխարեն պետք է այդ շարժման մաս կազմեն:

3. Իրավական երաշխիքներ

3.1. Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների ներդրումը, սահմանումը և կիրառումը պետք է սահմանված լինեն օրենքով:

3.2. Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցի ընտրությունը պետք է հիմնված լինի իրավախախտման բնույթի ու ծանրության, իրավախախտի կենսագրության, պատժի նպատակների և տուժողների իրավունքների ոլորտում սահմանված չափանիշների գնահատման վրա:

3.3. Սահմանված ընթացակարգերի բոլոր փուլերում դատական կամ այլ իրավասու անկախ մարմնի հայեցողությունը պետք է դրսևորվի լիարժեք հաշվետվականության պայմաններում և միայն օրենքի գերակայության շրջանակներում:

3.4. Իրավախախտի համար պարտականություն սահմանող, նախքան պաշտոնական ընթացակարգերը կամ դատաքննությունը կամ դրանց փոխարեն կիրառված ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների պարագայում պահանջվում է իրավախախտի համաձայնությունը:

3.5. Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների կիրառման որոշումները իրավախախտի բողոքի հիման վրա կարող են վերանայվել դատական կամ այլ իրավասու անկախ մարմնի կողմից:

3.6. Իրավախախտը պետք է ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների իրականացման ընթացքում իր անհատական իրավունքներին առնչվող դեպքերում դատական կամ այլ իրավասու անկախ մարմին միջնորդություն կամ բողոք ներկայացնելու իրավունք ունենա:

3.7. Պետք է սահմանվի միջազգայնորեն ճանաչված մարդկային իրավունքների վերաբերյալ գանգատներին ընթացք տալու և, հնարավորության դեպքում՝ իրավիճակը շտկելու մեխանիզմ:

3.8. Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցները չպետք է իրավախախտին ֆիզիկական կամ հոգեկան վնաս պատճառելու չհիմնավորված ռիսկ ենթադրող բժշկական կամ հոգեբանական փորձերի կիրառում ենթադրեն:

3.9. Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների ենթարկվող իրավախախտի արժանապատվությունը միշտ պետք է հարգվի:

3.10. Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցներ կիրառելիս իրավախախտի իրավունքները չպետք է սահմանափակվեն ավելին, քան թույլատրված է բուն որոշումը կայացրած իրավասու մարմնի կողմից:

3.11. Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցները կիրառելիս իրավախախտի, ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամների անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը պետք է պահպանվի:

3.12. Իրավախախտի անձնական տվյալների գաղտնիությունը պետք է խստագույնս պահպանվի և փակ լինի երրորդ անձանց համար: Նման տվյալները պետք է հասանելի լինեն միայն իրավախախտի գործը վարելու համար պատասխանատու կամ լիազորված այլ անձանց համար:

4. Վերապահում

4.1. Սույն կանոնների որևէ դրույթ չի կարող մեկնաբանվել որպես Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների, Անչափահասների գործերով արդարադատության իրականացման ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտների, Կալանքի կամ բանտարկության ցանկացած ձևի ենթարկված բոլոր անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածուի կամ միջազգային հանրության կողմից ընդունված, իրավախախտների նկատմամբ իրականացվող գործողությունների և նրանց հիմնական մարդկային իրավունքներին առնչվող ցանկացած այլ փաստաթղթի և ստանդարտների կիրառման բացառում:

II. Մինչդատական փուլը

5. Մինչդատական որոշումներ

5.1. Անհրաժեշտության դեպքում, և եթե դա սահմանված է իրավական համակարգով, դատախազությունը կամ քրեական գործերով զբաղվող այլ գերատեսչությունները պետք է իրավունք ունենան իրավախախտին ազատելու պատասխանատվությունից, եթե գտնում են, որ հասարակության պաշտպանության, հանցավորության կանխարգելման, օրինապահ վարքագծի կամ տուժողների իրավունքների նկատմամբ հարգանքը խթանելու տեսակետից գործին ընթացք

տալն անհրաժեշտ չէ: Պատասխանատվությունից ազատելու կամ վարույթը կարճելու նպատակահարմարության վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով յուրաքանչյուր իրավական համակարգում պետք է մշակվեն չափանիշներ: Ոչ ծանր իրավախախտումների դեպքերում դատախազը կարող է ըստ անհրաժեշտության կիրառել ազատությունից զրկելու հետ չկապված համապատասխան միջոցներ:

6. Մինչդատական կալանքի կիրառումից ձեռնպահ մնալը

6.1. Մինչդատական կալանքը պետք է քրեական վարույթի ընթացքում կիրառվի որպես ծայրահեղ միջոց՝ պատշաճ ուշադրություն դարձնելով ենթադրվող իրավախախտման քննությանը և հասարակության և տուժողի պաշտպանությանը:

6.2. Մինչդատական կալանքի այլընտրանքները պետք է կիրառվեն հնարավորինս վաղ փուլում: Մինչդատական կալանքը պետք է տևի ոչ ավելի, քան անհրաժեշտ է 5.1 կանոնով սահմանված խնդիրներն իրականացնելու համար, և պետք է իրականացվի մարդասիրաբար՝ հարգելով մարդկային էակներին բնորոշ արժանապատվությունը:

6.3. Իրավախախտը պետք է իրավունք ունենա դատական կամ այլ իրավասու անկախ մարմնին բողոքարկելու մինչդատական կալանքի որոշումը:

III. Դատավճռի կայացման և պատժի նշանակման փուլը

7. Սոցիալական հետազոտության հաշվետվություն

7.1. Եթե սոցիալական հետազոտության հաշվետվությունների կազմումը հնարավոր է, դատական իշխանության մարմինը կարող է օգտվել իրազեկ, իրավասու պաշտոնյայի կամ գերատեսչության կողմից պատրաստված զեկույցից: Զեկույցը պետք է սոցիալական տեղեկատվություն պարունակի իրավախախտի մասին՝ կապված նախկինում անձի հանցավոր վարքագծին և տվյալ իրավախախտմանը: Այն պետք է ներառի նաև դատավճռի կայացման գործընթացին համահունչ տեղեկատվություն և առաջարկություններ: Զեկույցը պետք է հիմնված լինի փաստերի վրա, լինի անաչառ և անկողմնակալ՝ պարզորոշ շարադրված կարծիքներով:

8. Պատժի նշանակումը

8.1. Դատական իշխանության մարմինը, իր տրամադրության տակ ունենալով ազատությունից զրկելու հետ չկապված բազմաթիվ միջոցներ, իր որոշումը կայացնելիս պետք է հաշվի առնի իրավախախտի՝ վերականգնման հետ կապված կարիքները, հասարակության պաշտպանությունը և տուժողի շահերը. վերջինիս հետ հարկավոր է խորհրդակցել բոլոր անհրաժեշտ դեպքերում:

8.2. Պատիժ նշանակող մարմինները գործի վերաբերյալ կարող են կայացնել հետևյալ որոշումները.

(ա) բանավոր պատիժներ, ինչպիսիք են՝ նկատողությունը, խիստ նկատողությունը և նախազգուշացումը,

(բ) պատժից պայմանական ազատումը,

(գ) կարգավիճակի հետ կապված տույժերը,

(դ) տնտեսական և դրամական բնույթի տույժերը, ինչպիսիք են՝ տուգանքները և օրական եկամտից կատարվող պահումները,

(ե) բռնագրավման կամ առգրավման կարգադրությունը,

(զ) տուժողին պատճառված վնասը հարթելու կամ փոխհատուցելու պարտականություն դնելը,

(է) պատժի կասեցումը կամ հետաձգումը,

(ը) պրոբացիան և դատական հսկողությունը,

(թ) համայնքային ծառայության վերաբերյալ կարգադրությունները,

(ժ) խնամքի կենտրոն հաճախելու պարտականություն սահմանելը,

(ի) տնային կալանքը,

(լ) հաստատություններում պահելու հետ չկապված ցանկացած այլ միջոց,

(խ) վերը թվարկված այս կամ այն միջոցների համակցությունը:

IV. Դատավճռի կայացումից հետո ընկած ժամանակահատվածը

9. Պատժի նշանակումից հետո ընկած ժամանակահատվածի համար կայացվող որոշումներ

9.1. Իրավասու մարմինն իր տրամադրության տակ պետք է ունենա պատժի նշանակումից հետո նշանակվող այլընտրանքային միջոցների լայն ընտրություն՝ հաստատությունում տեղավորելուց խուսափելու և հասարակությունում վաղօրոք վերաինտեգրվելու հարցում իրավախախտներին աջակցելու նպատակով:

9.2. Պատժի նշանակումից հետո ընկած ժամանակահատվածի համար կարող են կայացվել հետևյալ որոշումները.

(ա) արձակումները կամ ազատմանը նախապատրաստելու համար նախատեսված տներում տեղավորելը,

(բ) աշխատանքի կամ կրթության նպատակով տրամադրվող արձակումները,

(գ) պայմանական վաղաժամկետ ազատման տարբեր տեսակները,

(դ) պատժի մեղմացումը,

(ե) ներումը:

9.3. Պատժի նշանակումից հետո ընկած ժամանակահատվածի համար կայացվող որոշումները, բացառությամբ ներման, կարող են վերանայվել դատական կամ այլ իրավասու անկախ մարմնի կողմից՝ իրավախախտի դիմումի հիման վրա:

9.4. Հաստատությունից ազատ արձակելը կամ ազատությունից զրկելու հետ չկապված ծրագրի դադարեցումը պետք է քննարկվի հնարավորինս վաղ փուլում:

V. Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների իրականացումը

10. Հսկողությունը

10.1. Հսկողություն սահմանելու նպատակը կրկնահանգավորության նվազեցումն է և հասարակությունում իրավախախտի ինտեգրմանն աջակցելն այնպիսի եղանակով, որի պայմաններում նվազագույնի է հասցվում հանցավոր վարքին վերադառնալու հավանականությունը:

10.2. Եթե ազատությունից զրկելու հետ չկապված միջոցը հսկողություն է ենթադրում, ապա այդ հսկողությունը պետք է իրականացվի իրավասու մարմնի կողմից՝ օրենքով սահմանված հատուկ պայմաններով:

10.3. Ազատությունից զրկելու տվյալ տեսակի շրջանակներում հսկողության և իրականացվելիք գործողությունների ամենից ավելի նպատակահարմար եղանակը պետք է ընտրվի յուրաքանչյուր դեպքի համար առանձին, որի նպատակն է՝ աջակցել իրավախախտին՝ աշխատելու իր իրավախախտ վարքագիծը շտկելու ուղղությամբ: Հսկողության և իրականացվելիք գործողությունների եղանակները պետք է պարբերաբար վերանայվեն և ըստ անհրաժեշտության փոփոխվեն:

10.4. Իրավախախտները պետք է անհրաժեշտության դեպքում ստանան հոգեբանական, սոցիալական և նյութական օժանդակություն, ինչպես նաև համայնքի հետ կապերն ամրապնդելու և հասարակությունում վերաինտեգրվելու գործընթացը խթանելու հնարավորություններ:

11. Տևողությունը

11.1. Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցի տևողությունը չպետք է գերազանցի իրավասու մարմնի կողմից օրենքի հիման վրա սահմանված տևողությունը:

11.2. Նշանակված միջոցի հանդեպ իրավախախտի պարտաճանաչ վերաբերմունքի դեպքում կարող է նշանակված միջոցի դադարեցման որոշում կայացվել:

12. Պայմանները

12.1. Իրավասու մարմնի կողմից իրավախախտի նկատմամբ կատարման համար պարտադիր պայմաններ սահմանելիս հարկավոր է հաշվի առնել թե՛ հասարակության կարիքները և թե՛ իրավախախտի և տուժողի իրավունքները:

12.2. Կատարման համար պարտադիր պայմանները պետք է լինեն գործնական, հստակ ու հնարավորինս սակավաթիվ և պետք է նպատակ ունենան նվազեցնելու իրավախախտի կողմից հանցավոր վարքագծի կրկնության հավանականությունը և ավելացնելու վերջինիս սոցիալական ինտեգրման հնարավորությունները՝ հաշվի առնելով տուժողի կարիքները:

12.3. Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցի կիրառման սկզբից նեթ իրավախախտը պետք է գրավոր և բանավոր պարզաբանում ստանա տվյալ միջոցի կիրառումն իրականացնելու պայմանների, այդ թվում՝ իր պարտականությունների և իրավունքների վերաբերյալ:

12.4. Պայմանները կարող են վերանայվել սահմանված համապատասխան դրույթների հիման վրա՝ ելնելով իրավախախտի մոտ առկա առաջընթացից:

13. Իրականացվող գործողությունների ընթացքը

13.1. Ազատությունից զրկելու հետ չկապված տվյալ միջոցի շրջանակներում, համապատասխան դեպքերում անհրաժեշտ է մշակել զանազան ծրագրեր, ինչպիսիք են՝ անհատական դեպքերի վարումը, խմբային թերապիան, հաստատություններում անցկացվող ծրագրերը և իրավախախտների տարբեր խմբերի համար նախատեսված մասնագիտացված գործողությունները՝ իրավախախտների կարիքներին առավել արդյունավետ արձագանքելու նպատակով:

13.2. Այդ գործողությունները պետք է իրականացնեն համապատասխան վերապատրաստում անցած և գործնական փորձառություն ունեցող մասնագետները:

13.3. Նման գործողությունների անհրաժեշտության վերաբերյալ որոշում կայացնելու դեպքում հարկավոր է ջանքեր գործադրել իրավախախտի կենսագրությունը, անձը, հակումները, մտավոր կարողությունները, արժեքները և հատկապես՝ իրավախախտումը կատարելուն դրդած հանգամանքներն ընկալելու ուղղությամբ:

13.4. Իրավասու մարմինը կարող է ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների կիրառմանը ներգրավել համայնքային կամ սոցիալական աջակցության համակարգերը:

13.5. Գործերի հասցեագրումը պետք է կատարվի հնարավորինս իրատեսական և կառավարելի ձևով՝ գործողությունների ծրագրի արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով:

13.6. Իրավասու մարմինը պետք է յուրաքանչյուր իրավախախտի վերաբերյալ անձնական գործ կազմի և վարի այն:

14. Կարգապահությունը և պայմանների խախտումը

14.1. Իրավախախտի կողմից կատարման համար պարտադիր պայմանների խախտումը կարող է հանգեցնել ազատությունից զրկելու հետ չկապված միջոցի փոփոխման կամ վերացման:

14.2. Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցի փոփոխումը կամ վերացումը պետք է կատարվի իրավասու մարմնի կողմից. նախքան նման քայլի դիմելը հարկավոր է մանրակրկիտ ուսումնասիրել թե՛ վերահսկող պաշտոնյայի, և թե՛ իրավախախտի ներկայացրած փաստարկները:

14.3. Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցի ձախողումը չի կարող ինքնըստինքյան հանգեցնել ազատազրկման հետ կապված միջոցի կիրառման:

14.4. Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցի փոփոխման կամ վերացման դեպքում իրավասու մարմինը պետք է փորձի ազատությունից զրկելու հետ չկապված այլընտրանքային միջոց գտնել: Ազատազրկման ձևով պատիժ կարող է նշանակվել միայն համապատասխան այլընտրանքների բացակայության դեպքում:

14.5. Օրենքով հարկավոր է սահմանել պայմանների խախտման դեպքում իրավախախտին ձերբակալելու և հսկողության տակ պահելու իրավասություն:

14.6. Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցի փոփոխման կամ վերացման պահից սկսած՝ իրավախախտը պետք է այդ որոշումը դատական կամ այլ իրավասու անկախ մարմնի բողոքարկելու իրավունք ունենա:

VI. Անձնակազմը

15. Հավաքագրումը

15.1. Անձնակազմը համալրելիս պետք է բացառվի ռասայի, մաշկի գույնի, սեռի, տարիքի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային դրության, ծննդյան և այլ կարգավիճակի վրա հիմնված խտրականությունը: Անձնակազմի հավաքագրման վերաբերյալ քաղաքականություն իրականացնելիս հարկավոր է ուշադրության առնել «փոխհատուցվող խտրականության»⁷ վերաբերյալ ներպետական քաղաքականությունը և արտացոլել հսկողության ենթակա իրավախախտների բազմազանությունը:

15.2. Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցներ կիրառելու համար նշանակված անձինք պետք է անձնապես հարմար լինեն այդ աշխատանքի համար և, հնարավորության դեպքում, համապատասխան մասնագիտական վերապատրաստում անցած լինեն և գործնական փորձառություն ունենան: Պահանջվող որակները պետք է հստակ սահմանված լինեն:

15.3. Որակավորում ունեցող անձնակազմի առկայություն և ծառայական կարգավիճակ ապահովելու համար հարկավոր է ապահովել աշխատանքի բնույթին համարժեք պատշաճ վարձատրություն ու արտոնություններ և ապահովել մասնագիտական աճի ու կարիերայի զարգացման զանազան հնարավորություններ:

16. Անձնակազմի վերապատրաստումը

16.1. Վերապատրաստման նպատակը պետք է լինի անձնակազմին իրավախախտների վերականգնման հետ կապված իրենց պարտականություններին ծանոթացնելը՝ իրավախախտների իրավունքները և հասարակությանը պաշտպանելու պայմանով: Վերապատրաստումները պետք է նաև անձնակազմին թույլ տան ընկալել շահագրգիռ գերատեսչությունների միջև համագործակցության և գործողությունների համակարգման անհրաժեշտությունը:

16.2. Նախքան պարտականությունների կատարմանն անցնելը անձնակազմը պետք է անցնի վերապատրաստում, որը պետք է ներառի հրահանգավորում ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների բնույթի, հսկողության նպատակների և ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների կիրառման տարբեր եղանակների վերաբերյալ:

16.3. Պարտականությունները ստանձնելուց հետո անձնակազմը պետք է պահպանի և կատարելագործի իր գիտելիքներն ու մասնագիտական կարողությունները՝ հաճախելով աշխատանքին զուգահեռ վերապատրաստումների և կրկնողական դասընթացների: Այդ նպատակով պետք է տրամադրվեն պատշաճ պայմաններ:

VII. Կամավորներ և համայնքային այլ ներուժ

17. Հանրության մասնակցությունը

⁷ Աշխատանքի ընդունելը՝ սովորաբար խտրականությունների ենթարկվող խմբերին առավելություններ տրամադրելու մտադրությամբ, առաջնային քաղաքական ծրագիր՝ ուղղված ռասայական խտրականության վերացմանը (ծանոթագրությունը՝ թարգմանչի)։

17.1. Հանրության մասնակցությունը պետք է խրախուսվի, քանի որ այն խոշոր ներուժ է և ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների ենթարկվող իրավախախտի և ընտանիքի ու համայնքի միջև կապերի բարելավման կարևորագույն գործոններից մեկը: Այդ մասնակցությունը պետք է լրացնի քրեական արդարադատության իրականացման պատասխանատու վարչակազմի ջանքերը:

17.2. Հանրության մասնակցությունը պետք է դիտվի որպես հնարավորություն համայնքի անդամների համար՝ իրենց իսկ հասարակությունը պաշտպանելու գործում ներդրում կատարելու առումով:

18. Հանրային ընկալումը և համագործակցությունը

18.1. Պետական գերատեսչությունները, մասնավոր սեկտորը և լայն հանրությունը պետք է խրախուսվեն՝ ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների կիրառումը խթանող կամավորական կազմակերպություններին աջակցելու հարցում:

18.2. Հարկավոր է պարբերաբար կազմակերպել կոնֆերանսներ, սեմինարներ, սիմպոզիումներ և այլ միջոցառումներ՝ ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների կիրառմանը հանրության մասնակցության անհրաժեշտության վերաբերյալ:

18.3. Լրատվության բոլոր միջոցները պետք է ներգրավվեն կառուցողական հանրային վերաբերմունք ձևավորելու գործին, ինչի արդյունքում կիրականացվեն ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների առավել լայն կիրառությանը և իրավախախտների սոցիալական ինտեգրացիային նպաստող գործողություններ:

18.4. Պետք է գործադրվեն բոլոր ջանքերը՝ ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների կիրառման գործում հանրության դերակատարության մասին հանրությանը տեղեկացնելու ուղղությամբ:

19. Կամավորները

19.1. Կամավորները պետք է մանրակրիտ ուսումնասիրվեն և հավաքագրվեն՝ հիմնվելով կատարելիք աշխատանքի հանդեպ նրանց վերաբերմունքի և հետաքրքրվածության վրա: Նրանք պետք է պատշաճ վերապատրաստում անցնեն ստանձնելիք պարտականությունների վերաբերյալ և հնարավորություն ունենան խորհրդատվություն ստանալու իրավասու մարմնից և խորհրդակցելու վերջինիս հետ:

19.2. Կամավորները, ելնելով իրենց կարողություններից և իրավախախտի կարիքներից, պետք է խրախուսեն իրավախախտներին և նրանց ընտանիքներին, որպեսզի վերջիններս ձևավորեն բազմապիսի շփումներ համայնքի հետ, ինչպես նաև այլ, ավելի լայն կապեր հաստատեն՝ խորհրդատվություն և այլ համապատասխան օժանդակություն տրամադրելու միջոցով:

19.3. Կամավորները պետք է ապահովագրված լինեն պատահարներից, վնասվածքներից և իրենց պարտականությունները կատարելու կապակցությամբ հանրային պատասխանատվությունից: Պետք է ապահովվի նրանց կողմից ի շահ համայնքի բարեկեցության մատուցվող ծառայությունների հանրային ճանաչումը:

VIII. Հետազոտություն, պլանավորում, քաղաքականության ձևավորում և գնահատում

20. Հետազոտություն և պլանավորում

20.1. Որպես պլանավորման գործընթացի կարևոր կողմ՝ հարկավոր է ջանքեր գործադրել իրավախախտների նկատմամբ ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների խթանման վերաբերյալ հետազոտության անցկացմանը հանրությանը և մասնավոր մարմիններին ներգրավելու ուղղությամբ:

20.2. Հարկավոր է պարբերաբար ուսումնասիրել շահառուներին, պրակտիկ աշխատողներին, համայնքին և քաղաքականություն մշակողներին խոչընդոտող խնդիրները:

20.3. Քրեական արդարադատության համակարգում պետք է ներդրվեն հետազոտության և տեղեկատվության մեխանիզմներ՝ իրավախախտների նկատմամբ ազատությունից զրկելու հետ չկապված միջոցներ կիրառելու իրականացման վերաբերյալ տվյալներ ու վիճակագրություն հավաքելու և վերլուծելու համար:

21. Քաղաքականության ձևավորում և ծրագրի մշակում

21.1. Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցները պետք է համակարգված ձևով պլանավորվեն և իրականացվեն որպես քրեական արդարադատության անքակտելի մաս՝ զարգացման համապետական գործընթացի շրջանակներում:

21.2. Հարկավոր է իրականացնել կանոնավոր գնահատումներ՝ ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների իրականացումն առավել արդյունավետ դարձնելու նպատակով:

21.3. Անհրաժեշտ է պարբերաբար վերանայումներ իրականացնել՝ ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների հետ կապված խնդիրները, դրանց ազդեցությունն ու արդյունավետությունը գնահատելու նպատակով:

22. Կապեր համապատասխան գերատեսչությունների և գործողությունների հետ

22.1. Հարկավոր է տարբեր մակարդակներում գործարկել համապատասխան մեխանիզմներ՝ ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների համար պատասխանատու ծառայությունների, քրեական արդարադատության համակարգի այլ ճյուղերի, սոցիալական ապահովության, առողջապահության, բնակարանային ապահովության, կրթության և աշխատանքի պետական և ոչ պետական գործակալությունների և լրատվամիջոցների միջև կապը խթանելու համար:

23. Միջազգային համագործակցությունը

23.1. Անհրաժեշտ է ջանքեր գործադրել հասատատություններում պահելու հետ չկապված միջոցների բնագավառում երկրների միջև գիտական համագործակցությունը խթանելու ուղղությամբ: Անդամ երկրների միջև ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ հետազոտությունները, վերապատրաստումները, տեխնիկական օժանդակությունը և տեղեկատվության փոխանակումը հարկավոր է ամրապնդել հանցավորության կանխարգելման և իրավախախտների նկատմամբ վերաբերմունքի հարցերով ՄԱԿ-ի հաստատությունների միջոցով՝ ՄԱԿ-ի քարտուղարության սոցիալական զարգացման և մարդասիրական հարցերի կենտրոնի

Հանցավորության կանխարգելմանն քրեական արդարադատության հարցերով ստորաբաժանման հետ սերտ համագործակցությամբ:

23.2. Պետք է լրացուցիչ հետազոտություններ և օրենսդրական դրույթների ներդաշնակեցում իրականացնել՝ հաստատություններում տեղավորելու այլընտրանքների շրջանակն ընդլայնելու և դրանց կիրառումը նաև երկրից դուրս տարածելու նպատակով՝ Պայմանական դատապարտված կամ պայմանական ազատված իրավախախտների նկատմամբ հսկողության իրավասությունը փոխանցելու վերաբերյալ մոդելային համաձայնագրին համապատասխան:

Կալանքի կամ ազատազրկման որևէ ձևի ենթարկված բոլոր անձանց պաշտպանության հիմնական սկզբունքներ (Body of Principles for the Protection of All Persons under Any Form of Detention or Imprisonment)

Գլխավոր Ասամբլեան՝

Հիշատակելով 1980թ. դեկտեմբերի 15-ի թիվ 35/177 բանաձևը, որով Կալանքի կամ ազատազրկման որևէ ձևի ենթարկված բոլոր անձանց պաշտպանության հիմնական սկզբունքների մշակումը հանձնարարվել էր Վեցերորդ կոմիտեին և որոշվել էր այդ նպատակով անժամկետ աշխատանքային խումբ ձևավորել,

Ի գիտություն ընդունելով Կալանքի կամ ազատազրկման որևէ ձևի ենթարկված բոլոր անձանց պաշտպանության հիմնական սկզբունքների մշակման աշխատանքային խմբի հաշվետվությունը, որը գումարվել էր Գլխավոր Ասամբլեայի քառասուներեքերորդ նիստի ընթացքում և որն ավարտել էր հիմնական սկզբունքների նախագծի մշակումը,

Հաշվի առնելով, որ աշխատանքային խումբը որոշել է հիմնական սկզբունքների նախագծի տեքստը քննարկման և ընդունման համար ներկայացնել Վեցերորդ կոմիտեին,

Համոզված լինելով, որ Հիմնական սկզբունքների նախագծի ընդունմամբ կարևոր նպաստ կբերվի մարդու իրավունքների պաշտպանության գործին,

Նկատի առնելով Հիմնական սկզբունքների տեքստի լայն տարածման անհրաժեշտությունը.

1. հաստատում է Կալանքի կամ ազատազրկման որևէ ձևի ենթարկված բոլոր անձանց պաշտպանության հիմնական սկզբունքները, որի տեքստը կցված է սույն բանաձևին.
2. իր երախտագիտությունն է հայտնում Կալանքի կամ ազատազրկման որևէ ձևի ենթարկված բոլոր անձանց պաշտպանության հիմնական սկզբունքների մշակման աշխատանքային խմբին՝ Հիմնական սկզբունքների մշակման գործում ունեցած կարևոր ներդրման համար,
3. խնդրում է Գլխավոր քարտուղարին՝ Միավորված ազգերի կազմակերպության անդամ երկրներին կամ մասնագիտացված գործակալությունների անդամներին տեղեկացնել Հիմնական սկզբունքների հաստատման մասին,
4. Հորդորում է գործադրել բոլոր ջանքերը՝ Հիմնական սկզբունքների համընդհանուր ճանաչումը և հարգումն ապահովելու ուղղությամբ:

Հավելված

Կալանքի կամ ազատազրկման որևէ ձևի ենթարկված բոլոր անձանց պաշտպանության հիմնական սկզբունքներ

Հիմնական սկզբունքների կարգավորման շրջանակը

Սույն սկզբունքները կիրառելի են կալանքի կամ ազատազրկման որևէ ձևի ենթարկված բոլոր անձանց նկատմամբ:

Գործածված տերմինները

Սույն հիմնական սկզբունքների իմաստով.

(ա) «ձերբակալություն» արտահայտությունը վերաբերում է ենթադրյալ իրավախախտումը կատարելու համար անձին իշխանության մարմնի որոշմամբ արգելանքի վերցնելուն.

(բ) «կալանավորված անձ» արտահայտությունը վերաբերում է անձնական ազատությունից զրկված ցանկացած անձի, եթե ազատությունից զրկելը տեղի չի ունեցել հանցագործություն կատարելու համար դատապարտվելու արդյունքում.

(գ) «ազատազրկված անձ» արտահայտությունը վերաբերում է հանցագործության կատարման համար դատապարտվելու հետևանքով անձնական ազատությունից զրկված ցանկացած անձի.

(դ) «կալանք» արտահայտությունը վերաբերում է վերը նշված կալանավորված անձանց պահելու պայմաններին.

(ե) «ազատազրկում» արտահայտությունը վերաբերում է վերը նշված ազատազրկված անձանց պահելու պայմաններին.

(զ) «դատական կամ այլ մարմին» արտահայտությունը վերաբերում է օրենքով նախատեսված դատական կամ այլ մարմնին, որի կարգավիճակը և լիազորությունները նրանց օժտում են իրավասության, անկողմնակալության և անկախության հնարավորինս ամուր երաշխիքներով:

Սկզբունք 1

Կալանքի կամ ազատազրկման որևէ ձևի ենթարկված բոլոր անձանց նկատմամբ անհրաժեշտ է դրսևորել մարդասիրական վերաբերմունք և հարգել մարդ արարածին բնորոշ արժանապատվությունը:

Սկզբունք 2

Ձերբակալումը, կալանքը կամ ազատազրկումը պետք է կիրառվեն օրենքի դրույթներին խստիվ համապատասխան և նման լիազորությամբ օժտված պաշտոնյաների կամ անձանց կողմից:

Սկզբունք 3

Կալանքի կամ ազատազրկման որևէ ձևի ենթարկված անձանց մարդկային որևէ իրավունք, որը ճանաչված է որևէ երկրի օրենսդրությամբ, կոնվենցիաներով, կանոնակարգերով կամ սովորույթներով՝ չի կարող սահմանափակվել կամ չեղյալ համարվել այն պատճառաբանությամբ, որ իբրև սույն հիմնական սկզբունքները չեն ճանաչում այդ իրավունքները կամ նվազ չափով են ճանաչում դրանք:

Սկզբունք 4

Կալանքի կամ ազատագրկման բոլոր եղանակները, ինչպես նաև կալանքի կամ ազատագրկման որևէ ձևի ենթարկված անձի մարդկային իրավունքների վրա ազդող բոլոր միջոցները պետք է նշանակվեն կամ արդյունավետորեն վերահսկվեն դատական կամ այլ մարմնի կողմից:

Սկզբունք 5

1. Սույն սկզբունքները կիրառվում են տվյալ երկրի տարածքում գտնվող բոլոր անձանց նկատմամբ՝ առանց ռասայով, մաշկի գույնով, սեռով, լեզվով, կրոնով կամ դավանանքով, քաղաքական կամ այլ հայացքներով, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագման, գույքային, ծննդյան կամ այլ կարգավիճակով պայմանավորված որևէ տարբերակման:

2. Բացառապես կանանց, հատկապես՝ հղի կանանց և կերակրող մայրերի, երեխաների ու անչափահասների, տարեցների, վատառողջ կամ անդամալույծ անձանց նկատմամբ կիրառված, օրենքով նախատեսված միջոցները և վերջիններիս իրավունքների ու սոցիալական կարգավիճակի պաշտպանության համար նախատեսված օրենքները չպետք է խտրականություն համարվեն: Նման միջոցները և դրանց կիրառման անհրաժեշտությունը պետք է մշտապես վերանայվի դատական կամ այլ մարմնի կողմից:

Սկզբունք 6

Կալանքի կամ ազատագրկման որևէ ձևի ենթարկված որևէ անձ չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի*: Որևէ հանգամանք չի կարող խոշտանգման կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արդարացում համարվել:

* «Դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք կամ պատժ» արտահայտությունը պետք է մեկնաբանվի այնպես, որպեսզի ներառի պաշտպանությունը ֆիզիկական կամ հոգեկան վատ վերաբերմունքից, այդ թվում՝ կալանավորված կամ ազատագրկված անձին այնպիսի պայմաններում պահելուց, որը նրան ժամանակավորապես կամ ընդմիջտ զրկում է իր բնական զգայարաններից որևէ մեկից օգտվելու հնարավորությունից, ինչպիսիք են՝ տեսողությունը կամ լսողությունը կամ տարածության և ժամանակի զգացողությունը:

Սկզբունք 7

1. Պետությունները պետք է օրենքով արգելեն սույն սկզբունքներով սահմանված իրավունքներին և պարտականություններին հակասող ցանկացած գործողություն՝ այդ գործողությունների դեպքում կիրառելով պատշաճ պատժամիջոցներ և բողոքների հիման վրա իրականացնելով անկողմնակալ քննություն:

2. Պաշտոնատար անձինք, ովքեր հիմքեր ունեն կարծելու, որ տեղի է ունեցել կամ պատրաստվում է տեղի ունենալ սույն հիմնական սկզբունքների խախտում, պետք է այդ մասին զեկուցեն իրենց վերադաս մարմիններին և, անհրաժեշտության դեպքում՝ քննության կամ իրավունքների վերականգնման իրավասություններով օժտված համապատասխան այլ մարմինների:

3. Ցանկացած անձ, ով հիմքեր ունի կարծելու, որ տեղի է ունեցել կամ պատրաստվում է տեղի ունենալ սույն հիմնական սկզբունքների խախտում, պետք է այդ մասին հայտնի ներգրավված

պաշտոնատար անձանց վերադաս մարմիններին, ինչպես նաև՝ քննության կամ իրավունքների վերականգնման իրավասություններով օժտված համապատասխան այլ մարմինների:

Սկզբունք 8

Կալանավորված անձանց նկատմամբ վերաբերմունքը պետք է համապատասխանի դատապարտված չլինելուց բխող նրանց կարգավիճակին: Հետևաբար, նրանք պետք է հնարավորության սահմաններում ազատագրված անձանցից անջատ պահվեն:

Սկզբունք 9

Անձին ձերբակալող, նրան կալանքի տակ պահող կամ գործը քննող մարմինները պետք է իրականացնեն միայն օրենքով իրենց վերապահված լիազորություններ, և այդ լիազորությունների իրականացումը պետք է հնարավոր լինի վերանայել դատարանի կամ այլ մարմնի կողմից:

Սկզբունք 10

Ձերբակալված ցանկացած անձ պետք է ձերբակալման պահին տեղեկացվի ձերբակալման պատճառների մասին և անհապաղ տեղեկացվի իրենց վերագրվող մեղադրանքի մասին:

Սկզբունք 11

1. Անձը չպետք է կալանքի տակ պահվի՝ առանց դատական կամ այլ մարմնի կողմից լավելու իրական հնարավորության: Կալանավորված անձը պետք է իրավունք ունենա ինքնուրույն իրականացնելու իր պաշտպանությունը կամ ստանալու օրենքով սահմանված պաշտպանի օգնությունը:
2. Կալանավորված անձը և նրա պաշտպանը, եթե այդպիսին ներգրավվել է, պետք է անհապաղ և լիարժեք ծանուցվի կալանքի թույլտվության ցանկացած որոշման մասին, ընդ որում՝ ծանուցման մեջ նշելով կալանավորման պատճառները:
3. Դատական կամ այլ մարմինը պետք է իրավունք ունենա ըստ անհրաժեշտության վերանայելու կալանքի շարունակման հարցը:

Սկզբունք 12

1. Անհրաժեշտ է հավուր պատշաճի արձանագրել.
 - (ա) ձերբակալման պատճառները,
 - (բ) ձերբակալման և անձին անազատության վայր փոխադրելու, ինչպես նաև՝ դատական կամ այլ մարմին առաջին անգամ ներկայացնելու ժամանակը,
 - (գ) իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց ինքնությունը,
 - (դ) հստակ տեղեկություններ անազատության վայրի վերաբերյալ:
2. Այդ արձանագրությունները պետք է օրենքով սահմանված կարգով տրամադրվեն կալանավորված անձին, նրա պաշտպանին, եթե ադպիսին ներգրավված է:

Սկզբունք 13

Ցանկացած անձ, ձերբակալման պահին, կալանքի կամ ազատագրկման իրականացումն սկսելիս կամ դրանից անմիջապես հետո պետք է համապատասխանաբար իր ձերբակալման, կալանավորման կամ ազատագրկման համար պատասխանատու մարմնի կողմից տեղեկություն և պարզաբանում ստանա իր իրավունքների և այդ իրավունքներից օգտվելու եղանակների մասին:

Սկզբունք 14

Իր ձերբակալման, կալանավորման կամ ազատագրկման համար պատասխանատու մարմինների կողմից գործածվող լեզուն պատշաճ մակարդակով չհասկացող կամ այդ լեզվին չտիրապետող անձն իրավունք ունի իր համար հասկանալի լեզվով անհապաղ ստանալ 10-րդ սկզբունքում, 11-րդ սկզբունքի 2-րդ պարբերությունում, 12-րդ սկզբունքի 1-ին պարբերությունում և 13-րդ սկզբունքում հիշատակված տեղեկատվությունը և, անհրաժեշտության դեպքում, անվճար ստանալ թարգմանչի ծառայություններ՝ կապված իրեն ձերբակալելուն հաջորդող իրավական ընթացակարգերի հետ:

Սկզբունք 15

Չնայած 16-րդ սկզբունքի 4-րդ պարբերությունում և 18-րդ սկզբունքի 3-րդ պարբերությունում նախատեսված վերապահումներին, արտաքին աշխարհի, հատկապես՝ ընտանիքի կամ պաշտպանի հետ շփվելու՝ կալանավորված կամ ազատագրկված անձի իրավունքը չի կարող չեղյալ համարվել ավելի, քան մի քանի օր տևողությամբ:

Սկզբունք 16

1. Ձերբակալման պահից և կալանավորման կամ ազատագրկման մեկ վայրից մյուսը փոխադրելուց անմիջապես հետո կալանավորված կամ ազատագրկված անձը պետք է իրավունք ունենա դիմելու իրավասու մարմնին՝ իր ձերբակալման, կալանավորման, ազատագրկման, մեկ վայրից մյուսը փոխադրվելու և իր գտնվելու վայրի մասին իր ընտանիքի անդամներին կամ իր ընտրությամբ՝ այլ անձանց ծանուցելու խնդրանքով:

2. Եթե կալանավորված կամ ազատագրկված անձն օտարերկրացի է, նա նաև պետք է համապատասխան միջոցներով տեղեկացվի իր քաղաքացիության երկրի հյուպատոսական գրասենյակի կամ դիվանագիտական առաքելության, կամ միջազգային իրավունքով նրա հետ կապ պահպանելու իրավասություն ունեցող այլ մարմնի, կամ, եթե նա փախստական է կամ այլ կերպ գտնվում է միջկառավարական կազմակերպության պաշտպանության ներքո՝ իրավասու միջազգային կազմակերպության ներկայացուցչի հետ կապ հաստատելու իրավունքի մասին:

3. Եթե կալանավորված կամ ազատագրկված անձն անչափահաս է կամ ի վիճակի չէ հասկանալու իր իրավունքները, իրավասու մարմինը պետք է սեփական նախաձեռնությամբ իրականացնի սույն սկզբունքում հիշատակված ծանուցումը: Հատուկ ուշադրություն պետք է դարձվի ծնողներին կամ խնամակալներին ծանուցելուն:

4. Սույն սկզբունքում հիշատակված ցանկացած ծանուցում պետք է իրականացվի կամ դրա իրականացումը պետք է թույլատրվի անհապաղ: Իրավասու մարմինն, այդուհանդերձ, կարող է ողջամիտ ժամկետով հետաձգել ծանուցումը, եթե դա բխում է քննության բացառիկ շահերից:

Սկզբունք 17

1. Կալանավորված անձը պետք է պաշտպանի ծառայություններից օգտվելու հնարավորություն ունենա: Նա պետք է ձեռքարկվում լինի անմիջապես հետո իրավասու մարմնի կողմից տեղեկացվի այդ իրավունքի մասին և ողջամիտ հնարավորություն ստանա այդ իրավունքն իրականացնելու համար:

2. Եթե կալանավորված անձը չունի սեփական ցանկությամբ ընտրված պաշտպան, նա պետք է իրավունք ունենա ստանալ դատական կամ այլ մարմնի կողմից նշանակված փաստաբանի ծառայություններ բոլոր այն դեպքերում, երբ արդարադատության շահերն այդ են պահանջում, և նա չպետք է վճարի այդ ծառայությունների դիմաց, եթե բավարար միջոցներ չունի դրա համար:

Սկզբունք 18

1. Կալանավորված կամ ազատագրված դատապարտված անձն իրավունք ունի հաղորդակցվել և խորհրդակցել իր պաշտպանի հետ:

2. Կալանավորված կամ ազատագրված անձին պետք է բավարար ժամանակ և հնարավորություն տրամադրվի իր պաշտպանի հետ խորհրդակցությունների համար:

3. Իր պաշտպանի հետ անհապաղ և առանց գրաքննության խորհրդակցելու և հաղորդակցվելու՝ կալանավորված կամ ազատագրված անձի իրավունքը չի կարող կասեցվել կամ սահմանափակվել, բացառությամբ օրենքով կամ օրենքի ուժ ունեցող կանոնակարգերով նախատեսված բացառիկ դեպքերի, երբ դատական կամ այլ մարմինը գտնում է, որ դա անվտանգության և կարգուկանոնի տեսակետից անխուսափելի է:

4. Կալանավորված կամ ազատագրված անձի և նրա պաշտպանի միջև զրույցները կարող են տեղի ունենալ իրավապահ մարմնի աշխատողի տեսադաշտում, սակայն նրա լսողության սահմաններից դուրս:

5. Կալանավորված կամ ազատագրված անձի և նրանց պաշտպանների միջև սույն սկզբունքում նշված զրույցները սկզբունքորեն պետք է չընդունվեն որպես կալանավորված կամ ազատագրված անձի դեմ ուղղված ապացույց, եթե միայն դրանք կապված չեն շարունակվող կամ սպասվող հանցագործության հետ:

Սկզբունք 19

Կալանավորված կամ ազատագրված անձը պետք է իրավունք ունենա տեսակցելու և նամակագրություն վարելու հատկապես ընտանիքի անդամների հետ, և նրանց պետք է արտաքին աշխարհի հետ շփվելու պատշաճ հնարավորություններ ընձեռվեն՝ օրենքով կամ օրենքի ուժ ունեցող կանոնակարգերով սահմանված ողջամիտ պայմաններում և սահմանափակումներով:

Սկզբունք 20

Կալանավորված կամ ազատագրված անձի խնդրանքով նա պետք է հնարավորության դեպքում պահվի իր մշտական բնակության վայրին ողջամտության սահմաններում մոտ գտնվող կալանավորվածներին պահելու կամ ազատագրված վայրում:

Սկզբունք 21

1. Արգելվում է օգտվել կալանավորված կամ ազատազրկված անձի կարգավիճակից՝ նրանից խոստովանություն կորզելու, ինքն իր դեմ այլ կերպ ցուցմունք տալու կամ այլ անձի դեմ ցուցմունք տալուն հարկադրելու նպատակով:

2. Հարցաքննության ընթացքում որևէ կալանավորված անձ չպետք է ենթարկվի բռնության, սպառնալիքի կամ հարցաքննության այնպիսի մեթոդների, որոնք թուլացնում են որոշում կայացնելու կամ դատողություններ անելու նրա կարողությունը:

Սկզբունք 22

Կալանավորված կամ ազատազրկված որևէ անձ չպետք է անգամ իր համաձայնությամբ ենթարկվի որևէ բժշկական կամ գիտական փորձերի, որոնք կարող են վնաս պատճառել նրա առողջությանը:

Սկզբունք 23

1. Կալանավորված կամ ազատազրկված անձի ցանկացած հարցաքննության տևողությունը և դրանց միջև ընդմիջումները, ինչպես նաև՝ հարցաքննություններն իրականացնող պաշտոնյաների և այլ անձանց ինքնությունը պետք է արձանագրվեն և հավաստվեն օրենքով սահմանված կարգով:

2. Կալանավորված կամ ազատազրկված անձը կամ նրա պաշտպանն օրենքով նախատեսված դեպքերում պետք է հնարավորություն ունենան օգտվելու սույն սկզբունքի 1-ին պարբերությունում նշված տեղեկատվությունից:

Սկզբունք 24

Կալանավորված կամ ազատազրկված անձին պետք է կալանավորվածներին պահելու կամ ազատազրկման վայր ընդունվելուց հետո հնարավորինս շուտ առաջարկվի անցնել բժշկական քննություն, որից հետո պետք է անհրաժեշտության դեպքում բժշկական խնամք և բուժում տրամադրվի: Այդ խնամքն ու բուժումը պետք է տրամադրվի անվճար:

Սկզբունք 25

Կալանավորված կամ ազատազրկված անձը կամ նրա պաշտպանը պետք է երկրորդ բժշկական զննության կամ կարծիք ստանալու հարցով դատարան կամ այլ մարմնին դիմում կամ միջնորդություն ներկայացնելու իրավունք ունենա:

Սկզբունք 26

Կալանավորված կամ ազատազրկված անձի բժշկական զննություն անցնելու փաստը, բժշկի անունը և բուժզննության արդյունքները պետք է հավուր պատշաճի արձանագրվեն: Անհրաժեշտ է ապահովել այդ արձանագրությունների հասանելիությունը: Այդ հասանելիության եղանակները պետք է սահմանվեն՝ ներպետական օրենսդրության համապատասխան կանոնների համաձայն:

Սկզբունք 27

Ապացույցները սույն կանոնների խախտմամբ ձեռք բերելու հանգամանքը պետք է հաշվի առնվի կալանավորված կամ ազատազրկված անձի դեմ այդ ապացույցներն օգտագործելու ընդունելիությունը որոշելիս:

Սկզբունք 28

Կալանավորված կամ ազատազրկված անձը պետք է առկա միջոցների սահմաններում (եթե դրանք տրամադրվում են պետական աղբյուրներից) բավարար ծավալի կրթական, մշակութային և տեղեկատվական նյութեր ստանալու իրավունք ունենա՝ կալանավորվածներին պահելու կամ ազատազրկման վայրում անվտանգությունը և պատշաճ կարգուկանոնն ապահովելու համար անհրաժեշտ պայմաններում:

Սկզբունք 29

1. Համապատասխան օրենքների և կանոնակարգերի խստիվ պահպանումը վերահսկելու նպատակով իրավասու մարմնի (սակայն ոչ կալանավորվածներին պահելու կամ ազատազրկման վայրի ղեկավար մարմնի) կողմից նշանակվող կամ դրան ենթակա, համապատասխան որակավորում ունեցող փորձառու անձինք պետք է պարբերաբար այցելեն կալանավորվածներին պահելու վայրեր:

2. Կալանավորված կամ ազատազրկված անձը պետք է իրավունք ունենա ազատորեն և լիովին մեկուսի պայմաններում հաղորդակցվելու կալանավորվածներին պահելու կամ ազատազրկման վայրեր այցելող անձանց հետ՝ սույն սկզբունքի 1-ին պարբերությանը համապատասխան՝ այդ վայրերում անվտանգությունը և պատշաճ կարգուկանոնը պահպանելու համար անհրաժեշտ ողջամիտ պայմաններում:

Սկզբունք 30

1. Օրենքով կամ օրենքի ուժ ունեցող կանոններով պետք է սահմանվեն և պատշաճ ձևով հրապարակվեն կալանքի կամ ազատազրկման ընթացքում կալանավորված կամ ազատազրկված անձի՝ կարգապահական խախտում համարվող արարքները, դրանց դեպքում նշանակվելիք կարգապահական տույժերի նկարագրությունն ու տևողությունը և նման տույժեր նշանակելու իրավասություն ունեցող մարմինները:

2. Կալանավորված կամ ազատազրկված անձը պետք է իրավունք ունենա հայտնելու իր կարծիքը՝ նախքան կարգապահական միջոցի կիրառումը: Նա պետք է իրավունք ունենա այդ միջոցների վերանայման հարցով բողոք ներկայացնելու վերադաս մարմիններին:

Սկզբունք 31

Համապատասխան մարմինները պետք է ձգտեն նեպետական օրենսդրությանը համապատասխան անհրաժեշտ օժանդակություն ցուցաբերել կալանավորված կամ ազատազրկված անձանց ընտանիքների այն անդամներին, ովքեր գտնվում են վերջիններիս խնամքի տակ, հատկապես՝ անչափահասներին, և խնամքի հատուկ միջոցներ տրամադրեն՝ առանց հսկողության մնացած երեխաների պատշաճ խնամակալության նպատակով:

Սկզբունք 32

1. Կալանավորված անձը կամ նրա պաշտպանը պետք է իրավունք ունենան ներպետական օրենսդրությանը համապատասխան ցանկացած ժամանակ դիմելու դատական կամ այլ մարմիններին՝ վիճարկելով կալանքի օրինականությունը, և անհապաղ ազատ արձակվելու, եթե կալանքն անօրինական է:

2. Սույն սկզբունքի 1-ին պարբերությունում նշված ընթացակարգերը պետք է լինեն պարզ ու արագ և չպետք է ծախսեր առաջացնեն համապատասխան միջոցներ չունեցող կալանավորված անձանց համար: Կալանավորող մարմինը պետք է կալանավորված անձին առանց անհարկի ձգձգումների որոշումը վերանայող մարմնին ներկայացնի:

Սկզբունք 33

1. Կալանավորված կամ ազատազրկված անձը կամ նրա պաշտպանը պետք է իրավունք ունենա կալանավորված կամ ազատազրկված անձի նկատմամբ ցուցաբերված վերաբերմունքի, հատկապես՝ խոշտանգումների կամ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի առնչությամբ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին կամ ավելի վերադաս մարմիններին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ վերանայման կամ իրավունքների վերականգնման իրավասությամբ օժտված համապատասխան մարմիններին դիմում կամ բողոք ներկայացնել:

2. Այն դեպքերում, երբ ո՛չ կալանավորված կամ ազատազրկված անձը, և ո՛չ նրա պաշտպանը հնարավորություն չունեն իրականացնելու սույն սկզբունքի 1-ին պարբերությունում նշված իրենց իրավունքները, այդ իրավունքները կարող են իրականացնել կալանավորված կամ ազատազրկված անձի ընտանիքի անդամը կամ գործից տեղյակ մեկ այլ անձ:

3. Դիմումի կամ բողոքի գաղտնիությունը պետք է ապահովվի՝ նման խնդրանք ներկայացվելու դեպքում:

4. Ցանկացած դիմում կամ բողոք պետք է անհապաղ և առանց անհարկի ձգձգումների ընթացք ու պատասխան ստանա: Դիմումը կամ բողոքը մերժվելու կամ չափից ավելի ձգձգվելու դեպքում բողոքարկողն իրավունք ունի բողոքը ներկայացնել դատական կամ այլ մարմնի: Ո՛չ կալանավորված կամ ազատազրկված անձը և ո՛չ էլ սույն սկզբունքի 1-ին պարբերությունում նշված որևէ բողոքարկող անձ չպետք է դիմումի կամ բողոքի հետ կապված կողմնակալ վերաբերմունքի արժանանա:

Սկզբունք 34

Կալանքի կամ ազատազրկման ընթացքում կալանավորված կամ ազատազրկված անձի մահվան կամ անհետանալու դեպքում դատարանը կամ այլ մարմինը սեփական նախաձեռնությամբ կամ տվյալ անձի ընտանիքի անդամի կամ գործին տեղյակ այլ անձի պահանջով պետք է հարցում ուղարկի մահվան կամ անհետացման հիմք հանդիսացած հանգամանքների վերաբերյալ: Եթե հանգամանքները թույլ են տալիս, կալանքի կամ ազատազրկման դադարեցումից կարճ ժամանակ հետո տեղի ունեցած մահվան կամ անհետացման պարագայում կատարվող հարցումների նկատմամբ պետք է կիրառվի նույն ընթացակարգը, ինչ կալանքի կամ ազատազրկման ընթացքում մահվան վրա հասնելու կամ անհետացման պարագայում:

Սկզբունք 35

1. Պետական պաշտոնյայի գործողությունների կամ անգործության արդյունքում սույն սկզբունքներում սահմանված իրավունքների խախտմամբ պատճառված վնասը պետք է

փոխհատուցվի ներպետական օրենսդրությամբ պատասխանատվության վերաբերյալ սահմանված կանոններին համապատասխան:

2. Սույն սկզբունքներով սահմանված կարգով արձանագրման ենթակա տեղեկատվությունը ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգով պետք է հասանելի լինի սույն սկզբունքի հիման վրա փոխհատուցում պահանջելու ժամանակ օգտագործելու համար:

Սկզբունք 36

1. Քրեական հանցանք կատարելու մեջ կասկածվող կամ մեղադրվող կալանավորված անձը պետք է համարվի անմեղ և արժանանա այդ կարգավիճակին համապատասխան վերաբերմունքի, քանի դեռ օրենքով սահմանված կարգով մեղավոր չի ճանաչվել հրապարակային դատավարության արդյունքում, որի ընթացքում նա օգտվել է իր պաշտպանության համար անհրաժեշտ բոլոր երաշխիքներից:

2. Գործի քննությանը կամ դատավարությանը սպասող նման անձի ձերբակալումը կամ կալանավորումը պետք է կիրառվի միայն արդարադատության իրականացման շահերից ելնելով՝ օրենքով սահմանված հիմքերով, պայմաններում և ընթացակարգերով: Հարկավոր է արգելել նման անձի նկատմամբ սահմանափակումների կիրառումը, որոնք խիստ անհրաժեշտ չեն կալանավորման նպատակների, քննության կամ արդարադատության իրականացմանը խոչընդոտելու, կալանավորված կամ ազատազրկված անձանց պահելու վայրում անվտանգության և կարգուկանոնի պահպանման առումով:

Սկզբունք 37

Քրեական մեղադրանքի հիման վրա կալանավորված անձը պետք է ձերբակալումից անմիջապես հետո ներկայացվի դատարան կամ օրենքով սահմանված այլ մարմին: Այդ մարմինը պետք է անհապաղ որոշում կայացնի կալանավորման օրինականության և անհրաժեշտության վերաբերյալ: Քննությանը կամ դատավարությանը սպասող որևէ անձ չպետք է կալանավորվի այլ կերպ, քան նման մարմնի գրավոր որոշմամբ: Կալանավորված անձը պետք է իրավունք ունենա այդ մարմին ներկայացվելուն պես հայտարարություն ներկայացնել անազատության մեջ գտնվելու ընթացքում իր նկատմամբ ցուցաբերված վերաբերմունքի մասին:

Սկզբունք 38

Քրեական մեղադրանքի հիման վրա կալանավորված անձը ողջամիտ ժամկետում դատաքննության, ինչպես նաև դատավարությանը սպասելու ժամանակահատվածում ազատ արձակվելու իրավունք ունի:

Սկզբունք 39

Բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, քրեական մեղադրանքի հիման վրա կալանավորված անձը պետք է իրավունք ունենա ազատ արձակվելու դատավարությանը սպասելու ժամանակահատվածում, եթե դատարանը կամ այլ մարմինը արդարադատության իրականացման շահերից ելնելով, օրենքով սահմանված պայմանների հիման վրա այլ որոշում չի կայացրել: Այդ մարմինը պետք է պարբերաբար վերանայի կալանավորման անհրաժեշտությունը:

Ընդհանուր դրույթ

Սույն Հիմնական սկզբունքներում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրով սահմանված որևէ իրավունքի սահմանափակում կամ այդ իրավունքից զրկում:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2008)11 հանձնարարականը անդամ երկրներին՝ Պատիժների կամ այլ միջոցների ենթարկված անչափահաս իրավախախտների վերաբերյալ եվրոպական կանոնների վերաբերյալ (Recommendation CM/Rec(2008)11 of the Committee of Ministers to member states on the European Rules for juvenile offenders subject to sanctions or measures)

(Կոմիտեի կողմից հաստատվել է 2008թ. նոյեմբերի 5-ին՝ փոխնախարարների թիվ 1040 հանդիպման ժամանակ)

Նախարարների կոմիտեն, առաջնորդվելով Եվրոպայի խորհրդի կանոնադրության թիվ 15-ը հոդվածով,

Նկատի ունենալով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է՝ հասնել առավել միասնության իր անդամների միջև, մասնավորապես՝ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող խնդիրների վերաբերյալ օրենքները ներդաշնակեցնելու միջոցով,

Մասնավորապես՝ նկատի առնելով.

- Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպերը,
- Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի վերաբերյալ եվրոպական կոնվենցիան և դրա իրականացումը վերահսկող կոմիտեի կատարած աշխատանքը,
- Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան.

Հաշվի առնելով.

- Եվրոպական բանտային կանոնների վերաբերյալ թիվ Rec(2006)2 հանձնարարականը,
- Հաստատություններում պահվող երեխաների վերաբերյալ թիվ Rec(2005)5 հանձնարարականը,
- Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց մարդկային իրավունքների և արժանապատվության պաշտպանության վերաբերյալ թիվ Rec(2004)10 հանձնարարականը,
- Անչափահասների հանցավորությանն արձագանքելու նոր ուղիների և անչափահասների գործերով արդարադատության դերի վերաբերյալ թիվ Rec(2003)20 հանձնարարականը,
- Պատիժների կամ այլ միջոցների իրականացմամբ զբաղվող անձնակազմի վերաբերյալ թիվ R(97)12 հանձնարարականը,
- Համայնքային պատիժների և այլ միջոցների վերաբերյալ թիվ R(92)16 հանձնարարականը,
- Անչափահասների հանցավորությանը սոցիալական արձագանքների վերաբերյալ թիվ R(87)20 հանձնարարականը.

Այնուհետ հաշվի առնելով.

- Անչափահասների հանցավորության կանխարգելման ՄԱԿ-ի ուղենիշները (Ռիադյան ուղենիշներ),

- Անչափահասների գործերով արդարադատության իրականացման ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները (Պեկինյան կանոններ),
- Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները (Տոկիոյի կանոններ),
- Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության ՄԱԿ-ի կանոնները (Հավանայի կանոններ),
- Նկատի առնելով Պետությունների ղեկավարների և Եվրոպայի խորհրդի կառավարության երրորդ գագաթաժողովում հաստատված վերջնական հռչակագիրը և գործողությունների ծրագիրը (Լեհաստան, Վարշավա, 2005թ. մայիսի 16-17), և, մասնավորապես, «Եվրոպայի հարմարեցումը երեխաներին» խորագիրը կրող գործողությունների ծրագրի III.2 կետը, ինչպես նաև՝ նկատի առնելով Եվրոպայի արդարադատության նախարարների 28-րդ համաժողովում (Բսպանիա, Լանսարոտե, 2007թ. հոկտեմբերի 25-27) հաստատված թիվ 2 բանաձևը.

Այնուհետ հաշվի առնելով, որ օրենքի հետ խնդիրներ ունեցող անչափահասների իրավունքները և բարեկեցությունն առավել լավ պաշտպանելու և անդամ երկրներում երեխաների համար նպաստավոր արդարադատության համակարգ ստեղծելու նպատակով համաեվրոպական գործողություններ են անհրաժեշտ.

Այդ առումով կարևորելով այն, որ Եվրոպայի խորհրդի անդամ երկրները պետք է շարունակեն կատարելագործել, արդիականացնել և դիտարկել անչափահասների գործերով արդարադատության քաղաքականությունն ու պրակտիկան և ընդլայնեն այս ոլորտում միջազգային համագործակցությունը.

Հանձնարարում է անդամ երկրների կառավարություններին.

- Իրենց օրենսդրությունում, քաղաքականությունում և պրակտիկայում առաջնորդվել սույն հանձնարարականի հավելվածում զետեղված կանոններով,
- Ապահովել, որպեսզի սույն հանձնարարականը և դրան կից մեկնաբանությունները թարգմանվեն և հնարավորինս լայնորեն տարածվեն, հատկապես՝ դատական իշխանության մարմինների և ոստիկանության, իրավախախտ անչափահասների նկատմամբ պատիժների և այլ միջոցների իրականացման համար պատասխանատու ծառայությունների, անչափահաս իրավախախտների համար նախատեսված խնամքի և հոգեկան առողջության հաստատությունների և դրանց անձնակազմի, ինչպես նաև՝ լրատվամիջոցների և լայն հանրության շրջանում:

Թիվ CM/Rec(2008)11 հանձնարարականի հավելված

**Պատիժների կամ այլ միջոցների ենթարկված անչափահաս իրավախախտների վերաբերյալ
Եվրոպական կանոններ**

Սույն կանոնների նպատակն է՝ պաշտպանել պատիժների և այլ միջոցների ենթարկված անչափահաս իրավախախտների իրավունքներն ու անվտանգությունը, ինչպես նաև համայնքային

պատիժների և այլ միջոցների կամ ազատությունից զրկելու այլ ձևերի ենթարկվելու դեպքում նպաստել նրանց ֆիզիկական, հոգեկան և սոցիալական ապահովությանը:

Սույն կանոններում ոչինչ չի կարող մեկնաբանվել անչափահասների իրավունքների, մարդու իրավունքների վերաբերյալ՝ ինամքի և պաշտպանության տեսակետից առավել նպաստավոր այլ փաստաթղթերի և ստանդարտների կիրառումը բացառող ձևով: Ավելին, անչափահաս իրավախախտների շահերից ելնելով՝ հարկավոր է կիրառել Եվրոպական բանտային կանոնների վերաբերյալ թիվ Rec(2006)2 և Համայնքային պատիժների և այլ միջոցների վերաբերյալ թիվ R(92)16 հանձնարարականները, եթե դրանք չեն հակասում սույն կանոններին:

Մաս I. Հիմնական սկզբունքները, կարգավորման շրջանակը և սահմանումներ

Ա. Հիմնական սկզբունքներ

1. Պատիժների և այլ միջոցների ենթարկված անչափահաս իրավախախտների մարդկային իրավունքները պետք է հարգվեն:
2. Անչափահասների նկատմամբ կիրառվող պատիժները կամ միջոցները, ինչպես նաև՝ դրանց իրականացման եղանակը պետք է սահմանվի օրենքով՝ սոցիալական ինտեգրման, կրթության և կրկնահանցավորության կանխարգելման սկզբունքների հիման վրա:
3. Պատիժները և այլ միջոցները պետք է նշանակվեն դատարանի կամ օրենքով սահմանված այլ իրավասու մարմնի կողմից, և այդ որոշումները պետք է հնարավոր լինի բողոքարկել դատական կարգով: Դրանք պետք է սահմանվեն և նշանակվեն անհրաժեշտ նվազագույն տևողությամբ և բացառապես օրինական նպատակներով:
4. Իրավախախտում կատարելու արդյունքում նշանակվող պատիժների և այլ միջոցների կիրառման նվազագույն տարիքը պետք է խիստ ցածր չլինի և սահմանվի օրենքով:
5. Պատիժների և այլ միջոցների իրականացումը պետք է հիմնված լինի անչափահաս իրավախախտների լավագույն շահերի վրա, սահմանափակվի կատարված իրավախախտման ծանրության աստիճանով (համարժեքության սկզբունք) և հաշվի առնի նրանց տարիքը, ֆիզիկական և հոգեկան առողջությունը, զարգացման աստիճանը, կարողությունները և անձնական հանգամանքները (անհատականացման սկզբունքները), որոնք, անհրաժեշտության դեպքում, կարող են հավաստված լինել հոգեբուժական և սոցիալական հետազոտությունների վերաբերյալ զեկույցներում:
6. Պատիժների և այլ միջոցների իրականացումը յուրաքանչյուր դեպքի հանգամանքներին հարմարեցնելու նպատակով դրանց իրականացման համար պատասխանատու մարմինները պետք է հայեցողության բավարար շրջանակ ունենան, ինչը չպետք է վերաբերմունքի հարցում լուրջ անհավասարության հանգեցնի:
7. Պատիժները և այլ միջոցները չպետք է վիրավորեն կամ նվաստացնեն անչափահասներին:
8. Պատիժները և այլ միջոցները չեն կարող իրականացվել այնպիսի ձևով, որը խորացնում է դրանց տառապալի բնույթը կամ ֆիզիկական կամ հոգեկան վնաս պատճառելու անհարկի ռիսկ է պարունակում:

9. Պատիժները և այլ միջոցները պետք է իրականացվեն առանց ձգձգման և միայն անհրաժեշտ նվազագույն չափով ու տևողությամբ (նվազագույն միջամտության սկզբունք):

10. Անչափահասներին ազատությունից զրկելը պետք է կիրառվի որպես ծայրահեղ միջոց, որը նշանակվում և իրականացվում է հնարավորինս կարճ ժամկետով: Հարկավոր է հատուկ ջանք գործադրել մինչդասական կալանքից խուսափելու համար:

11. Պատիժները կամ այլ միջոցները պետք է նշանակվեն և իրականացվեն առանց սեռի, ռասայի, մաշկի գույնի, լեզվի, կրոնի, սեռական կողմնորոշման, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային կամ սոցիալական ծագման, ազգային փոքրամասնությանը պատկանելության, գույքային, ծննդյան կամ այլ կարգավիճակի վրա հիմնված խտրականության (խտրականության բացառման սկզբունք):

12. Մեղիացիան կամ վերականգնողական այլ միջոցները պետք է խրախուսվեն անչափահասների հետ աշխատանքի բոլոր փուլերում:

13. Անչափահասների հետ գործ ունեցող արդարադատության ցանկացած համակարգում պետք է ապահովվի անչափահասների արդյունավետ մասնակցությունը պատիժների կամ այլ միջոցների նշանակման և իրականացման ընթացակարգերին: Անչափահասները չպետք է իրավունքներից ու երաշխիքներից օգտվեն քրեական դատավարության ընդհանուր կանոնների հիման վրա չափահաս իրավախախտների համար սահմանվածից պակաս չափով:

14. Անչափահասների հետ գործ ունեցող արդարադատության ցանկացած համակարգում պետք է հաշվի առնվեն ծնողների և օրինական ներկայացուցիչների իրավունքներն ու պարտականությունները և նրանք պետք է հնարավորինս ներգրավվեն ընթացակարգերին և պատիժների և այլ միջոցների իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա չի բխում անչափահասի լավագույն շահերից: Չափահասության հասած իրավախախտի պարագայում ծնողների և օրինական ներկայացուցիչների մասնակցությունը պարտադիր չէ: Անչափահասի ազգականները և համայնքը ևս կարող են անհրաժեշտության դեպքերում ներգրավվել ընթացակարգերին:

15. Անչափահասների հետ գործ ունեցող արդարադատության ցանկացած համակարգ պետք է առաջնորդվի բազմամասնագիտական և միջգերատեսչական մոտեցումներով և իր գործունեությունը պետք է համակցի անչափահասների համար նախատեսված սոցիալական նախաձեռնություններին՝ նման անչափահասների խնամքի հետ կապված հարցերում մոտեցման միասնականությունը և շարունակականությունն ապահովելու նպատակով (համայնքի ներգրավման և խնամքի շարունակականության սկզբունքներ):

16. Անձնական կյանքի անձեռնմխելիության՝ անչափահասի իրավունքը պետք է հարգվի վարույթի բոլոր փուլերում: Անչափահասների անձը և նրանց ընտանիքների վերաբերյալ ոչ հրապարակային տեղեկատվությունը չպետք է տրամադրվի օրենքով այդ տեղեկատվությունը ստանալու իրավունք չունեցող որևէ անձի:

17. Չափահասության հասած երիտասարդ իրավախախտներն անհրաժեշտության դեպքում կարող են համարվել անչափահասներ և համապատասխան վերաբերմունքի արժանանալ:

18. Անչափահասների հետ աշխատող բոլոր անձինք կարևոր հանրային ծառայություն են մատուցում: Նրանց հավաքագրումը, հատուկ ուսուցումը և աշխատանքի պայմանները պետք է թույլ տան, որպեսզի վերջիններս ի վիճակի լինեն ապահովելու անչափահասներին բնորոշ կարիքներին համապատասխան խնամքի պատշաճ ստանդարտներ և դրական օրինակ ծառայեն անչափահասների համար:

19. Բավարար միջոցներ և անձնակազմ պետք է տրամադրվեն անչափահասների կյանքին կատարվող միջամտությունը բովանդակալից դարձնելու համար:

20. Ցանկացած պատժի կամ այլ միջոցի կիրառում պետք է կանոնավոր պետական տեսչական ստուգման և անկախ մոնիթորինգի ենթարկվի:

Բ. Կարգավորման շրջանակը և սահմանումներ

21. Սույն կանոնների իմաստով.

21.1. «անչափահաս իրավախախտ» արտահայտությունը վերաբերում է 18 տարին չըրացած բոլոր անձանց, ովքեր կասկածվում կամ մեղադրվում են իրավախախտում կատարելու մեջ կամ կատարել են նման իրավախախտում: Սույն կանոններում անչափահասների մասին խոսելիս պետք է ենթադրել, որ խոսքը գնում է վերը սահմանված անչափահաս իրավախախտների մասին,

21.2. «չափահասության հասած երիտասարդ իրավախախտ» արտահայտությունը վերաբերում է 18-ից 21 տարիքային սահմանում գտնվող ցանկացած անձի, ով կասկածվում կամ մեղադրվում է իրավախախտում կատարելու մեջ կամ կատարել է նման իրավախախտում, կամ այն անձը, ում նկատմամբ սույն կանոնները կիրառելի են 17-րդ կանոնի դրույթներում նշված հիմքերով: Չափահասության հասած երիտասարդների հիշատակման դեպքում խոսքը գնում է վերը նշված չափահասության հասած երիտասարդ իրավախախտների մասին:

21.3. «իրավախախտում» արտահայտությունը նշանակում է քրեական օրենքի խախտում հանդիսացող ցանկացած գործողություն կամ անգործություն: Սույն կանոնների իմաստով խոսքը գնում է այնպիսի խախտման մասին, որը ենթակա է քննության քրեական գործերով դատարանի կամ այլ դատական կամ վարչական մարմնի կողմից,

21.4. «համայնքային պատիժներ կամ այլ միջոցներ» արտահայտությունը վերաբերում է բանտարկությունից տարբերվող ցանկացած պատժի կամ այլ միջոցի, որի դեպքում անչափահասները շարունակում են մնալ համայնքում, սակայն նրանց ազատությունը ենթարկվում է որոշակի սահմանափակումների՝ պայմաններ և/կամ պարտավորություններ սահմանելու միջոցով, որոնք իրականացվում են օրենքով նման լիազորություն ունեցող մարմինների կողմից: Եզրույթը վերաբերում է դատական կամ վարչական մարմնի կողմից նշանակված ցանկացած պատժի կամ պատժի փոխարեն նշանակված ցանկացած միջոցի, ինչպես նաև՝ ազատագրվման ձևով պատիժը բանտային հաստատությունից դուրս իրականացնելու եղանակներին,

21.5. «ազատագրվում» արտահայտությունը նշանակում է դատական կամ վարչական մարմնի կողմից անչափահասի տեղավորումն այնպիսի հաստատությունում, որն անչափահասը չի կարող ինքնակամ լքել,

21.6. «հաստատություն» արտահայտությունը վերաբերում է հանրային մարմինների հսկողության ներքո գտնվող հիմնարկներին, որտեղ անչափահասները բնակվում են՝ պաշտոնապես ընդունված կանոնների հիման վրա անձնակազմի կողմից իրականացվող հսկողության ներքո:

22. Մույն կանոնները կարող են կիրառվել հոգուտ այլ անձանց, ովքեր պահվում են նույնպիսի հաստատություններում կամ հիմնարկներում, ինչ անչափահասները:

Մաս II. Համայնքային պատիժներ և այլ միջոցներ

Գ. Իրավական շրջանակը

23.1. Վարույթի բոլոր փուլերի համար պետք է նախատեսված լինեն անչափահասների զարգացման տարբեր աստիճաններին հարմարեցված համայնքային պատիժներ և այլ միջոցներ:

23.2. Նախապատվությունը պետք է տրվի այնպիսի պատիժներին և միջոցներին, որոնք կարող են ուսուցողական ազդեցություն ունենալ կամ անչափահասների կատարած իրավախախտումների տեսակետից վերականգնողական նշանակություն ունեն:

24. Ներպետական օրենսդրությունը պետք է սահմանի համայնքային տարբեր պատիժների և միջոցների հետևյալ բնորոշ հատկանիշները.

ա. անչափահասների նկատմամբ կիրառվող բոլոր պատիժների և միջոցների հասկացությունը և կիրառման եղանակը,

բ. ցանկացած պայման կամ պարտավորություն, որը ծագում է նման պատժի կամ միջոցի կիրառման արդյունքում,

գ. այն դեպքերը, երբ նախքան պատժի կամ այլ միջոցի կիրառումը պահանջվում է անչափահասի համաձայնությունը,

դ. պատժի կամ այլ միջոցի նշանակման, փոփոխման կամ իրականացման համար պատասխանատու մարմինները, նրանց պարտականություններն ու պատասխանատվությունը,

ե. նշանակված պատժի կամ այլ միջոցի փոփոխման հիմքերը և ընթացակարգը.

զ. իրականացնող մարմինների գործունեության կանոնավոր և արտաքին վերահսկողության ընթացակարգերը:

25. Անչափահասների առանձնահատուկ կարիքները բավարարելու նպատակով ներպետական օրենսդրությամբ պետք է սահմանվի հետևյալը.

ա. անչափահաս իրավախախտներին, նրանց ծնողներին կամ օրինական ներկայացուցիչներին համայնքային պատիժների կամ այլ միջոցների վերաբերյալ իրավական դրույթների բովանդակությունը և նպատակները պարզաբանելու՝ իրավասու բոլոր մարմինների պարտականությունը,

բ. անչափահասների, նրանց ծնողների կամ օրինական ներկայացուցիչների հետ հնարավորինս լավ համագործակցության նպատակ հետապնդելու՝ իրավասու բոլոր մարմինների պարտականությունը,

գ. համայնքային պատիժների կամ այլ միջոցների ենթակա անչափահաս իրավախախտների ծնողների և օրինական ներկայացուցիչների իրավունքները, նման պատիժների կամ այլ միջոցների կիրառման կապակցությամբ նրանց իրավունքների և պարտականությունների հնարավոր սահմանափակումները:

26. Համայնքային պատիժ կամ միջոց նշանակելու կամ այն չեղյալ համարելու որոշումը պետք է կայացվի դատական իշխանության մարմնի կողմից, իսկ եթե այն կայացնում է օրենքով լիազորված վարչական մարմինը, ապա այդ որոշումը պետք է հնարավոր լինի բողոքարկել դատական կարգով:

27. Կախված անչափահասի մոտ առկա առաջընթացից, իրավասու մարմինները պետք է ներպետական օրենքով սահմանված կարգով իրավունք ունենան կրճատելու ցանկացած պատժի կամ միջոցի տևողությունը, ազատել նման պատժի կամ միջոցի կիրառումից բխող պայմանից կամ պարտավորությունից կամ դադարեցնել դրանց կիրառումը:

28. Կրթության, մասնագիտական ուսուցման, ֆիզիկական կամ հոգեկան առողջության հետ կապված խնամքի, անվտանգության և սոցիալական ապահովության գծով արտոնությունների հարցերում անչափահասների իրավունքները չպետք է սահմանափակվեն համայնքային պատիժների կամ այլ միջոցների կիրառման հետևանքով:

29. Այն դեպքերում, երբ համայնքային պատիժների կամ այլ միջոցների կիրառման համար պահանջվում է անչափահասների, նրանց ծնողների կամ օրինական ներկայացուցիչների համաձայնությունը, այդ համաձայնությունը պետք է լինի գիտակցված և պարզորոշ:

30.1. Եթե անչափահասը չի պահպանում համայնքային պատիժների կամ միջոցների կիրառման կապակցությամբ նրանց համար սահմանված պայմանները և պարտավորությունները, դա չպետք է ինքնաբերաբար ազատությունից զրկելու հանգեցնի: Հնարավորության դեպքում նախկինում նշանակված պատիժների կամ այլ միջոցների փոխարեն պետք է նշանակվեն փոփոխված կամ նոր համայնքային պատիժներ կամ այլ միջոցներ:

30.2. Պայմանները չպահպանելն ինքնին իրավախախտում չի համարվում:

Դ. Իրականացման պայմանները և այդ պայմանները խախտելու հետևանքները

Դ.1. Իրականացման պայմանները

31.1. Համայնքային պատիժները և միջոցները պետք է իրականացվեն այնպիսի եղանակով, որպեսզի դրանք հնարավորինս բովանդակալից լինեն անչափահասների համար ու նպաստեն նրանց կրթական զարգացմանը և սոցիալական հմտությունները բարելավելուն:

31.2. Անչափահասներին անհրաժեշտ է խրախուսել, որպեսզի նրանք համայնքային պատիժների և միջոցների իրականացման հետ կապված հարցերը քննարկեն իշխանության մարմինների հետ՝ անհատապես կամ խմբային կարգով հաղորդակցվելով այդ մարմինների հետ:

32. Համայնքային պատիժների և այլ միջոցների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հնարավորինս հաշվի առնել անչափահասների օգտակար սոցիալական կապերը և ընտանիքի հետ նրանց առնչությունը:

33.1. Անչափահասներն իրենց համար հասկանալի ձևով և լեզվով պետք է ծանոթացվեն իրենց նկատմամբ նշանակված համայնքային պատժի կամ այլ միջոցի կիրառման ձևին, ինչպես նաև՝ այդ առնչությամբ իրենց իրավունքներին ու պարտականություններին:

33.2. Անչափահասները պետք է իրավունք ունենան համայնքային պատիժների կամ այլ միջոցների իրականացման վերաբերյալ պաշտոնական որոշման կայացումից առաջ բանավոր կամ գրավոր դիմումներ ներկայացնել, ինչպես նաև՝ միջնորդություն ներկայացնել իրականացման պայմանները վերանայելու վերաբերյալ:

34.1. Իրականացնող մարմինները պետք է տվյալ դեպքի վերաբերյալ անձնական գործ կազմեն և պարբերաբար թարմացնեն այն:

34.2. Այդ անձնական գործերը պետք է բավարարեն հետևյալ պահանջները.

ա. անձնական գործում պետք է զետեղվեն միայն այնպիսի փաստեր, որոնք առնչվում են նշանակված համայնքային պատժին կամ այլ միջոցին կամ դրա իրականացմանը,

բ. անչափահասները և նրանց ծնողները կամ օրինական ներկայացուցիչները պետք է կարողանան ծանոթանալ անձնական գործին՝ այնքանով, որքանով դա չի խախտում անձնական անձեռնմխելիության վերաբերյալ այլոց իրավունքները. նրանք պետք է իրավունք ունենան բողոքարկելու անձնական գործի բովանդակությունը,

գ. անձնական գործում զետեղված տեղեկատվությունը պետք է տրամադրվի միայն նրանց, ովքեր օրենքով իրավունք ունեն ստանալու այն, իսկ հրապարակված ցանկացած տեղեկատվություն պետք է սահմանափակվի միայն այնպիսի տեղեկություններով, որոնք առնչվում են տեղեկատվությունը պահանջող մարմնի խնդիրներին,

դ. համայնքային պատժի կամ այլ միջոցի դադարումից հետո անձնական գործերը պետք է վերացվեն կամ պահվեն արխիվներում, որտեղ դրանց բովանդակությունը պետք է պաշտպանվի հրապարակայնացումից՝ տրամադրելով երրորդ կողմերի համար դրանց բովանդակությունը հասանելի դարձնելուց պաշտպանելու երաշխիքներ:

35. Անչափահասներին կրթական կամ աշխատանքային հնարավորություններ կամ անձնական ու սոցիալական օժանդակություն առաջարկող գերատեսչություններին անչափահասների վերաբերյալ տրամադրված տեղեկատվությունը պետք է գործածվի բացառապես նախատեսված գործողությունը կատարելու նպատակով:

36.1. Անչափահասների կողմից համայնքային աշխատանքներ կամ համարժեք պարտականություններ կատարելու պայմանները պետք է համապատասխանեն առողջապահության և սոցիալական ապահովության մասին ներպետական ընդհանուր օրենսդրության ստանդարտներին:

36.2. Անչափահասները պետք է ապահովագրվեն պատահարներից, վնասվածքներից և համայնքային պատիժների կամ միջոցների իրականացումից բխող հանրային պատասխանատվությունից:

37. Իրականացման ծախսերը սկզբունքորեն չպետք է կատարվեն անչափահասների կամ նրանց ընտանիքների հաշվին:

38. Համապատասխան անձնակազմի և անչափահասների փոխհարաբերությունները պետք է կառուցվեն կրթության և զարգացման սկզբունքների հիման վրա:

39.1. Համայնքային պատիժների և այլ միջոցների իրականացումը պետք է հիմնված լինի անհատականացված գնահատումների և միջամտության այնպիսի մեթոդների վրա, որոնք համապատասխանում են փորձարկված մասնագիտական ստանդարտներին:

39.2. Այդ մեթոդները պետք է մշակվեն հետազոտությունների արդյունքների և սոցիալական աշխատանքի, երիտասարդության բարեկեցության և հարակից այլ ոլորտներում առկա լավագույն փորձի լույսի ներքո:

40. Անչափահասների կարիքները բավարարելու նպատակով համայնքային տվյալ պատժի կամ այլ միջոցի իրականացման ընթացքում պետք է ցուցաբերվեն տարբեր մոտեցումներ, ինչպիսիք են դեպքերի վարումը, խմբային թերապիան, հոգաբարձությունը և ցերեկային խնամքը. անհրաժեշտ է նաև մասնագիտացված աշխատանք տանել իրավախախտների տարբեր խմբերի հետ:

41.1. Ազատության հետ կապված սահմանափակումները պետք է համարժեք լինեն համայնքային պատժին կամ այլ միջոցին և սահմանափակվեն դրանց նպատակներով և անչափահասների նկատմամբ պետք է կիրառվեն միայն այն չափով, որն անհրաժեշտ է այդ պատիժների կամ այլ միջոցների պատշաճ իրականացման համար:

41.2. Համայնքային պատիժների կամ այլ միջոցների իրականացման համար ուղղակի պատասխանատվություն կրող անձնակազմը պետք է գործնական և հստակ հրահանգավորում ստանա:

42. Հնարավորության դեպքում համայնքային պատիժը կամ միջոցն իրականացնող անձնակազմի և անչափահասի միջև շարունակական և երկարաժամկետ փոխհարաբերությունները պետք է պահպանվեն՝ անգամ անչափահասի բնակության վայրը, իրավական կարգավիճակը կամ միջամտության տեսակը փոխվելու դեպքում:

43.1. Հատուկ ուշադրություն պետք է դարձվի լեզվական կամ էթնիկ փոքրամասնություններին պատկանող կամ օտարերկրյա քաղաքացիություն ունեցող անչափահասների նկատմամբ պատշաճ միջամտություններին:

43.2. Օտարերկրյա քաղաքացիություն ունեցող անչափահասների նկատմամբ համայնքային պատիժների կամ միջոցների իրականացումը փոխանցելու որոշման դեպքում անչափահասները պետք է տեղեկացվեն այդ առնչությամբ իրենց իրավունքների մասին: Անհրաժեշտ է սերտ համագործակցություն հաստատել անչափահասների սոցիալական ապահովության և արդարադատության ոլորտի գերատեսչությունների հետ՝ ծագման երկիր ժամանելուն պես նման անչափահասների համար անհրաժեշտ աջակցություն կազմակերպելու նպատակով:

43.3. Համայնքային պատիժների կամ այլ միջոցների իրականացումից հետո օտարերկրյա քաղաքացիություն ունեցող անչափահասներին իրենց ծագման երկիր արտաքսելու բացառիկ

դեպքերում հարկավոր է ջանքեր գործադրել նրանց ծագման երկրի սոցիալական ապահովության մարմինների հետ կապեր հաստատելու ուղղությամբ, եթե այդ կապերը բխում են տվյալ անչափահասների լավագույն շահերից:

44. Անչափահասներին հարկավոր է խրախուսել՝ իրենց կարողության սահմաններում հարթելու իրենց կատարած իրավախախտմամբ պատճառված վնասը կամ բացասական ազդեցությունը՝ այնքանով, որքանով վնասի հարթումը տեղավորվում է նրանց նկատմամբ կիրառվող համայնքային պատիժների կամ այլ միջոցների շրջանակներում:

45. Համայնքային աշխատանքները չպետք է իրականացվեն միայն շահույթ ստանալու նպատակով:

Դ.2. Պայմանները խախտելու հետևանքները

46. Անչափահասները և նրանց ծնողները կամ օրինական ներկայացուցիչները պետք է տեղեկացվեն համայնքային պատիժների կամ այլ միջոցների հետ կապված պայմանները խախտելու հետևանքների և այն կանոնների մասին, որոնց հիման վրա քայլեր են ձեռնարկվելու խախտման կապակցությամբ:

47.1. Պետք է հստակ սահմանվեն համայնքային պատիժների կամ այլ միջոցների չպահպանումը խախտում համարելու կամ չհամարելու մասին հայտնելու կամ որոշում կայացնելու իրավասություն ունեցող մարմինների գործողությունները:

47.2. Փոքր զանցանքները պետք է գրառվեն անձնական գործում, սակայն այդ մասին անհրաժեշտ չէ հայտնել պայմանների չկատարումը խախտում համարելու որոշում կայացնող մարմնին, եթե ներպետական օրենքով դա չի պահանջվում: Նման զանցանքները կարող են տեղում իրենց հայեցողական լուծումն ստանալ:

47.3. Պահանջների էական խախտումների մասին հարկավոր է անհապաղ գրավոր զեկուցել որոշում կայացնելու իրավասություն ունեցող մարմնին:

47.4. Այդ զեկուցագրերում պետք է մանրամասն նկարագրվեն պայմանների չպահպանման եղանակները և հանգամանքները, ինչպես նաև՝ անչափահասի անձնական դրությունը:

48.1. Խախտման վերաբերյալ որոշում կայացնելու համար պատասխանատու մարմինը համայնքային պատժի կամ այլ միջոցի փոփոխման, մասնակի կամ լրիվ վերացման մասին որոշումը պետք է կայացնի միայն իրեն ներկայացված փաստերի մանրակրկիտ քննությունից հետո:

48.2. Անհրաժեշտության դեպքում կարող են իրականացվել հոգեբուժական գնահատումներ կամ հետազոտություններ կամ պահանջվել սոցիալական հետազոտությունների հաշվետվություններ:

48.3. Իրավասու մարմինները պետք է ապահովեն, որպեսզի անչափահասները, անհրաժեշտության դեպքում՝ նաև նրանց ծնողները կամ օրինական ներկայացուցիչները հնարավորություն ունենան ծանոթանալու պայմանների խախտման վերաբերյալ ներկայացված այն ապացույցներին, որոնց հիման վրա համայնքային պատիժը կամ այլ միջոցը պետք է փոփոխվի կամ վերացվի, և իրենց դիտողությունները ներկայացնել դրանց վերաբերյալ:

48.4. Համայնքային պատժի կամ այլ միջոցի վերացման կամ փոփոխման հարցը քննարկելիս հարկավոր է պատշաճ ուշադրություն դարձնել այն հանգամանքին, թե որքանով է անչափահասը

կատարել նախնական պատժի կամ այլ միջոցի պահանջները՝ ապահովելու համար, որ նոր կամ փոփոխված պատիժը կամ այլ միջոցը շարունակի համարժեք լինել կատարված իրավախախտմանը:

48.5. Եթե պայմանների խախտման արդյունքում որևէ ոչ դատական մարմին որոշում է կայացնում համայնքային պատիժը կամ միջոցը վերացնելու կամ փոփոխելու վերաբերյալ, այդ որոշումը պետք է հնարավոր լինի վերանայել դատական կարգով:

Մաս III. Ազատագրկումը

Ե. Ընդհանուր մաս

Ե.1. Ընդհանուր մտտեցումը

49.1. Ազատագրկումը պետք է իրականացվի միայն դրա նշանակությանը համապատասխան և չպետք է ծանրացնի տառապանքն ավելին, քան բխում է դրա բնույթից:

49.2. Անչափահասների ազատագրկման դեպքում պետք է ընձեռվի վաղաժամկետ ազատման հնարավորություն:

50.1. Ազատությունից զրկված անչափահասները պետք է ապահովվեն իմաստավից գործունեության և միջամտության զանազան տարատեսակներով՝ ելնելով ընդհանուր անհատական ծրագրից, որի նպատակն է՝ նվազ սահմանափակող ռեժիմների միջոցով հասնել առաջընթացի և անչափահասներին պատրաստել ազատմանը և հասարակությունում վերաինտեգրվելուն: Այդ գործունեությունը և միջամտությունները պետք է նպաստեն նրանց ֆիզիկական և հոգեկան առողջությանը, ինքնահարգանքի և պատասխանատվության զգացում ձևավորելուն և այնպիսի վարքագծի և հմտությունների ձևավորմանը, որոնք կկանխեն կրկնահանցավորությունը:

50.2. Նման գործունեությանը և միջամտություններին անչափահասների մասնակցությունը պետք է խրախուսվի:

50.3. Անհրաժեշտ է խրախուսել ազատությունից զրկված անչափահասների կողմից հաստատությունում առկա պայմանների և ռեժիմային գործողությունների հետ կապված հարցերն իշխանության համապատասխան մարմինների հետ քննարկելու պրակտիկան և անհատապես կամ խմբային կարգով այդ մարմինների հետ հաղորդակցությունը:

51. Խնամքի շարունակականությունը երաշխավորելու նպատակով ազատագրկման սկզբից մինչ ավարտը անչափահասներին պետք է աջակցություն ցուցաբերվի այն գերատեսչությունների կողմից, որոնք կարող են պատասխանատու լինել նրանց համար՝ ազատ արձակվելուց հետո:

52.1. Քանի որ ազատությունից զրկված անչափահասները խիստ խոցելի են, իշխանության մարմինները պետք է պաշտպանեն նրանց ֆիզիկական և հոգեկան անվնասությունը և նպաստեն նրանց բարօրությունը:

52.2. Առանձնահատուկ խնամք պետք է ստանան այն անչափահասները, ովքեր ենթարկվել են ֆիզիկական, հոգեկան կամ սեռական չարաշահումների:

Ե.2. Բնաստիտուցիոնալ կառուցվածքը

53.1. Համապատասխան հաստատությունները կամ դրանց ստորաբաժանումները պետք է տրամադրեն տարբեր հնարավորություններ՝ դրանցում պահվող անչափահասների անհատական կարիքները բավարարելու և նրանց նկատմամբ նշանակված միջոցը կատարելու նպատակով:

53.2. Այդ հաստատությունները պետք է ապահովեն անվտանգության և վերահսկողության նվազագույն պայմաններ, ինչը թույլ կտա անչափահասներին պաշտպանել ինքնավնասումից, ինչպես նաև՝ կրնձեռեն անչափահասների կողմից անձնակազմին, այլ անձանց և լայն հանրությանը վնաս պատճառելու հնարավորություն:

53.3. Հաստատության ներսում կենսապայմանները պետք է հնարավորինս նման լինեն ազատության մեջ կյանքի դրական երևույթներին:

53.4. Հաստատությունում պահվող անչափահասների թիվը պետք է բավարար չափով փոքր լինի՝ անհատական խնամքի տրամադրման տեսակետից: Հաստատությունները պետք է կազմված լինեն փոքր բնակելի տեղամասերից:

53.5. Անչափահասների համար նախատեսված հաստատությունները պետք է տեղակայված լինեն հեշտ հասանելի վայրերում, ինչը կնպաստի անչափահասների և նրանց ընտանիքների միջև շփումներին: Դրանք պետք է հարմարեցված լինեն տվյալ համայնքի սոցիալական, տնտեսական և մշակութային միջավայրին:

Ե.3. Տեղավորումը

54. Անչափահասների տարբեր խմբերին հաստատություններում տեղավորելիս պետք է հատկապես առաջնորդվել նրանց խնամքի այնպիսի տեսակ տրամադրելու անհրաժեշտությամբ, որը լավագույնս համապատասխանում է նրանց կարիքներին և ապահովում է նրանց ֆիզիկական ու հոգեկան անվնասությունը և բարօրությունը:

55. Անչափահասները պետք է հնարավորինս տեղավորվեն այնպիսի հաստատություններում, որոնք մոտ են գտնվում նրանց բնակության կամ սոցիալական ինտեգրման վայրերին:

56. Ազատությունից զրկված անչափահասները պետք է ուղարկվեն նրանց անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ նվազագույն սահմանափակումներ ունեցող հաստատություններ:

57. Հոգեկան հիվանդությամբ տառապող և ազատագրվման ենթակա անչափահասները պետք է պահվեն հոգեկան առողջության հաստատություններում:

58. Սկզբնական տեղավորման կամ հետագայում մեկ հաստատությունից մյուսը փոխադրելու պարագայում անհրաժեշտ է հնարավորության դեպքում խորհրդակցել անչափահասների, ըստ անհրաժեշտության՝ նաև նրանց ծնողների կամ օրինական ներկայացուցիչների հետ:

59.1. Անչափահասները պետք է պահվեն ոչ թե չափահասների, այլ հատկապես անչափահասների համար նախատեսված հաստատություններում: Եթե անչափահասները բացառիկ դեպքերում այդուհանդերձ պահվում են չափահասների համար նախատեսված հաստատությունում, նրանք

պետք է տեղավորվեն առանձին, եթե որոշ դեպքերում նրանց շահերից հակառակը չի բխում: Ամեն դեպքում, նրանց նկատմամբ կիրառելի են սույն կանոնները:

59.2. Թիվ մեկ ենթապարբերությունում նշված՝ անջատ պահելու վերաբերյալ պահանջներից բացառությունները կարող են թույլատրվել՝ չափահասների համար նախատեսված հաստատությունում կազմակերպվող միջոցառումներին չափահասների հետ միասին մասնակցելու նպատակով:

59.3. Չափահասության տարիքի հասած անչափահասները և երիտասարդները, որոնց նկատմամբ անհրաժեշտ է անչափահասների համար նախատեսված վերաբերմունք ապահովել, սովորաբար պետք է պահվեն անչափահասների համար նախատեսված հաստատություններում կամ երիտասարդների համար նախատեսված մասնագիտացված հաստատություններում, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանց սոցիալական վերաինտեգրմանն առավել բարեհաջող հնարավոր է հասնել չափահասների համար նախատեսված հաստատությունում:

60. Արական և իգական սեռի անչափահասները, որպես կանոն, պետք է պահվեն առանձին հաստատություններում կամ միևնույն հաստատության առանձին տեղամասերում: Արական և իգական սեռի անչափահասներին անջատ պահելու պահանջը չպետք է կիրառվի սոցիալական ապահովության կամ հոգեկան առողջության հաստատություններում: Եթե անգամ արական և իգական սեռի անչափահասները միմյանցից անջատ են պահվում, նրանց հարկավոր է թույլատրել համատեղ մասնակցել կազմակերպվող միջոցառումներին:

61. Հաստատություններում հարկավոր է ունենալ գնահատման պատշաճ համակարգ՝ անչափահասներին ըստ իրենց կրթական, զարգացման և անվտանգության կարիքների տեղաբաշխելու համար:

Ե.4. Ընդունումը

62.1. Որևէ անչափահաս չպետք է հաստատություն ընդունվի կամ պահվի այդ հաստատությունում՝ առանց համապատասխան օրինական որոշման:

62.2. Յուրաքանչյուր անչափահասի ընդունման պահին պետք է անհապաղ գրառվեն հետևյալ տվյալները.

ա. տեղեկություններ անչափահասի ինքնության և նրա ծնողների կամ օրինական ներկայացուցիչների վերաբերյալ,

բ. հաստատությունում տեղավորելու պատճառները և դրա համար պատասխանատու մարմինը,

գ. ընդունման ամսաթիվը և ժամը,

դ. անչափահասի կողմից պահատվության հանձնված գույքի ցանկը,

ե. որևէ տեսանելի վնասվածքի առկայությունը կամ վատ վերաբերմունքի վերաբերյալ հայտարարությունը,

զ. ցանկացած տվյալ կամ տեղեկանք անչափահասի անցյալի և նրա կրթական կամ սոցիալական կարիքների վերաբերյալ,

է. ցանկացած տեղեկություն անչափահասի կողմից ինքնավնասման հավանականության, նրա առողջական վիճակի վերաբերյալ՝ կապված տվյալ անչափահասի կամ այլոց հոգեկան անվտանգության հետ՝ հաշվի առնելով բժշկական գաղտնիքի վերաբերյալ պահանջները:

62.3. Ընդունման պահին անչափահասներին պետք է հասկանալի լեզվով և եղանակով պարզաբանվեն իրենց իրավունքներն ու պարտականությունները:

62.4. Անչափահասի ծնողներին կամ օրինական ներկայացուցիչներին պետք է անհապաղ տեղեկատվություն տրամադրվի անչափահասի տեղավորման, հաստատությունում ընդունված կանոնների մասին, ինչպես նաև՝ ցանկացած այլ տեղեկատվություն:

62.5. Ընդունելուց հետո հնարավորինս վաղ՝ անչափահասը պետք է ենթարկվի բժշկական հետազոտության. պետք է կազմել բժշկական քարտ և ցանկացած հիվանդության կամ վնասվածքի դեպքում գրառում կատարել դրանում:

62.6. Ընդունվելուց հետո հնարավորինս վաղ.

ա. անչափահասի հետ պետք է հարցազրույց վարել և կազմել առաջին հոգեբանական, կրթական և սոցիալական հաշվետվությունը, որում նշված կլինեն ցանկացած գործոններ, որոնք առնչվում են տրամադրվելիք ինսամքի և կատարվելիք միջամտության տեսակին և մակարդակին,

բ. անչափահասների համար պետք է ապահովել անվտանգության պատշաճ մակարդակ՝ անհրաժեշտության դեպքում փոփոխելով սկզբնական տեղավորման վայրը,

գ. շատ կարճ տևողությամբ ազատագրկման դեպքում հարկավոր է մշակել կրթական և վերապատրաստման ծրագրերի ընդհանուր պլան՝ ելնելով անչափահասի անհատական բնութագրից, և սկսել նման ծրագրերի իրականացումը,

դ. նման ծրագրեր մշակելիս հարկավոր է հաշվի առնել անչափահասի տեսակետները:

Ե.5. Կացարանային պայմանները

63.1. Անչափահասներին տրամադրվող կացարանային պայմանները, մասնավորապես՝ ննջարանները, պետք է բավարարեն մարդկային արժանապատվությունը հարգելու հետ կապված պայմանները, հնարավորության սահմաններում՝ նաև մեկուսիությունը, և համապատասխանեն առողջության և հիգիենայի պահանջներին՝ պատշաճ ուշադրություն դարձնելով կլիմայական պայմաններին, հատկապես՝ տարածքի մակերեսին, օդի ծավալին (խորանարդ մետրերին), լուսավորությանը, ջեռուցմանը և օդափոխությանը: Այս ամենի վերաբերյալ նվազագույն պահանջները պետք է սահմանվեն ներպետական օրենսդրությամբ:

63.2. Անչափահասները գիշերվա ընթացքում պետք է քնեն անհատական ննջարաններում, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանց պարագայում համատեղ ննջարաններն առավել նախընտրելի են: Կացարանը պետք է ընդհանուր լինի միայն հիշյալ դեպքում, և դրանում պետք է տեղավորվեն միայն համատեղելի անչափահասները: Ննջարանն այլոց հետ կիսելու անհրաժեշտության դեպքում հարկավոր է խորհրդակցել անչափահասների հետ, և վերջիններս կարող են նշել, թե ում հետ են ուզում կիսել ննջարանը:

64. Անձնակազմը պետք է պարբերաբար և աննկատ վերահսկի բոլոր կացարանները, հատկապես՝ գիշերային ժամերին՝ յուրաքանչյուր անչափահասի պաշտպանությունն ապահովելու նպատակով: Պետք է տեղադրված լինի նաև արդյունավետ ազդանշանային համակարգ, որը կարող է գործի դրվել արտակարգ իրադրություններում:

Ե.6. Հիգիենան

65.1. Ցանկացած հաստատության բոլոր հատվածները պետք է մշտապես պատշաճ խնամվեն և մաքուր պահվեն:

65.2. Անչափահասները պետք է հնարավորություն ունենան ցանկացած պահի օգտվելու հիգիենիկ և մեկուսի սանիտարական հանգույցներից:

65.3. Անչափահասները պետք է ապահովվեն տվյալ կլիմային համապատասխանող ջերմաստիճանի ցնցուղից կամ բաղնիքից օգտվելու հնարավորությամբ, հնարավորության դեպքում՝ ամեն օր:

65.4. Անչափահասները պետք է իրենց, իրենց հագուստը և ննջարանները մաքուր և կոկիկ պահեն, իսկ համապատասխան մարմինները պետք է սովորեցնեն, թե ինչպես է պետք դա անել, և համապատասխան միջոցներ տրամադրեն դրա համար:

Ե.7. Հագուստը և անկողնային պարագաները

66.1. Անչափահասներին պետք է թույլատրվի կրելու սեփական հագուստը՝ պայմանով, որ այն պիտանի և հարմար լինի:

66.2. Սեփական պիտանի և հարմար հագուստ չունեցող անչափահասներին նման հագուստով պետք է ապահովի հաստատությունը:

66.3. Պիտանի և հարմար է համարվում այն հագուստը, որը վիրավորական կամ նվաստացնող չէ, համապատասխանում է կլիմային և անվտանգության կամ ապահովության տեսակետից ռիսկ չի ներկայացնում:

66.4. Հաստատությունից դուրս գալու թույլտվություն ստացած անչափահասներից չի կարելի պահանջել կրել այնպիսի հագուստ, որը կմատնի ազատությունից զրկված անձ լինելու հանգամանքը:

67. Յուրաքանչյուր անչափահասի պետք է տրամադրվեն առանձին մահճակալ և համապատասխան անկողնային պարագաներ, որոնք պետք է պահպանվեն բարվոք վիճակում և փոփոխվեն դրանց մաքրությունն ապահովելու համար անհրաժեշտ հաճախականությամբ:

Ե.8. Մնունդը

68.1. Անչափահասները պետք է ապահովվեն սննդարար կերակրով՝ հաշվի առնելով նրանց տարիքը, առողջական և ֆիզիկական վիճակը, կրոնը, մշակույթը և տվյալ հաստատությունում իրականացվող միջոցառումները:

68.2. Մնունդը պետք է պատրաստվի և մատուցվի հիգիենիկ պայմաններում՝ օրական երեք անգամ՝ ողջամիտ ընդմիջումներով:

68.3. Խմելու ջուրը պետք է ցանկացած ժամանակ հասանելի լինի անչափահասներին:

68.4. Հնարավորության դեպքում անչափահասներին պետք է թույլատրվի ինքնուրույն կազմակերպել իրենց սնունդը:

Ե.9. Առողջապահական պայմանները

69.1. Միջազգային փաստաթղթերում չափահաս բանտարկյալների ֆիզիկական և հոգեկան առողջության վերաբերյալ սահմանված դրույթները կիրառելի են նաև ազատությունից զրկված անչափահասների նկատմամբ:

69.2. Ազատությունից զրկված անչափահասների առողջությունը պետք է երաշխավորվի համայնքում անչափահասների առողջության համար ընդունված ստանդարտներով:

70.1. Առանձնակի ուշադրություն պետք է դարձվի ազատագրվմամբ պայմանավորված առողջապահական վտանգներին:

70.2. Հարկավոր է հատուկ քաղաքականություն մշակել և իրականացնել անչափահասների կողմից ինքնասպանությունների և ինքնավնասման դեպքերը կանխարգելելու վերաբերյալ, հատկապես՝ նրանց նախնական կալանքի, մեկուսացման կամ այլ ռիսկային ժամանակահատվածներում:

71. Անչափահասները պետք է ապահովվեն կանխարգելիչ առողջապահական հնարավորություններով և առողջապահական թեմաներով ուսուցում անցնեն:

72.1. Բժշկական միջամտությունը, այդ թվում՝ դեղորայքային բուժումը, պետք է կիրառվեն միայն բժշկական նկատառումներից ելնելով, այլ ոչ որպես կարգուկանոն հաստատելու կամ տույժի միջոց: Հարկավոր է կիրառել բժշկական միջամտությունների վերաբերյալ ազատ հասարակությունում ընդունված էթիկական սկզբունքները և հիվանդի համաձայնությունը ստանալու սկզբունքները: Հարկավոր է գրառել ցանկացած բուժման կամ տրամադրված դեղորայքի վերաբերյալ տեղեկատվությունը:

72.2. Ազատությունից զրկված անչափահասները չպետք է ենթարկվեն դեղորայքի կամ բուժման փորձարկումների:

73. Առանձնակի ուշադրություն պետք է դարձվի անձանց հետևյալ խմբերի կարիքներին.

ա. փոքրահասակ անչափահասները,

բ. հղի աղջիկները կամ նորածին երեխաներ ունեցող մայրերը,

գ. թմրանյութերից և ալկոհոլից կախվածություն ունեցողները,

դ. ֆիզիկական և հոգեկան առողջության խնդիրներ ունեցողները,

ե. անչափահասները, ովքեր բացառության կարգով ազատությունից զրկվել են երկար ժամանակով,

զ. ֆիզիկական, հոգեկան, սեռական չարաշահումների ենթարկված անչափահասները,

է. սոցիալապես մեկուսացված անչափահասները,

ը. հատկապես խոցելի իրավախախտների այլ խմբերը:

74.1. Անչափահասներին առաջարկվող առողջապահական ծառայությունները պետք է խնամքի բազմամասնագիտական ծրագրի մի մասը կազմեն:

74.2. Մասնագիտական գաղտնիքները և մասնագիտություններից յուրաքանչյուրի դերը չնսեմացնելու պայմաններում աջակցության և բուժման ամբողջական փաթեթ տրամադրելու նպատակով բժիշկների և բուժքույրերի աշխատանքը պետք է սերտորեն համակարգվի սոցիալական աշխատողների, հոգեբանների, մանկավարժների, այլ մասնագետների ու անչափահաս իրավախախտների հետ ամենօրյա առնչություն ունեցող անձնակազմի աշխատանքի հետ:

75. Անչափահասների համար նախատեսված հաստատություններում առողջապահությունը չպետք է սահմանափակվի հիվանդների բուժմամբ, այլ պետք է ներառի սոցիալական և կանխարգելիչ բժշկության ու սննդի վերահսկման տարրեր:

Ե.10. Ռեժիմային գործունեություն

76.1. Բոլոր միջամտությունները պետք է նախատեսված լինեն անչափահասների զարգացումը խթանելու համար, և վերջիններիս ակտիվ մասնակցությունը պետք է խրախուսվի:

76.2. Այդ միջամտություններով պետք է փորձել հասնել անչափահասների կարիքների բավարարմանը՝ նրանց տարիքին, սեռին, սոցիալական և մշակութային առանձնահատկություններին, զարգացման աստիճանին և կատարած իրավախախտման բնույթին համապատասխան: Դրանք պետք է համահունչ լինեն տվյալ ոլորտում ընդունված, հետազոտությունների արդյունքների և լավագույն փորձի վրա հիմնված մասնագիտական ստանդարտներին:

77. Ռեժիմային գործունեությունը պետք է կրթության, անձնական և սոցիալական զարգացման, մասնագիտական ուսուցման, վերականգնման և ազատման նախապատրաստելու նպատակներ հետապնդի: Այն կարող է ներառել.

ա. դպրոցական կրթությունը,

բ. մասնագիտական ուսուցումը,

գ. աշխատանքը և աշխատանքային թերապիան,

դ. քաղաքացիության հետ կապված վերապատրաստումը,

ե. սոցիալական հմտությունների և ունակությունների հետ կապված վերապատրաստումը,

զ. ագրեսիայի կառավարումը,

է. կախվածություններից բուժումը,

ը. անհատական և խմբային թերապիան,

թ. ֆիզիկական կրթությունը և սպորտը,

ժ. երրորդային կրթությունը,

ի. պարտքի կարգավորումը,

զ. վերականգնողական արդարադատության և իրավախախտման արդյունքում պատճառված վնասի հարթման ծրագրերը,

իւ. ստեղծագործական-ժամանցային գործունեությունը և նախասիրությունները,

ծ. հաստատությունից դուրս համայնքային միջոցառումները, ցերեկային կամ այլ տեսակի արձակուրդները,

կ. ազատմանը նախապատրաստելը և խնամքն ազատվելուց հետո:

78.1. Դպրոցական կրթությանը և մասնագիտական ուսուցմանը, որոշ դեպքերում՝ միջամտության այլ տեսակներին, պետք է աշխատանքի համեմատ նախապատվություն տրվի:

78.2. Հնարավորության դեպքում անչափահասներին անհրաժեշտ է հնարավորություն տալ հաճախելու տեղի դպրոցներ և վերապատրաստման կենտրոններ և մասնակցելու համայնքային այլ գործունեության:

78.3. Հաստատությունից դուրս գտնվող տեղի դպրոցներ կամ վերապատրաստման կենտրոններ հաճախելու անհնարինության դեպքում կրթությունը և վերապատրաստումը պետք է կազմակերպվի հաստատության ներսում, սակայն դրսի կրթական և ուսուցման հարցերով զբաղվող գերատեսչությունների հովանու ներքո:

78.4. Անչափահասները պետք է հնարավորություն ունենան բանտարկության ընթացքում շարունակելու իրենց դպրոցական կրթությունը կամ մասնագիտական ուսուցումը, իսկ նրանց նկատմամբ, ովքեր չեն ավարտել պարտադիր դպրոցական կրթությունը, կարող են նման պահանջներ սահմանվել:

78.5. Բանտարկության մեջ գտնվող անչափահասները պետք է ներգրավվեն տվյալ երկրի կրթության և մասնագիտական ուսուցման համակարգում, որպեսզի ազատվելուց հետո նրանք կարողանան առանց դժվարության շարունակել իրենց կրթությունը և մասնագիտական ուսուցումը:

79.1. Թիվ 77 կանոնում թվարկված գործունեության տեսակների հիման վրա պետք է կազմել անհատական ծրագիր, որում անհրաժեշտ է թվարկել գործունեության այն տեսակները, որոնց անչափահասը պետք է մասնակցի:

79.2. Այդ ծրագիրը պետք է նպատակաուղղված լինի բանտարկության սկզբից ի վեր անչափահասներին նախատրամադրելու, որպեսզի նրանք առավելագույնս օգուտ քաղեն իրենց ժամանակից և ձևավորեն հմտություններ ու կարողություններ, որոնք նրանց թույլ կտան վերաինտեգրվել հասարակությունում:

79.3. Ծրագիրը պետք է ուղղված լինի հնարավորինս վաղ ազատմանն անչափահասներին նախապատրաստելուն և հիշատակում պարունակի ազատվելուց հետո իրականացվող միջոցառումների մասին:

79.4. Ծրագիրը պետք է իրականացվի և պարբերաբար թարմացվի անչափահասների, շահագրգիռ գերատեսչությունների, և հնարավորության սահմաններում՝ անչափահասների ծնողների կամ օրինական ներկայացուցիչների մասնակցությամբ:

80.1. Ռեժիմը պետք է լինի այնպիսին, որպեսզի թույլ տա անչափահասներին՝ օրվա ընթացքում ննջարանային շինություններից դուրս հնարավորինս երկար ժամանակ անցկացնել, ինչն անհրաժեշտ է պատշաճ սոցիալական փոխգործակցության պատշաճ մակարդակ ապահովելու առումով: Նախընտրելի է, որպեսզի այդ տևողությունն օրվա ընթացքում առնվազն ութ ժամ կազմի:

80.2. Հաստատությունը պետք է նաև բովանդակալից միջոցառումներ կազմակերպի հանգստյան և տոն օրերին:

81. Ազատությունից զրկված բոլոր անչափահասներին անհրաժեշտ է թույլատրել, որպեսզի նրանք ամեն օր առնվազն երկու ժամ մարմնավարժանքով զբաղվեն, որից առնվազն մեկ ժամը՝ բացօթյա, եթե եղանակը թույլ է տալիս:

82.1. Հաստատությունը պետք է անչափահասներին ապահովի խթանիչ և ուսուցողական նշանակություն ունեցող բավարար աշխատանքային հնարավորություններով:

82.2. Աշխատանքը պետք է պատշաճ կերպով վարձատրվի:

82.3. Աշխատանքային ժամերին ռեժիմային միջոցառումների մասնակցելիս անչափահասները պետք է վարձատրվեն այնպես, ինչպես աշխատելու պարագայում:

82.4. Անչափահասները պետք է ստանան սոցիալական ապահովության միևնույն պատշաճ միջոցները, ինչ ազատ հասարակությունում:

Ե.11. Կապն արտաքին աշխարհի հետ

83. Անչափահասները պետք է առանց թվի սահմանափակման նամակագրություն վարելու և հնարավորինս հաճախ հեռախոսով իրենց ընտանիքների, այլ անձանց և դրսում գործող կազմակերպությունների հետ շփվելու, ինչպես նաև՝ այդ անձանց հետ պարբերաբար տեսակցելու հնարավորություն ունենան:

84. Տեսակցությունները պետք է կազմակերպվեն այնպես, որպեսզի անչափահասները հնարավորինս նորմալ ընտանեկան հարաբերություններ պահպանելու և զարգացնելու, ինչպես նաև՝ սոցիալական վերաինտեգրման հնարավորություններ ունենան:

85.1. Հաստատությունների համար պատասխանատու մարմինները պետք է անչափահասներին օժանդակեն արտաքին աշխարհի հետ անչափահասների պատշաճ կապը պահպանելու հարցում և նրանց դրա համար անհրաժեշտ միջոցներ տրամադրեն:

85.2. Հաղորդակցությունը և տեսակցությունները կարող են ենթարկվել այնպիսի սահմանափակումների և մոնիթորինգի, որոնք անհրաժեշտ են քրեական գործի քննության, կարգուկանոնի պահպանման, ապահովության և անվտանգության, քրեական հանցանքների կանխարգելման և հանցագործությունից տուժած անձանց պաշտպանության նկատառումներից ելնելով, սակայն այդ սահմանափակումները, այդ թվում՝ դատական որոշմամբ սահմանվածները, երբևէ չպետք է բացառեն շփումների ընդունված նվազագույն մակարդակը:

85.3. Անչափահասը պետք է անհապաղ տեղեկացվի որևէ մերձավոր ազգականի մահվան կամ ծանր հիվանդության մասին:

86.1. Նորմալ ռեժիմի պայմաններում անչափահասներին պետք է պարբերաբար որոշակի տևողությամբ արձակուրդներ տրամադրվեն՝ ուղեկցմամբ կամ առանց դրա: Բացի այդ, անչափահասները պետք է հնարավորություն ունենան լքելու հաստատությունը՝ մարդասիրական նկատառումներից ելնելով:

86.2. Եթե որոշակի ժամկետով պարբերական արձակուրդները հնարավոր չեն, անհրաժեշտ է լրացուցիչ կամ երկարատև տեսակցություններ ունենալու հնարավորություններ ստեղծել ընտանիքի անդամների կամ այն անձանց հետ, ովքեր կարող են դրական ներդրում ունենալ անչափահասի զարգացման գործում:

Ե.12. Խղճի, մտքի և կրոնի ազատությունը

87.1. Անհրաժեշտ է հարգել անչափահասի խղճի, մտքի և կրոնի ազատությունը:

87.2. Հաստատության ռեժիմը պետք է հնարավորինս կազմակերպվի այնպես, որպեսզի անչափահասները կարողանան հետևել իրենց կրոնին կամ դավանանքին, հաճախել տվյալ կրոնի կամ դավանանքի հետևորդ հավատարմագրված ներկայացուցիչների կողմից կազմակերպվող հոգևոր ծեսերի և հավաքների, մեկուսի պայմաններում հանդիպել իրենց հետ միևնույն կրոնին կամ դավանանքին պատկանող անձանց հետ և իրենց տրամադրության տակ ունենալ իրենց կրոնի կամ դավանանքի վերաբերյալ գրքեր կամ գրականություն:

87.3. Անչափահասները չեն կարող հարկադրվել՝ հետևելու կրոնին կամ դավանանքին, հաճախելու հոգևոր ծեսերի կամ հավաքների, մասնակցելու կրոնական արարողությունների կամ հանդիպելու այս կամ այն կրոնի կամ դավանանքի ներկայացուցչի հետ:

Ե.13. Կարգուկանոնը

Ե.13.1. Ընդհանուր մոտեցումը

88.1. Կարգուկանոնը պետք է հաստատվի այնպիսի ապահով և անվտանգ միջավայր ձևավորելու միջոցով, որի պայմաններում կհարգվի անչափահասների արժանապատվությունը և կապահովվի նրանց ֆիզիկական անվնասությունը, իսկ նրանց զարգացման հետ կապված առաջնային խնդիրները կիրականացվեն:

88.2. Առանձնակի ուշադրություն պետք է դարձվի խոցելի անչափահասների պաշտպանությանը և վիկտիմիզացիայի կանխարգելմանը:

88.3. Անձնակազմը պետք է դինամիկ մոտեցում ցուցաբերի ապահովության և անվտանգության հետ կապված հարցերին, ինչը թույլ կտա դրական փոխհարաբերություն պահպանել հաստատությունում պահվող անչափահասների հետ:

88.4. Հարկավոր է խրախուսել, որպեսզի անչափահասներն ինքնուրույն, անհատապես կամ խմբի կազմում նպաստեն հաստատությունում կարգուկանոնի պահպանմանը:

Ե.13.2. Խուզարկությունը

89.1. Անհրաժեշտ է ունենալ անչափահասների, անձնակազմի, այցելուների և շինությունների խուզարկության մանրամասն ընթացակարգեր: Խուզարկությունների անհրաժեշտության դեպքերը և խուզարկությունների տեսակները պետք է սահմանված լինեն ներպետական օրենսդրությամբ:

89.2. Խուզարկությունների ընթացքում անհրաժեշտ է հարգել տվյալ անչափահասների արժանապատվությունը և հնարավորության սահմաններում՝ անձնական անձեռնմխելիությունը: Անչափահասները պետք է խուզարկվեն անձնակազմի՝ միևնույն սեռին պատկանող անդամի կողմից: Մարմինը ներսից խուզարկելու անհրաժեշտությունը պետք է հիմնավորվի տվյալ դեպքում առկա հիմնավոր կասկածներով և պետք է իրականացվի միայն բուժաշխատողի կողմից:

89.3. Այցելուները պետք է խուզարկվեն միայն այն դեպքերում, երբ հիմնավոր կասկած կա առ այն, որ նրանք իրենց մոտ ունեն ինչ-որ առարկա, որը վտանգում է հաստատության ապահովությունն ու անվտանգությունը:

89.4. Անձնակազմը պետք է անցնի վերապատրաստումներ, որոնք թույլ կտան իրականացնել արդյունավետ խուզարկություններ՝ միևնույն ժամանակ հարգելով խուզարկվողների արժանապատվությունը և նրանց անձնական իրերի անվնասությունը:

Ե.13.3. Ուժի, ֆիզիկական զսպման միջոցների և զենքի գործադրումը

90.1. Անձնակազմը չպետք է անչափահասների նկատմամբ ուժ գործադրի, բացառությամբ այն հավակցյուտ դեպքերի, երբ դա անհրաժեշտ է ինքնապաշտպանության, փախուստի փորձը կանխելու, օրինական պահանջին չենթարկվելու, ինքնավնասման կամ այլոց, կամ գույքին վնաս պատճառելու ուղղակի սպառնալիքի:

90.2. Ուժը պետք է գործադրվի նվազագույն անհրաժեշտ չափով և տևողությամբ:

90.3. Անչափահասների հետ անմիջական առնչություն ունեցող անձնակազմը պետք է վերապատրաստվի ագրեսիվ վարքագիծը նվազագույն ուժ գործադրելով զսպելու գործում:

90.4. Անհրաժեշտ է ունենալ ուժի գործադրման վերաբերյալ մանրամասն ընթացակարգեր, այդ թվում՝ հետևյալի.

- ա.* կիրառվող ուժի տարբեր տեսակները,
- բ.* հանգամանքները, որոնց առկայության դեպքում կիրառվում է ուժի տվյալ տեսակը,
- գ.* ուժի տարբեր տեսակներ գործադրելու իրավասություն ունեցող անձնակազմի անդամները,
- դ.* նախքան ուժի գործադրումը պահանջվող թույլտվության մակարդակը,
- ե.* ուժի գործադրումից հետո ներկայացվող զեկուցագրերը,
- զ.* վերոհիշյալ զեկուցագրերը քննության առնելու ընթացակարգը:

91.1. Ձեռնաշղթաներ կամ զսպաշապիկներ չպետք է կիրառվեն, բացառությամբ այն դեպքերի, երբ ուժի գործադրման նվազ ազդեցիկ միջոցները ձախողվել են: Ձեռնաշղթաները կարող են կիրառվել նաև այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է բռնարարքից պաշտպանվելու կամ փոխադրման ժամանակ փախուստը կանխելու համար: Դրանք պետք է հանվեն անչափահասին դատական կամ վարչական մարմնի առջև կանգնեցնելուն պես, եթե տվյալ մարմինն այլ բան չորոշի:

91.2. Զսպամիջոցները չպետք է կիրառվեն ավելի տևողությամբ, քան խիստ անհրաժեշտ է: Շղթաների և ոտնազամերի կիրառումը պետք է արգելվի:

91.3. Զսպամիջոցների կիրառման եղանակը պետք է սահմանված լինի ներպետական օրենսդրությամբ:

91.4. Հանդարտեցման համար նախատեսված խցում տեղավորելը որպես զսպման ժամանակավոր միջոց կարող է կիրառվել բացառիկ դեպքերում և միայն մի քանի ժամ տևողությամբ, ընդ որում, այդ տևողությունը որևէ դեպքում չի կարող գերազանցել քսանչորս ժամը: Բուժաշխատողը պետք է տեղեկացվի նման մեկուսացման մասին և կարողանա անհապաղ այցելել տվյալ անչափահասին:

92. Ազատագրված անչափահասներին պահելու համար նախատեսված հաստատությունների անձնակազմին չպետք է թույլատրվի զենք կրել, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է արտակարգ օպերատիվ իրադրությամբ: Սոցիալական ապահովության և առողջապահական բնույթի հաստատություններում մահացու զենք կրելն արգելվում է:

Ե.13.4. Առանձնացումը անվտանգության և ապահովության նկատառումներով

93.1. Եթե խիստ բացառիկ դեպքերում անհրաժեշտ է այս կամ այն անչափահասին անվտանգության կամ ապահովության նկատառումներից ելնելով առանձնացնել մյուսներից, այդ մասին որոշումը պետք է կայացնի իրավասու մարմինը՝ ներպետական օրենսդրությամբ սահմանված հստակ ընթացակարգերի համաձայն, որոնցում պետք է նշվեն առանձնացման բնույթը, առավելագույն տևողությունը և հիմքերը:

93.2. Նման առանձնացումը պետք է պարբերաբար վերանայվի: Բացի այդ, անչափահասը կարող է թիվ 121 կանոնում նշված պայմաններով բողոք ներկայացնել առանձնացման հետ կապված ցանկացած հարցով: Բուժաշխատողը պետք է տեղեկացվի նման առանձնացման մասին և կարողանա անհապաղ այցելել տվյալ անչափահասին:

Ե.13.5. Կարգապահություն և տույժեր

94.1. Կարգապահական ընթացակարգերը պետք է վերջին միջոց համարվեն: Կարգապահական վարույթի և տույժերի փոխարեն նախապատվությունն անհրաժեշտ է տալ կոնֆլիկտների վերականգնողական լուծմանը և կրթական միջոցառումներին:

94.2. Կարգապահական խախտում պետք է համարվի միայն այն վարքագիծը, որը սպառնում է կարգուկանոնին, ապահովությանը կամ անվտանգությանը:

94.3. Ներպետական օրենսդրությամբ պետք է սահմանվեն կարգապահական խախտումներ համարվող գործողությունները կամ անգործությունը, կարգապահական վարույթի ընթացակարգը, կիրառվելիք տույժերի տեսակները և տևողությունը, նման տույժ կիրառելու իրավասություն ունեցող մարմինը և բողոքարկման ընթացակարգը:

94.4. Կարգապահական խախտումներ թույլ տալու մեջ մեղադրվող անչափահասներին պետք է իրենց համար հասկանալի ձևով և լեզվով տեղեկացնել իրենց վերագրվող խախտման բնույթի մասին և բավարար ժամանակ ու միջոցներ տրամադրել պաշտպանությանը նախապատրաստվելու համար, թույլատրել անձամբ կամ ծնողների կամ օրինական ներկայացուցիչների օգնությամբ

իրականացնել իրենց պաշտպանությունը կամ, արդարադատության շահերից ելնելով, իրավական օգնություն ստանալ այդ նպատակով:

95.1. Կարգապահական տույժերը պետք է ընտրվեն՝ հնարավորինս հաշվի առնելով դրանց կրթական ազդեցությունը: Դրանք չպետք է լինեն ավելի ծանր, քան բխում է խախտման լրջությունից:

95.2. Խմբային կամ մարմնական պատիժները, մութ խցերում տեղավորելը կամ անմարդկային և նվաստացնող պատժի այլ ձևերն արգելվում են:

95.3. Որպես տույժի միջոց մենախցում տեղավորելն անչափահասների նկատմամբ չի կիրառվում:

95.4. Կարգապահական նկատառումներից ելնելով առանձնացումը կարող է կիրառվել այն բացառիկ դեպքերում, երբ տույժի այլ միջոցները չեն կարող արդյունավետ լինել: Նման առանձնացումը պետք է կիրառվի որոշակի, հնարավորինս կարճ ժամկետով: Առանձնացման ընթացքում սահմանված ռեժիմը պետք է պատշաճ մարդկային շփումների, ընթերցանության և, եթե եղանակը թույլ է տալիս առնվազն մեկժամյա բացօթյա զբոսանքի հնարավորություն ընձեռի:

95.5. Բուժաշխատողը պետք է տեղեկացվի նման առանձնացման մասին և կարողանա այցելել տվյալ անչափահասին:

95.6. Կարգապահական տույժը չպետք է ընտանիքի հետ շփումների և տեսակցությունների թվի սահմանափակում ենթադրի, եթե կարգապահական խախտումը չի վերաբերում հենց նման շփումներին կամ տեսակցություններին:

95.7. Թիվ 81 կանոնով նախատեսված մարմնավարժանքը չպետք է սահմանափակվի կարգապահական տույժի կարգով:

Ե.14. Հաստատությունից հաստատություն փոխադրելը

96. Անչափահասները կարող են մեկ հաստատությունից մյուսը փոխադրվել, եթե նրանց տեղավորելու սկզբնական ցուցումները կամ հասարակությունում վերաինտեգրվելու հետագա խթանումը կարող են առավել արդյունավետ իրականացվել մեկ այլ հաստատությունում, կամ երբ այդ փոխադրումն անհրաժեշտ է անվտանգության և ապահովության հետ կապված լուրջ ռիսկերի կապակցությամբ:

97. Անչափահասները չեն կարող այլ հաստատություն փոխադրվել որպես տույժի միջոց:

98. Անչափահասը մի տեսակի հաստատությունից մյուսը կարող է փոխադրվել օրենքով նախատեսված դեպքերում՝ պատշաճ ուսումնասիրություն կատարելուց հետո դատական կամ վարչական մարմնի կայացրած որոշմամբ:

99.1. Անչափահասի վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը և տվյալները պետք է ևս փոխանցվեն՝ ինամքի շարունակականությունն ապահովելու նպատակով:

99.2. Անչափահասի փոխադրման պայմանները պետք է համապատասխանեն բանտարկության համար սահմանված մարդկային պայմաններին:

99.3. Անհրաժեշտ է ապահովել փոխադրվող անչափահասի ինքնության գաղտնիությունն ու անձնական անձեռնմխելիությունը:

Ե.15. Ազատմանը նախապատրաստելը

100.1. Ազատությունից զրկված բոլոր անչափահասները պետք է աջակցություն ստանան համայնքային կյանքին անցում կատարելու հարցում:

100.2. Բոլոր անչափահասները, ում մեղքը հաստատվել է, պետք է միջամտության հատուկ եղանակներով նախապատրաստվեն ազատման:

100.3. Այդ միջամտությունները պետք է ներառվեն թիվ 79.1 կանոնում նախատեսված անհատական ծրագրում և ճիշտ ժամանակին իրականացվեն նախքան ազատվելը:

101.1. Անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել ազատ հասարակությունում կյանքին անչափահասի սահուն անցումն ապահովելու ուղղությամբ:

101.2. Այդ քայլերից են՝ լրացուցիչ արձակուրդները, մասնակի կամ պայմանական ազատումը՝ արդյունավետ սոցիալական աջակցության համակցությամբ:

102.1. Ազատազրկման սկզբից նեթ հաստատության համար պատասխանատու մարմինները և ազատված անչափահասների նկատմամբ հսկողության և նրանց աջակցության ծառայություններն ու գերատեսչությունները պետք է սերտ գործակցեն՝ անչափահասներին համայնքում վերահաստատվելու հնարավորություններ ընձեռելու նպատակով, մասնավորապես՝

ա. աջակցելով ընտանիք վերադառնալու կամ խնամատար ընտանիք որոնելու հարցերում և օգնելով նրանց՝ այլ սոցիալական կապեր հաստատել,

բ. բնակության վայր որոնելով,

գ. նրանց կրթությունն ու վերապատրաստումը շարունակելուն օժանդակելով,

դ. աշխատանք գտնելով,

ե. նրանց համապատասխան սոցիալական և առողջապահական գերատեսչություններ ուղղորդելով,

զ. դրամական օժանդակություն ցուցաբերելով:

102.2. Նման ծառայությունների և գերատեսչությունների ներկայացուցիչները պետք է կարողանան այցելել հաստատություններում գտնվող անչափահասներին՝ ազատմանը նախապատրաստվելու գործում նրանց աջակցելու նպատակով:

102.3. Այդ ծառայություններն ու գործակալությունները պարտավոր են նախքան ազատման նախատեսված օրը արդյունավետ և ժամանակին աջակցություն ցուցաբերել:

103. Անչափահասների պայմանական ազատման դեպքերում նման պայմանական ազատումը ենթակա է նույն սկզբունքներին, որոնք վերաբերում են սույն կանոնների իմաստով համայնքային պատիժներին և այլ միջոցներին:

Ե.16. Օտարերկրյա քաղաքացիները

104.1. Օտարերկրյա քաղաքացի անչափահասները, ովքեր մնալու են այն երկրում, որտեղ պահվում են, պետք է արժանանան նույն վերաբերմունքին, ինչ այլ անչափահասները:

104.2. Քանի դեռ օտարերկրյա քաղաքացիներին իրենց ծագման երկիր վերադարձնելու վերաբերյալ հստակ որոշում չի կայացվել, նրանք պետք է արժանանան նույն վերաբերմունքին, ինչ այլ անչափահասները:

104.3. Անչափահասներին փոխադրելու որոշում կայացնելու դեպքում նրանք պետք է նախապատրաստվեն իրենց ծագման երկրում վերաինտեգրվելուն: Հնարավորության դեպքում սերտ համագործակցություն պետք է կայացվի անչափահասների սոցիալական ապահովության և արդարադատության գերատեսչությունների հետ՝ ծագման երկիր վերադառնալուն պես նման անչափահասներին անհրաժեշտ օժանդակությունն անհապաղ երաշխավորելու նպատակով:

104.4. Օտարերկրյա քաղաքացի անչափահասները պետք է տեղեկացվեն ազատագրվում իրենց ծագման երկրում կրելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու հնարավորության մասին:

104.5. Օտարերկրյա քաղաքացի անչափահասներին հարկավոր է անհրաժեշտության դեպքում թույլատրել առավել երկարատև տեսակցություններ ունենալ և օգտվել արտաքին աշխարհի հետ շփման այլ եղանակներից՝ նրանց սոցիալական մեկուսացումը մեղմելու նպատակով:

105.1. Հաստատություններում պահվող օտարերկրյա քաղաքացի անչափահասները պետք է անհապաղ տեղեկացվեն իրենց երկրի դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությանը կապվելու և վերջիններիս հետ հաղորդակցվելու համապատասխան միջոցներով ապահովվելու հնարավորության մասին:

105.2. Տվյալ երկրում դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություն չունեցող երկրի քաղաքացի, փախստականի կարգավիճակ ունեցող կամ քաղաքացիություն չունեցող անչափահասներին հարկավոր է նրանց շահերի պաշտպանությունն ստանձնած երկրի դիվանագիտական ներկայացուցչի կամ նման անձանց շահերին ծառայող պետական կամ միջազգային մարմինների հետ հաղորդակցվելու միջոցներ տրամադրել:

105.3. Հաստատության համար պատասխանատու և սոցիալական ապահովության մարմինները պետք է լիարժեք համագործակցեն նման անչափահասների շահերը ներկայացնող դիվանագիտական կամ հյուպատոսական պաշտոնյաների հետ՝ անչափահասների հատուկ կարիքները բավարարելու նպատակով:

105.4. Բացի այդ, արտաքսման ենթարկված անչափահասները պետք է այդ հարցերի շուրջ իրավական խորհրդատվություն և աջակցություն ստանան:

Ե.17. Էթնիկ և լեզվական փոքրամասնությունների ներկայացուցիչները հաստատություններում

106.1. Հատուկ միջոցներ պետք է ձեռնարկվեն էթնիկ և լեզվական փոքրամասնությունների պատկանող անչափահասների կարիքները բավարարելու համար:

106.2. Հնարավորության սահմաններում տարբեր խմբերին պետք է թույլատրվի հաստատությունում իրականացնել իրենց մշակութային ծիսակարգերը:

106.3. Լեզվական կարիքները պետք է բավարարվեն՝ օգտվելով համապատասխան թարգմանիչների ծառայություններից և տրամադրելով նյութեր՝ տվյալ հաստատությունում կիրառելի լեզուներով:

106.4. Հատուկ քայլեր պետք է ձեռնարկվեն՝ պաշտոնական լեզվին չտիրապետող անչափահասներին լեզվի դասընթացներ առաջարկելու ուղղությամբ:

Ե.18. Հաշմանդամություն ունեցող անչափահասները

107.1. Հաշմանդամություն ունեցող անչափահասները պետք է պահվեն սովորական հաստատություններում, որտեղ կեցության պայմանները պետք է հարմարեցված լինեն նրանց կարիքներին:

107.2. Հաշմանդամություն ունեցող անչափահասները, ում կարիքները չեն կարող բավարարվել սովորական հաստատություններում, պետք է փոխադրվեն մասնագիտացված այնպիսի հաստատություններ, որտեղ այդ կարիքները կարող են բավարարվել:

Զ. Հատուկ մաս

Զ.1. Ձերբակալությունը, մինչդասական կալանքը և նախքան պատիժն ազատությունից գրկելու այլ ձևերը

108. Բանտարկության մեջ գտնվող բոլոր անչափահաս իրավախախտները, ում մեղքը դատարանի կողմից չի հաստատվել, պետք է համարվեն անմեղ, իսկ նրանց նկատմամբ ռեժիմը կիրառելիս չպետք է առաջնորդվել հետագայում իրավախախտումը կատարելու համար դատապարտվելու ենթադրությամբ:

109. Բանտարկության սկզբնական շրջանում անչափահասների առանձնակի խոցելիությունը պետք է հաշվի առնվի՝ նրանց արժանապատվության նկատմամբ հարգանքը և անձնական անվնասությունը մշտապես ապահովելու նպատակով:

110. Նման անչափահասների շարունակական խնամքը երաշխավորելու նպատակով նրանք պետք է անմիջական աջակցություն ստանան ազատվելուց հետո կամ հետագայում ազատագրված անձնակազմում ազատագրված հետ չկապված պատիժների կամ այլ միջոցների կիրառման համար պատասխանատու գործակալությունների կողմից:

111. Նման անչափահասների ազատությունը պետք է սահմանափակվի այնքանով, որքանով անհրաժեշտ է նրանց բանտարկության նպատակներին հասնելու նպատակով:

112. Նման անչափահասներին չպետք է հարկադրաբար ներգրավել աշխատանքի, ենթարկել այնպիսի միջամտությունների կամ ստիպել մասնակցել այնպիսի միջոցառումների, որոնց համայնքում գտնվող անչափահասները չեն կարող հարկադրաբար ներգրավվել կամ մասնակցել:

113.1. Տարաբնույթ միջամտություններ և միջոցառումներ պետք է նախատեսված լինեն բանտարկված այն անչափահասների համար, ում մեղքը չի հաստատվել:

113.2. Եթե նման անչափահասները խնդրում են, որպեսզի իրենց ներգրավեն մեղքը հաստատված անչափահասների համար իրականացվող միջոցառումներին, նրանց այդ խնդրանքը պետք է հնարավորության սահմաններում բավարարվի:

Ձ.2. Սոցիալական ապահովության հաստատությունները

114. Սոցիալական ապահովության հաստատությունները նախևառաջ պետք է բաց հաստատություններ լինեն, իսկ «փակ» ծառայություններ մատուցեն միայն բացառիկ դեպքերում՝ հնարավորինս կարճ ժամկետով:

115. Սոցիալական ապահովության բոլոր հաստատությունները պետք է հավատարմագրված և գրանցված լինեն իրավասու հանրային իշխանությունների կողմից և պետք է ներպետական ստանդարտներին համապատասխանող խնամք տրամադրեն:

116. Այլ անչափահասների հետ միասին սոցիալական ապահովության հաստատություններում տեղավորված անչափահաս իրավախախտները պետք է արժանանան այնպիսի վերաբերմունքի, ինչպես առաջինները:

Ձ.3. Հոգեկան առողջության հաստատություններ

117. Հոգեկան առողջության հաստատություններում պահվող անչափահաս իրավախախտները պետք է ստանան նույն ընդհանուր խնամքը, ինչ նման հաստատություններում պահվողները, և ներգրավվեն ռեժիմային նույնպիսի գործունեության, ինչ ազատությունից զրկված այլ անչափահասները:

118. Հոգեկան առողջության խնդիրների բուժումը նման հաստատություններում պետք է անհրաժեշտ լինի միայն բժշկական նկատառումներից ելնելով, պետք է իրականացվի հոգեկան առողջության հաստատությունների համար ընդունված և հավաստագրված ներպետական ստանդարտներին համապատասխան և ղեկավարվի համապատասխան միջազգային փաստաթղթերում սահմանված սկզբունքներով:

119. Հոգեկան առողջության հաստատություններում անչափահաս իրավախախտների համար ապահովության և անվտանգության ստանդարտները պետք է սահմանվեն՝ առաջին հերթին ելնելով բժշկական նկատառումներից:

Մաս IV. Իրավական խորհրդատվություն և աջակցություն

120.1. Անչափահասները և նրանց ծնողները կամ օրինական ներկայացուցիչներն իրավունք ունեն իրավական խորհրդատվություն և օգնություն ստանալ պատիժների կամ այլ միջոցների նշանակման և իրականացման հետ կապված որևէ հարցի շուրջ:

120.2. Իրավասու մարմինները պետք է անչափահասների համար ողջամիտ պայմաններ ապահովեն նման խորհրդատվությունից և օգնությունից, այդ թվում՝ իրավախորհրդատուների հետ անսահմանափակ և չվերահսկվող տեսակցություններից արդյունավետ և գաղտնի պայմաններում օգտվելու համար:

120.3. Պետությունը պետք է անվճար իրավական օգնություն տրամադրի անչափահասներին, նրանց ծնողներին կամ օրինական ներկայացուցիչներին, երբ արդարադատության շահերը դա են պահանջում:

Մաս V. Բողոքներ ներկայացնելու ընթացակարգեր. տեսչական ստուգումներ և մոնիթորինգ

Է. Բողոքներ ներկայացնելու ընթացակարգեր

121. Անչափահասները և նրանց ծնողները կամ օրինական ներկայացուցիչները պետք է տվյալ հաստատության կամ տվյալ համայնքային պատժի կամ այլ միջոցի համար պատասխանատու մարմնին դիմումներ կամ բողոքներ ներկայացնելու լայն հնարավորություններ ունենան:

122.1. Դիմումներ կամ բողոքներ ներկայացնելու ընթացակարգերը պետք է պարզ և արդյունավետ լինեն: Այդ դիմումների կամ բողոքների վերաբերյալ որոշումները պետք է արագ կայացվեն:

122.2. Բողոքներին ընթացք տալիս և դիմումները բավարարելիս նախապատվությունը պետք է տրվի մեղիացիային և կոնֆլիկտների վերականգնողական լուծմանը:

122.3. Դիմումը կամ բողոքը մերժելու դեպքում մերժման պատճառները պետք է հայտնվեն անչափահասին և, անհրաժեշտության դեպքում, դիմումը կամ բողոքը ներկայացրած ծնողին կամ օրինական ներկայացուցիչին: Անչափահասը կամ համապատասխան դեպքերում՝ ծնողը կամ օրինական ներկայացուցիչը պետք է այդ որոշումներն անկախ և անկողմնակալ մարմնին բողոքարկելու իրավունք ունենան:

122.4. Այդ մարմինը բողոքարկման գործընթացը պետք է վարի հետևյալ պայմանների պահպանմամբ.

ա. անչափահասների, նրանց կարիքների և մտահոգությունների նկատմամբ սրտացավ կերպով.

բ. անչափահասների հետ կապված խնդիրներին տիրապետող անձանց կողմից.

գ. անչափահասներին պահելու կամ նրանց նկատմամբ նշանակված համայնքային պատիժների կամ այլ միջոցների իրականացման վայրին հնարավորինս մոտ վայրում:

122.5. Անգամ այն դեպքերում, երբ նախնական բողոքը կամ դիմումը կամ հետագա բողոքարկումն ի սկզբանե իրականացվել է գրավոր, անչափահասը պետք է անձամբ լսվելու հնարավորություն ունենա:

123. Անչափահասները չպետք է պատժվեն դիմում կամ բողոք ներկայացնելու համար:

124. Անչափահասները և նրանց ծնողները կամ օրինական ներկայացուցիչներն իրավունք ունեն իրավական խորհրդատվություն պահանջել ներկայացված բողոքների և բողոքարկման ընթացակարգերի կապակցությամբ, ինչպես նաև՝ օգտվել իրավական օգնությունից այն դեպքերում, երբ դա բխում է արդարադատության շահերից:

Ը. Տեսչական ստուգումները և մոնիթորինգը

125. Ազատագրված անչափահասներին պահելու համար նախատեսված հաստատությունները և համայնքային պատիժները և այլ միջոցներն իրականացնող մարմինները պետք է կանոնավոր պետական ստուգումների ենթարկվեն՝ ներպետական և միջազգային օրենսդրությանը և սույն

կանոնների դրույթներին դրանց գործունեության համապատասխանությունը ստուգելու նպատակով:

126.1. Նման հաստատություններում սահմանված պայմանները և ազատությունից զրկված կամ համայնքային պատիժների կամ միջոցների ենթարկված անչափահասների նկատմամբ վերաբերմունքը պետք է մոնիթորինգի ենթարկվի անկախ մարմնի կամ մարմինների կողմից, որոնց հետ անչափահասները պետք է կարողանան հանդիպել մեկուսի պայմաններում, և որոնց եզրակացությունները պետք է հրապարակվեն:

126.2. Նման անկախ մոնիթորինգի ժամանակ առանձնակի ուշադրություն պետք է դարձվի ուժի կամ զսպամիջոցների գործադրմանը, կարգապահական տույժերին և սահմանափակող բնույթի վերաբերմունքի այլ եղանակների հետ կապված հարցերին:

126.3. Անչափահասների մահվան կամ լուրջ վնասվածքի բոլոր դեպքերը պետք է արագ, համակողմանի և անկախ քննության ենթարկվեն:

126.4. Անհրաժեշտ է խրախուսել նման անկախ մոնիթորինգի մարմինների համագործակցությունը միջազգային այնպիսի գործակալությունների հետ, որոնք իրավունք ունեն այցելելու ազատությունից զրկված անչափահասներին պահելու համար նախատեսված հաստատություններ:

Մաս VI. Անձնակազմը

127.1. Անչափահասների նկատմամբ համայնքային պատիժների և այլ միջոցների, ինչպես նաև ազատազրկման իրականացման համար պատասխանատու անձնակազմի վերաբերյալ համապարփակ քաղաքականությունը պետք է սահմանվի պաշտոնական փաստաթղթով, որը կանդրադառնա անձնակազմի հավաքագրմանը, ընտրությանը, վերապատրաստմանը, կարգավիճակին, ղեկավարների պատասխանատվությանը և աշխատանքային պայմաններին:

127.2. Այդ քաղաքականությամբ պետք է սահմանվեն նաև նման անչափահասների հետ աշխատող անձնակազմի հիմնարար էթիկական ստանդարտները՝ կենտրոնանալով անչափահասների համապատասխան խմբի վրա: Դրանով պետք է նաև նախատեսվի արդյունավետ մեխանիզմ՝ էթիկական և մասնագիտական ստանդարտների խախտումներով զբաղվելու համար:

128.1. Անհրաժեշտ է ունենալ անչափահասների հետ աշխատող անձնակազմի հավաքագրման և ընտրության հատուկ ընթացակարգեր՝ հաշվի առնելով անչափահասների և նրանց ընտանիքների հետ աշխատելու համար անհրաժեշտ անձնական որակները և մասնագիտական որակավորումը:

128.2. Հավաքագրման և ընտրության ընթացակարգերը պետք է լինեն հստակ, արդարացի և ոչ խտրական:

128.3. Անձնակազմ հավաքագրելիս և ընտրելիս հարկավոր է հաշվի առնել անչափահասների տվյալ խմբի լեզվական և մշակութային առանձնահատկություններին տիրապետող տղամարդկանց և կանանց աշխատանքի ընդունելու անհրաժեշտությունը:

129.1. Անչափահասների նկատմամբ համայնքային պատիժների և այլ միջոցների, ինչպես նաև ազատազրկման իրականացման համար պատասխանատու անձնակազմը պետք է անցնի պատշաճ վերապատրաստում, որի ընթացքում անդրադարձ կկատարվի նրանց աշխատանքի տեսական և

գործնական կողմերին, և որով անձնակազմը կուղղորդվի, ինչը թույլ կտա նրանց իրատեսական պատկերացում կազմել իրենց գործունեության նեղ ոլորտի, իրենց գործնական պարտականությունների և աշխատանքի էթիկական պահանջների վերաբերյալ:

129.2. Անձնակազմի մասնագիտական գիտելիքները պետք է պարբերաբար թարմացվեն և կատարելագործվեն՝ ծառայությանը զուգահեռ վերապատրաստումների, վերահսկողության և աշխատանքի վերանայման ու գնահատման միջոցով:

129.3. Վերապատրաստումը պետք է սկսվի հետևյալի վրա.

ա. տվյալ մասնագիտության էթիկան և հիմնական արժեքները.

բ. երեխայի իրավունքների և անչափահասներին անընդունելի վերաբերմունքից պաշտպանելու ներպետական երաշխիքները և միջազգային փաստաթղթերը,

գ. անչափահասների և ընտանիքի վերաբերյալ օրենսդրությունը, զարգացման հոգեբանությունը, սոցիալական և կրթական աշխատանքն անչափահասների հետ,

դ. անձնակազմի հրահանգավորումը՝ անչափահասների ուղղորդման և շահագրգռելու հարցերի շուրջ, նրանց հարգանքը վաստակելը և անչափահասների համար որպես դրական օրինակ ու հեռանկար ծառայելը,

ե. անչափահասների և նրանց ընտանիքների հետ մասնագիտական փոխհարաբերությունների հաստատումը և պահպանումը,

զ. միջամտության փորձված մեթոդները և հաջողված փորձը,

է. անչափահասների զանազան խմբերի հետ աշխատելու մեթոդները,

ը. բազմամասնագիտական թիմերի, ինչպես նաև՝ անհատ անչափահասների հետ աշխատող այլ հաստատությունների հետ համագործակցության եղանակները:

130. Անչափահասների նկատմամբ համայնքային պատիժների և այլ միջոցների, ինչպես նաև ազատազրկման իրականացման համար պատասխանատու անձնակազմի անդամների թիվը պետք է բավարար լինի նրանց բազմազան պարտականություններն արդյունավետ իրականացնելու համար և ներառի տարբեր ոլորտների բավարար թվով մասնագետներ՝ իրենց ինամքին հանձնված անչափահասների կարիքները բավարարելու համար:

131.1. Անձնակազմը, որպես կանոն, պետք է աշխատի մշտական հիմունքներով:

131.2. Պետք է խրախուսել համապատասխան կամավորների ներգրավումն անչափահասների հետ իրականացվող աշխատանքներին:

131.3. Պատիժների կամ այլ միջոցների իրականացման համար պատասխանատու մարմինը պատասխանատվություն է կրում սույն կանոնների պահպանման համար՝ անգամ եթե իրականացման գործընթացում ներգրավված են այլ կազմակերպություններ կամ անհատներ ևս՝ անկախ այն հանգամանքից՝ նրանք Վճարվում են իրենց ծառայությունների դիմաց, թե՛ ոչ:

132. Անձնակազմի աշխատանքը պետք է կազմակերպվի այնպես, որպեսզի ապահովվի անչափահասների հետ տարվող աշխատանքների շարունակականությունը:

133. Անչափահասների հետ աշխատող անձնակազմը պետք է ապահովվի աշխատանքի պատշաճ պայմաններով և աշխատանքի բնույթին համարժեք վարձատրությամբ, որը համեմատելի է նույնանման մասնագիտության աշխատանքներում ներգրավված անձնակազմի վարձատրությանը:

134.1. Համայնքի ներսում և փակ հաստատությունում անչափահասների հետ աշխատող անձնակազմերի միջև համագործակցությունն ամրապնդելու համար անհրաժեշտ է խթանել այդ երկու խմբերի համար միմյանց փոխարինելու կամ մյուս միջավայրում աշխատելու վերաբերյալ վերապատրաստումների կազմակերպումը:

134.2. Բյուջետային սահմանափակումները չպետք է անհրաժեշտ որակավորում չունեցող անձանց ժամանակավորապես այլ աշխատանքի տեղավորելու հիմք հանդիսանան:

Մաս VII. Գնահատում, հետազոտություն, աշխատանք լրատվամիջոցների և հանրության հետ

I. Գնահատում և հետազոտություն

135. Անչափահասների համար նախատեսված պատիժները և այլ միջոցները պետք է մշակվեն հետազոտությունների և գիտական գնահատման հիման վրա:

136.1. Այդ նպատակով անհրաժեշտ է հավաքել համեմատական տվյալներ, ինչը թույլ կտա գնահատել թե՛ փակ հաստատություններում իրականացվող, և թե՛ համանքային պատիժների և այլ միջոցների հաջողվածությունը կամ ձախողվածությունը:

136.2. Անհրաժեշտ է նաև տվյալներ հավաքել անչափահասների անձնական և սոցիալական հանգամանքների, ինչպես նաև՝ անչափահասներին պահելու համար նախատեսված հաստատություններում ընդունված պայմանների վերաբերյալ:

136.3. Իշխանության մարմինները պետք է պատասխանատվություն կրեն այնպիսի վիճակագրական տվյալներ հավաքելու համար, որը թույլ կտա տարածաշրջանային և այլ համեմատություններ իրականացնել:

137. Անհրաժեշտ է խթանել անչափահասների հետ աշխատանքի բոլոր կողմերին անդրադարձող հետազոտություններն անկախ մարմինների կողմից՝ ֆինանսավորում և տվյալներ տրամադրելու և հաստատություններ դրանց մուտքը թույլատրելու միջոցով: Հետազոտության արդյունքները պետք է հրապարակվեն, այդ թվում այն դեպքերում, երբ այդ հետազոտությունները կատարվել են ներպետական իշխանության մարմինների կողմից:

138. Հետազոտությունների ընթացքում անհրաժեշտ է հարգել անչափահասների անձնական անձեռնմխելիությունը և հարգել տվյալների պաշտպանության վերաբերյալ ներպետական և միջազգային օրենսդրությամբ սահմանված ստանդարտները:

Ժ. Աշխատանքը լրատվամիջոցների և հանրության հետ

139.1. Լրատվամիջոցները և հանրությունը պետք է պարբերաբար փաստերի վրա հիմնված տեղեկատվություն ստանան անչափահասների ազատագրկման համար նախատեսված հաստատություններում սահմանված պայմանների, ինչպես նաև՝ անչափահասների նկատմամբ համայնքային պատիժներ և այլ միջոցներ իրականացնելու ուղղությամբ ձեռնարկվելիք քայլերի վերաբերյալ:

139.2. Լրատվամիջոցները և հանրությունը պետք է տեղեկացվեն անչափահասների նկատմամբ նշանակվող համայնքային պատիժների և այլ միջոցների, ինչպես նաև ազատազրկման նպատակի, դրանք իրականացնող անձնակազմի աշխատանքի մասին՝ այդ պատիժների և այլ միջոցների նշանակության մասին հասարակության առավել ճիշտ ընկալումը խրախուսելու նպատակով:

140. Պետք է խրախուսել պատասխանատու մարմինների կողմից անչափահասներին պահելու համար նախատեսված հաստատություններում տեղի ունեցող զարգացումների և համայնքային պատիժների և այլ միջոցների իրականացման վերաբերյալ պարբերական զեկույցների հրապարակումը:

141. Լրատվամիջոցները և անչափահասների հարցերով մասնագիտական հետաքրքրված հանրությունը պետք է կարողանա մուտք գործել անչափահասներին պահելու համար նախատեսված հաստատություններ՝ այդ անչափահասների անձնական անձեռնմխելիությունը և այլ իրավունքները պաշտպանելու պայմանով:

Մաս VIII. Կանոնների վերանայումը

142. Սույն կանոնները պետք է պարբերաբար վերանայվեն:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ Rec(2003)20 հանձնարարականը անդամ երկրներին՝ անչափահասների հանցավորությանն արձագանքելու նոր ուղիների և անչափահասների գործերով արդարադատության դերի վերաբերյալ (Recommendation Rec(2003)20 of the Committee of Ministers to member states concerning new ways of dealing with juvenile delinquency and the role of juvenile justice)

(Նախարարների կոմիտեի կողմից հաստատվել է 2003թ. սեպտեմբերի 24-ին՝ փոխնախարարների թիվ 853 հանդիպման ժամանակ)

Նախարարների կոմիտեն, առաջնորդվելով Եվրոպայի խորհրդի կանոնադրության թիվ 15-ը հոդվածով,

Ուշադրության առնելով, որ անչափահասների հանցավորությունը մի շարք եվրոպական երկրներում ահագնացող մտահոգության առարկա է,

Քաջատեղյակ լինելով, որ չնայած անչափահասների հանցավորության մակարդակն ընդհանուր առմամբ քիչ թե շատ կայուն է, անչափահասների հանցավորության բնույթը և լրջությունը նոր արձագանքներ ու միջամտության նոր մեթոդներ է պահանջում,

Հաշվի առնելով, որ քրեական արդարադատության ավանդական համակարգն ինքնին չի կարող պատշաճ լուծումներ առաջարկել անչափահաս իրավախախտների նկատմամբ վերաբերմունքի առնչությամբ, քանզի վերջիններիս հատուկ կրթական և սոցիալական կարիքները տարբերվում են չափահասների կարիքներից,

Համոզված լինելով, որ անչափահասների հանցավորությանը տրվող արձագանքները պետք է բազմամասնագիտական և բազմազերատեսչական լինեն և պետք է մշակված լինեն այնպես, որպեսզի հնարավոր լինի անդրադառնալ հասարակության տարբեր մակարդակներում (անհատ, ընտանիք, դպրոց և համայնք), դերակատարություն ունեցող տարբեր գործոններին,

Նկատի ունենալով, որ իրավական առումով չափահասության տարիքը միշտ չէ, որ համապատասխանում է հասունության տարիքին, և որ չափահասության տարիքի հասած երիտասարդ իրավախախտների համար կարող է անչափահասների համար նախատեսված վերաբերմունքին համարժեք արձագանք պահանջվել,

Այնուհետ նկատի առնելով, որ անչափահաս իրավախախտների որոշ խմբեր, ինչպիսիք են՝ էթնիկ փոքրամասնությունները, երիտասարդ կանայք, խմբի կազմում իրավախախտում կատարողները, կարող են միջամտության հատուկ ծրագրերի կարիք ունենալ,

Ի թիվս այլ ակտերի, հաշվի առնելով Անչափահասների հանցավորությանը սոցիալական արձագանքների վերաբերյալ թիվ R(87)20 հանձնարարականը, Ներգաղթյալ ընտանիքներից սերող անչափահասների կողմից կատարվող հանցավորությանը սոցիալական արձագանքների վերաբերյալ թիվ R(88)6 հանձնարարականը, Հանցավորության կանխարգելման գործում վաղ հոգե-սոցիալական միջամտության դերի մասին թիվ Rec(2000)20 հանձնարարականը,

Նկատի առնելով երիտասարդ իրավախախտների և հանցավորության վերաբերյալ քաղաքականության հարցերով թիվ 10 քրեաբանական երկխոսության արդյունքները (1991),

Հաշվի առնելով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, Երեխայի իրավունքների իրականացման մասին եվրոպական կոնվենցիան, Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան, Անչափահասների գործերով արդարադատության իրականացման ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները (Պեկինյան կանոններ), Անչափահասների հանցավորությունը կանխելու վերաբերյալ ՄԱԿ-ի ուղենիշները (Ռիադյան ուղենիշներ) և Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության վերաբերյալ ՄԱԿ-ի կանոնները,

Հանձնարարում է անդամ երկրների կառավարություններին.

- իրենց օրենսդրությունում, քաղաքականությունում և պրակտիկայում առաջնորդվել սույն հանձնարարականի հավելվածում զետեղված կանոններով,
- սույն հանձնարարականը և դրան կից պարզաբանող հուշագիրը ներկայացնել բոլոր գերատեսչությունների, լրատվամիջոցների և հանրության ուշադրությանը,
- ընդունել համայնքային պատիժների և այլ միջոցների վերաբերյալ առանձին և հատուկ եվրոպական կանոնների և անչափահասների վերաբերյալ եվրոպական բանտային կանոնների անհրաժեշտությունը:

I. Սահմանումներ

Սույն հանձնարարականի իմաստով.

- «անչափահասներ» արտահայտությունը վերաբերում է այն անձանց, ովքեր հասել են քրեական պատասխանատվության տարիքի, սակայն չափահասության տարիքի չեն հասել, այդուհանդերձ, սույն հանձնարարականը կարող է տարածվել նաև այդ տարիքային շրջանակներին մոտ, սակայն դրանցից դուրս գտնվող անձանց վրա,
- «հանցավորություն» արտահայտությունը վերաբերում է այն գործողություններին, որոնց վրա տարածվում է քրեական օրենսդրությունը: Որոշ երկրներում դա վերաբերում է հակասոցիալական և/կամ իրավախախտ վարքագծին, որը կարգավորվում է վարչական կամ քաղաքացիական օրենսդրությամբ,
- «անչափահասների գործերով արդարադատության համակարգը» երիտասարդների հանցավորության դեմ պայքարի համակողմանի մոտեցման պաշտոնական բաղադրիչ է: Երիտասարդության հարցերով զբաղվող դատարաններից բացի՝ այն ներառում է այնպիսի պաշտոնական մարմիններ ու գերատեսչություններ, ինչպիսիք են՝ ոստիկանությունը, դատախազությունը, փաստաբանական ծառայությունը, պրոբացիոն ծառայությունը և պատժային հաստատությունները: Այդ համակարգը սերտ համագործակցում է հարակից այնպիսի գերատեսչությունների հետ, ինչպիսիք են՝ առողջապահական, կրթական, սոցիալական ապահովության գերատեսչությունները և ոչ կառավարական մարմինները, ինչպիսիք են՝ տուժողներին և վկաներին աջակցություն ցուցաբերող ծառայությունները:

II. Առավել ռազմավարական մոտեցում

1. Անչափահասների գործերով արդարադատության և անչափահասների հանցավորության դեմ պայքարի հարակից միջոցների սկզբունքային նպատակները պետք է հանգեն հետևյալին.

I. կանխարգելել հանցավորությունը և կրկնահանցավորությունը,

II. (վերա)սոցիալիզացնել և (վերա)ինտեգրել իրավախախտներին,

III. անդրադառնալ տուժողների կարիքներին ու շահերին:

2. Անչափահասների գործերով արդարադատության համակարգը պետք է դիտվի որպես անչափահասների հանցավորության կանխարգելման առավել ընդգրկուն համայնքային ռազմավարության բաղադրիչներից մեկը, որի դեպքում հաշվի են առնվում ընտանիքի, դպրոցի, հարևանների և տարեկիցների հետ կապված այն գործոնները, որոնց պայմաններում իրավախախտումը տեղի է ունեցել:

3. Առկա միջոցները պետք է հատկապես նպատակաուղղվեն լուրջ, բռնությամբ զուգորդված, կրկնվող, թմրանյութերի և ալկոհոլի չարաշահման հետ կապված հանցագործությունների հետ աշխատելու համար:

4. Անհրաժեշտ է նաև մշակել էթնիկ փոքրամասնությունները ներկայացնող երիտասարդների, անչափահասների խմբերի, երիտասարդ կանանց և քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձանց կողմից հանցավորության և կրկնահանցավորության կանխարգելման առավել համապատասխան և արդյունավետ միջոցներ:

5. Անչափահաս իրավախախտների հետ կապված միջամտությունները պետք է հնարավորության սահմաններում գիտականորեն ապացուցված լինեն այն առումով, թե ինչն է առավել արդյունավետ ներգործում, ում նկատմամբ և ինչ հանգամանքներում:

6. Խտրականությունը կանխարգելելու նպատակով հանրային իշխանության մարմինները պետք է էթնիկ փոքրամասնությունները ներկայացնող երիտասարդների վրա նոր քաղաքականության և պրակտիկայի հավանական «ներգործության» մասին եզրակացություն կազմեն:

III. Արձագանքի նոր եղանակներ

7. Անհրաժեշտ է շարունակել պաշտոնական քրեական հետապնդման համապատասխան տարբեր այլընտրանքների ընդլայնումը: Դրանք պետք է ընդհանուր ընթացակարգի մաս կազմեն, դրանք կիրառելիս պետք է հարգել համարժեքության սկզբունքը, հաշվի առնել անչափահասի լավագույն շահերը, և սկզբունքորեն կիրառվեն միայն այն դեպքերում, երբ իրավախախտն ընդունել է իր մեղքը:

8. Անչափահասների կողմից կատարվող լուրջ, բռնությամբ զուգորդված և կրկնվող հանցագործությունների առնչությամբ անդամ երկրները պետք է մշակեն նորարարական և առավել արդյունավետ (սակայն համարժեք) համայնքային պատիժների և այլ միջոցների լայն հնարավորություններ: Դրանք պետք է ուղղակի անդրադառնան իրավախախտ վարքագծին, ինչպես նաև՝ իրավախախտի կարիքներին: Դրանք պետք է նաև անդրադառնան իրավախախտի ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին (եթե չի համարվում, որ դա հակառակ

ազդեցություն կունենա) և հնարավորության ու նպատակահարմարության դեպքում տրամադրեն մեղիացիայի և տուժողին պատճառված վնասը հարթելու ծառայություններ:

9. Մեղավորությունը ճանաչելիս պետք է ավելի լավ հաշվի առնվեն իրավախախտի տարիքը և հասունությունը, իրավախախտի զարգացման աստիճանը, իսկ քրեական միջոցների կիրառման ծավալները կարելի է ավելացնել, եթե անհատական մեղավորությունը ևս ավելանում է:

10. Անհրաժեշտ է խրախուսել ծնողների (կամ օրինական ներկայացուցիչների) տեղեկացվածությունը երեխաների կողմից կատարվող հանցագործությունների առնչությամբ իրենց պատասխանատվության մասին: Նրանք պետք է մասնակցեն դատական նիստերին (եթե չի համարվում, որ դա հակառակ ազդեցություն կունենա), և անհրաժեշտության դեպքում օգնություն, աջակցություն և ուղղորդում ստանան: Նրանցից կարող է պահանջվել հաճախել խորհրդատվությունների կամ ծնողների վերապատրաստման դասընթացների, ապահովել իրենց երեխայի հաճախումը դպրոց և համայնքային պատիժները և այլ միջոցներն իրականացնելիս օժանդակել պաշտոնական մարմիններին:

11. Չափահասության ձգձգվող անցումային փուլը հաղթահարելու համար 21 տարին չլրացած երիտասարդների նկատմամբ պետք է թույլատրվի կիրառել նույն վերաբերմունքը և միջամտությունը, ինչ անչափահասների պարագայում, եթե դատավորը գտնում է, որ նրանք բավարար չափով հասուն չեն և չեն կարող չափահասների պես պատասխանատվություն կրել իրենց գործողությունների համար:

12. Աշխատաշուկա 21 տարին չլրացած երիտասարդ իրավախախտների մուտքն ապահովելու համար անհրաժեշտ է գործադրել բոլոր ջանքերը, որպեսզի հավանական գործատուները նրանցից նախկին դատվածության տեղեկանք չպահանջեն, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է՝ աշխատանքի բնույթից ելնելով:

13. Անհրաժեշտ է մշակել հետագա կրկնահանցավորության ռիսկը գնահատելու գործիքներ, որպեսզի կատարվելիք միջամտությունների բնույթը, ինտենսիվությունը և տևողությունը հնարավորինս բխի կրկնահանցավորության ռիսկից և իրավախախտի կարիքներից՝ մշտապես նկատի առնելով համարժեքության սկզբունքը: Նպատակահարմարության դեպքում պետք է խրախուսել համապատասխան գերատեսչությունների կողմից տեղեկատվության տրամադրումը՝ սովյալների պաշտպանության մասին օրենսդրության պահանջներին համապատասխան:

14. Քրեական վարույթի փուլերից յուրաքանչյուրի համար պետք է սահմանվեն կարճ ժամկետներ՝ ձգձգումների դեպքերը նվազեցնելու և անչափահասների հանցավորությանը հնարավորինս արագ արձագանքելու նպատակով: Բոլոր դեպքերում արդարադատության գործընթացն արագացնելուն և դրա արդյունավետությունը կատարելագործելուն ուղղված միջոցները պետք է համարժեք լինեն պատշաճ ընթացակարգերի հետ կապված պահանջներին:

15. Անչափահասներին ուստիկանությունում արգելանքի տակ պահելու դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել նրանց կարգավիճակը՝ որպես անչափահաս, նրանց տարիքը, խոցելիությունն ու հասունության աստիճանը: Նրանք պետք է անհապաղ, լիովին հասկանալի ձևով տեղեկացվեն իրենց իրավունքների ու տրամադրվող երաշխիքների մասին: Ուստիկանությունում հարցաքննվելիս

նրանց, որպես կանոն, պետք է ուղեկցեն ծնողները/օրինական ներկայացուցիչը կամ համապատասխան այլ չափահաս անձ: Նրանք պետք է նաև իրավունք ունենան օգտվելու փաստաբանի կամ բժշկի ծառայությունից: Նրանք կարող են ուստիկանությունում ձերբակալված պահվել քառասնութ ժամը չգերազանցող ընդհանուր տևողությամբ, իսկ առավել երիտասարդ իրավախախտների պարագայում այդ ժամկետն է՝ 1 ավելի պետք է կրճատվի: Անչափահասներին ուստիկանությունում պահելը պետք է վերահսկվի իրավասու մարմինների կողմից:

16. Երբ անչափահաս կասկածյալները որպես ծայրահեղ միջոց կալանավորվում են, մինչև դատավարության մեկնարկը նրանք կալանքի տակ կարող են պահվել վեց ամսից ոչ ավելի տևողությամբ: Այդ ժամկետը կարող է երկարաձգվել միայն այն դեպքում, երբ տվյալ գործում չներգրավված դատավորը եզրակացնում է, որ դատավարության հետաձգումը միանգամայն արդարացված է բացառիկ հանգամանքներով:

17. Հնարավորության դեպքում անչափահաս մեղադրյալների նկատմամբ պետք է կիրառվեն կալանավորման այնպիսի այլընտրանքներ, ինչպիսիք են՝ ազգականների, խնամատար ընտանիքների հսկողությանը հանձնելը կամ տեղավորման այլ եղանակները: Կալանավորումը որևէ դեպքում չպետք է կիրառվի որպես պատիժ կամ ահաբեկման միջոց, կամ երեխայի պաշտպանության կամ հոգեկան առողջության հետ կապված միջոցների փոխարեն:

18. Անչափահասի հետագա հանցավորությունը կանխելու նպատակով անչափահասին կալանավորելու հարցը վճռելիս դատարանները պետք է ռիսկի լիարժեք գնահատում իրականացնեն՝ հիմնվելով երիտասարդի ինքնության և նրա հետ կապված սոցիալական հանգամանքների վերաբերյալ հավաստի տեղեկատվության վրա:

19. Ազատությունից զրկված անչափահասներին ազատման նախապատրաստելը պետք է մեկնարկի նրանց պատժի առաջին օրվանից: Կարիքների և ռիսկի գնահատումը պետք է վերաինտեգրման ծրագրի առաջին քայլը լինի, որն իրավախախտներին լիովին կնախապատրաստի ազատման՝ համակարգված կերպով անդրադառնալով նրանց կրթական, աշխատանքային, բնակարանային կարիքներին և վերահսկողությանը, ընտանեկան ու սոցիալական միջավայրին:

20. Հարկավոր է որդեգրել վերաինտեգրման փուլային մոտեցում՝ թույլատրելով արձակումներ, օգտագործելով բաց տիպի հաստատությունների, վաղաժամկետ ազատման միջոցների և սոցիալական վերականգնման ստորաբաժանումների հնարավորությունները: Պետք է ռեսուրսներ ներդնել ազատվելուց հետո կիրառվող վերականգնողական միջոցների կիրառման նպատակով, ինչը բոլոր դեպքերում պետք է ծրագրվի և իրականացվի դրսի գերատեսչությունների հետ սերտ համագործակցությամբ:

IV. Իրականացումը

21. Անչափահասների հանցավորության հետ կապված աշխատանքը պետք է ծրագրվի, համակարգվի և իրականացվի տեղում գործող հանրային գերատեսչությունների՝ ուստիկանության, պրոբացիայի, երիտասարդության և սոցիալական ապահովության, դատական համակարգի, կրթության և բնակարանային ապահովման մարմինների և կամավորական և մասնավոր սեկտորի

միջև տեղում իրականացվող համագործակցությամբ: Համագործակցող կողմերը պետք է պատասխանատու և հաշվետու լինեն ընդհանուր և հստակ սահմանված նպատակների հասնելու համար և.

- նախնական և աշխատանքին զուգընթաց վերապատրաստում կազմակերպեն,
- ծրագրեն, ֆինանսավորեն և տրամադրեն ծառայությունները,
- սահմանեն ստանդարտներ և մոնիթորինգի ենթարկեն դրանց իրականացումը,
- տեղեկատվություն տրամադրեն (պահպանելով տվյալների պաշտպանության և մասնագիտական գաղտնիքի բնագավառում սահմանված պահանջները և նկատի առնելով առնչվող գերատեսչությունների համապատասխան պարտականությունները),
- գնահատեն արդյունավետությունը և տարածեն հաջողված փորձը:

V. Իրավունքները և երաշխիքները

22. Մույն հանձնարարականում ներկայացված նոր մոտեցումներն ու ընթացակարգերը պետք է դիտարկվեն համապատասխան միջազգային փաստաթղթերում սահմանված իրավունքների և երաշխիքների շրջանակում:

VI. Մոնիթորինգ, գնահատում և տեղեկատվության տարածում

23. Կատարվող միջամտությունների արդյունավետության վերաբերյալ գիտելիքների բազան բարելավելու նպատակով անհրաժեշտ է միջոցներ հատկացնել այդ միջամտությունների անկախ գիտական գնահատման համար, որի արդյունքները պետք է տարածվեն պրակտիկ աշխատողների շրջանում:

24. Անչափահասների գործերով արդարադատության համակարգում էթնիկ հիմքով խտրականությունը կանխելու և մշակութային տեսակետից առանձնահատուկ միջամտությունների անհրաժեշտության դեպքերը պարզելու նպատակով անհրաժեշտ է տեղեկատվություն հավաքել և/կամ հետազոտություն նախաձեռնել՝ անչափահասների գործերով արդարադատության յուրաքանչյուր փուլում և բոլոր փուլերում էթնիկ փոքրամասնությունների ներգրավվածության և նրանց հետ տարվող աշխատանքի վերաբերյալ:

25. Չափից ավելի բացասական ընկալումներին դիմագրավելու, հասարակական կարծիք ձևավորելու և հանրության վստահությունը ձեռք բերելու նպատակով անհրաժեշտ է մշակել անչափահասների հանցավորության և անչափահասների գործերով արդարադատության արդյունավետության վերաբերյալ տեղեկատվական ռազմավարություն՝ կիրառելով տարածման ամենատարբեր եղանակներ, ներառյալ՝ հեռուստատեսությունը և ինտերնետը: Դա պետք է իրականացվի առանց անձնական տեղեկատվություն կամ այլ տվյալներ տարածելու, որը կարող է հանգեցնել այս կամ այն իրավախախտի կամ տուժողի ինքնությունը հրապարակելուն:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ Rec(2005)5 հանձնարարականը անդամ երկրներին՝ փակ հաստատություններում պահվող երեխաների իրավունքների վերաբերյալ (Recommendation Rec(2005)5 of the Committee of Ministers to member states on the rights of children living in residential institutions)

(Նախարարների կոմիտեի կողմից հաստատվել է 2005թ. մարտի 16-ին՝ փոխնախարարների թիվ 919 հանդիպման ժամանակ)

Նախարարների կոմիտեն, առաջնորդվելով Եվրոպայի խորհրդի կանոնադրության թիվ 15^ր հոդվածով,

Նկատի ունենալով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է՝ հասնել առավել միասնության իր անդամների միջև, ի թիվս այլ միջոցների՝ խթանելով ընդհանուր կանոնների ընդունումը,

Հիշատակելով երեխաների և մանկության ոլորտում քաղաքականության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի ծրագրերի շրջանակներում կատարված աշխատանքը, մասնավորապես՝ 1996թ. Լայպցիգում կայացած «Երեխաների իրավունքները և մանկության ոլորտում իրականացվող քաղաքականությունը Եվրոպայում. նոր մոտեցումները» խորագրով համաժողովի հանձնարարականները, Երեխաների հարցերով եվրոպական ռազմավարության վերաբերյալ Խորհրդարանական վեհաժողովի թիվ 1286 (1996), Երեխաների հետ և հանուն երեխաների 21-րդ դարի հասարակություն կերտելու վերաբերյալ թիվ 1551 (2002) հանձնարարականները, Երեխաների հարցերով եվրոպական ռազմավարության առնչությամբ կատարված քայլերը (թիվ 1286 (1996) հանձնարարական) և հաստատություններում լքված երեխաների դրությունը բարելավելու մասին թիվ 1609 (2003) հանձնարարականը,

Վերահաստատելով փակ հաստատություններում ապրող երեխաների դրությանն ընդհանուր առմամբ առնչվող իրավական փաստաթղթերի բովանդակությունը, մասնավորապես՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան, Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան, Եվրոպական սոցիալական խարտիան, Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի վերաբերյալ եվրոպական կոնվենցիան, Երեխաների իրավունքների իրականացման մասին եվրոպական կոնվենցիան և Երեխաների հետ անձնական շփումների մասին կոնվենցիան,

Հաշվի առնելով Նախարարների կոմիտեի բանաձևերն ու հանձնարարականները. Երեխաների տեղավորման մասին թիվ R(77)33 և Երեխաներին վատ վերաբերմունքից պաշտպանելու մասին թիվ R(79)17 հանձնարարականները, ծնողական պարտականությունների մասին թիվ R(84)4 և խնամատար ընտանիքների վերաբերյալ R(87)6 հանձնարարականները, Անչափահասների հանցավորությանը սոցիալական արձագանքների վերաբերյալ թիվ R(87)20 և Հետևողական և համակողմանի ընտանեկան քաղաքականությունների վերաբերյալ թիվ R(94)14 հանձնարարականները, Ընտանեկան և սոցիալական կյանքին երեխաների մասնակցության մասին թիվ R(98)8 և Երեխաներին սեռական շահագործումից պաշտպանելու մասին թիվ Rec(2001)16 հանձնարարականները, Սոցիալական իրավունքների մատչելիությունը բարելավելու մասին թիվ

Rec(2003)19 և Անչափահասների հանցավորությանը նոր մոտեցումների և անչափահասների գործերով արդարադատության դերի վերաբերյալ թիվ Rec(2003)20 հանձնարարականները,

Նկատի առնելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի և Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի սկզբունքները, համաձայն որոնց՝ հնարավորության սահմաններում անհրաժեշտ է կանխարգելիչ միջոցների օգնությամբ խուսափել երեխաներին հաստատությունում տեղավորելուց,

Գիտակցելով, որ կանխարգելիչ միջոցներով հանդերձ՝ որոշ երեխաների, այդուհանդերձ, անհրաժեշտ կլինի տեղավորել ընտանիքից դուրս,

Ուշադրության առնելով, որ տեղավորման տեսակն ընտրելիս առաջին հերթին հարկավոր է հաշվի առնել երեխայի կարիքները և լավագույն շահերը, անհրաժեշտության դեպքում՝ նաև երեխայի տեսակետներն այդ հարցի շուրջ. այդ տեսակետներին պետք է պատշաճ նշանակություն տրվի՝ երեխայի տարիքին և նրա հասունության աստիճանին համապատասխան,

Մտահոգված լինելով, որ իրենց ընտանիքներից դուրս գտնվող բոլոր երեխաները, հատկապես՝ հաստատություններում գտնվողները, պետք է մեծանան արժանապատիվ և հնարավոր լավագույն պայմաններում՝ մանկության կամ չափահասության տարիքում չհայտնվելով մարզինալ իրավիճակներում, և որ նրանք պետք է խոչընդոտների չհանդիպեն եվրոպական համայնքների լիարժեք քաղաքացիներ դառնալու ճանապարհին,

Հանձնարարում են, որպեսզի անդամ երկրները.

1. ընդունեն այնպիսի օրենսդրություն և անհրաժեշտ այլ միջոցներ, այդ թվում՝ համապետական ուղենիշներ և գործողությունների ծրագրեր, որոնք կերաշխավորեն սույն հանձնարարականի հավելվածում սահմանված սկզբունքներն ու որակի ստանդարտների պահպանումը՝ փակ հաստատություններում պահվող երեխաների իրավունքների լիակատար իրականացման հասնելու նպատակով՝ անկախ այդ հաստատություններում տեղավորվելու պատճառներից և բնույթից,
2. համապատասխան միջոցներով և գործողություններով երաշխավորեն սույն հանձնարարականի տարածումը երեխաների և համապատասխան այլ անձանց և մարմինների շրջանում:

Թիվ Rec(2005)5 հանձնարարականի հավելված

Հիմնական սկզբունքներ

- Ընտանիքը երեխայի աճի և բարեկեցության բնական միջավայրն է, և ծնողներն առաջնահերթ պատասխանատվություն են կրում երեխայի դաստիարակության և զարգացման համար.
- Անհրաժեշտ է երեխաներին և ընտանքներին տրամադրել աջակցության կանխարգելիչ միջոցներ՝ նրանց հատուկ կարիքներին հնարավորինս համապատասխան.
- Երեխայի տեղավորումը պետք է կիրառվի որպես բացառիկ միջոց, որի առաջնային նպատակը երեխայի լավագույն շահերն են և նրա հնարավորինս վաղ բարեհաջող սոցիալական

ինտեգրացիան կամ վերաինտեգրացիան. տեղավորման դեպքում անհրաժեշտ է երաշխավորել երեխայի հիմնարար իրավունքների լիակատար իրականացումը.

- Տեղավորումը պետք է տևի ոչ ավելի, քան անհրաժեշտ է, իսկ տեղավորման որոշումը պետք է պարբերաբար վերանայվի՝ առաջնահերթ ուշադրություն դարձնելով երեխայի լավագույն շահերին. ծնողներին հարկավոր է հնարավորինս աջակցել՝ երեխային ընտանիքում կամ հասարակությունում ներդաշնակորեն վերաինտեգրելու նպատակով.
- Երեխայի խնամքն ավարտելիս վերջինիս պետք է ապահովել կարիքների գնահատման և խնամքին հաջորդող աջակցությամբ՝ ընտանիքում և հասարակությունում նրա վերաինտեգրումն ապահովելու նպատակով.
- Երեխայի տեղավորման մասին որոշման կայացումը և տեղավորումը չպետք է իրականացվեն երեխայի կամ նրա ծնողների սեռի, ռասայի, մաշկի գույնի, սոցիալական, էթնիկ կամ ազգային ծագման, արտահայտած տեսակետների, լեզվի, գույքային դրության, կրոնի, հաշմանդամության, ծննդյան կամ այլ կարգավիճակի հետ կապված խտրականությամբ.
- Տեղավորման ընթացակարգը, դրա կազմակերպումը և խնամքի անհատական ծրագիրը, այդ թվում՝ տեղավորման որոշման պարբերական վերանայումը, պետք է իրականացվեն երեխայի իրավունքների, հատկապես՝ տեսակետները լսելի դարձնելու իրավունքի երաշխավորման պայմաններում. այդ տեսակետներին պետք է պատշաճ նշանակություն տրվի՝ երեխայի տարիքին և նրա հասունության աստիճանին համապատասխան.
- Փակ հաստատությունում կիրառվող վերահսկողության և կարգապահության ցանկացած, այդ թվում՝ ինքնավասման կամ այլոց վնաս պատճառելու հնարավորությունը կանխելու նպատակ հետապնդող միջոցները պետք է բխեն հանրությունում ընդունված կանոններից ու հաստատված ստանդարտներից.
- Երեխայի ընտանիքը պետք է հնարավորության դեպքում ներգրավվի երեխայի տեղավորումը պլանավորելուն և կազմակերպելուն.
- Մեփական ընտանիք երեխայի վերադարձի անհնարինության դեպքում անհրաժեշտ է նախատեսել խնամքի կամ տեղավորումը շարունակելու միջոցներ՝ հաշվի առնելով երեխայի ցանկությունները և նրա կյանքի ուղու շարունակականությունը, նրա պահվածքը և կարիքները:

Փակ հաստատություններում պահվող երեխաների հատուկ իրավունքները

Սույն հիմնական սկզբունքների և երեխայի հիմնարար իրավունքների պահպանումը երաշխավորելու համար անհրաժեշտ է ճանաչել հաստատություններում պահվող երեխաների հետևյալ առանձնահատուկ իրավունքները.

- հաստատությունում տեղավորվելը՝ միայն բազմամասնագիտական գնահատման արդյունքում ի հայտ բերված կարիքները բավարարելու նպատակով, իսկ տեղավորման որոշումը պետք է պարբերաբար վերանայվի. այդ վերանայումների ժամանակ հարկավոր է քննարկել այլընտրանքների նպատակահարմարությունը և հաշվի առնել երեխայի տեսակետները,

- երեխայի ընտանիքի և նրա համար կարևոր նշանակություն ունեցող այլ անձանց հետ կանոնավոր շփումների ապահովումը. այդ շփումները կարող են սահմանափակվել կամ արգելվել միայն երեխայի լավագույն շահերից ելնելով,
- երեխայի հարազատ եղբայրների և քույրերի՝ հնարավորության դեպքում միասին պահվելու կամ կանոնավոր շփում պահպանելու իրավունքը,
- ինքնության իրավունքը,
- երեխայի էթնիկ, կրոնական, մշակութային, սոցիալական և լեզվական առանձնահատկությունների նկատմամբ հարգանքի իրավունքը,
- անձնական կյանքի իրավունքը, այդ թվում՝ երեխայի համար վստահելի անձի կամ իրավասու մարմնի հետ իրենց իրավունքների վերաբերյալ խորհրդատվություն ստանալու համար հանդիպելու հնարավորությունը,
- տվյալ երեխայի կարիքներին ու բարեկեցությանը հարմարեցված որակյալ առողջապահության իրավունքը,
- երեխայի մարդկային արժանապատվության և ֆիզիկական անվնասության իրավունքը, մասնավորապես՝ մարդկային և չնվաստացնող վերաբերմունքի և բռնությունից զերծ դաստիարակության, ներառյալ՝ մարմնական պատիժներից և չարաշահման բոլոր տեսակներից պաշտպանության իրավունքը,
- հավասար հնարավորությունների իրավունքը,
- կրթության, մասնագիտական ուղղորդման և վերապատրաստումների բոլոր տեսակներից օգտվելու իրավունքը՝ մյուս երեխաների համար սահմանված պայմաններին համանման պայմաններում,
- խաղերի, սպորտի, մշակութային միջոցառումների, ոչ ֆորմալ կրթության և ավելացող պատասխանատվության միջոցով ակտիվ ու պատասխանատու քաղաքացիությանը պատրաստվելու իրավունքը,
- երեխայի, ինչպես նաև հաստատությունում սահմանված բնակության պայմանների վերաբերյալ որոշումների կայացմանը մասնակցելու իրավունքը,
- երեխայի իրավունքներին և փակ հաստատությունում սահմանված կանոններին երեխայի համար ընկալելի ձևով տեղեկացվելու իրավունքը,
- երեխայի հիմնարար իրավունքների պաշտպանության հարցով հանրության համար ճանաչելի, անկողմնակալ և անկախ մարմնին բողոք ներկայացնելու իրավունքը:

Ուղենիշներ և որակի ստանդարտներ

Սույն սկզբունքների և իրավունքների իրականացումն ապահովելու համար անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ ուղենիշներն ու ստանդարտները.

- եթե հանգամանքները թույլ են տալիս, հարկավոր է ընտրել տեղավորման՝ երեխայի միջավայրին առավել մոտ տեսակը, որը ծնողներին թույլ է տալիս իրականացնել իրենց պարտականությունները և պահպանել ծնող-երեխա կանոնավոր շփումները,
- անհրաժեշտ է ունենալ ընտանեկանին մոտ կենսակերպ ապահովող մասնաշենքեր,
- առաջնահերթությունը պետք է տալ երեխայի ֆիզիկական և հոգեկան առողջությանը և նրա լիարժեք, ներդաշնակ զարգացմանը՝ որպես խնամքի պլանի հաջողության կարևորագույն նախապայման,
- անհրաժեշտ է մշակել անհատական խնամքի պլան՝ ելնելով երեխայի կարողություններից և ունակություններից՝ հարգելով նրա ինքնուրույնությունը, ինչպես նաև պահպանել շփումն արտաքին աշխարհի հետ և պատրաստել ապագայում հաստատությունից դուրս ապրելուն,
- նախընտրելի են այնպիսի պայմանները, որոնք թույլ են տալիս ապահովել անձնակազմի և երեխաների միջև կրթական և պատշաճ հոգեբանական փոխհարաբերությունների շարունակականությունը, հատկապես՝ անձնակազմի կայունության (տևական ներկայության, անձնակազմի փոխատեղումներից խուսափելու) միջոցով,
- հաստատության ներքին կազմակերպումն իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը.
 - ✓ բնակելի շինությունների որակը և կայունությունը,
 - ✓ խառը բնակելի շինությունները, եթե դա բխում է երեխայի լավագույն շահերից,
 - ✓ անձնակազմի բարձր պրոֆեսիոնալ ստանդարտները՝ կազմակերպելով ծառայությանը զուգընթաց վերապատրաստումներ,
 - ✓ անձնակազմի պատշաճ վարձատրությունը,
 - ✓ անձնակազմի կայունությունը և բավարար թիվը,
 - ✓ անձնակազմի բազմազանությունը, հատկապես՝ գենդերային տեսակետից,
 - ✓ բազմամասնագիտական թիմային աշխատանքը և աջակցության այլ միջոցները, ներառյալ վերահսկողությունը,
 - ✓ առկա ռեսուրսների արդյունավետ և երեխայամետ օգտագործումը,
 - ✓ երեխայի ծնողների հետ պատշաճ համագործակցության թեմայով հատուկ վերապատրաստում անցկացնելու հնարավորությունները,
 - ✓ էթիկայի կանոնները, որոնք անդրադառնում են Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիային համահունչ գործելակերպի ստանդարտներին.
- բոլոր փակ հաստատությունները պետք է հավատարմագրվեն և գրանցվեն իրավասու պետական մարմինների կողմից՝ համապատասխան կանոնակարգերի և խնամքի նվազագույն պետական ստանդարտների հիման վրա,

- այդ ստանդարտների հիման վրա անհրաժեշտ է ձևավորել փակ հաստատությունների մոնիթորինգի և արտաքին վերահսկողության արդյունավետ համակարգ,
- անհրաժեշտ է հավաքել և վերլուծել համապատասխան վիճակագրական տվյալներ և աջակցել արդյունավետ մոնիթորինգ իրականացնելու նպատակով անցկացվող հետազոտություններին,
- փակ հաստատությունում պահվող երեխաների իրավունքների ցանկացած խախտում պետք է պատժվի՝ գործող ընթացակարգերին համապատասխան,
- անհրաժեշտ է ընդունել, որ պետական հաստատություններից բացի, փակ հաստատություններում պահվող երեխաների մասով կարևոր դեր կարող են կատարել նաև ոչ կառավարական կազմակերպությունները (ՀԿ-ները). անդամ երկրների կառավարությունները պետք է սահմանեն այդ դերը: Ոչ կառավարական մարմինների ներգրավումն անդամ երկրներին չի ազատում փակ հաստատություններում պահվող երեխաների հանդեպ սույն հանձնարարականով սահմանված պարտավորություններից, մասնավորապես՝ ինչ վերաբերում է պատշաճ ստանդարտներ սահմանելուն, հավատարմագրման համակարգերի և իրավասու մարմինների կողմից վերահսկողությանը:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ R(87)20 հանձնարարականը անդամ երկրներին՝ անչափահասների հանցավորությանը սոցիալական արձագանքների վերաբերյալ (Recommendation No. R (87) 20 of the Committee of Ministers to Member States on Social Reactions to Juvenile Justice) (Նախարարների կոմիտեի կողմից հաստատվել է 1987թ. սեպտեմբերի 17-ին՝ փոխնախարարների թիվ 410 հանդիպման ժամանակ)

Նախարարների կոմիտեն, առաջնորդվելով Եվրոպայի խորհրդի կանոնադրության թիվ 15-ը հոդվածով,

Նկատի առնելով, որ երիտասարդները զարգացող եակներ են, և որ նրանց նկատմամբ կիրառվող բոլոր միջոցներն ի վերջո պետք է կրթական բնույթ ունենան,

Նկատի առնելով, որ անչափահասների հանցավորությանը սոցիալական արձագանքների ժամանակ պետք է հաշվի առնվեն անչափահասների անձն ու հատուկ կարիքները, և որ վերջիններս Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի հռչակագրով սահմանված սկզբունքների վրա հիմնված մասնագիտացված միջամտությունների, անհրաժեշտության դեպքում՝ մասնագիտացված վերաբերմունքի կարիք ունեն,

Համոզված լինելով, որ անչափահասների համար նախատեսված պատժային համակարգը պետք է կրթական և սոցիալական ինտեգրման նպատակներ հետապնդի և հնարավորինս հրաժարվի անչափահասների բանտարկությունից,

Համարելով, որ անչափահասների նկատմամբ միջոցների իրականացումը նախընտրելի է կազմակերպել նրանց բնական միջավայրում՝ դրանում ներգրավելով տեղի համայնքը,

Համոզված լինելով, որ անչափահասները պետք է օգտվեն դատավարական նույն երաշխիքներից, ինչ չափահասները,

Հաշվի առնելով անչափահասների գործերով արդարադատության ոլորտում Եվրոպայի խորհրդի կողմից ավելի վաղ իրականացված աշխատանքը, մասնավորապես՝ Անչափահասների գործերով արդարադատության և սոցիալական փոփոխությունների վերաբերյալ թիվ (78)61 բանաձևը և «Անչափահասների հանցավորության կանխարգելումը. սոցիալիզացիայի հաստատությունների դերը վերափոխվող հասարակությունում» խորագրով 14-րդ քրեաբանական հետազոտությունների համաժողովի եզրակացությունները,

Նկատի առնելով Անչափահասների գործերով արդարադատության իրականացման ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները (Պեկինյան կանոններ),

Անդամ երկրների կառավարություններին հանձնարարում է ըստ անհրաժեշտության վերանայել իրենց օրենսդրությունը և պրակտիկան՝ որպեսզի.

I. Կանխարգելում

1. նախաձեռնվեն կամ շարունակվեն անչափահասների չհարմարվողության և հանցավորության կանխարգելման ուղղությամբ գործադրվող հատուկ ջանքերը, հատկապես՝

ա. իրականացնելով երիտասարդների սոցիալական ինտեգրումը խթանող համապարփակ քաղաքականություն,

բ. հատուկ օժանդակություն տրամադրելով և դպրոցներում, երիտասարդական կամ մարզական կազմակերպություններում փորձնական հիմունքներով մասնագիտացված ծրագրեր ներդնելով՝ այս բնագավառում լուրջ խնդիրներ ունեցող երիտասարդների առավել լավ ինտեգրման նպատակով,

գ. երիտասարդներին հանցագործությունների կատարմանը ներգրավելու հնարավորությունը նվազագույնի հասցնելու ուղղությամբ տեխնիկական և իրավիճակային միջոցներ ձեռնարկելով.

II. Գործերի արտադատական լուծում, մեղիացիա

2. խրախուսվի գործերի արտադատական լուծման և մեղիացիայի ընթացակարգերի ձևավորումը դատախազության (վարույթը կարճելու մասով) կամ ոստիկանության մակարդակում՝ այն երկրներում, ուր ոստիկանությունն օժտված է քրեական հետապնդում իրականացնելու լիազորություններով՝ կանխելու համար անչափահասների առնչությունը քրեական արդարադատության համակարգին և դրանից բխող հետևանքները. Երեխաների պաշտպանության հարցերով խորհուրդներին կամ ծառայությունները մասնակից դարձվեն այդ ընթացակարգերի կիրառմանը.

3. անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել, որպեսզի այդ ընթացակարգերում արտացոլված լինի հետևյալը.

- ապահովել անչափահասի համաձայնությունն այն միջոցների վերաբերյալ, որոնցով պայմանավորված է գործերի արտադատական լուծման տվյալ եղանակը և, անհրաժեշտության դեպքում՝ նրա ընտանիքի համագործակցությունը,
- պատշաճ ուշադրություն դարձնել անչափահասի, ինչպես նաև՝ տուժողի իրավունքներին ու շահերին.

III. Անչափահասների նկատմամբ վարույթը

4. ապահովվի անչափահասների գործերով դատավարության արագությունը՝ խուսափելով անհարկի ձգձգումներից՝ կիրառված միջոցի կրթական ազդեցությունն ապահովելու նպատակով,

5. համապատասխան մարմինները ձեռնպահ մնան անչափահասների վերաբերյալ գործերը չափահասների համար նախատեսված դատարաններ ուղարկելուց, եթե կան անչափահասների գործերով զբաղվող դատարաններ,

6. համապատասխան մարմինները խուսափեն ոստիկանությունում ձերբակալված պահելուց և, ամեն դեպքում՝ խրախուսելով դատախազական մարմիններին՝ վերահսկողություն իրականացնել ձերբակալման պայմանների նկատմամբ,

7. բացառվի անչափահասների կալանավորումը, բացառությամբ այն դեպքերի, երբ համեմատաբար ավագ անչափահասները կատարել են խիստ ծանր հանցագործություններ. նման դեպքերում անհրաժեշտ է սահմանափակել կալանավորման տևողությունը և անչափահասներին պահել

չափահասներից անջատ. նման որոշումները, սկզբունքորեն, պետք է կայացվեն հնարավոր այլընտրանքները սոցիալական ապահովության մարմինների հետ քննարկելուց հետո,

8. վարույթի ողջ ընթացքում, այդ թվում՝ ոստիկանության կողմից իրականացվող քննության ժամանակ ամրապնդվի անչափահասների իրավական կարգավիճակը՝ ի թիվս այլ միջոցների՝ նաև հետևյալ միջոցներով.

- անմեղության կանխավարկածը,
- պաշտպանի օգնությունից օգտվելու իրավունքը, որը կարող է նշանակվել և վճարվել պետության կողմից,
- ծնողների կամ օրինական այլ ներկայացուցչի ներկայությունը, ով պետք է տեղեկացված լինի վարույթի սզկբից ևեթ,
- վկաներ հրավիրելու, նրանց հարցեր ուղղելու և նրանց հետ առերեսվելու՝ անչափահասների իրավունքը,
- երկրորդ մասնագիտական կարծիք ստանալու կամ համարժեք այլ քննչական գործողություն կատարելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու հնարավորությունն անչափահասների համար,
- իրենց նկատմամբ կիրառված միջոցի մասին խոսելու, անհրաժեշտության դեպքում կարծիք հայտնելու՝ անչափահասների իրավունքը,
- բողոքարկման իրավունքը,
- նշանակված միջոցները վերանայելու հարցով միջնորդություն ներկայացնելու իրավունքը,
- անձնական կյանքի նկատմամբ հարգանքի՝ անչափահասների իրավունքը.

9. խրախուսվեն վարույթի տարբեր փուլերում ներգրավված անձանց (ոստիկանների, պաշտպանի, դատախազների, դատավորների, սոցիալական աշխատողների) մասնագիտացված վերապատրաստումները՝ անչափահասներին և անչափահասների հանցավորությանն առնչվող օրենսդրության վերաբերյալ.

10. երաշխավորվի ոստիկանական արձանագրություններում անչափահասների վերաբերյալ տվյալների գաղտնիությունը՝ դրանք տրամադրելով միայն դատական կամ համարժեք մարմիններին. դրանք չպետք է օգտագործվեն չափահասության հասնելուց հետո, բացառությամբ ներպետական օրենսդրությամբ սահմանված հույժ անհրաժեշտ դեպքերի.

IV. Միջամտություններ

11. երաշխավորվի, որ անչափահաս իրավախախտների հետ կապված միջամտություններն իրականացնելիս նախապատվությունը տրվի անչափահասի բնական միջավայրին, հարզվի նրանց կրթության և ինքնության իրավունքը և խթանվի նրանց անձնական զարգացումը.

12. ապահովվի, որպեսզի այդ միջամտությունն իրականացվի սահմանված տևողությամբ և միայն դատական կամ համարժեք վարչական մարմինների որոշմամբ, և նույն այդ մարմինները կարողանան սահմանված ժամկետից շուտ դադարեցնել միջամտությունը.

13. այն դեպքերում, երբ հաստատությունում տեղավորելը խիստ անհրաժեշտ է՝

- ապահովվեն հաստատություններում խնամքի տարբեր տեսակներ՝ անչափահասի տարիքին, նրա մոտ առկա բարդություններին և կենսագրությանն առավել համապատասխան տարբերակը կիրառելու նպատակով (ընդունող ընտանիքներ, տներ),
- ստեղծվեն նրանց սոցիալական, տնտեսական և մշակութային միջավայրին ինտեգրված փոքր կրթական հաստատություններ,
- ապահովվի անչափահասների անձնական ազատությունների հնարավորինս քիչ սահմանափակումը և այդ սահմանափակումների կիրառման եղանակի որոշումը դատական հսկողության ներքո,
- բանտարկության ընթացքում կրթության բոլոր ձևերն ուղղված լինեն անչափահասի և նրա ընտանիքի միջև հարաբերությունների ամրապնդմանը,
- համապատասխան մարմինները խուսափեն հեռավոր կամ անհասանելի վայրերում բանտարկությունից,
- պահպանվի կապը բանտարկության վայրի և ընտանիքի միջև.

14. ազատությունից զրկելուց աստիճանաբար հրաժարվելու և այլընտրանքային միջոցների թիվն ավելացնելու նպատակով նախապատվությունը տրվի այնպիսի միջոցներին, որոնք սոցիալական ինտեգրման ավելի մեծ հնարավորություններ են ընձեռում՝ կրթության, մասնագիտական ուսուցման, ինչպես նաև՝ ժամանցային և այլ գործունեության միջոցով,

15. այդպիսի միջոցներից առանձնակի ուշադրություն դարձնել այնպիսի միջոցներին, որոնք.

- ներառում են պրոբացիոն հսկողությունը և աջակցությունը,
- նախատեսված են անչափահասի շարունակական իրավախախտ վարքը հաղթահարելու համար՝ նրա մոտ կատարելագործելով սոցիալական հարմարվողականության կարողությունները՝ ինտենսիվ կրթական միջոցառումների օգնությամբ (ներառյալ՝ «ինտենսիվ միջանկյալ աշխատանքը»),
- ենթադրում են անչափահասի կողմից կատարված հանցագործության արդյունքում պատճառված վնասի հարթում,
- ենթադրում են անչափահասի տարիքին և կրթական կարիքներին հարմարեցված համայնքային աշխատանքներ.

16. այն դեպքերում, երբ ներպետական օրենսդրության համաձայն՝ ազատությունից զրկելու հետ կապված պատժից խուսափել հնարավոր չէ՝

- սահմանվեն անչափահասների վիճակին հարմարեցված պատժատեսակներ, նախատեսվեն օրենքով չափահասների համար սահմանված պատժի կրման պայմանների համեմատ առավել նպաստավոր պայմաններ, մասնավորապես՝ կիսաազատ դրության և վաղաժամկետ ազատման, ինչպես նաև՝ հետաձգված պատիժը վերացնելու հնարավորության առումով,
- դատարաններից պահանջվի հիմնավորել ազատազրկման ձևով պատիժ նշանակելը,
- անչափահասներին չափահասներից անջատ պահելը կամ, բացառիկ այն դեպքերում, երբ ուղղման նկատառումներից ելնելով միասին պահվելն առավել նախընտրելի է՝ նրանց պահպանեն չափահասների վնասակար ազդեցությունից,

- կրթությունը և մասնագիտական ուսուցումը, կամ հասարակություն վերադառնալուն օգնող ցանկացած այլ միջոցը երիտասարդ բանտարկյալների համար կազմակերպվի համայնքի հետ համատեղ,
- ազատվելուց հետո ցուցաբերվի կրթական աջակցություն կամ անչափահասի սոցիալական վերականգնման համար անհրաժեշտ հնարավոր այլ օժանդակություն.

17. վերանայվի չափահասության հասած երիտասարդ իրավախախտների վերաբերյալ օրենսդրությունը, որպեսզի համապատասխան դատարանները հնարավորություն ունենան նշանակելու նաև այնպիսի պատիժներ, որոնք իրենց բնույթով կրթական են և խթանում են սոցիալական ինտեգրմանը՝ ուշադրություն դարձնելով իրավախախտների անձին.

V. Հետազոտություններ

18. խթանվեն և խրախուսվեն անչափահասների հանցավորության ոլորտում համեմատական վերլուծությունները՝ այդ ոլորտում քաղաքականության համար հիմք ձևավորելու նպատակով՝ շեշտը դնելով հետևյալ հանգամանքների ուսումնասիրությանը.

- կանխարգելիչ միջոցները,
- ոստիկանության և երիտասարդների միջև փոխհարաբերությունները,
- հանցավորության հետ կապված նոր քաղաքականության ներգործությունն անչափահասների հարցերով զբաղվող իրավական համակարգերի գործունեության վրա,
- այդ ոլորտում աշխատող բոլոր անձանց համար մասնագիտացված վերապատրաստումները,
- անչափահասների հանցավորության և չափահասության հասած երիտասարդների հանցավորությանը բնորոշ առանձնահատկությունների, ինչպես նաև՝ տարիքային այդ խմբերի համար նախատեսված վերադաստիարակման և սոցիալական ինտեգրման միջոցները,
- ազատազրկման այլընտրանքները,
- երիտասարդ իրավախախտների խնամքին համայնքի ներգրավվածությունը,
- ժողովրդագրական գործոնների և աշխատաշուկայի հարաբերակցությունը մի կողմից և անչափահասների հանցավորությունը՝ մյուս,
- զանգվածային լրատվամիջոցների դերը հանցավորության կանխարգելման և հանցավորությանն արձագանքելու գործում,
- երիտասարդների իրավունքների պաշտպանության համար նախատեսված Երիտասարդության հարցերով օմբուդսմենի կամ բողոքարկման խորհրդի առկայությունը,
- երիտասարդ իրավախախտների և նրանց գործողություններից տուժած անձանց միջև հաշտության կայացման միջոցներն ու ընթացակարգերը:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ R(99)19 հանձնարարականը անդամ երկրներին՝ քրեական գործերով մեղիացիայի վերաբերյալ (Recommendation No. R (99) 19 of the Committee of Ministers to member States concerning mediation in penal matters)

(Նախարարների կոմիտեի կողմից հաստատվել է 1999թ. սեպտեմբերի 15-ին՝ փոխնախարարների թիվ 679 հանդիպման ժամանակ)

Նախարարների կոմիտեն, առաջնորդվելով Եվրոպայի խորհրդի կանոնադրության թիվ 15-րդ հոդվածով,

Անդամ երկրներում քրեական գործերով մեղիացիայի կիրառման ասպարեզում առկա զարգացումները բնորոշելով որպես ավանդական քրեական վարույթի լրացուցիչ կամ փոխարինող տարբերակ,

Ուշադրության առնելով քրեական վարույթին տուժողի, իրավախախտի և որպես կողմ առնչվող այլ անձանց ակտիվ անձնական մասնակցության, ինչպես նաև՝ համայնքի ներգրավվածության ընդլայնումը,

Իրենց վիկտիմիզացիայի հետևանքների հետ կապված հարցերում առավել որոշիչ ձայն ունենալու, իրավախախտի հետ հաղորդակցվելու, վերջինիս ներելու և փոխհատուցում ստանալու՝ տուժողների օրինաչափ շահագրգռությունը,

Նկատի առնելով իրավախախտի պատասխանատու վերաբերմունքի խթանման և նրանց փոխվելու գործնական հնարավորություններ ընձեռելու կարևորությունը, ինչը կարող է նպաստել նրանց վերաինտեգրմանը և վերականգնմանը,

Ընդունելով, որ մեղիացիան կարող է նպաստել հանցավորության կանխարգելման և դրանից բխող կոնֆլիկտների լուծման գործում անհատի և համայնքի կարևոր դերակատարության վերաբերյալ իրազեկությունը՝ դրանով իսկ խթանելով քրեական արդարադատության առավել կառուցողական և նվազ ճնշող ներգործությունը,

Ընդունելով, որ մեղիացիայի համար պահանջվում են հատուկ հմտություններ, գործունեությունը կարգավորող կանոնակարգեր և պաշտոնական վերապատրաստումներ,

Նկատի առնելով հնարավոր էական նպաստը, որ ոչ կառավարական կազմակերպությունները և տեղական համայնքները կարող են ունենալ քրեական գործերով մեղիացիայի ասպարեզում, ինչպես նաև պետական ու մասնավոր նախաձեռնությունները համակցելու և համակարգելու անհրաժեշտությունը,

Հաշվի առնելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի պահանջները,

Ուշադրության առնելով Երեխայի իրավունքների իրականացման մասին եվրոպական կոնվենցիան, ինչպես նաև Քրեական և քրեական դատավարության օրենսդրության շրջանակում տուժողի զբաղեցրած տեղի վերաբերյալ թիվ R(85)11 հանձնարարականը, Քրեական

արդարադատության պարզեցման վերաբերյալ թիվ R(87)18 հանձնարարականը, Տուժողներին աջակցություն ցուցաբերելու և վիկտիմիզացիան կանխելու վերաբերյալ թիվ R(87)21 հանձնարարականը, Անչափահասների հանցավորությանը սոցիալական արձագանքների վերաբերյալ թիվ R(87)20 հանձնարարականը, Ներգաղթյալ ընտանիքների երիտասարդների կողմից կատարվող հանցագործություններին սոցիալական արձագանքների վերաբերյալ թիվ R(88)6 հանձնարարականը, Համայնքային պատիժների և այլ միջոցների վերաբերյալ եվրոպական կանոնների մասին թիվ R(92)16 հանձնարարականը, Քրեական արդարադատության կառավարման մասին թիվ R(95)12 հանձնարարականը և Ընտանեկան մեղիացիայի վերաբերյալ թիվ R(98)1 հանձնարարականը,

Հանձնարարում է, որպեսզի անդամ երկրների կառավարությունները քրեական գործերով մեղիացիան սահմանելիս հաշվի առնեն սույն հանձնարարականի հավելվածով սահմանված սկզբունքները և հնարավորինս լայնորեն տարածեն այս տեքստը:

Թիվ R(99)19 հանձնարարականի հավելված

I. Սահմանում

Սույն ուղենիշները կիրառելի են բոլոր այն վարույթների պարագայում, երբ տուժողը և իրավախախտը հնարավորություն են ստանում իրենց կամավոր համաձայնությամբ ակտիվորեն մասնակցելու հանցագործությունից բխող խնդիրների լուծմանը՝ անկողմնակալ երրորդ կողմի (մեղիատորի) օգնությամբ:

II. Ընդհանուր սկզբունքներ

1. Քրեական գործերով մեղիացիան պետք է տեղի ունենա միայն կողմերի կամովին համաձայնության առկայության դեպքում: Կողմերը պետք է կարողանան մեղիացիայի ընթացքում ցանկացած պահի հրաժարվել համաձայնությունից:
2. Մեղիացիայի հետ կապված քննարկումները գաղտնի են պահվում և չեն կարող հետագայում օգտագործվել առանց կողմերի համաձայնության:
3. Քրեական գործերով մեղիացիայի ծառայությունները պետք է լայնորեն հասանելի լինեն:
4. Քրեական գործերով մեղիացիան պետք է հասանելի լինի քրեական արդարադատության ողջ ընթացքում:
5. Մեղիացիոն ծառայությունները պետք է քրեական արդարադատության համակարգում բավարար չափով ինքնուրույն լինեն:

III. Իրավական հիմքը

6. Օրենսդրությունը պետք է խթանի քրեական գործերով մեղիացիան:
7. Անհրաժեշտ է ունենալ քրեական գործերով մեղիացիայի կիրառումը սահմանող ուղենիշներ: Դրանք պետք է հատկապես անդրադառնան գործերը մեղիացիոն ծառայություն ուղղորդելու և մեղիացիայից հետո գործերը վարելու պայմաններին:

8. Մեղիացիայի նկատմամբ անհրաժեշտ է հիմնարար դատավարական երաշխիքներ կիրառել. կողմերը պետք է իրավական օգնության, անհրաժեշտության դեպքում՝ նաև գրավոր և բանավոր թարգմանության իրավունք ունենան:

IV. Քրեական արդարադատության համակարգի գործունեությունը մեղիացիայի առնչությամբ

9. Քրեական գործը մեղիացիայի ուղարկելու որոշման կայացումը, ինչպես նաև մեղիացիոն գործընթացի արդյունքների գնահատման իրավունքը պետք է վերապահվի քրեական արդարադատության մարմիններին:

10. Նախքան մեղիացիայի համաձայնություն տալը կողմերը պետք է լիարժեք տեղեկացվեն իրենց իրավունքների, մեղիացիոն գործընթացի բնույթի և իրենց որոշման հնարավոր հետևանքների մասին:

11. Տուժողը կամ իրավախախտը չպետք է անարդար միջոցներով հարկադրվեն տալու իրենց համաձայնությունը՝ մասնակցելու քրեական գործերով մեղիացիային:

12. Իրավական ընթացակարգերին անչափահասների մասնակցությունը կարգավորող հասուկ կանոնակարգերը և իրավական երաշխիքները պետք է կիրառվեն նաև քրեական գործերով մեղիացիային նրանց մասնակցության առնչությամբ:

13. Մեղիացիան չպետք է մեկնարկի, եթե ներգրավված հիմնական կողմերից որևէ մեկն ի վիճակի չէ հասկանալու գործընթացի նշանակությունը:

14. Կողմերը, որպես կանոն, պետք է համաձայն լինեն գործի հիմնական փաստերը որպես մեղիացիայի հիմք ընդունելուն: Մեղիացիային մասնակցությունը չպետք է հետագա վարույթի ընթացքում համարվի որպես մեղքն ընդունելու մասին վկայող ապացույց:

15. Նախքան գործը մեղիացիայի ուղարկելը հարկավոր է նկատի առնել կողմերի տարիքով, հասունությամբ և մտավոր կարողություններով պայմանավորված անհավասարությունները:

16. Քրեական գործը մեղիացիայի ուղարկելու որոշումը պետք է բավարար ժամանակ տրամադրի, որպեսզի քրեական արդարադատության իրավասու մարմինները կարողանան տեղեկանալ մեղիացիայի ընթացքին:

17. Մեղիացիոն համաձայնությունների հիման վրա մեղադրանքի հանման դեպքերը պետք է ունենան նույն կարգավիճակը, ինչ դատական որոշումները կամ դատավճիռները, իսկ նույն փաստերի առնչությամբ քրեական հետապնդումը պետք է բացառվի (*ne bis in idem*):

18. Երբ կողմերի միջև համաձայնություն չկայանալու կամ ձեռք բերված համաձայնությունը չիրագործելու կապակցությամբ գործը վերադարձվում է քրեական արդարադատության մարմիններին՝ անհրաժեշտ է անհապաղ որոշում կայացնել դրա հետագա ընթացքի վերաբերյալ:

V. Մեղիացիոն ծառայությունների գործունեությունը

V.1. Ստանդարտներ

19. Մեղիացիոն ծառայությունները պետք է կառավարվեն ընդունված ստանդարտներով:

20. Մեղիացիոն ծառայություններն իրենց պարտականություններն իրականացնելիս պետք է բավականաչափ ինքնուրույնություն ունենան: Անհրաժեշտ է մշակել մասնագիտական պատրաստվածության և էթիկական կանոնների հետ կապված ստանդարտներ, ինչպես նաև՝ մեղիատորների ընտրության, վերապատրաստման և գնահատման ընթացակարգերը:

21. Մեղիացիոն ծառայությունները պետք է մոնիթորինգի ենթարկվեն իրավասու մարմնի կողմից:

V.2. Մեղիատորների որակավորումը և վերապատրաստումը

22. Մեղիատորները պետք է հավաքագրվեն հասարակության բոլոր հատվածներից և, որպես կանոն, լավ տիրապետեն տեղական մշակույթներին և համայնքներին:

23. Մեղիատորները պետք է կարողանան դրսևորել մեղիացիայի համար անհրաժեշտ սառը դատողություն և միջանձնային հմտություններ:

24. Մեղիատորները պետք է նախքան մեղիացիոն պարտականություններն ստանձնելը նախնական, իսկ հետագայում՝ նաև ծառայությանը զուգընթաց վերապատրաստում անցնեն: Այդ վերապատրաստումների նպատակը պետք է լինի մեղիատորներին բարձր մակարդակի մասնագիտական պատրաստվածությամբ ապահովելը՝ հաշվի առնելով կոնֆլիկտների լուծման հմտությունները, տուժողների և իրավախախտների հետ աշխատելուն ներկայացվող պահանջները, ինչպես նաև՝ քրեական արդարադատության համակարգի մասին հիմնական գիտելիքներ տրամադրելը:

V.3. Անհատական գործերի վարումը

25. Նախքան մեղիացիան սկսելը մեղիատորը պետք է տեղեկացվի գործի բոլոր համապատասխան փաստերի մասին, ինչպես նաև՝ քրեական արդարադատության իրավասու մարմիններից ստանա անհրաժեշտ փաստաթղթերը:

26. Մեղիացիան պետք է իրականացվի անկողմնակալ ձևով՝ հիմնվելով գործի հանգամանքների և կողմերի կարիքների ու ցանկությունների վրա: Մեղիատորը պետք է մշտապես հարգի կողմերի արժանապատվությունը և ապահովի, որպեսզի վերջիններս միմյանց հարգալից վերաբերվեն:

27. Մեղիատորը պետք է պատասխանատու լինի մեղիացիայի անվտանգ և բարենպաստ միջավայր ապահովելու համար: Մեղիատորը պետք է զգայուն լինի կողմերի խոցելիության առումով:

28. Մեղիացիան պետք է իրականացվի ողջամտորեն, սակայն կողմերի համար ընդունելի արագությամբ:

29. Մեղիացիան պետք է իրականացվի ոչ հրապարակային եղանակով:

30. Չնայած գաղտնիության սկզբունքին, մեղիատորը պարտավոր է մեղիացիայի ընթացքում իրեն հայտնի դարձած կատարվելիք լուրջ հանցագործությունների մասին տեղեկացնի համապատասխան մարմիններին կամ անձանց:

V.4. Մեղիացիայի արդյունքը

31. Համաձայնությունները պետք է կայացվեն կողմերի ազատ կամարտահայտությամբ: Դրանցում պետք է միայն ողջամիտ և համարժեք պարտավորություններ սահմանվեն:

32. Մեղիատորը պետք է քրեական արդարադատության մարմիններին հաշվետվություն ներկայացնի ձեռնարկված քայլերի և մեղիացիայի արդյունքների մասին: Մեղիատորի հաշվետվությունը չպետք է բացահայտի մեղիացիոն հանդիպումների բովանդակությունը, և ոչ էլ որևէ դատողություն պարունակի մեղիացիայի ընթացքում կողմերի դրսևորած վարքագծի վերաբերյալ:

VI. Մեղիացիայի շարունակական զարգացումը

33. Անհրաժեշտ է ապահովել քրեական արդարադատության մարմինների և մեղիացիոն ծառայությունների միջև կանոնավոր խորհրդակցություններ՝ ընդհանուր ընկալում ձևավորելու նպատակով:

34. Անդամ երկրները պետք է խթանեն քրեական գործերով մեղիացիայի վերաբերյալ հետազոտությունների և գնահատումների իրականացումը:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ R(89)12 հանձնարարականը անդամ երկրներին՝ բանտում կրթության վերաբերյալ (Recommendation No. R(89)12 of the Committee of Ministers to Member States on Education in Prison)

(Նախարարների կոմիտեի կողմից հաստատվել է 1989թ. հոկտեմբերի 13-ին՝ փոխնախարարների 429-րդ հանդիպման ժամանակ)

Նախարարների կոմիտեն, առաջնորդվելով Եվրոպայի խորհրդի կանոնադրության թիվ 15-րդ հոդվածով՝

- Հաշվի առնելով, որ կրթության իրավունքը հիմնարար իրավունք է,
 - Հաշվի առնելով անհատի և համայնքի զարգացման գործում կրթության կարևորությունը,
 - Մասնավորապես, գիտակցելով, որ բանտարկյալների մեծամասնությունը կրթության հարցում շատ փոքր հաջողություններ են ունեցել, ուստիև տվյալ պահին է՛լ ավելի շատ կրթական կարիքներ ունեն,
 - Հաշվի առնելով, որ բանտում կրթությունն օգնում է բանտերն առավել մարդասիրական դարձնել և բարելավել բանտարկության պայմանները,
 - Հաշվի առնելով, որ բանտում կազմակերպվող կրթությունը բանտարկյալներին համայնք վերադարձնելու գործընթացը խթանող կարևոր եղանակներից է,
 - Ընդունելով, որ որոշակի իրավունքների ու միջոցների գործնական կիրառման ժամանակ, համաձայն սույն հանձնարարականի, դատապարտված և կալանավորված բանտարկյալների միջև առկա տարբերակումները կարող են արդարացված լինել,
 - Ուշադրության առնելով Եվրոպական բանտային կանոնների վերաբերյալ թիվ R(87)3 և Չափահասների վերաբերյալ կրթական քաղաքականության մասին թիվ R(81)17 հանձնարարականը՝
- Անդամ երկրների կառավարություններին հանձնարարում է իրականացնել այնպիսի քաղաքականություն, որով կճանաչվի հետևյալը.
1. Բոլոր բանտարկյալները պետք է կարողանան օգտվել կրթությունից, որը պետք է բաղկացած լինի դասարանային առարկաներից, մասնագիտական ուսուցումից, ստեղծագործական և մշակութային միջոցառումներից, մարմնակրթությունից և մարզաձևերից, սոցիալական կրթությունից և գրադարանային հաստատություններից,
 2. Բանտարկյալների համար կազմակերպվող կրթությունը պետք է նման լինի արտաքին աշխարհում նույնպիսի տարիքային խմբի համար կազմակերպվող կրթությանը, իսկ բանտարկյալներին տրամադրվող ուսուցման հնարավորությունները պետք է հնարավորինս լայն լինեն,

3. Բանտում կրթությունը պետք է անձի լիարժեք զարգացման նպատակ հետապնդի՝ նկատի առնելով նրա սոցիալական, տնտեսական և մշակութային առանձնահատկությունները,
4. Բանտային համակարգի կառավարմանը և բանտերի ղեկավարմանը ներգրավված բոլոր կողմերը պետք է հնարավորության սահմաններում խթանեն կրթությունը և աջակցեն դրան,
5. Բանտային ռեժիմի առումով կրթությունն իր կարգավիճակով չպետք է զիջի աշխատանքին, և բանտարկյալները չպետք է ֆինանսապես կամ այլ կերպ տուժեն կրթությանը մասնակցելու պատճառով,
6. Հարկավոր է գործադրել բոլոր ջանքերը՝ կրթական բոլոր միջոցառումներին բանտարկյալների ակտիվ մրցակցությունը խրախուսելու ուղղությամբ,
7. Անհրաժեշտ է կազմակերպել կատարելագործման ծրագրեր, որոնք կերաշխավորեն, որպեսզի բանտային մանկավարժները չափահասների կրթության պատշաճ մեթոդներ որդեգրեն,
8. Հատուկ ուշադրություն պետք է դարձվի առանձնակի բարդություններ ունեցող բանտարկյալներին, հատկապես՝ կարդալու կամ գրելու խնդիրներ ունեցողներին,
9. Մասնագիտական ուսուցումը պետք է անհատի առավել համակողմանի զարգացման նպատակ հետապնդի, ինչպես նաև լինի զգայուն՝ աշխատանքային շուկայում առկա միտումների առումով,
10. Բանտարկյալները պետք է կարողանան շարժական առնվազն մեկ անգամ անմիջականորեն օգտվել լավ համարված գրադարանից,
11. Անհրաժեշտ է շեշտը դնել բանտարկյալների համար կազմակերպվող մարմնակրթության և մարզաձևերի վրա և խրախուսել դրանք,
12. Ստեղծագործական և մշակութային միջոցառումներին հարկավոր է նշանակալի տեղ հատկացնել, քանի որ դրանք օժտված են բանտարկյալներին ինքնազարգացման և ինքնահաստատման կարողություններ փոխանցելու առանձնակի ներուժով,
13. Սոցիալական կրթությունը պետք է ներառի գործնական տարրեր ևս, որոնք բանտարկյալին հնարավորություն կտան կառավարել իր բանտային կենցաղը՝ հասարակություն վերադարձը խթանելու նկատառումներով,
14. Հնարավորության դեպքում բանտարկյալներին հարկավոր է թույլատրել կրթությանը մասնակցել բանտից դուրս,
15. Եթե կրթությունը տրամադրվում է բանտի ներսում, բանտից դուրս գտնվող համայնքը պետք է հնարավորինս լիարժեք ներգրավվածություն ունենա,
16. Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել՝ բանտարկյալներին ազատվելուց հետո կրթությունը շարունակելու հնարավորություններ ընձեռելու ուղղությամբ,
17. Անհրաժեշտ է ապահովել բանտարկյալների պատշաճ կրթության համար անհրաժեշտ դրամական միջոցների, սարքավորման և մանկավարժական անձնակազմի առկայությունը:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)1 հանձնարարականը անդամ երկրներին՝ Եվրոպայի խորհրդի պրոբացիոն կանոնների վերաբերյալ (Recommendation CM/Rec(2010)1 of the Committee of Ministers to member states on the Council of Europe Probation Rules)
(Նախարարների կոմիտեի կողմից հաստատվել է 2010թ. հունվարի 20-ին՝ փոխնախարարների թիվ 1075 հանդիպման ժամանակ)

Նախարարների կոմիտեն, առաջնորդվելով Եվրոպայի խորհրդի կանոնադրության թիվ 15-րդ հոդվածով,

Նկատի ունենալով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է՝ հասնել առավել միասնության իր անդամների միջև, մասնավորապես՝ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող խնդիրների վերաբերյալ օրենքները ներդաշնակեցնելու միջոցով,

Նկատի առնելով, որ պրոբացիայի նպատակն է՝ նպաստել արդարացի քրեական արդարադատության գործընթացին, ինչպես նաև հասարակական անվտանգությանը՝ հանցագործությունների կանխարգելման կամ կրճատման միջոցով,

Նկատի առնելով, որ պրոբացիոն գործակալություններն արդարադատության հիմնական գերատեսչություններից են, և որ դրանց աշխատանքն անդրադառնում է բանտային բնակչության կրճատման վրա,

Ուշադրության առնելով՝

- Երկրների ղեկավարների և Եվրոպայի խորհրդի կառավարության երրորդ գագաթաժողովի (16-17-ը մայիսի, 2005թ., Վարշավա) կողմից հաստատված հռչակագիրը և գործողությունների ծրագիրը, մասնավորապես՝ քաղաքացիների անվտանգության առումով,
- Եվրոպայի արդարադատության նախարարների 26-րդ համաժողովի (7-8-ը ապրիլի, 2005թ., Հելսինկի) կողմից հաստատված թիվ 2 բանաձևը (19-րդ պարբերությունը)։

Նկատի ունենալով՝

- Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան,
- Պայմանական դատապարտված կամ պայմանական ազատված իրավախախտների նկատմամբ վերահսկողության մասին եվրոպական կոնվենցիան,
- Քրեական գործերով դատավճիռների միջազգային վավերականության մասին եվրոպական կոնվենցիան,
- Համայնքային պատիժների և այլ միջոցների վերաբերյալ եվրոպական կանոնների մասին թիվ R(92)16 բանաձևը,
- Պատիժների կամ այլ միջոցների իրականացմանն առնչվող անձնակազմի վերաբերյալ թիվ R(97)12 բանաձևը,

- Քրեական գործերով մեղիացիայի վերաբերյալ թիվ R(99)19 բանաձևը,
- Բանտերի գերբեռնվածության և բանտային բնակչության ներհոսքի վերաբերյալ թիվ R(99)22 բանաձևը,
- Համայնքային պատիժների և այլ միջոցների մասին եվրոպական կանոնների իրականացումը բարելավելու վերաբերյալ թիվ Rec(2000)22 բանաձևը,
- Պայմանական ազատման վերաբերյալ թիվ Rec(2003)22 բանաձևը,
- Բանտային վարչակազմերի կողմից ցմահ կամ այլ երկարատև ազատազրկման դատապարտված բանտարկյալների ղեկավարման վերաբերյալ թիվ Rec(2003)23 բանաձևը,
- Եվրոպական բանտային կանոնների վերաբերյալ թիվ Rec(2006)2 բանաձևը,
- Հանցագործությունից տուժած անձանց օժանդակության վերաբերյալ թիվ Rec(2006)8 բանաձևը և,
- Կալանքի կիրառման, դրա համար անհրաժեշտ պայմանների և չարաշահումներից պաշտպանության երաշխիքների վերաբերյալ թիվ Rec(2006)13 հանձնարարականը.

Այնուհետ նկատի առնելով՝

- Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները (Տոկիոյի կանոնները)՝

Հանձնարարում է անդամ երկրների կառավարություններին՝

- Իրենց օրենսդրությունում, քաղաքականությունում և պրակտիկայում առաջնորդվել սույն հանձնարարականի հավելվածներում ներառված կանոններով,
- Ապահովել, որպեսզի սույն հանձնարարականը և դրան կից մեկնաբանությունները թարգմանվեն և հնարավորինս լայնորեն տարածվեն, հատկապես՝ դատական մարմինների, պրոբացիոն գործակալությունների, քրեակատարողական ծառայությունների, ինչպես նաև՝ լրատվամիջոցների և ընդհանուր հանրության շրջանում:

CM/Rec(2010)1 հանձնարարականի թիվ I հավելված

Մաս I. Կարգավորման շրջանակը, կիրառությունը, սահմանումներ և հիմնական սկզբունքներ

Կարգավորման շրջանակը և կիրառությունը

Սույն կանոնները կոչված են առաջնորդելու պրոբացիոն գործակալությունների ստեղծումը և պատշաճ գործունեությունը: Սույն կանոնները կիրառվում են նաև այլ կազմակերպությունների նկատմամբ՝ վերջիններիս կողմից սույն կանոններում արձարձված խնդիրներ լուծելիս, ներառյալ՝ այլ պետական գերատեսչությունները, ոչ կառավարական և առևտրային կազմակերպությունները:

Սույն կանոնների որևէ դրույթ չի կարող մեկնաբանվել որպես մարդու իրավունքներին վերաբերող, իրավախախտների համար առավել բարենպաստ որևէ միջազգային փաստաթղթի կիրառման բացառում:

Սույն կանոնները պետք է ընթերցվեն Համայնքային պատիժների և այլ միջոցների վերաբերյալ եվրոպական կանոնների մասին թիվ R(92)16 հանձնարարականի հետ միասին:

Ավելին, սույն կանոնները լրացնում են Պատիժների կամ այլ միջոցների իրականացմանն առնչվող անձնակազմի վերաբերյալ թիվ R(97)12 բանաձևի, Քրեական գործերով մեղիացիայի վերաբերյալ թիվ R(99)19 բանաձևի, Համայնքային պատիժների և այլ միջոցների եվրոպական կանոնների իրականացումը բարելավելու վերաբերյալ թիվ Rec(2000)22 բանաձևի, Պայմանական ազատման վերաբերյալ թիվ Rec(2003)22 բանաձևի, Բանտային վարչակազմերի կողմից ցմահ կամ այլ երկարատև ազատազրկման դատապարտված բանտարկյալների ղեկավարման վերաբերյալ թիվ Rec(2003)23 բանաձևի, Եվրոպական բանտային կանոնների վերաբերյալ թիվ Rec(2006)2 բանաձևի, Հանցագործությունից տուժած անձանց օժանդակության վերաբերյալ թիվ Rec(2006)8 բանաձևի և Կալանքի կիրառման, դրա համար անհրաժեշտ պայմանների և չարաշահումներից պաշտպանության երաշխիքների վերաբերյալ թիվ Rec(2006)13 հանձնարարականի համապատասխան դրույթները և պետք է ընթերցվեն դրանց հետ միասին:

Սահմանումներ

Պրոբացիա. Վերաբերում է օրենքով սահմանված և իրավախախտի նկատմամբ նշանակված համայնքային պատիժների և այլ միջոցների իրականացմանը: Այն ներառում է բազմազան գործողություններ և միջամտություններ, որոնք ներառում են՝ վերահսկողությունը, իրավախախտի սոցիալական ներառման նպատակով իրականացվող ուղղորդումն ու օժանդակությունը, ինչպես նաև՝ հասարակության անվտանգությանը նպաստելը:

Պրոբացիոն գործակալություն. Վերաբերում է ցանկացած մարմնի, որն օրենքով կոչված է իրականացնելու վերը նշված խնդիրներն ու պարտականությունները: Կախված տվյալ երկրի ներպետական համակարգից, պրոբացիոն գործակալության աշխատանքը կարող է նաև ներառել հետևյալը. դատական և որոշում կայացնող մարմիններին տեղեկատվության և խորհրդատվության տրամադրումը՝ հիմնավոր և արդարացի որոշումներ կայացնելու հարցում վերջիններիս օգնելու նպատակով. անազատության մեջ գտնվելու ընթացքում իրավախախտներին ուղղորդում և աջակցություն ցուցաբերելը՝ նրանց ազատման նախապատրաստելու և ազատվելուց հետո հասարակությունում իրենց վերագտնելու հարցերում. վաղաժամկետ ազատման ենթակա անձանց մոնիթորինգը և աջակցությունը, վերականգնողական արդարադատության հետ կապված միջամտությունները և հանցագործությունից տուժած անձանց օժանդակություն առաջարկելը:

Համայնքային պատիժներ և միջոցներ. Այն պատիժները և միջոցները, որոնց դեպքում իրավախախտները մնում են համայնքում և պայմանների և/կամ պարտականությունների սահմանման միջոցով որոշակի սահմանափակումներ են դրվում նրանց ազատության նկատմամբ: Սույն արտահայտությունը վերաբերում է դատական կամ վարչական մարմնի կողմից նշանակված ցանկացած պատժի, նախքան դատավճիռը կամ պատիժը կամ դրանց փոխարեն նշանակված ցանկացած այլ միջոցի, ինչպես նաև՝ պատիժը բանտային հաստատությունից դուրս իրականացնելու եղանակներին:

Խնամքն ազատվելուց հետո. Վերաբերում է իրավախախտին կամավորության հիմունքներով և ազատազրկումից վերջնականապես ազատվելուց հետո համայնքում վերաինտեգրելը՝ կառուցողական, ծրագրված և վերահսկելի ձևով: Սույն կանոնների իմաստով այս արտահայտությունը տարբերակված է «ազատվելուց հետո իրենց հասարակությունում

վերագտնելու հարցում աջակցություն» արտահայտությունից, որը վերաբերում է ազատվելուց հետո պարտադիր ներգրավման դեպքերին:

Հիմնական սկզբունքներ

1. Պրոբացիոն գործակալությունները պետք է նպատակ ունենան իրավախախտների հետ դրական փոխհարաբերություններ հաստատելու միջոցով նվազեցնելու կրկնահանցավորությունը՝ նրանց նկատմամբ վերահսկողություն (ըստ անհրաժեշտության՝ նաև հսկողություն) սահմանելու, նրանց ուղղորդելու և օժանդակելու, ինչպես նաև նրանց բարեհաջող սոցիալական ներառումը խթանելու նպատակով:

2. Պրոբացիոն գործակալությունները պետք է հարգեն իրավախախտների մարդկային իրավունքները: Բոլոր միջամտությունները պետք է ապահովեն իրավախախտների արժանապատվությունը, առողջությունը, ապահովությունն ու բարեկեցությունը:

3. Հանցագործությունից տուժած անձանց խնդիրներով զբաղվելու բոլոր դեպքերում պրոբացիոն գործակալությունները պետք է հարգեն նրանց իրավունքներն ու հաշվի նստեն նրանց կարիքների հետ:

4. Պրոբացիոն գործակալությունները պետք է լիովին հաշվի առնեն նրանց անհատական բնութագիրը, անձնական հանգամանքները և կարիքները՝ յուրաքանչյուր գործի նկատմամբ ցուցաբերելով արդարացի մոտեցում: Պրոբացիոն գործակալությունների միջամտությունները պետք է իրականացվեն՝ առանց սեռի, ռասայի, մաշկի գույնի, լեզվի, կրոնի, հաշմանդամության, սեռական կողմնորոշման, քաղաքական կամ այլ հայացքի, ազգային կամ սոցիալական ծագման, փոքրամասնություն հանդիսացող էթնիկ խմբին պատկանելու, գույքային, ծննդյան կամ այլ կարգավիճակի հետ կապված խտրականության:

5. Ցանկացած պատիժ կամ միջոց իրականացնելիս պրոբացիոն գործակալությունները չեն կարող կիրառել պարտականություններ կամ սահմանափակումներ՝ առավել, քան դատական կամ վարչական որոշմամբ սահմանված չափով, կամ ավելի, քան անհրաժեշտ է տվյալ գործի պարագայում՝ կապված իրավախախտման լրջության կամ կրկնահանցավորության՝ պատշաճ գնահատված ռիսկերի հետ:

6. Պրոբացիոն գործակալությունները պետք է հնարավորության սահմաններում ձեռք բերեն իրավախախտների գիտակցված համաձայնությունը և հասնեն համագործակցության՝ նրանց վրա անդրադարձող միջամտությունների առնչությամբ:

7. Նախքան մեղքի վերջնական հաստատումը կատարվող ցանկացած միջամտության դեպքում պահանջվում է իրավախախտների գիտակցված համաձայնությունը, և դա չպետք է կասկածի տակ առնի անմեղության կանխավարկածը:

8. Պրոբացիոն գործակալությունները, նրանց առջև դրված խնդիրներն ու պարտականությունները, ինչպես նաև՝ պետական կամ այլ մարմինների հետ նրանց փոխհարաբերությունները պետք է սահմանվեն ներպետական օրենսդրությամբ:

9. Պետական մարմինները պետք է պատասխանատու լինեն պրոբացիայի համար, եթե անգամ այդ ծառայությունները տրամադրվում են այլ գործակալությունների կամ կամավորների կողմից:

10. Պրոբացիոն գործակալությունները պետք է պատշաճ հեղինակություն և ճանաչում վայելեն և ապահովվեն համապատասխան միջոցներով:

11. Որոշում կայացնող մարմինները, կրկնահանցավորությունը նվազեցնելու և ազատությունից զրկելու այլընտրանքների կիրառումը խթանելու նպատակով պետք է համապատասխան դեպքերում օգտվեն պրոբացոն գործակալությունների մասնագիտական խորհրդատվությունից և գործունեությունից:

12. Պրոբացիոն գործակալությունները պետք է համագործակցեն այլ պետական կամ մասնավոր կազմակերպությունների և տեղական համայնքների հետ՝ իրավախախտների սոցիալական ներառումը խթանելու նպատակով: Համակարգված և փոխըացնող միջգերատեսչական և միջմասնագիտական աշխատանքն անհրաժեշտ է՝ իրավախախտների համալիր կարիքները բավարարելու և համայնքային անվտանգությունն ապահովելու համար:

13. Պրոբացիոն գործակալությունների իրականացրած բոլոր գործողությունները և միջամտությունները պետք է համապատասխանեն բարձրագույն ներպետական և միջազգային էթիկական և մասնագիտական ստանդարտներին:

14. Անհրաժեշտ է ունենալ պրոբացիոն գործունեության բողոքարկման մատչելի, անկողմնակալ և արդյունավետ ընթացակարգեր:

15. Պրոբացիոն գործակալությունները պետք է պարբերաբար ենթարկվեն պետական տեսչական ստուգումների և/կամ անկախ մոնիթորինգի:

16. Իրավասու մարմինները պետք է ամրապնդեն պրոբացիոն աշխատանքների արդյունավետությունը՝ խրախուսելով հետազոտությունները, որոնք պետք է ուղղորդեն պրոբացիոն քաղաքականությունն ու պրակտիկան:

17. Իրավասու մարմինները և պրոբացիոն գործակալությունները պետք է լրատվամիջոցներին և լայն հանրությանը տեղեկացնեն պրոբացիոն գործակալությունների աշխատանքի մասին՝ վերջիններիս դերի և դրանց հասարակական կարևորության առավել լավ ընկալումը խթանելու նպատակով:

Մաս II. Կազմակերպումը և անձնակազմը

Կազմակերպումը

18. Պրոբացիոն գործակալությունների կառուցվածքը, կարգավիճակը և միջոցները պետք է համապատասխանեն նրանց վերապահված խնդիրների և պարտականությունների ծավալին և պետք է արտացոլեն նրանց կատարած պետական ծառայության կարևորությունը:

19. Անկախ այն հանգամանքից՝ պրոբացիոն ծառայությունները մատուցվում են պետական, թե մասնավոր կազմակերպությունների կողմից, այդ գործակալությունները պետք է իրենց գործունեությունը ծավալեն իրավասու մարմինների կողմից սահմանված պաշտոնական քաղաքականության հրահանգներով և կանոններով:

20. Իրավախախտներին պրոբացիոն ծառայություն մատուցող ցանկացած մասնավոր գործակալություն պետք է ներպետական օրենքով սահմանված կարգով հավանություն ստանա իրավասու մարմինների կողմից:

Անձնակազմը

21. Պրոբացիոն գործակալությունները պետք է իրենց գործունեությունը ծավալեն այնպես, որպեսզի վաստակեն արդարադատության այլ գերատեսչությունների և քաղաքացիական հասարակության հարգանքը պրոբացիոն անձնակազմի կարգավիճակի և կատարած աշխատանքի նկատմամբ: Իրավասու մարմինները պետք է ձգտեն նպաստել այդ նպատակի իրագործմանը՝ տրամադրելով պատշաճ միջոցներ, իրականացնելով նպատակաուղղված ընտրություն և հավաքագրում, ապահովելով անձնակազմի պատշաճ վարձատրություն և իրականացնելով լավ կառավարում:

22. Անձնակազմը պետք է հավաքագրվի և ընտրվի հաստատված չափանիշներին համապատասխան, որոնցով շեշտը պետք է դրվի ազնվության, մարդասիրության, մասնագիտական կարողությունների և նրանց կողմից կատարվելիք աշխատանքին անձնական համապատասխանության վրա:

23. Ողջ անձնակազմը պետք է կարողանա օգտվել իրենց դերին և մասնագիտական պարտականությունների մակարդակին համապատասխանող կրթությունից և վերապատրաստումներից:

24. Ողջ անձնակազմը պետք է անցնի նախնական վերապատրաստում և պետք է փորձի տիրապետել համապատասխան հմտությունների, գիտելիքների և արժեքների: Անձնակազմը պետք է ընդունված կարգին համապատասխան գնահատվի և ստանա որակավորում, որը կվկայի ձեռք բերած գիտելիքների մակարդակի մասին:

25. Իրենց կարիերայի ընթացքում անձնակազմը պետք է ծառայությանը զուգընթաց վերապատրաստումների միջոցով պահպանի և կատարելագործի իր գիտելիքներն ու մասնագիտական կարողությունները:

26. Անձնակազմը պետք է ուսուցանվի և ձեռք բերի հմտություններ, որոնք անհրաժեշտ են օրենքի, էթիկայի, կազմակերպական քաղաքականության, արդիական մեթոդաբանական ստանդարտների և վարքագծի կանոնների շրջանակներում իր հայեցողական լիազորություններն իրականացնելու վերաբերյալ:

27. Որոշ առանձնահատուկ իրավախախտումներ կատարած անձանց հետ աշխատող կամ նման աշխատանքի համար պատրաստվող անձնակազմը պետք է համապատասխան մասնագիտացված վերապատրաստում անցնի:

28. Վերապատրաստման ընթացքում պետք է ուշադրության դարձնել առանձնապես խոցելի կամ առանձնակի կարիքներ ունեցող իրավախախտներին, համապատասխան դեպքերում՝ տուժողներին:

29. Պրոբացիոն անձնակազմի թիվը պետք է բավարար լինի աշխատանքն արդյունավետ կազմակերպելու համար: Անձնակազմի անդամները պետք է այնպիսի ծանրաբեռնվածություն

ունենան, որը թույլ կտա արդյունավետ և մարդասիրաբար վերահսկել, ուղղորդել և օժանդակել իրավախախտներին և անհրաժեշտության դեպքում աշխատել նրանց ընտանիքների, համապատասխան դեպքերում՝ նաև տուժողների հետ: Անձնակազմի չափից խիստ անբավարարության դեպքում ղեկավարությունը պատասխանատու է լուծումներ գտնելու և գերակա խնդիրների վերաբերյալ անձնակազմին հրահանգավորելու համար:

30. Ղեկավարությունը պետք է ապահովի պրոբացիոն գործունեության որակը՝ անձնակազմին առաջնորդելու, ուղղորդելու, վերահսկելու և մասնագիտորեն շահագրգռելու միջոցով:

31. Ղեկավարությունը պետք է ձգտի հուսալի աշխատանքային հարաբերություններ և լավ կապեր հաստատել և պահպանել այլ գործակալությունների և գործընկերների, կամավորների, պետական մարմինների, լրատվամիջոցների և լայն հանրության հետ:

32. Ղեկավարության համար պետք է սահմանված լինի անձնակազմի՝ որպես մեկ միավորի հետ վերջինիս մասնագիտական գործունեության և աշխատանքի պայմանների հետ կապված հարցերով խորհրդակցելու միջոցներ:

33. Անձնակազմի վարձատրությունը, արտոնությունները և աշխատանքային պայմանները պետք է արտացոլեն նրանց մասնագիտության հեղինակությունը և պետք է համապատասխանեն նրանց աշխատանքի պահանջուտ բնույթին՝ պատշաճ անձնակազմ ներգրավելու և պահելու նպատակով:

34. Պրոբացիոն աշխատանքի որոշ մասին կարող են ներգրավվել կամավորներ: Նրանք պետք է պատշաճ ընտրություն անցնեն, աջակցություն ստանան և ապահովվեն համապատասխան միջոցներով:

Մաս III

Հաշվետվականությունը և հարաբերություններն այլ գերատեսչությունների հետ

35. Պրոբացիոն գործակալությունները պետք է օրենքով սահմանված կարգով կապ պահպանեն դատական և, անհրաժեշտության դեպքում՝ այլ իրավասու մարմինների հետ և համապատասխան տեղեկատվություն տրամադրեն նրանց: Այդ տեղեկատվությունը կարող է վերաբերել ընդհանուր առմամբ կամ որոշակի դեպքերում ազատագրկման հավանական ներգործությանը և ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների և այլ միջոցների կիրառման նպատակահարմարությանը: Անհատական զեկուցագիր պահանջելու դեպքում պահանջվող տեղեկատվությունը պետք է հստակ շարադրված լինի:

36. Պրոբացիոն գործակալությունները պետք է իրավասու մարմիններին պարբերաբար ընդհանուր զեկուցագրեր և, հարցումներին ի պատասխան՝ տեղեկատվություն տրամադրեն իրենց աշխատանքի վերաբերյալ:

37. Պրոբացիոն գործակալությունները պետք է աշխատեն արդարադատության համակարգի այլ գործակալությունների, օժանդակ գերատեսչությունների և քաղաքացիական հասարակության հետ սերտ համագործակցությամբ՝ իրենց առջև դրված խնդիրները և պարտականություններն արդյունավետ իրականացնելու համար:

38. Պրոբացիոն գործակալությունները պետք է խրախուսեն և խթանեն իրավախախտների՝ որպես հասարակության անդամների կարիքները բավարարելու հարցում օժանդակ գերատեսչությունների կողմից պատասխանատվություն ստանձնելը:

39. Անկախ այն բանից՝ պրոբացիոն գործակալությունները և բանտային ծառայությունը գործում են մեկ կազմակերպության ներքո, թե առանձին, նրանք պետք է աշխատեն սերտ համագործակցությամբ՝ բանտային կյանքից համայնքային կյանքին բարեհաջող անցմանը նպաստելու նպատակով:

40. Համապատասխան դեպքերում հարկավոր է համապատասխան գործընկերների հետ միջգերատեսչական համաձայնագրեր նախաձեռնել, որոնք կսահմանեն համագործակցության և օժանդակության պայմանները թե՛ ընդհանուր առմամբ և թե՛ մասնավոր դեպքերի առումով:

41. Ներպետական օրենսդրությամբ անհրաժեշտ է սահմանել մասնագիտական գաղտնիքի, սովյալների պաշտպանության և տեղեկատվության փոխանակման պաշտոնական և հստակ կանոններ, որոնք պետք է մասնավորեցվեն նման գործընկերության հաստատման պարագայում:

Մաս IV

Պրոբացիոն աշխատանքը

Դատավճռի կայացմանը նախորդող զեկուցագրերը

42. Կախված ներպետական իրավական համակարգից, պրոբացիոն գործակալությունները կարող են դատավճռի կայացմանը նախորդող զեկուցագրեր պատրաստել այս կամ այն ենթադրյալ իրավախախտի վերաբերյալ՝ քրեական հետապնդում իրականացնելու կամ նշանակվելիք առավել նպատակահարմար պատիժների կամ այլ միջոցների որոշման հարցում դատական մարմիններին անհրաժեշտության դեպքում օժանդակելու նպատակով: Նման դեպքերում պրոբացիոն գործակալությունները պետք է կանոնավոր հաղորդակցվեն դատական մարմինների հետ՝ այն հանգամանքների առնչությամբ, որոնց առկայության դեպքում այդ զեկուցագրերն օգտակար կլինեն:

43. Դատավճռի կայացմանը նախորդող զեկուցագրերը պետք է հիմնված լինեն հավաստի տեղեկատվության վրա և հնարավորինս ստուգվեն և թարմացվեն դատավարության ընթացքում:

44. Ենթադրյալ իրավախախտները պետք է հնարավորություն ունենան ներգրավվելու զեկուցագրի պատրաստմանը, և նրանց կարծիքը հնարավորության դեպքում պետք է արտացոլվի զեկուցագրում, իսկ դրա բովանդակությունը պետք է հայտնի դառնա ենթադրյալ իրավախախտներին և/կամ նրանց օրինական ներկայացուցչին:

Խորհրդատվական բնույթի այլ զեկուցագրեր

45. Պրոբացիոն գործակալությունները, կախված ներպետական իրավական համակարգից, կարող են կազմել զեկուցագրեր, որոնք իրավասու մարմիններին անհրաժեշտ են որոշում կայացնելու համար: Դրանք պետք է խորհրդատվություն ներառեն հետևյալի մասին.

ա. իրավախախտին ազատ արձակելու նպատակահարմարությունը,

բ. ցանկացած հատուկ պայման, որ կարող է ներառվել իրավախախտին ազատ արձակելու որոշման մեջ,

գ. իրավախախտին ազատ արձակման նախապատրաստելու համար անհրաժեշտ ցանկացած այլ միջամտություն:

46. Իրավախախտները պետք է հնարավորություն ունենան համապատասխան դեպքերում ներգրավվելու զեկուցագրի պատրաստմանը, և նրանց կարծիքը հնարավորության դեպքում պետք է արտացոլվի զեկուցագրում, իսկ դրա բովանդակությունը պետք է հայտնի դառնա իրավախախտներին և/կամ նրանց օրինական ներկայացուցչին:

Համայնքային ծառայությունը

47. Համայնքային ծառայությունը համայնքային պատիժ կամ միջոց է, որը ներառում է ի շահ համայնքի կամ իրավախախտի կողմից պատճառված վնասն իրապես կամ խորհրդանշական կերպով հարթելու նպատակով իրականացվող չվարձատրվող աշխատանքի կազմակերպումը և վերահսկողությունը: Համայնքային ծառայությունը չպետք է խարանդ բնույթ ունենա, իսկ պրոբացիոն գործակալությունները պետք է սահմանեն և կիրառեն այնպիսի աշխատանքներ, որոնք կնպաստեն իրավախախտների մոտ հմտությունների ձևավորմանը և նրանց սոցիալական ներառմանը:

48. Համայնքային ծառայությունը չպետք է իրագործվի ի շահ պրոբացիոն գործակալությունների կամ դրանց անձնակազմի կամ առևտրային շահ հետապնդի:

49. Համապատասխան առաջադրանքը որոշելիս պրոբացիոն գործակալությունները պետք է հաշվի առնեն համայնքի ապահովությունը և այդ աշխատանքի ուղղակի շահառուներին:

50. Համայնքային ծառայություն անցնող իրավախախտներին պաշտպանելու համար անհրաժեշտ է ապահովության նախագրուշական միջոցներ ձեռնարկել, որոնք չպետք է այլ աշխատողների համար սահմանված միջոցներից պակաս հուսալի լինեն:

51. Պրոբացիոն գործակալությունները պետք է մշակեն համայնքային ծառայության իրականացման ծրագրեր, որոնք պետք է իրավախախտների տարբեր հմտություններին և բազմազան կարիքներին համապատասխանող առաջադրանքներ նախատեսեն: Մասնավորապես, հարկավոր է տրամադրության տակ ունենալ հարմար աշխատանքներ իրավախախտների այնպիսի խմբերի համար, ինչպիսիք են՝ կանայք, հաշմանդամություն ունեցողները, չափահասության հասած երիտասարդները և տարեցները:

52. Իրավախախտների հետ հարկավոր է խորհրդակցել այն աշխատանքների վերաբերյալ, որոնք նրանք կարող են իրականացնել:

Վերահսկողական միջոցներ

53. Ներպետական օրենսդրությանը համապատասխան, պրոբացիոն գործակալությունները կարող են վերահսկողությունն իրականացնել մինչև դատաքննությունը, դրա ընթացքում և դրանից հետո. այդպիսի վերահսկողությունը կարող է ներառել դատաքննության ընթացքում պայմանական ազատման դեպքում իրականացվող վերահսկողությունը, գրավը, քրեական

պատասխանատվությունից պայմանական ազատելը, պայմանական դատապարտումը կամ պատժի կատարման հետաձգումը և վաղաժամկետ ազատումը:

54. Նպատակահարմարությունն ապահովելու նպատակով վերահսկողության ընթացքում հարկավոր է լիովին հաշվի առնել իրավախախտների անհատականության բազմազանությունը և նրանց բազմազան կարիքները:

55. Վերահսկողությունը պետք է դիտվի ոչ միայն որպես բացառապես հսկիչ գործառույթ, այլև որպես իրավախախտներին խորհրդատվություն տրամադրելու, օժանդակություն ցուցաբերելու և նրանց շահագրգռելու միջոց: Համապատասխան դեպքերում այն պետք է համակցված լինի պրոբացիոն կամ այլ գործակալությունների կողմից իրականացվող միջամտությունների հետ, ինչպիսիք են՝ վերապատրաստումը, հմտությունների կատարելագործումը, աշխատանք գտնելու հնարավորությունները և բուժումը:

Աշխատանքն իրավախախտի ընտանիքի հետ

56. Համապատասխան դեպքերում, ներպետական օրենսդրությանը համապատասխան, պրոբացիոն գործակալություններն ուղղակիորեն կամ գործընկեր այլ գերատեսչությունների միջոցով պետք է աջակցություն, խորհրդատվություն և տեղեկատվություն առաջարկեն իրավախախտների ընտանիքներին:

Էլեկտրոնային մոնիթորինգը

57. Այն դեպքերում, երբ պրոբացիոն վերահսկողության շրջանակներում կիրառվում է էլեկտրոնային մոնիթորինգը, այն պետք է համակցված լինի վերականգնման և կրկնահանցավորության կանխման տարրեր պարունակող միջամտությունների հետ:

58. Տեխնիկայի միջոցով հսկողության աստիճանը չպետք է լինի ավելին, քան անհրաժեշտ է տվյալ դեպքում՝ հաշվի առնելով կատարված իրավախախտման լրջությունը և համայնքի ապահովությանը սպառնացող վտանգը:

Ազատվելուց հետո հասարակությունում իրենց վերագտնելու հարցում ցուցաբերվող աջակցությունը

59. Այն դեպքերում, երբ իրավախախտների նկատմամբ ազատվելուց հետո վերահսկողության իրականացումը դրված է պրոբացիոն գործակալությունների վրա, նրանք պետք է համագործակցեն բանտային իշխանությունների, իրավախախտների, նրանց ընտանիքի և համայնքի հետ՝ նրանց ազատումը և հասարակությունում վերաինտեգրումը նախապատրաստելու նպատակով: Նրանք պետք է կապեր հաստատեն բանտում գործող իրավասու ծառայությունների հետ՝ ազատվելուց հետո նրանց սոցիալական ինտեգրմանը և զբաղվածությանն աջակցելու նպատակով:

60. Պրոբացիոն գործակալությունները պետք է ունենան բանտարկյալների հետ շփվելու բոլոր անհրաժեշտ միջոցները, ինչը նրանց թույլ կտա բանտարկյալներին օժանդակել ազատմանը նախապատրաստվելու և ազատվելուց հետո հասարակությունում իրենց վերագտնելու հարցերում՝ բանտարկության ընթացքում կատարված կառուցողական աշխատանքի հիման վրա խնամքի շարունակականությունն ապահովելու նպատակով:

61. Վաղաժամկետ ազատումից հետո իրականացվող վերահսկողությունը պետք է նպատակ ունենա բավարարելու իրավախախտի՝ ազատվելուց հետո հասարակությունում իրեն վերագտնելու հետ կապված կարիքները, ինչպիսիք են՝ զբաղվածությունը, բնակարանային ապահովումը, կրթությունը, ինչպես նաև՝ ապահովելու ազատման նախապայմանների պահպանումը՝ կրկնահանգավորության և լուրջ վնաս պատճառելու ռիսկերը նվազեցնելու նպատակով:

Խնամքն ազատվելուց հետո

62. Ազատվելուց հետո կատարելիք բոլոր պարտավորությունները հանելուց հետո պրոբացիոն գործակալությունները կարող են ներպետական օրենքով թույլատրված դեպքերում կամավորության հիմունքներով շարունակել նախկին իրավախախտներին ազատվելուց հետո տրամադրվող խնամքի ծառայությունների մատուցումը՝ օրինապաշտ կյանքը շարունակելու հարցում նրանք օգնելու նպատակով:

Օտարերկրյա քաղաքացի կամ արտերկրում դատապարտված քաղաքացիների հետ տարվող պրոբացիոն աշխատանքը

63. Պրոբացիոն գործակալությունները պետք է օտարերկրյա քաղաքացի հանդիսացող իրավախախտների համար հասանելի ծառայություններ տրամադրեն, հատկապես՝ կապված համայնքային վերահսկողության և ազատվելուց հետո հասարակությունում իրենց վերագտնելու հետ:

64. Օտարերկրյա քաղաքացի իրավախախտների հետ կապված պրոբացիոն միջամտությունների փոխանցումը թույլատրող իրավական դրույթներն իրականացնելիս վերջիններս պետք է տեղեկացվեն դրա հետ կապված իրենց իրավունքների մասին: Հարկավոր է հնարավորության սահմաններում շարունակական սերտ համագործակցություն հաստատել և պահպանել նրանց ծագման երկրի համապատասխան պրոբացիոն գործակալության (գործակալությունների) հետ՝ իրենց երկիր վերադառնալուն պես իրավախախտի նկատմամբ անհրաժեշտ վերահսկողական միջոցառումներին նպաստելու նպատակով:

65. Պրոբացիոն գործակալությունները, ներպետական իշխանությունների համաձայնությամբ, պետք է ձգտեն խթանել շարունակական շփումը արտերկրում դատապարտված իրենց համաքաղաքացիների հետ և աջակցել նրանց, ինչպես նաև՝ խրախուսել, որպեսզի վերադառնալուն պես նրանք օգտվեն համապատասխան աջակցող գործակալությունների ծառայություններից:

Մաս V

Վերահսկողության գործընթացը

Անձի գնահատումը

66. Նախքան վերահսկողության իրականացումը կամ դրա ընթացքում անհրաժեշտություն առաջանալու դեպքում հարկավոր է գնահատել իրավախախտների անձը՝ համակարգային և հիմնավոր կերպով անդրադառնալով տվյալ գործի հանգամանքներին, ներառյալ՝ ռիսկերին,

դրական գործոններին ու կարիքներին, այդ կարիքները բավարարելու համար պահանջվող միջամտություններին և այդ միջամտություններին իրավախախտի արձագանքին:

67. Հնարավոր բոլոր դեպքերում իրավախախտները պետք է կարողանան ակտիվ ներդրում ունենալ ֆորմալ գնահատման գործում: Դա կարող է կատարվել իրավախախտների տեսակետներին և անձնական ցանկություններին, նրանց անձնական ուժեղ կողմերին պատշաճ նշանակություն տալու և հետագա հանցավորությունից խուսափելու հարցում պատասխանատու վերաբերմունք ձևավորելու միջոցով:

68. Իրավախախտները պետք է տեղյակ լինեն գնահատման գործընթացի և արդյունքների մասին:

69. Գնահատումը շարունակական գործընթաց է, և դրա ճշգրտությունն ու կարևորությունը պետք է պարբերաբար վերանայվի:

70. Գնահատումը հանձնարարելի է հետևյալ դեպքերում.

ա. համապատասխան պատիժը կամ այլ միջոցը նշանակելու կամ պաշտոնական քրեական վարույթից դուրս գործը լուծելու ժամանակ,

բ. վերահսկողության ժամկետի սկզբում,

գ. իրավախախտի կյանքում նշանակալի փոփոխությունների դեպքում,

դ. վերահսկողության բնույթը կամ աստիճանը փոխելու հարցը քննարկելիս,

է. վերահսկողական միջոցի ավարտին:

71. Անձնակազմը պետք է վերապատրաստվի գնահատումները սույն կանոնների պահպանմամբ իրականացնելու հարցերի շուրջ: Այն դեպքերում, երբ ներպետական համակարգերը գնահատման գործիքներ են կիրառում, անձնակազմին հարկավոր է վերապատրաստել՝ գնահատումների հնարավոր կարևորությունը և սահմանափակումներն ընկալելու և դրանք իր մասնագիտական որոշումների հիմքում դնելու հարցում վերջինիս աջակցելու նպատակով:

Պլանավորումը

72. Բոլոր պատիժների և այլ միջոցների իրականացման համար իրավասու մարմինները պետք է պատրաստեն աշխատանքային ծրագիր, որը պետք է ներառվի անձնական գործում: Այդ ծրագիրը պետք է ուղղորդի պրոբացիոն գործակալության աշխատանքը և անձնակազմին և իրավախախտին հնարավորություն ընձեռի առաջ ընթանալու առաջադրված նպատակների ուղղությամբ:

73. Աշխատանքային ծրագիրը պետք է քննարկվի, հնարավորության սահմաններում՝ համաձայնեցվի իրավախախտի հետ:

74. Ծրագիրը պետք է հիմնված լինի նախնական գնահատման վրա և սահմանի նախատեսված միջամտությունները:

75. Գնահատումը վերանայելու դեպքում աշխատանքային ծրագիրը պետք է անհրաժեշտության դեպքում համապատասխանաբար վերանայվի:

Միջամտությունները

76. Միջամտությունները պետք է վերականգնման և կրկնահանգավորության կանխման նպատակ հետապնդեն, ուստի դրանք պետք է լինեն կառուցողական և համարժեք կիրառված պատժին կամ այլ միջոցին:

77. Պրոբացիոն գործակալությունները պետք է ի վիճակի լինեն տարբեր մեթոդներ կիրառել՝ ցուցաբերելով համապատասխան հետազոտություններից բխող միջմասնագիտական մոտեցում և գիտելիքներ:

78. Իրավախախտները պետք է նախապես լիովին տեղեկացված լինեն առաջարկված ցանկացած միջամտության մասին: Պետք է ամեն կերպ փորձել ապահովել նրանց ակտիվ մասնակցությունը նման միջամտություններին:

79. Միջամտություններն իրականացնելիս և ուղղորդում կատարելիս պրոբացիոն գործակալությունները պետք է համապատասխան դեպքերում դիմեն օժանդակ գործակալությունների օգնությանը:

80. Անկախ իրավախախտի հետ աշխատանքին մասնակցող անձանց թվից յուրաքանչյուր դեպքի համար պետք է նշանակվի անձնակազմի պատասխանատու անդամ, ում խնդիրը պետք է լինի գնահատել, մշակել և համակարգել ընդհանուր աշխատանքային ծրագիրը և ապահովել իրավախախտի հետ շփումը և պահանջների կատարումը: Դա հատկապես կարևոր է այն դեպքերում, երբ իրավախախտները ենթարկվում են մեկից ավելի միջամտության կամ երբ ներգրավված է մեկից ավելի գործակալություն:

Առաջընթացի գնահատումը

81. Յուրաքանչյուր իրավախախտի առաջընթացը պետք է գնահատվի կանոնավոր պարբերականությամբ, և այդ գործընթացը պետք է անդրադառնա աշխատանքային ծրագրի վրա՝ վերահսկողության մնացած ժամանակահատվածում: Գնահատումը պետք է անձնական գործի և, անհրաժեշտության դեպքում, որոշումը կայացնող մարմնին ներկայացվող ընթացիկ հաշվետվության մաս հանդիսանա:

82. Գնահատումը պետք է նաև արտացոլի, թե որքանով է համաձայնեցված աշխատանքային ծրագիրը ձևակերպվել, իրագործվել և հանգեցրել նախատեսված արդյունքների: Պրոբացիոն գործակալությունները պետք է կարողանան դիմել որոշում կայացնող մարմնին՝ անհրաժեշտության դեպքում վերահսկողությունը փոփոխելու կամ դադարեցնելու հարցով:

83. Վերահսկողության նպատակահարմարության վերաբերյալ իրավախախտի տեսակետը պետք է ներառվի գնահատման մեջ:

84. Վերահսկողության ժամկետի ավարտին անհրաժեշտ է վերջնական գնահատում իրականացնել: Իրավախախտները պետք է տեղյակ լինեն, որ այդ գնահատումը պահպանվելու է իրենց անձնական գործում, և որ իրենք կարող են ապագայում օգտվել դրանից:

Իրականացումը և պայմանների պահպանումը

85. Պրոբացիոն գործակալությունները պետք է աշխատեն ապահովել իրավախախտների կողմից վերահսկողության և դրա հետ կապված ցանկացած պայմանների ակտիվ իրականացումն ու

պահպանումը: Իրավախախտների համագործակցությանը հասնելու գործում նրանք չպետք է հույսը դնեն միայն պայմանների չպահպանման համար սահմանված տույժերի վրա:

86. Իրավախախտները պետք է լիովին տեղյակ լինեն իրենց ներկայացված պահանջների, պրոբացիոն անձնակազմի պարտականությունների և պատասխանատվության, ինչպես նաև՝ պայմանները չպահպանելու հետևանքների մասին:

87. Սահմանված պայմաններից որևէ մեկն իրավախախտի կողմից չպահպանելու դեպքում պրոբացիոն անձնակազմը պետք է գործուն և անհապաղ արձագանքի: Նման դեպքում պետք է լիովին հաշվի առնել չպահպանելու հետ կապված հանգամանքները:

Գրառումներ, տեղեկատվություն և գաղտնիություն

88. Բոլոր պրոբացիոն գործակալությունները պետք է պաշտոնական, ճշգրիտ և ժամանակային առումով արդիական գրառումներ կատարեն իրենց աշխատանքի վերաբերյալ: Այդ արձանագրությունները որպես կանոն պետք է ներառեն պատժի կամ այլ միջոցի իրականացմանն առնչվող անհատների անձնական տվյալները, գործակալության հետ նրանց առնչությունը և այդ ուղղությամբ կատարած աշխատանքը: Նրանք պետք է գրառեն նաև գնահատման և պլանավորման արդյունքները:

89. Գրառումների նկատմամբ կիրառելի են ներպետական օրենսդրությամբ գաղտնիության և տվյալների պաշտպանության վերաբերյալ ընդունված սկզբունքները: Գաղտնի տեղեկատվությունը համապատասխան այլ գերատեսչությունների պետք է տրամադրվի միայն տվյալներից օգտվելու խիստ ընթացակարգերին համապատասխան և օգտագործվի միայն հստակ սահմանված նպատակներով:

90. Գրառումները հաշվետվականությունն ապահովելու կարևոր միջոց են: Դրանք պետք է պարբերաբար ստուգվեն ղեկավարների կողմից և պետք է ըստ անհրաժեշտության մատչելի լինեն պաշտոնական տեսչական ստուգումների և մոնիթորինգի ժամանակ:

91. Պրոբացիոն գործակալությունները պետք է կարողանան իրենց կատարած աշխատանքի, իրավախախտների արձանագրած առաջընթացի և վերջիններիս կողմից պայմանների պահպանման աստիճանի վերաբերյալ հաշվետվություն ներկայացնել դատական կամ այլ իրավասու մարմիններին:

92. Իրավախախտները պետք է կարողանան ներպետական օրենսդրությամբ սահմանված չափով և այլոց գաղտնիության իրավունքը չխախտելու պայմանով օգտվել իրենց վերաբերյալ կազմված անձնական գործերից:

Մաս VI

Պրոբացիոն գործակալությունների այլ գործունեությունը

Աշխատանքը տուժողների հետ

93. Հանցագործությունից տուժած անձանց ծառայություններ մատուցելիս պրոբացիոն գործակալությունները կատարված հանցագործության հետևանքները հաղթահարելու հարցում պետք է աջակցեն նրանց՝ լիովին հաշվի առնելով նրանց բազմապիսի կարիքները:

94. Համապատասխան դեպքերում պրոբացիոն գործակալությունները պետք է կապ պահպանեն տուժողների աջակցության ծառայությունների հետ՝ տուժողների կարիքների բավարարումն ապահովելու նպատակով:

95. Այն դեպքերում, երբ պրոբացիոն գործակալությունները կապ են հաստատում տուժողների հետ և/կամ ակնկալում են նրանց տեսակետները, վերջիններս պետք է հստակ տեղյակ լինեն այն մասին, որ իրավախախտների նկատմամբ պատիժների նշանակման որոշումները կայացվում են մի շարք գործոնների հիման վրա, այլ ոչ միայն էլնելով այս կամ այն տուժողին պատճառված վնասից:

96. Եթե անգամ պրոբացիոն գործակալություններն ուղղակիորեն չեն աշխատում տուժողների հետ, միջամտությունների ժամանակ անհրաժեշտ է հարգել տուժողների իրավունքներն ու կարիքները և ձգտել բարձրացնել տուժողներին պատճառված վնասի և այդ վնասի համար պատասխանատվության մասին իրավախախտների իրազեկությունը:

Գործունեությունը վերականգնողական արդարադատության բնագավառում

97. Վերականգնողական արդարադատության գործընթացներում պրոբացիոն գործակալությունների ներգրավվածության դեպքում իրավախախտների, տուժողների և համայնքի իրավունքներն ու պարտականությունները պետք է հստակ սահմանված և ընդունված լինեն: Պրոբացիոն անձնակազմը պետք է համապատասխան վերապատրաստում անցնի: Առանձնահատուկ միջամտություններ իրականացնելիս հիմնական նպատակը պետք է լինի կատարված իրավախախտման հետևանքների վերացումը:

Հանցավորության կանխարգելում

98. Ներպետական օրենքով սահմանված դեպքերում պրոբացիոն գործակալությունների փորձագիտական կարծիքը և փորձը պետք է օգտագործվեն հանցավորության նվազեցման ռազմավարություններ մշակելիս: Դա կարող է իրականացվել համատեղ միջամտությունների և համագործակցությունների հաստատելու միջոցով:

Մաս VII

Բողոքարկման ընթացակարգեր, տեսչական ստուգումներ և մոնիթորինգ

99. Ներպետական օրենսդրությամբ պետք է սահմանված լինեն պրոբացիոն գործունեության վերաբերյալ բողոքների քննության և դրանց ընթացք տալու հստակ, մատչելի և արդյունավետ ընթացակարգեր:

100. Այդ ընթացակարգերը պետք է լինեն արդարացի և անկողմնակալ:

101. Բոլոր դեպքերում բողոք ներկայացնողը պետք է պատշաճ կերպով տեղեկացվի քննության ընթացքի և արդյունքների մասին:

102. Պրոբացիոն գործակալությունները պետք է ապահովեն իրենց իսկ գործունեության մոնիթորինգի և կատարելագործման հուսալի համակարգերի առկայությունը, ինչպես նաև՝ այդ համակարգերի համապատասխանությունը սահմանված ստանդարտներին:

103. Պրոբացիոն գործակալությունները պետք է հաշվետու լինեն իրավասու մարմիններին և պարբերաբար պետական տեսչական ստուգումների և/կամ անկախ մոնիթորինգի ենթարկվեն, ինչպես նաև՝ լիարժեք համագործակցեն այդ հսկողությունն իրականացնողների հետ: Անկախ մոնիթորինգի մարմինների զեկույցները ենթակա են հրապարակման:

Մաս VIII

Հետազոտություններ, գնահատում, աշխատանք լրատվամիջոցների և հասարակության հետ

104. Պրոբացիոն քաղաքականությունը և գործունեությունը պետք է հնարավորինս հիմնված լինեն ակնհայտ փաստերի վրա: Իշխանությունները պետք է մանրակրկիտ հետազոտության և գնահատման համար անհրաժեշտ միջոցներ տրամադրեն:

105. Գործող օրենքների, քաղաքականության և գործունեության վերանայումը պետք է իրականացվի միջազգայնորեն ընդունված ստանդարտներին համապատասխանող գիտական և հետազոտական տվյալների հիման վրա:

106. Լրատվամիջոցները և հանրությունը պարբերաբար պետք է փաստերի վրա հիմնված տեղեկատվություն ստանան պրոբացիոն գործակալության կատարած աշխատանքի մասին: Նրանք պետք է տեղեկացվեն այդ աշխատանքի նպատակների և արդյունքների մասին՝ հասարակությունում նրանց դերի և կարևորության առավել լավ ընկալումը խթանելու նպատակով:

107. Անհրաժեշտ է խրախուսել իրավասու մարմիններին՝ պրոբացիայի ոլորտում առկա զարգացումների վերաբերյալ պարբերական հաշվետվություններ հրապարակելու հարցում:

108. Պրոբացիոն գործակալությունների վարած քաղաքականության և գործունեության վերաբերյալ հաշվետվությունները պետք է թե՛ ներպետական, և թե՛ միջազգային մակարդակով հասանելի լինեն այլ գործակալությունների, ծառայությունից օգտվողների և լայն հանրության համար՝ վստահությունն ամրապնդելու և պրոբացիոն ստանդարտներն ու գործունեությունը կատարելագործելու նպատակով:

CM/Rec(2010)1 հանձնարարականի թիվ II հավելված

Գործածված տերմինների բառարան

Խնամքն ազատվելուց հետո. Վերաբերում է իրավախախտին կամավորության հիմունքներով և ազատագրվումից վերջնականապես ազատվելուց հետո համայնքում վերաինտեգրելուն՝ կառուցողական, ծրագրված և վերահսկելի ձևով: Սույն կանոնների իմաստով այս արտահայտությունը տարբերակված է «ազատվելուց հետո հասարակությունում իրենց վերագտնելու հարցում աջակցություն» արտահայտությունից, որը վերաբերում է ազատագրվումից ազատվելուց հետո պարտադիր ներգրավման դեպքերին:

Անձի գնահատումը նախքան միջամտությունը պլանավորելը և/կամ դատական կամ այլ մարմիններին խորհրդատվություն տրամադրելը իրավախախտի ռիսկերի, կարիքների և ուժեղ կողմերի հաշվառումն է: Բացի այդ, գնահատումը նպատակ ունի պարզելու իրավախախտումը կատարելու պատճառները, ինչպես նաև այն, թե ինչ միջոցներով կարելի է նվազեցնել իրավախախտումը կրկնելու հավանականությունը:

Օժանդակությունը վերահսկողության բաղկացուցիչ մասն է՝ հսկողության միջոցների հետ մեկտեղ: Այն սովորաբար ներառում է հետևյալ ծառայություններից մեկը կամ մի քանիսը. բնակարան կամ աշխատանք գտնելու, ուսում ստանալու հարցում օժանդակության, ընտանեկան աջակցության ցուցաբերումը և այլն: Որոշ իրավական համակարգերում այդ ծառայությունները կարող են տրամադրվել առանձին գերատեսչությունների կողմից:

Բողոքը վերաբերում է թե՛ դատական մարմնին ներկայացվող դիմումին և թե՛ վարչական մարմնին ներկայացվող բողոքին:

Համայնքային պատիժներ և միջոցներ. Այն պատիժները և միջոցները, որոնց դեպքում իրավախախտները մնում են համայնքում, և պայմաններ և/կամ պարտականություններ սահմանելու միջոցով որոշակի սահմանափակումներ են դրվում նրանց ազատության նկատմամբ: Արտահայտությունը վերաբերում է դատական կամ վարչական մարմնի կողմից նշանակված ցանկացած պատժի, նախքան դատավճիռը կամ պատիժը կամ դրանց փոխարեն նշանակված ցանկացած այլ միջոցի, ինչպես նաև՝ պատիժը բանտային հաստատությունից դուրս իրականացնելու եղանակներին:

Պայմաններ և պարտականություններ արտահայտությունը վերաբերում է որոշում կայացնող մարմնի կողմից նշանակվող պատժից կամ այլ միջոցից բխող պահանջներին:

Հսկողությունը վերաբերում է այն գործողություններին, որոնք կոչված են պարզելու, թե որքանով է իրավախախտը կատարում պատժից կամ այլ միջոցից բխող պայմանները կամ պարտականությունները, կամ ապահովում դրանց կատարումը: Այդ գործողությունները, որպես կանոն, ներառում են այդ պայմաններից կամ պարտականություններից խուսափելու դեպքում առավել խիստ պատիժների կամ այլ միջոցների կիրառումը կամ այդպիսիք կիրառելու նախազգուշացումը:

Հանցավորության կանխարգելումը քրեական արդարադատության համակարգում ընդգրկված գերատեսչությունների և իրավասու այլ գործակալությունների կողմից իրականացվող քաղաքականությունը և պրակտիկան է, որի նպատակն է՝ կանխարգելել (կամ, ինչն առավել հավանական է՝ նվազեցնել) հանցավորությունը:

Որոշում կայացնող մարմինը դատական, վարչական կամ այլ մարմինն է, որն օրենքով լիազորված է համայնքային պատիժ կամ այլ միջոց նշանակել, վերացնել դրանք կամ փոփոխել դրանցից բխող պայմաններն ու պարտավորությունները:

Կրկնահանցավորության կանխումն այն գործընթացն է, երբ քրեական արդարադատության ոլորտի գերատեսչությունների ներգրավմամբ կամ առանց դրա, իրավախախտները դադարեցնում են իրենց հակաօրինական գործողությունները և հանցավորությունից զերծ կյանք են վարում՝ նրանց մարդկային կապիտալը (ինչպիսիք են՝ անձնական հմտություններն ու գիտելիքները) և սոցիալական կապիտալի (ինչպիսիք են՝ զբաղվածությունը, ընտանիքը, սոցիալական առնչություններն ու կապերը և քաղաքացիական հասարակության ներգրավումը) զարգացնելու միջոցով:

Վաղաժամկետ ազատումը նախքան ազատագրկման ձևով նշանակված պատիժն ամբողջությամբ կրելը բանտից ազատելու բոլոր ձևերն են, ինչպիսիք են՝ ժամանակավոր ազատումը, պայմանական ազատումը կամ պայմանական ներումը:

Առաջընթացի գնահատումը առաջադրված նպատակներին հասնելու աստիճանի մանրագնին ուսումնասիրությունն է: Այս գործընթացի ժամանակ որոշում է կայացվում հետագա քայլերի վերաբերյալ:

Իրականացումը պրոբացիոն գործակալության աշխատանքի գործնական կողմն է՝ ուղղված համայնքային պատժի կամ այլ միջոցի պատշաճ իրագործումն ապահովելուն:

Միջամտությունն այն գործողությունն է, որը ձեռնարկվում է իրավախախտին հետագայում հանցագործություն կատարելուց զերծ պահելու նպատակով վերահսկելու, համապատասխան վերաբերմունք ցուցաբերելու, օժանդակելու կամ ուղղորդելու և օրինապահ կյանք վարելու հարցում օգնելու նպատակով: Ուստի, միջամտությունը չի վերաբերում տեղեկատվության տրամադրմանը կամ զեկուցագրերի ներկայացմանը:

Դատական մարմինը դատարանն է, դատավորը կամ դատախազը:

Ներպետական օրենքը ոչ միայն երկրի օրենսդիր մարմնի կողմից ընդունված առաջնային օրենսդրությունն է, այլև պարտադիր բնույթ ունեցող այլ կանոնակարգերն ու կարգադրությունները, ինչպես նաև՝ դատարանների նախադեպերը՝ այնքանով, որքանով դրանք ճանաչված են ներպետական իրավական համակարգի կողմից:

Իրավախախտը այն անձն է, ով մեղադրվում է քրեական օրենքի խախտման մեջ կամ ով խախտել է քրեական օրենքը: Սույն հանձնարարականի իմաստով, առանց անմեղության կանխավարկածը կամ մեղքը դատական որոշմամբ հաստատելու պահանջը կասկածի տակ առնելու՝ «իրավախախտ» արտահայտությունը վերաբերում է բոլորին, ում նկատմամբ քրեական դատավարություն է իրականացվում:

Ազատվելուց հետո վերահսկողությունը վաղաժամկետ ազատման ժամանակահատվածում իրականացվող վերահսկողությունն է:

Պրոբացիա. Վերաբերում է օրենքով սահմանված և իրավախախտի նկատմամբ նշանակված համայնքային պատիժների և այլ միջոցների իրականացմանը: Այն ներառում է բազմապիսի գործողություններ և միջամտություններ, որոնք ներառում են վերահսկողությունը, իրավախախտի սոցիալական ներառման նպատակով իրականացվող ուղղորդումն ու օժանդակությունը, ինչպես նաև՝ հասարակության անվտանգությանը նպաստելը:

Պրոբացիոն գործակալություն. Վերաբերում է ցանկացած մարմնի, որն օրենքով կոչված է իրականացնելու վերը նշված խնդիրներն ու պարտականությունները: Կախված տվյալ երկրի ներպետական համակարգից, պրոբացիոն գործակալության աշխատանքը կարող է նաև ներառել հետևյալը. դատական և որոշում կայացնող մարմիններին տեղեկատվության և խորհրդատվության տրամադրումը՝ հիմնավոր և արդարացի որոշումներ կայացնելու հարցում վերջիններիս օգնելու նպատակով. անազատության մեջ գտնվելու ընթացքում իրավախախտներին ուղղորդում և աջակցություն ցուցաբերելը՝ նրանց ազատման նախապատրաստելու և ազատվելուց հետո

հասարակությունում իրենց վերագտնելու հարցերում. վաղաժամկետ ազատման ենթակա անձանց մոնիթորինգը և աջակցությունը, վերականգնողական արդարադատության հետ կապված միջամտությունները և հանցագործությունից տուժած անձանց օժանդակություն առաջարկելը:

Վերականգնումը լայն հասկացություն է, որը վերաբերում է կրկնահանգավորության կանխմանը և իրավախախտին օրինապահ անձի վերածելը խթանող տարատեսակ միջամտություններին:

Ազատվելուց հետո հասարակությունում իրենց վերագտնելու հարցում աջակցությունը սկսում է ազատությունից գրկելու պահից: Այն դրական և կառավարելի ձևով բանտարկյալին համայնքում վերաինտեգրելու գործընթաց է: Սույն կանոններում «ազատվելուց հետո հասարակությունում իրենց վերագտնելու հարցում աջակցություն» արտահայտությունը վերաբերում է այն ժամանակահատվածում իրականացվող վերահսկողությանը, երբ իրավախախտը լքել է բանտը, սակայն շարունակում է որոշակի կատարման համար պարտադիր պարտականություններ կրել, օրինակ՝ պայմանական ազատման ժամանակահատվածը: Այս հասկացությունը պետք է «տարբերակել ազատվելուց հետո խնամք» արտահայտությունից:

Վերականգնողական արդարադատությունը ներառում է մի շարք հիմնական նախապայմանների վրա հիմնված մոտեցումներ ու ծրագրեր.

ա) հանցագործությանն արձագանքելիս պետք է հնարավորինս հարթվի տուժողին պատճառված վնասը,

բ) իրավախախտներին հնարավորություն տրվի հասկանալու, որ իրենց վարքագիծն անընդունելի է, և որ դրանք որոշակի իրական հետևանքներ են առաջացրել տուժողի և համայնքի համար,

գ) իրավախախտները կարող են և պետք է պատասխանատվություն ստանձնեն իրենց գործողության համար,

դ) տուժողները պետք է հնարավորություն ունենան արտահայտելու իրենց կարծիքները և մասնակցելու իրավախախտի կողմից վնասի հարթման եղանակը որոշելուն,

ե) համայնքը պարտավոր է ներդրում ունենալ այդ գործընթացում:

Վերահսկողությունը վերաբերում է թե՛ կատարող մարմնի կողմից կողմից կամ վերջինիս անունից իրավախախտին համայնքում պահելու ուղղությամբ իրականացված օժանդակ գործողություններին և թե՛ այն գործողություններին, որոնք ուղղված են՝ ապահովելու, որպեսզի իրավախախտը կատարի սահմանված պայմանները և պարտականությունները, ներառյալ՝ հսկողության միջոցները, եթե դա անհրաժեշտ է: Վերահսկողությունը կարող է լինել պարտադիր կամ կամավոր (իրավախախտի խնդրանքով):

Տուժողը ֆիզիկական անձն է, ում պատճառվել է վնաս, այդ թվում՝ ֆիզիկական կամ հոգեկան վնաս, հուզական տառապանք կամ տնտեսական կորուստ՝ քրեական օրենքի խախտում հանդիսացող գործողությունների կամ անգործության հետևանքով: «Տուժող» տերմինը համապատասխան դեպքերում վերաբերում է նաև անմիջական տուժողի սեփական ընտանիքին կամ նրա խնամքի տակ գտնվող անձանց:

Կամավորը պրոբացիոն գործառույթներ իրականացնող այն անձն է, ով չի վարձատրվում իր աշխատանքի դիմաց: Դա չի բացառում կամավորներին փոքր գումարների վճարումը՝ իրենց աշխատանքի հետ կապված ծախսերը հոգալու նպատակով:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ Rec(2006)2 հանձնարարականը անդամ երկրներին՝ Եվրոպական բանտային կանոնների վերաբերյալ (Recommendation Rec(2006)2 of the Committee of Ministers to member states on the European Prison Rules)

(Նախարարների կոմիտեի կողմից հաստատվել է 2006թ. հունվարի 11-ին՝ փոխնախարարների թիվ 952 հանդիպման ժամանակ)

Նախարարների կոմիտեն, առաջնորդվելով Եվրոպայի խորհրդի կանոնադրության թիվ 15-ը հոդվածով,

Նկատի առնելով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպերը,

Նկատի առնելով նաև Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման հարցերով եվրոպական կոմիտեի կատարած աշխատանքը, հատկապես՝ վերջինիս կողմից իր ընդհանուր զեկույցներում սահմանված ստանդարտները,

Կրկնելով, որ որևէ անձ չի կարող զրկվել ազատությունից այլ կերպ, քան որպես ծայրահեղ միջոց և օրենքով սահմանված ընթացակարգին համապատասխան,

Ընդգծելով, որ ազատությունից զրկելու հետ կապված պատիժների իրականացմամբ և բանտարկյալների նկատմամբ վերաբերմունքով պայմանավորված՝ անհրաժեշտ է հաշվի առնել ապահովության, անվտանգության և կարգապահության հետ կապված պահանջները՝ ապահովելով նաև բանտային այնպիսի պայմաններ, որոնք չեն նսեմացնում մարդկային արժանապատվությունը և որոնք այնտեղ պահվող անձանց առաջարկում են զբաղվածության միջոցառումներ և ներգործության հետ կապված ծրագրեր՝ դրանով իսկ նրանց պատրաստելով հասարակությունում վերաինտեգրվելուն.

Կարևորելով Եվրոպայի խորհրդի անդամ երկրների կողմից իրենց բանտային քաղաքականության ընդհանուր սկզբունքների շարունակական թարմացումն ու պահպանումը,

Բացի այդ, հաշվի առնելով, որ այդ ընդհանուր սկզբունքների պահպանումը կիսթանի միջազգային համագործակցությունն այս ոլորտում,

Հիշատակելով էական սոցիալական փոփոխությունները, որոնք վերջին երկու տասնամյակում անդրադարձել են Եվրոպայի քրեական բնագավառի վրա,

Վերահաստատելով Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարականներում տեղ գտած ստանդարտները քրեակատարողական քաղաքականության և պրակտիկայի առանձին ասպեկտների վերաբերյալ, մասնավորապես՝ Բանտում կրթության վերաբերյալ թիվ R(89)12 հանձնարարականը, Բանտերի և բանտերում վարակիչ հիվանդությունների, այդ թվում՝ ՁԻԱՀ-ի և նման այլ առողջապահական խնդիրների վերահսկման քրեաբանական ասպեկտների վերաբերյալ թիվ R(93)6, Պատիժների և այլ միջոցների իրականացմանը ներգրավված անձնակազմի վերաբերյալ թիվ R(97)12, Բանտերում առողջապահության էթիկական և կազմակերպական ասպեկտների

վերաբերյալ թիվ R(98)7, Բանտերի գերբեռնվածության և բանտային բնակչության ներհոսքի վերաբերյալ թիվ R(99)22, Պայմանական ազատման մասին թիվ Rec(2003)22 և Բանտային վարչակազմերի կողմից ցմահ ազատազրկման և տևական ազատազրկման դատապարտված անձանց ղեկավարման վերաբերյալ թիվ Rec(2003)23 հանձնարարականները,

Հաշվի առնելով Բանտարկյալների նկատմամբ վերաբերմունքի ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները,

Նկատի առնելով, որ Եվրոպական բանտային կանոնների վերաբերյալ նախարարների կոմիտեի թիվ R(87)3 հանձնարարականը նշանակալի վերանայման և լրամշակման կարիք ունի՝ Եվրոպայում քրեական քաղաքականության, պատժային գործունեության և բանտերի ընդհանուր կառավարման ոլորտում տեղ գտած զարգացումներն արտացոլելու նպատակով՝

Առաջարկում է, որպեսզի անդամ երկրների կառավարությունները.

- իրենց օրենսդրությունում, քաղաքականությունում և պրակտիկայում առաջնորդվել սույն հանձնարարականի հավելվածում տեղ գտած կանոններով, որոնք փոխարինում են Եվրոպական բանտային կանոնների վերաբերյալ նախարարների կոմիտեի ընդունած թիվ R(87)3 հանձնարարականին,
- ապահովել, որ սույն հանձնարարականը և դրան կից մեկնաբանությունները թարգմանվեն և հնարավորինս լայնորեն տարածվեն, հատկապես՝ դատական մարմինների, բանտային անձնակազմի և անձամբ բանտարկյալների շրջանում:

Թիվ Rec(2006)2 հանձնարարականի հավելված

Մաս I

Հիմնական սկզբունքներ

1. Ազատությունից զրկված բոլոր անձանց մարդկային իրավունքները պետք է հարգվեն:
2. Ազատությունից զրկված անձինք օժտված են բոլոր այն իրավունքներով, որոնցից չեն զրկվել դատապարտվելու կամ կալանավորվելու որոշման արդյունքում:
3. Ազատությունից զրկված անձանց նկատմամբ կիրառվող սահմանափակումները պետք է տեղավորվեն անհրաժեշտ նվազագույնի սահմաններում և համարժեք լինեն դրանց կիրառման իրավաչափ նպատակներին:
4. Բանտարկյալների մարդկային իրավունքները ոտնահարող բանտային պայմանները չեն կարող արդարացվել միջոցների անբավարարությամբ:
5. Բանտային կյանքը պետք է հնարավորինս մոտ լինի համայնքային կյանքին:
6. Ողջ բանտարկությունը պետք է անցկացվի այնպես, որպեսզի խթանվի ազատությունից զրկված անձանց վերաինտեգրումն ազատ հասարակությունում:
7. Անհրաժեշտ է խրախուսել բանտից դուրս գտվող սոցիալական ծառայությունների հետ համագործակցությունը և քաղաքացիական հասարակության հնարավոր ներգրավումը:

8. Բանտային անձնակազմը կարևոր հանրային ծառայություն է իրականացնում, և անձնակազմի հավաքագրումը, վերապատրաստումը և աշխատանքային պայմանները պետք է վերջինիս հնարավորություն ընձեռեն բանտարկյալների հետ իրենց աշխատանքի ընթացքում պահպանելու բարձր ստանդարտները:

9. Բոլոր բանտերը պետք է պարբերաբար ենթարկվեն պետական տեսչական ստուգումների և անկախ մոնիթորինգի:

Կարգավորման շրջանակը և կիրառումը

10.1. Եվրոպական բանտային կանոնները վերաբերում են այն անձանց, ովքեր դատական մարմնի որոշմամբ գտնվում են կալանքի տակ կամ դատապարտվելու արդյունքում զրկվել են ազատությունից:

10.2. Դատական մարմնի որոշմամբ կալանքի տակ գտնվող կամ դատապարտվելու արդյունքում ազատությունից զրկված անձինք, որպես կանոն, պետք է պահվեն բանտերում, այսինքն՝ բանտարկյալների այս երկու խմբերի համար նախատեսված հաստատություններում:

10.3. Կանոնները կիրառելի են նաև այն անձանց նկատմամբ, ովքեր.

ա. բանտում պահվում են այլ պատճառով,

բ. դատական մարմնի որոշմամբ կալանավորվել են կամ դատապարտվելու արդյունքում զրկվել են ազատությունից, սակայն ինչ-ինչ պատճառներով պահվում են այլ վայրում:

10.4. Բանտում պահվող կամ 10.3.*բ* կետում նշված դեպքերում անազատության մեջ գտնվող անձինք սույն կանոնների իմաստով համարվում են բանտարկյալներ:

11.1. 18 տարին չլրացած երեխաները պետք է պահվեն ոչ թե չափահասների համար նախատեսված բանտում, այլ հատուկ այդ նպատակով ստեղծված հաստատությունում:

11.2. Եթե երեխաներն այդուհանդերձ բացառության կարգով պահվում են նման բանտում, անհրաժեշտ է ունենալ այնպիսի կանոնակարգեր, որոնք թույլ կտան հաշվի առնել նրանց կարգավիճակն ու կարիքները:

12.1. Հոգեկան հիվանդությամբ տառապող կամ այնպիսի անձինք, ում հոգեկան վիճակն անհամատեղելի է բանտում անազատության մեջ պահելու հետ, պետք է պահվեն հատուկ այդ նպատակով նախատեսված հաստատությունում:

12.2. Եթե նման անձինք այդուհանդերձ բացառության կարգով պահվում են բանտում, անհրաժեշտ է ունենալ այնպիսի կանոնակարգեր, որոնք թույլ կտան հաշվի առնել նրանց կարգավիճակն ու կարիքները:

13. Սույն կանոնները պետք է կիրառվեն անկողմնակալորեն և առանց սեռի, ռասայի, մաշկի գույնի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ հայացքի, ազգային կամ սոցիալական ծագման, ազգային փոքրամասնության պատկանելու, գույքային, ծննդյան կամ այլ կարգավիճակով պայմանավորված խտրականության:

Մաս II

Բանտարկության պայմանները

Ընդունումը

14. Որևէ անձ չի կարող որպես բանտարկյալ ընդունվել բանտ կամ պահվել այնտեղ՝ առանց ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգով կայացված, օրինական ուժ ունեցող համապատասխան որոշման:

15.1. Յուրաքանչյուր բանտարկյալի վերաբերյալ բանտ ընդունելու պահին պետք է գրառվեն հետևյալ տեղեկությունները.

ա. տեղեկատվություն բանտարկյալի ինքնության վերաբերյալ,

բ. բանտարկության պատճառները և այդ որոշումը կայացնող մարմինը,

գ. ընդունման օրը և ժամը,

դ. բանտարկյալի այն անձնական իրերի ցանկը, որոնք թիվ 31 կանոնին համապատասխան պետք է ի պահ տրվեն,

է. ցանկացած տեսանելի վնասվածքի կամ նախքան ընդունվելը տեղի ունեցած վատ վերաբերմունքի վերաբերյալ բողոքները,

զ. բանտարկյալի առողջական վիճակի վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն, որն առնչվում է բանտարկյալի կամ այլոց ֆիզիկական և հոգեկան ապահովությանը՝ բժշկական գաղտնիքի պահպանման պայմանով:

15.2. Ընդունման պահին բոլոր բանտարկյալները պետք է ստանան թիվ 30 կանոնով սահմանված տեղեկատվությունը:

15.3. Ընդունումից անմիջապես հետո թիվ 24.9 կանոնին համապատասխան պետք է ծանուցում ուղարկվի բանտարկյալի բանտարկության վերաբերյալ:

16. Ընդունումից հետո հնարավորինս վաղ.

ա. թիվ 42 կանոնով նախատեսված բժշկական զննությամբ պետք է լրացվի ընդունման պահին բանտարկյալի առողջական վիճակի վերաբերյալ տեղեկատվությունը,

բ. թիվ 51 կանոնին համապատասխան անհրաժեշտ է որոշել բանտարկյալին պահելու ռեժիմը,

գ. բանտարկյալի կողմից ապահովությանը սպառնացող վտանգը պետք է որոշվի թիվ 52 կանոնին համապատասխան,

դ. անհրաժեշտ է գնահատել բանտարկյալի սոցիալական վիճակի վերաբերյալ առկա տեղեկատվությունը՝ բանտարկյալի անմիջական անձնական և սոցիալական կարիքներին արձագանքելու նպատակով,

է. դատապարտված բանտարկյալների պարագայում հարկավոր է քայլեր ձեռնարկել սույն կանոնների Մաս VIII-ում նշված ծրագրերն իրականացնելու ուղղությամբ:

Տեղաբաշխում և կացարանային ապահովում

17.1. Բանտարկյալները պետք է հնարավորության սահմաններում տեղաբաշխվեն իրենց բնակության կամ սոցիալական վերականգնման վայրին մոտ գտնվող բանտերում:

17.2. Տեղաբաշխման ժամանակ հարկավոր է հաշվի առնել քրեական գործով քննությունը շարունակելու, ապահովության, անվտանգության և բոլոր բանտարկյալների համար համապատասխան ռեժիմներ ապահովելու նկատառումները:

17.3. Հնարավորության սահմաններում պետք է առաջնային տեղաբաշխման և հետագայում մեկ բանտից մյուսը փոխադրելու մասին խորհրդակցել բանտարկյալի հետ:

18.1. Բանտարկյալներին տրամադրված կացարանը, հատկապես՝ ննջարանները, պետք է հարիր լինեն մարդկային արժանապատվությանը և հնարավորության սահմաններում համապատասխանեն մեկուսիության, առողջության և հիգիենայի հետ կապված պահանջներին. հարկավոր է պատշաճ ուշադրություն դարձնել կլիմայական պայմաններին և հատկապես տարածքի մակերեսին, օդի ծավալին, լուսավորությանը, ջեռուցմանն ու օդափոխությանը:

18.2. Բանտարկյալների ապրելու, աշխատելու կամ համատեղ միջոցառումների համար նախատեսված բոլոր շինություններում.

ա. պատուհանները պետք է բավարար չափով մեծ լինեն, որպեսզի բանտարկյալները բնական լուսավորության նորմալ պայմաններում կարողալու կամ աշխատելու հնարավորություն ունենան, և որպեսզի չխոչընդոտվի մաքուր օդի ներհոսքը, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է օդորակման պատշաճ համակարգ,

բ. արհեստական լուսավորությունը պետք է բավարարի ընդունված տեխնիկական ստանդարտները,

գ. անհրաժեշտ է ունենալ ահազանգման համակարգ, որը բանտարկյալներին անձնակազմի հետ անհապաղ կապվելու հնարավորություն կընձեռի:

18.3. 1-ին և 2-րդ պարբերություններում նշված խնդիրների վերաբերյալ հատուկ նվազագույն պահանջները պետք է սահմանված լինեն ներպետական օրենսդրությամբ:

18.4. Ներպետական օրենսդրությունը պետք է նախատեսի մեխանիզմներ, որոնք կապահովեն, որպեսզի այս նվազագույն պահանջները չխախտվեն բանտերի գերբեռնվածության հետևանքով:

18.5. Բանտարկյալները, որպես կանոն, պետք է գիշերվա ընթացքում տեղավորվեն անհատական խցերում, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք նախընտրում են ընդհանուր ննջարանները:

18.6. Ընդհանուր կացարան կարող է տրամադրվել միայն այդ նկատառումներից ելնելով, և դրանում պետք է տեղավորվեն միմյանց հետ շփվելու տեսակետից համատեղելի բանտարկյալներ:

18.7. Հնարավորության սահմաններում բանտարկյալները պետք է նախքան ընդհանուր ննջարանում տեղավորվելն ընտրության հնարավորություն ունենան:

18.8. Բանտարկյալներին այս կամ այն բանտում կամ բանտի այս կամ այն հատվածում տեղավորելու որոշումը կայացնելիս հարկավոր է պատշաճ ուշադրություն դարձնել բանտարկյալների հետևյալ խմբերին միմյանցից անջատ պահելուն.

ա. չդատապարտված բանտարկյալները՝ դատապարտվածներից,

բ. արական սեռի բանտարկյալները՝ իգական սեռի բանտարկյալներից,

գ. չափահասության հասած երիտասարդ բանտարկյալները՝ առավել տարեցներից:

18.9. Անջատ պահելու պահանջներից բացառություններ կարող են արվել 8-րդ պարբերության իմաստով՝ բանտարկյալներին կազմակերպված միջոցառումներին համատեղ մասնակցելու հնարավորություն ընձեռելու նպատակով, սակայն այս խմբերը գիշերային ժամերին պետք է մշտապես անջատ պահվեն միմյանցից, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք բանտարկությունը միասին կրելու ցանկություն են հայտնում, իսկ բանտային մարմինները գտնում են, որ դա բխում է բոլոր այդ բանտարկյալների շահերից:

18.10. Բոլոր բանտարկյալների կացարանային ապահովումը պետք է իրականացվի անվտանգության հնարավորինս մեղմ միջոցառումների պայմաններում, որը համարժեք է փախուստի դիմելու կամ ինքնավնասման կամ այլոց վնաս պատճառելու վտանգին:

Հիգիենան

19.1. Յուրաքանչյուր բանտի բոլոր հատվածները պետք է մշտապես պատշաճ խնամվեն և մաքուր պահվեն:

19.2. Բանտ ընդունվելիս բանտարկյալին հատկացվող խուցը կամ այլ կացարանը պետք է մաքուր վիճակում լինի:

19.3. Բանտարկյալները պետք է կարողանան ցանկացած պահի հիգիենիկ և մեկուսի պայմաններում օգտվել սանիտարական հանգույցներից:

19.4. Պետք է տրամադրվեն պատշաճ հարմարություններ, որպեսզի յուրաքանչյուր բանտարկյալ, ընդհանուր հիգիենայի նկատառումներից ելնելով, հնարավորության դեպքում՝ ամեն օր, սակայն ոչ պակաս, քան շաբաթը երկու անգամ (կամ առավել հաճախ, եթե անհրաժեշտ է) կլիմային համապատասխանող ջերմաստիճանի պայմաններում լոգանք կամ ցնցուղ ընդունել:

19.5. Բանտարկյալները պետք է հետևեն իրենց, իրենց հագուստի և ննջարանի մաքրությանը և կոկիկությանը:

19.6. Բանտային մարմինները պետք է նրանց ապահովեն դրա համար անհրաժեշտ միջոցներով, այդ թվում՝ զուգարանային և ընդհանուր մաքրության պարագաներով ու նյութերով:

19.7. Հատուկ դրույթ պետք է նախատեսել կանանց սանիտարական կարիքների մասին:

Հագուստ և անկողնային պարագաներ

20.1. Բավարար սեփական հագուստ չունեցող բանտարկյալները պետք է կլիմային համապատասխանող հագուստ ստանան:

20.2. Այդ հագուստը չպետք է նվաստացնող կամ վիրավորական տեսք ունենա:

20.3. Հագուստը պետք է պահվի մաքուր պայմաններում և փոխվի ըստ անհրաժեշտության:

20.4. Չի կարելի բանտից դուրս գալու թույլտվություն ստացած բանտարկյալներից պահանջել, որպեսզի նրանք կրեն իրենց բանտարկյալ լինելու մասին վկայող հագուստ:

21. Յուրաքանչյուր բանտարկյալ պետք է ապահովվի առանձին մահճակալով և առանձին ու պատշաճ անկողնային պարագաներով, որոնք պետք է պահպանվեն բարվոք վիճակում և փոխվեն դրանց մաքրությունը պահպանելու համար անհրաժեշտ հաճախականությամբ:

Մտունդը

22.1. Բանտարկյալները պետք է ապահովվեն իրենց տարիքին, առողջական և ֆիզիկական վիճակին, կրոնին, մշակույթին և աշխատանքի բնույթին համապատասխանող սննդակարգով:

22.2. Մննդակարգին, այդ թվում՝ նվազագույն էներգետիկ և պրոտեինային բաղադրության ներկայացվող պահանջները պետք է սահմանվեն ներպետական օրենքով:

22.3. Մտունդը պետք է պատրաստվի և մատուցվի հիգիենիկ պայմաններում:

22.4. Մտունդը պետք է մատուցվի օրական երեք անգամ՝ դրանց միջև ողջամիտ ընդմիջումներով:

22.5. Խմելու ջուրը բանտարկյալների համար պետք է հասանելի լինի ցանկացած ժամանակ:

22.6. Բուժաշխատողը կամ որակավորում ունեցող բուժքույրը պետք է կարգադրեն փոփոխություն կատարել բանտարկյալի սննդակարգում, եթե դա անհրաժեշտ է բժշկական նկատառումներից ելնելով:

Իրավական խորհրդատվություն

23.1. Բոլոր բանտարկյալներն իրավական խորհրդատվություն ստանալու իրավունք ունեն և բանտային մարմինները պետք է նրանց պատշաճ հնարավորություն տան նման խորհրդատվությունից օգտվելու համար:

23.2. Բանտարկյալները ցանկացած իրավական հարցի շուրջ կարող են խորհրդակցել իրենց իսկ ընտրած իրավախորհրդատուի հետ՝ սեփական միջոցների հաշվին:

23.3. Անվճար իրավական օգնության հնարավորության մասին բանտային մարմինները պետք է տեղեկացնեն բոլոր բանտարկյալներին:

23.4. Բանտարկյալների և նրանց իրավախորհրդատուների միջև իրավական բնույթի խորհրդակցությունները և հաղորդակցության այլ եղանակները, այդ թվում՝ նամակագրությունը, պետք է կատարվեն մեկուսի պայմաններում:

23.5. Դատական մարմինը կարող է բացառիկ հանգամանքներում մեկուսիության հետ կապված սահմանափակումներ կիրառել՝ լուրջ հանցագործությունները և բանտի ապահովության ու անվտանգության լուրջ խախտումները կանխելու նպատակով:

23.6. Բանտարկյալները պետք է կարողանան օգտվել իրենց գործի վարույթին վերաբերող փաստաթղթերից կամ նրանց պետք է թույլատրվի իրենց տրամադրության տակ ունենալ նման փաստաթղթեր:

Կապն արտաքին աշխարհի հետ

24.1. Բանտարկյալներին հարկավոր է թույլատրել հնարավորինս հաճախակի նամակագրության, հեռախոսի կամ հաղորդակցության այլ միջոցների օգնությամբ կապ պահպանել իրենց ընտանիքների, այլ անձանց և դրսում գործող կազմակերպությունների ներկայացուցիչների հետ և տեսակցել այդ անձանց հետ:

24.2. Հաղորդակցությունը և այցելությունները կարող են ենթարկվել այնպիսի սահմանափակումների և մոնիթորինգի, որոնք անհրաժեշտ են քրեական գործի քննությունը շարունակելու, կարգուկանոն պահպանելու, ապահովության և անվտանգության, քրեական հանցագործությունները կանխելու և հանցագործությունից տուժած անձանց պաշտպանության համար, սակայն այդ սահմանափակումները, այդ թվում՝ դատական մարմնի կողմից նշանակվածները, պետք է այդուհանդերձ թույլատրեն շփման նվազագույն ընդունելի մակարդակը:

24.3. Ներպետական օրենսդրությամբ պետք է սահմանվեն ներպետական և միջազգային այն մարմինները և պաշտոնատար անձինք, որոնց հետ բանտարկյալների շփումը չպետք է սահմանափակվի:

24.4. Տեսակցությունները պետք է կազմակերպվեն այնպես, որպեսզի բանտարկյալները կարողանան պահպանել և զարգացնել հնարավորինս նորմալ ընտանեկան հարաբերությունները:

24.5. Բանտային մարմինները պետք է արտաքին աշխարհի հետ պատշաճ կապը պահպանելու հարցում օգնեն բանտարկյալներին և նրանց ապահովեն դրա համար անհրաժեշտ աջակցությամբ:

24.6. Որևէ մերձավոր ազգականի մահվան կամ ծանր հիվանդության մասին տեղեկություն ստանալուն պես անհրաժեշտ է այդ մասին հայտնել բանտարկյալին:

24.7. Եթե հանգամանքները թույլ են տալիս, բանտարկյալին հարկավոր է թույլատրել ուղեկցությամբ կամ միայնակ լքել բանտը՝ հիվանդ ազգականին այցելելու, հուղարկավորության մասնակցելու նպատակով կամ մարդասիրական այլ նկատառումներով:

24.8. Բանտարկյալները պետք է իրավունք ունենան իրենց բանտարկության կամ մեկ այլ հաստատություն փոխադրվելու, հնարավոր ծանր հիվանդության կամ վնասվածքի մասին անհապաղ տեղեկացնելու իրենց ընտանիքներին:

24.9. Բանտ ընդունվելուց հետո բանտարկյալի մահվան, ծանր հիվանդության կամ լուրջ վնասվածքի, կամ բանտարկյալին հիվանդանոց փոխադրելու մասին բանտային մարմինները պետք է այդ մասին անհապաղ տեղեկացնեն բանտարկյալի ամուսնուն կամ գուգրնկերոջը, իսկ եթե բանտարկյալն ամուսնացած չէ՝ մերձավոր ազգականին և բանտարկյալի նշած ցանկացած այլ անձի, եթե բանտարկյալը հակառակը չի խնդրել:

24.10. Բանտարկյալները պետք է իրավունք ունենան պարբերաբար տեղեկանալու հասարակական անցուդարձին՝ լրագրեր, պարբերականներ և այլ հրատակարարություններ բաժանորդագրվելու և ընթերցելու, ռադիո ունկնդրելու կամ հեռուստատեսության միջոցով, եթե դատական մարմինը սովյալ գործով որոշակի ժամկետով չի արգելել դա:

24.11. Բանտային մարմինները պետք է ապահովեն, որպեսզի բանտարկյալները մասնակցեն ընտրությունների, հանրաքվեի և հասարակական կյանքի այլ դրսևորումների, այնքանով, որքանով ներպետական օրենքով այդ իրավունքը սահմանափակված չէ:

24.12. Բանտարկյալները պետք է իրավունք ունենան հաղորդակցվելու լրատվամիջոցների հետ, եթե ապահովության և անվտանգության, հասարակական շահի նկատառումներից ելնելով կամ տուժողների, այլ բանտարկյալների կամ անձնակազմի անվնասությունն ապահովելու համար դա արգելելու ակնհայտ հիմքեր չկան:

Բանտային ռեժիմը

25.1. Բանտարկյալների համար սահմանված ռեժիմը պետք է գործողությունների հավասարակշռված ծրագիր ներառի:

25.2. Այդ ռեժիմը բանտարկյալներին պետք է հնարավորություն տա օրվա ընթացքում խցից դուրս անցկացնել այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է մարդկային և սոցիալական փոխգործակցության պատշաճ մակարդակ ապահովելու համար:

25.3. Այդ ռեժիմը պետք է նաև թույլ տա բավարարել բանտարկյալների սոցիալական կարիքները:

25.4. Հատուկ ուշադրություն պետք է դարձվի ֆիզիկական, հոգեկան կամ սեռական չարաշահումների ենթարկված բանտարկյալների կարիքներին:

Աշխատանքը

26.1. Բանտերում աշխատանքը պետք է համարվի որպես բանտային ռեժիմի դրական տարր և չպետք է կիրառվի որպես պատժի միջոց:

26.2. Բանտային մարմինները պետք է ձգտեն բանտարկյալներին ապահովել օգտակար բնույթի բավարար աշխատանքով:

26.3. Տրամադրված աշխատանքը պետք է հնարավորության սահմաններում լինի այնպիսին, որպեսզի պահպանի և կատարելագործի ազատվելուց հետո վաստակելու՝ բանտարկյալի կարողությունը:

26.4. Թիվ 13 կանոնին համապատասխան՝ աշխատանք տրամադրելիս պետք է բացառել սեռի վրա հիմնված խտրականությունը:

26.5. Անհրաժեշտ է մասնագիտական ուսուցում ենթադրող աշխատանք տրամադրել այն բանտարկյալներին, ովքեր կարող են օգուտ քաղել դրանից, հատկապես՝ երիտասարդ բանտարկյալներին:

26.6. Բանտարկյալները պետք է իրենք ընտրեն կատարելիք աշխատանքի տեսակը՝ առկա հնարավորությունների, պատշաճ մասնագիտական ընտրության և կարգուկանոն պահպանելու պահանջների սահմաններում:

26.7. Հաստատություններում աշխատանքի կազմակերպումը և մեթոդները պետք է հնարավորության սահմաններում նման լինեն համայնքում կատարվող նույնպիսի աշխատանքին՝ բանտարկյալներին նորմալ աշխատանքային կյանքի պայմաններին պատրաստելու նպատակով:

26.8. Չնայած, որ հաստատություններում կազմակերպվող արտադրությունից ֆինանսական շահույթ ակնկալելը կարող է կարևոր լինել ստանդարտների կատարելագործման և վերապատրաստումների որակն ու նպատակայնությունը բարելավելու տեսակետից, բանտարկյալների շահերը չպետք է ստորադասվեն այդ նպատակին:

26.9. Բանտարկյալներին աշխատանքը բանտի ներսում կամ դրանից դուրս պետք է տրամադրվի բանտային մարմինների կողմից՝ ինքնուրույն կամ մասնավոր կապալառուների հետ համագործակցությամբ:

26.10. Բոլոր դեպքերում բանտարկյալների աշխատանքը պետք է համարժեք վարձատրվի:

26.11. Բանտարկյալները պետք է վաստակի մի մասը սեփական գործածության թույլատրելի պարագաներ ձեռք բերելու համար ծախսելու և դրա մի մասն իրենց ընտանիքներին տրամադրելու իրավունք ունենան:

26.12. Հարկավոր է խրախուսել բանտարկյալներին՝ խնայելու իրենց վաստակի մի մասը՝ ազատվելու պահին այն իրենց հանձնելու և որոշակի նպատակներով դրանք օգտագործելու նպատակով:

26.13. Բանտարկյալները պետք է պատշաճ կերպով պաշտպանված լինեն առողջության և ապահովության նախագուշական միջոցներով, որոնք իրենց հստակությամբ չպետք է զիջեն դրսում աշխատող անձանց համար սահմանվածներին:

26.14. Անհրաժեշտ է դրույթ սահմանել բանտարկյալներին արտադրական վնասվածքներից, ներառյալ՝ աշխատանքի բնույթով պայմանավորված հիվանդություններից ապահովագրելու վերաբերյալ՝ դրսում աշխատողների համար ներպետական օրենսդրությամբ սահմանված պայմաններից ոչ պակաս նպաստավոր պայմաններով:

26.15. Բանտարկյալների օրական և շաբաթական աշխատանքային ժամերը պետք է սահմանվեն տվյալ երկրում ազատության մեջ գտնվող աշխատողների աշխատանքի վերաբերյալ սահմանված կանոններին կամ սովորույթներին համապատասխան:

26.16. Բանտարկյալները պետք է շաբաթական առնվազն մեկ հանգստյան օր, ինչպես նաև՝ ուսման կամ այլ գործունեության համար բավարար ժամանակ ունենան:

26.17. Աշխատող բանտարկյալները հնարավորինս պետք է ընդգրկվեն ներպետական սոցիալական ապահովության համակարգերում:

Վարժանք և ազատ ժամանց

27.1. Յուրաքանչյուր բանտարկյալ պետք է ամեն օր առնվազն մեկ ժամ տևողությամբ բացօթյա զբոսանքի հնարավորություն ունենա, եթե եղանակը թույլ է տալիս:

27.2. Եթե եղանակն անբարենպաստ է, հարկավոր է բանտարկյալների վարժանքի համար այլընտրանքային տարբերակներ մտածել:

27.3. Ֆիզիկական առողջությունը խթանող և համապատասխան վարժանքի հնարավորություն տվող միջոցառումները պետք է բանտային ռեժիմների բաղկացուցիչ մասը հանդիսանան:

27.4. Բանտային մարմինները պետք է խթանեն նման միջոցառումները՝ համապատասխան հարմարություններ և սարքավորում տրամադրելու միջոցով:

27.5. Բանտային մարմինները պետք է քայլեր ձեռնարկեն հատուկ միջոցառումներ կազմակերպելու ուղղությամբ՝ այն բանտարկյալների համար, ովքեր ունեն դրանց կարիքը:

27.6. Անհրաժեշտ է տրամադրել ժամանցային հնարավորություններ, որոնք ներառում են սպորտը, խաղերը, մշակութային միջոցառումները, նախասիրությունները և ժամանցային զբաղմունքի այլ ձևերը. հնարավորության սահմաններում բանտարկյալներին հարկավոր է թույլատրել ինքնուրույն կազմակերպել դրանք:

27.7. Բանտարկյալներին հարկավոր է թույլատրել շփվել միմյանց հետ վարժանքի ընթացքում և ժամանցային միջոցառումներին մասնակցելիս:

Կրթությունը

28.1. Յուրաքանչյուր բանտ պետք է բոլոր բանտարկյալներին ապահովի մատչելի կրթական ծրագրերով, որոնք պետք է հնարավորինս համակողմանի լինեն և համապատասխանեն անհատական կարիքներին՝ միաժամանակ հաշվի առնելով բանտարկյալների ձգտումները:

28.2. Առաջնահերթությունը պետք է տրվի գրաճանաչության և թվաբանության հետ կապված կարիքներ ունեցող և հիմնական կամ մասնագիտական կրթություն չստացած բանտարկյալներին:

28.3. Հատուկ ուշադրություն պետք է դարձվի երիտասարդ և հատուկ կարիքներ ունեցող բանտարկյալներին:

28.4. Կրթությունն իր կարգավիճակով չպետք է զիջի բանտում կազմակերպվող աշխատանքին, և բանտարկյալները ֆինանսապես կամ այլ կերպ չպետք է տուժեն կրթության ներգրավելու պատճառով:

28.5. Յուրաքանչյուր հաստատություն պետք է բոլոր բանտարկյալների համար հասանելի գրադարան ունենա, որը պետք է հազեցած լինի ժամանցային և կրթական միջոցներով, գրքերով և պարբերական հրատարակություններով:

28.6. Հնարավորության սահմաններում բանտի գրադարանը պետք է կազմակերպվի համայնքային գրադարանային ծառայությունների հետ համագործակցությամբ:

28.7. Հնարավորության սահմաններում բանտարկյալների կրթությունը պետք է.

ա. ինտեգրված լինի երկրի կրթական և մասնագիտական ուսուցման համակարգին, որպեսզի ազատվելուց հետո նրանք կարողանան առանց դժվարությունների շարունակել իրենց կրթությունը և մասնագիտական ուսուցումը,

բ. կազմակերպվի դրսի կրթական հաստատությունների հովանու ներքո:

Խղճի, մտքի և կրոնի ազատություն

29.1. Անհրաժեշտ է հարգել բանտարկյալների խղճի, մտքի և կրոնի ազատության իրավունքը:

29.2. Բանտային ռեժիմը պետք է հնարավորության սահմաններում կազմակերպվի այնպես, որպեսզի բանտարկյալները կարողանան հետևել իրենց կրոնին և դավանանքին, մասնակցել այդ կրոնի կամ դավանանքի հավատարմագրված ներկայացուցչի կողմից կազմակերպվող ծեսերին կամ հավաքներին, առանձին տեսակցել իրենց կրոնի կամ դավանանքի ներկայացուցիչների հետ և իրենց տրամադրության տակ ունենան իրենց կրոնին կամ դավանանքին վերաբերող գրքեր կամ գրականություն:

29.3. Բանտարկյալներին չի կարելի հարկադրել հետևել այս կամ այն կրոնին կամ դավանանքին, մասնակցել կրոնական ծեսերի կամ հավաքների, մասնակցել կրոնական միջոցառումների կամ հանդիպել այս կամ այն կրոնի կամ դավանանքի ներկայացուցչին:

Տեղեկատվություն

30.1. Ընդունման պահին և դրանից հետո՝ անհրաժեշտ հաճախականությամբ բանտարկյալները պետք է գրավոր և բանավոր, իրենց համար հասկանալի լեզվով տեղեկացվեն բանտային կարգուկանոնի և բանտում իրենց իրավունքներին ու պարտականություններին:

30.2. Բանտարկյալներին պետք է հնարավորություն ընձեռվի իրենց տրամադրության տակ ունենալու տրամադրված տեղեկատվության գրավոր տարբերակը:

30.3. Բանտարկյալները պետք է տեղեկացվեն իրենց վերաբերյալ իրավական ընթացակարգերի մասին, իսկ դատապարտվելու դեպքում՝ պատժի ժամկետի և վաղաժամկետ ազատման հնարավորությունների մասին:

Բանտարկյալի գույքը

31.1. Ողջ գույքը, որ բանտի կանոնակարգերով բանտարկյալներին արգելված է պահել իրենց մոտ, ընդունվելիս պետք է ի պահ հանձնվի բանտին:

31.2. Բանտարկյալը, ով ի պահ է հանձնել գույքը, պետք է ստորագրի գույքի ցանկը:

31.3. Հարկավոր է ձեռնարկել գույքը բարվոք պայմաններում պահպանելու միջոցներ:

31.4. Եթե այդ գույքը ոչնչացնելու անհրաժեշտություն է ծագել, դա պետք է արձանագրվի, իսկ բանտարկյալը պետք է տեղեկացվի այդ մասին:

31.5. Բանտարկյալները, հիգիենայի, կարգուկանոնի և անվտանգության պահանջները կատարելու պայմանով, պետք է հնարավորություն ունենան ազատ հասարակությունում ընդունված գներից խիստ չտարբերվող արժեքով անձնական օգտագործման նպատակով գնել կամ այլ կերպ ձեռք բերել ապրանքներ, այդ թվում՝ սնունդ և ըմպելիք:

31.6. Բանտարկյալի մոտ դեղորայքի առկայության դեպքում բուժաշխատողը պետք է որոշում կայացնի դրանց գործածության վերաբերյալ:

31.7. Եթե բանտարկյալներին թույլատրվում է իրենց տրամադրության տակ գույք ունենալ, բանտային մարմինները պետք է միջոցներ ձեռնարկեն դրանց ապահովության հարցում բանտարկյալներին օգնելու ուղղությամբ:

Բանտարկյալների փոխադրումը

32.1. Բանտ կամ բանտից փոխադրվելիս, ինչպես նաև այլ վայրեր, օրինակ՝ դատարան կամ հիվանդանոց տեղափոխվելիս բանտարկյալները պետք է հնարավորինս զերծ պահվեն հանրության տեսադաշտից. պետք է ապահովել պատշաճ երաշխիքներ՝ նրանց անձի գաղտնիությունը պահպանելու համար:

32.2. Արգելվում է բանտարկյալների փոխադրումն անբավարար օդափոխություն կամ լուսավորություն ունեցող կամ այնպիսի փոխադրամիջոցներով, որոնք որևէ կերպ կարող են անհարկի ֆիզիկական անհարմարություն կամ վիրավորանք պատճառել:

32.3. Բանտարկյալների փոխադրումը պետք է իրականացվի պետական մարմինների հաշվին և վերջիններիս ղեկավարության ներքո:

Բանտարկյալների ազատ արձակումը

33.1. Բոլոր բանտարկյալները պետք է անհապաղ ազատվեն դատապարտման որոշմամբ սահմանված ժամկետը լրանալուն պես կամ դատական մարմնի կողմից նման որոշում կայացնելու արդյունքում:

33.2. Ազատման ամսաթիվը և ժամանակը պետք է արձանագրվի:

33.3. Բոլոր բանտարկյալները պետք է օգտվեն ազատվելուց հետո ազատ հասարակություն վերադառնալու հարցում բանտարկյալներին աջակցելու համար նախատեսված հնարավորություններից:

33.4. Բանտարկյալին ազատ արձակելիս նրան պատկանող, ի պահ վերցված բոլոր առարկաները և դրամը պետք է վերադարձվեն, բացառությամբ օրենքով սահմանված կարգով կատարված պահումների, հաստատությունից դուրս ուղարկված կամ հիգիենիկ նկատառումներից ելնելով ոչնչացված առարկաների:

33.5. Բանտարկյալը պետք է գույքի վերադարձման մասին ստացական ստորագրի:

33.6. Ազատման ժամկետը նախապես հայտնի լինելու դեպքում բանտարկյալին անհրաժեշտ է ազատվելու պահին հնարավորինս մոտ ժամկետում առաջարկել թիվ 42 կանոնին համապատասխան բուժզննություն անցնել:

33.7. Անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել՝ ապահովելու, որպեսզի ազատվելիս բանտարկյալներին ըստ անհրաժեշտության տրամադրվեն ինքնությունը հաստատող և համապատասխան այլ փաստաթղթեր և աջակցություն ցուցաբերվի հարմար կացարան և աշխատանք գտնելու հարցում:

33.8. Ազատված բանտարկյալներին հարկավոր է նաև ապահովել գոյատևման առաջնային միջոցներով, կլիմային և տարվա եղանակին համապատասխանող հագուստով և իրենց մեկնման վայր հասնելու համար բավարար միջոցներով:

Կանայք

34.1. Ի լրումն սույն կանոններում կին բանտարկյալների համար նախատեսված հատուկ դրույթների, նրանց բանտարկության վրա անդրադարձող որոշումներ կայացնելիս իշխանության համապատասխան մարմինները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն կանանց

պահանջումներին, ինչպիսիք են՝ նրանց ֆիզիկական, մասնագիտական, սոցիալական և հոգեբանական կարիքները:

34.2. Առանձնակի ջանքեր պետք է գործադրել թիվ 25.4 կանոնում հիշատակված կարիքներն ունեցող կին բանտարկյալների համար հատուկ ծառայությունները հասանելի դարձնելու ուղղությամբ:

34.3. Բանտարկյալները պետք է հնարավորություն ունենան ծննդաբերելու բանտից դուրս, սակայն եթե երեխան ծնվել է բանտում, բանտային մարմինները պետք է անհրաժեշտ աջակցություն և հնարավորություններ տրամադրեն:

Բանտարկված երեխաներ

35.1. Այն բացառիկ դեպքերում, երբ 18 տարին չլրացած երեխաները պահվում են չափահասների համար նախատեսված բանտում, համապատասխան մարմինները պետք է ապահովեն, որպեսզի բոլոր բանտարկյալներին հասանելի ծառայություններից բացի, երեխա բանտարկյալները հնարավորություն ունենան օգտվելու համայնքում երեխաների համար նախատեսված ծառայություններին համարժեք սոցիալական, հոգեբանական և կրթական ծառայություններից, կրթական բնույթի խնամքից և ժամանցային ծրագրերից:

35.2. Յուրաքանչյուր երեխա բանտարկյալ պետք է ներգրավվի պարտադիր կրթության մեջ կամ հնարավորություն ունենա օգտվելու նման կրթությունից:

35.3. Լրացուցիչ օժանդակություն պետք է տրամադրվի բանտից ազատված երեխաներին:

35.4. Երեխաներին բանտում պահելու դեպքում նրանք պետք է տեղավորվեն բանտի՝ չափահասների համար օգտագործվող հատվածից առանձին մասնաշենքում, եթե չի համարվում, որ դա հակասում է երեխայի լավագույն շահերին:

Մանկահասակ երեխաները

36.1. Մանկահասակ երեխաները կարող են ծնողի հետ գտնվել բանտում միայն այն դեպքում, երբ դա բխում է տվյալ երեխայի լավագույն շահերից: Նրանք չպետք է ենթարկվեն այնպիսի վերաբերմունքի, որին ենթարկվում են բանտարկյալները:

36.2. Մանկահասակ երեխայի՝ ծնողի հետ բանտում գտնվելու դեպքում պետք է ապահովել դայակների, որակավորում ունեցող անձնակազմի առկայությունը, որպեսզի նրանք հոգ տանեն երեխաների մասին այն ժամանակ, երբ ծնողը մասնակցում է այնպիսի միջոցառման, որին երեխան չի կարող ներկա գտնվել:

36.3. Հարկավոր է հատուկ կացարաններ տրամադրել՝ նման երեխաների բարեկեցությունն ապահովելու համար:

Օտարերկրյա քաղաքացիները

37.1. Օտարերկրյա քաղաքացիները պետք է անհապաղ տեղեկացվեն իրենց պետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչի հետ կապվելու և վերջիններիս հետ հաղորդակցվելու պատշաճ հնարավորություններ ունենալու իրավունքի մասին:

37.2. Տվյալ երկրում դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություն չունեցող երկրի քաղաքացի, փախստական կամ քաղաքացիություն չունեցող բանտարկյալները պետք է իրենց շահերի պաշտպանությունը ստանձնած երկրի դիվանագիտական ներկայացուցչի կամ նման անձանց շահերին ծառայելու ինդիք ունեցող ներպետական կամ միջազգային մարմնի ներկայացուցիչների հետ հաղորդակցվելու նույնպիսի հնարավորություններ ունենան:

37.3. Բանտում գտնվող օտարերկրյա այն քաղաքացիների շահերից ելնելով, ովքեր կարող են հատուկ կարիքներ ունենալ, բանտային մարմինները պետք է լիարժեք համագործակցեն բանտարկյալների շահերը ներկայացնող դիվանագիտական կամ հյուպատոսական պաշտոնյաների հետ:

37.4. Օտարերկրյա քաղաքացի բանտարկյալներին պետք է իրավական օգնության վերաբերյալ հատուկ տեղեկատվություն տրամադրվի:

37.5. Օտարերկրյա քաղաքացի բանտարկյալները պետք է տեղեկացվեն իրենց պատիժն այլ երկրում իրականացնելու նպատակով փոխադրվելու հարցով դիմում ներկայացնելու իրավունքի մասին:

Էթնիկ կամ լեզվական փոքրամասնություններ

38.1. Հատուկ հնարավորություններ պետք է ստեղծվեն էթնիկ կամ լեզվական փոքրամասնություններին պատկանող բանտարկյալների կարիքները բավարարելու համար:

38.2. Անհրաժեշտ է հնարավորության սահմաններում տարբեր խմբերին թույլատրել շարունակել իրենց մշակութային միջոցառումների իրականացումը բանտում:

38.3. Լեզվական կարիքները պետք է բավարարվեն բանիմաց թարգմանիչների ծառայություններից օգտվելու և սվյալ բանտում գործածվող լեզուներով գրավոր նյութեր տրամադրելու միջոցով:

Մաս III

Առողջական վիճակ

Առողջապահություն

39. Բանտային մարմինները պետք է երաշխավորեն բանտարկյալների առողջությունը:

Բանտային առողջապահության կազմակերպումը

40.1. Բանտի բժշկական ծառայությունները պետք է կազմակերպվեն համայնքում կամ երկրում գործող ընդհանուր առողջապահության ոլորտի կառավարման մարմինների հետ սերտ առնչությամբ:

40.2. Բանտերում առողջապահական քաղաքականությունը պետք է ինտեգրված լինի պետական առողջապահական քաղաքականությանը և համատեղելի լինի դրան:

40.3. Բանտարկյալները պետք է կարողանան օգտվել երկրում առկա առողջապահական ծառայություններից՝ առանց իրենց իրավական կարգավիճակով պայմանավորված խտրականության:

40.4. Բանտի բուժճառայությունները պետք է փորձեն ի հայտ բերել և բուժել բանտարկյալների մոտ առկա ֆիզիկական կամ հոգեկան հիվանդությունները կամ խեղումները:

40.5. Այդ նպատակով բանտարկյալին պետք է տրամադրվեն անհրաժեշտ բոլոր բժշկական, վիրաբուժական և հոգեբուժական, այդ թվում՝ համայնքում առկա ծառայությունները:

Բժշկական և առողջապահական անձնակազմը

41.1. Յուրաքանչյուր բանտ պետք է կարողանա առաջարկել որակավորում ունեցող առնվազն մեկ ընդհանուր բուժաշխատողի ծառայություններ:

41.2. Պետք է ապահովել, որպեսզի ցանկացած ժամանակ հասանելի լինեն որակավորում ունեցող բուժաշխատողի ծառայությունները:

41.3. Եթե բանտում լրիվ հաստիքով բուժաշխատող չկա, պետք է ապահովել կես դրույքով աշխատող բուժաշխատողի կանոնավոր այցելությունները:

41.4. Յուրաքանչյուր բանտում պետք է առկա լինի առողջապահության ոլորտում համապատասխան վերապատրաստում անցած անձնակազմ:

41.5. Յուրաքանչյուր բանտարկյալ պետք է որակավորում ունեցող ատամնաբույժի և ակնաբույժի ծառայություններից օգտվելու հնարավորություն ունենա:

Բուժաշխատողի պարտականությունները

42.1. Բուժաշխատողը կամ վերջինիս հաշվետու որակավորված բուժքույրը պետք է ընդունվելուց հետո հնարավորինս շուտ այցելի բանտարկյալին և գննի նրան, եթե դա ակնհայտ անտեղի չէ:

42.2. Բուժաշխատողը կամ վերջինիս հաշվետու որակավորված բուժքույրը պետք է բանտարկյալի ազատվելու պահին վերջինիս խնդրանքով գննի նրան, կամ պետք է անհրաժեշտ բոլոր դեպքերում բուժզննության ենթարկի բանտարկյալներին:

42.3. Բանտարկյալին գննելիս բուժաշխատողը կամ վերջինիս հաշվետու որակավորված բուժքույրը պետք է հատուկ ուշադրություն դարձնեն հետևյալին.

- ա.* պահպանեն բժշկական գաղտնիքի ընդունված կանոնները,
- բ.* ախտորոշեն ֆիզիկական կամ հոգեկան հիվանդությունները և ձեռնարկեն անհրաժեշտ բոլոր միջոցները դրանց բուժման, ինչպես նաև՝ կատարվող բուժումը շարունակելու համար,
- գ.* բանտարկյալների նկատմամբ բռնության որևէ նախանշանի դեպքում հայտնել կամ զեկուցել համապատասխան մարմիններին,
- դ.* զբաղվել թմրանյութերի, դեղորայքի կամ ալկոհոլի գործածությունից հրաժարվելու արդյունքում ի հայտ եկող ախտանշաններով,
- է.* ի հայտ բերել ազատությունից զրկվելու արդյունքում առաջացած հոգեբանական կամ այլ սթրեսը,
- զ.* մեկուսացնել վարակիչ կամ փոխանցվող հիվանդությամբ տառապելու նախանշաններ ունեցող բանտարկյալներին վարակի վտանգի ժամանակահատվածում՝ նրանց տրամադրելով պատշաճ բուժում,

զ. ապահովել, որպեսզի ՄԻԱՎ վարակակիր բանտարկյալները չմեկուսացվեն բացառապես այդ պատճառով,

է. գրառել ֆիզիկական կամ հոգեկան խեղումները, որոնք կարող են ազատվելուց հետո բանտարկյալներին խանգարել հասարակությունում իրենց վերագտնելու հարցում,

ը. պարզել աշխատանքի և վարժանքի համար յուրաքանչյուր բանտարկյալի պիտանիությունը,

թ. պայմանավորվածություններ ձեռք բերել համայնքային գործակալությունների հետ՝ անհրաժեշտ ցանկացած բժշկական և հոգեբուժական բուժումն ազատվելուց հետո շարունակելու վերաբերյալ, եթե բանտարկյալները տվել են իրենց համաձայնությունը նման պայմանավորվածությունների առնչությամբ:

43.1. Բուժաշխատողը պետք է հոգ տանի բանտարկյալների ֆիզիկական և հոգեկան առողջության մասին և պետք է համայնքում առողջապահության բնագավառում ընդունված պայմաններում և հաճախականությամբ այցելի բոլոր հիվանդ բանտարկյալներին, բոլոր նրանց, ովքեր հայտնում են հիվանդության կամ վնասվածքի մասին, ինչպես նաև հատուկ ուշադրություն գրավող ցանկացած բանտարկյալի:

43.2. Բուժաշխատողը կամ վերջինիս հաշվետու որակավորված բուժքույրը պետք է հատուկ ուշադրություն դարձնի մենախցում տեղավորված բանտարկյալների առողջությանը, ամեն օր այցելի նրանց և ապահովի անհետաձգելի բժշկական օգնությամբ և բուժմամբ՝ բանտարկյալների կամ բանտի անձնակազմի խնդրանքով:

43.3. Բուժաշխատողը պետք է զեկուցի բանտի տնօրենին, եթե գտնում է, որ տևական բանտարկությունը կամ բանտարկության որևէ պայման, այդ թվում՝ մենախցում տեղավորելու պայմանները, լրջորեն սպառնում են բանտարկյալի ֆիզիկական կամ հոգեկան առողջությանը:

44. Բուժաշխատողը կամ իրավասու այլ մարմինը պետք է կանոնավորապես ստուգումներ անցկացնեն, այլ միջոցներով տեղեկություններ հավաքեն և տնօրենին խորհրդատվություն տրամադրեն հետևյալի վերաբերյալ.

ա. սննդի և ջրի քանակը, որակը, պատրաստումը և մատուցումը,

բ. հաստատության և բանտարկյալների հիգիենան և մաքրությունը,

գ. հաստատության սանիտարական պայմանները, ջեռուցումը, լուսավորությունը և օդափոխությունը,

դ. բանտարկյալների հագուստի և անկողնային պարագաների հարմարությունն ու մաքրությունը:

45.1. Տնօրենը պետք է ուսումնասիրի բուժաշխատողի կամ իրավասու այլ մարմնի կողմից կազմված, թիվ 43 և 44 կանոններում նշված զեկուցագրերն ու խորհրդատվությունը, և ներկայացված առաջարկություններին համաձայնելու դեպքում անմիջական քայլեր ձեռնարկի դրանք իրականացնելու ուղղությամբ:

45.2. Եթե բուժաշխատողի առաջարկությունները տնօրենի իրավասության սահմաններից դուրս են կամ վերջինս համաձայն չէ դրանց, տնօրենը պետք է բուժաշխատողի խորհրդատվությունը, իր զեկուցագրի հետ միասին, ներկայացնի վերադաս մարմնին:

Առողջապահական ծառայությունների տրամադրումը

46.1. Մասնագիտացված բուժման կարիք ունեցող հիվանդ բանտարկյալները պետք է փոխադրվեն մասնագիտացված հաստատություններ կամ քաղաքացիական հիվանդանոցներ, եթե այդ բուժումը բանտում հասանելի չէ:

46.2. Եթե բանտային ծառայությունը սեփական հիվանդանոցային հաստատություններ ունի, դրանք պետք է համարվեն համապատասխան անձնակազմով և սարքավորմամբ՝ նման հաստատություններ ուղղորդված բանտարկյալներին պատշաճ խնամքով և բուժմամբ ապահովելու նպատակով:

Հոգեկան առողջությունը

47.1. Անհրաժեշտ է ունենալ մասնագիտացված բանտեր կամ բժշկական հսկողության ներքո գտնվող բժշկական ստորաբաժանումներ՝ հոգեկան խանգարումներով և շեղումներով տառապող այն բանտարկյալների հետազոտման և բուժման համար, ովքեր միշտ չէ, որ տեղավորվում են թիվ 12 կանոնի շրջանակներում:

47.2. Բանտի բուժօժանությունը պետք է հոգեբուժական բուժում տրամադրի դրա կարիքն ունեցող բոլոր բանտարկյալներին և հատուկ ուշադրություն դարձնի ինքնասպանությունների կանխարգելմանը:

Այլ խնդիրներ

48.1. Բանտարկյալները չպետք է առանց իրենց համաձայնության ենթարկվեն որևէ փորձի:

48.2. Արգելվում են բանտարկյալների ներգրավմամբ կատարվող այն փորձերը, որոնք կարող են հանգեցնել ֆիզիկական վնասվածքների, հոգեկան տառապանքի կամ առողջությանն այլ վնաս պատճառել:

Մաս IV

Կարգուկանոն

Ընդհանուր մոտեցում կարգուկանոնին

49. Բանտում կարգուկանոնը պետք է պահպանվի՝ հաշվի առնելով անվտանգության, ապահովության և կարգապահության նկատառումները՝ միաժամանակ բանտարկյալներին ապահովելով մարդկային արժանապատվությանը հարիր կենսապայմաններով և նրանց առաջարկելով թիվ 25 կանոնով սահմանված միջոցառումների լիարժեք ծրագիր:

50. Կարգուկանոնի, ապահովության և անվտանգության կարիքները հաշվի առնելով՝ բանտարկյալներին հարկավոր է թույլատրել մասնակցել բանտարկության ընդհանուր պայմաններին առնչվող հարցերի քննարկմանը և խրախուսել նրանց կողմից այդ հարցերի քննարկումը բանտային մարմինների հետ:

Անվտանգությունը

51.1. Անհատ բանտարկյալների նկատմամբ անվտանգության միջոցները պետք է կիրառվեն անհրաժեշտ նվազագույն չափով, որը բավարար է նրանց անվտանգ բանտարկությունն ապահովելու համար:

51.2. Ֆիզիկական արգելապատնեշներով և տեխնիկական այլ միջոցներով ապահովվող անվտանգությունը պետք է զուգորդվի բանտարկյալներին ճանաչող աչալուրջ անձնակազմի կողմից ապահովվող անվտանգության դինամիկ միջոցներով:

51.3. Ընդունվելուց հետո հնարավորինս վաղ բանտարկյալները պետք է գնահատվեն՝ պարզելու համար.

ա. փախուստի դիմելու դեպքում նրանց կողմից համայնքին սպառնացող հավանական վտանգը,

բ. նրանց կողմից ինքնուրույն կամ արտաքին օգնությամբ փախուստի դիմելու վտանգը:

51.4. Դրանից հետո յուրաքանչյուր բանտարկյալ պետք է պահվի այդ վտանգների աստիճանին համապատասխանող անվտանգության պայմաններում:

51.5. Անվտանգության անհրաժեշտ մակարդակը պետք է պարբերաբար վերանայվի անձի բանտարկության ողջ ընթացքում:

Ապահովությունը

52.1. Ընդունվելուց հետո հնարավորինս վաղ բանտարկյալները պետք է գնահատվեն՝ պարզելու համար, թե որքանով են նրանք վտանգ ներկայացնում այլ բանտարկյալների, բանտի անձնակազմի, բանտում աշխատող կամ բանտ այցելող այլ անձանց ապահովության համար, կամ որքանով է հավանական ինքնավնասումը:

52.2. Անհրաժեշտ է սահմանել բանտարկյալների, բանտի անձնակազմի և բոլոր այցելուների ապահովությունը երաշխավորելու և բռնությունն ու ապահովությանը սպառնացող այլ դեպքերի թիվը նվազեցնելու ընթացակարգեր:

52.3. Անհրաժեշտ է գործադրել հնարավոր բոլոր ջանքերը՝ ապահովության հետ կապված ամենօրյա միջոցառումներին բանտարկյալների լիարժեք մասնակցությունն ապահովելու համար:

52.4. Բանտարկյալները պետք է ցանկացած ժամանակ, այդ թվում՝ գիշերը, անձնակազմի հետ կապ հաստատելու հնարավորություն ունենան:

52.5. Առողջության և ապահովության վերաբերյալ ներպետական օրենքները պետք է կիրառվեն նաև բանտերում:

Անվտանգության կամ ապահովության հատուկ խիստ միջոցներ

53.1. Անվտանգության կամ ապահովության հատուկ խիստ միջոցները պետք է կիրառվեն միայն բացառիկ հանգամանքներում:

53.2. Որևէ բանտարկյալի նկատմամբ նման միջոցներ կիրառելիս հարկավոր է հետևել հստակ սահմանված ընթացակարգերին:

53.3. Նման միջոցների բնույթը, դրանց տևողությունը և կիրառման հիմքերը պետք է սահմանվեն ներպետական օրենսդրությամբ:

53.4. Նման միջոցների կիրառման յուրաքանչյուր դեպք պետք է հավանություն ստանա իրավասու մարմնի կողմից՝ որոշակի ժամանակահատվածի համար:

53.5. Հաստատված ժամանակահատվածի երկարաձգման ցանկացած որոշում պետք է կրկին հավանության արժանանա իրավասու մարմնի կողմից:

53.6. Նման միջոցները պետք է կիրառվեն անհատների, այլ ոչ բանտարկյալների խմբի նկատմամբ:

53.7. Նման միջոցների ենթարկված ցանկացած բանտարկյալ պետք է իրավունք ունենա բողոք ներկայացնելու թիվ 70 կանոնով սահմանված պայմաններով:

Խուզարկություններ և հսկողություն

54.1. Անհրաժեշտ է ունենալ մանրամասն ընթացակարգեր, որոնց անձնակազմը պետք է հետևի ստորև թվարկված վայրերի և անձանց խուզարկությունները կատարելիս.

ա. բանտարկյալների բնակության, աշխատանքի և հավաքվելու վայրերի,

բ. բանտարկյալների,

գ. այցելուների և նրանց իրերի,

դ. անձնակազմի:

54.2. Ներպետական օրենսդրությամբ պետք է սահմանվեն այն իրադրությունները, երբ նման խուզարկություններն անհրաժեշտ են:

54.3. Անձնակազմը պետք է վերապատրաստում անցնի, որը նրանց թույլ կտա խուզարկությունը կատարելիս ի հայտ բերել և կանխել փախուստի փորձերը կամ հայտնաբերել արգելված իրերը՝ միաժամանակ հարգանք դրսևորելով խուզարկության ենթարկվողների և նրանց իրերի նկատմամբ:

54.4. Խուզարկության ենթարկվողները չպետք է նվաստացվեն խուզարկության ընթացքում:

54.5. Անձինք կարող են խուզարկվել միևնույն սեռին պատկանող անձանց կողմից:

54.6. Արգելվում են բանտի անձնակազմի կողմից բանտարկյալների մարմնի ներքին ֆիզիկական խուզարկությունները:

54.7. Խուզարկության ընթացքում խորքային հետազոտությունը պետք է իրականացվի միայն բուժաշխատողի կողմից:

54.8. Բանտարկյալները պետք է ներկա գտնվեն իրենց անձնական գույքի խուզարկությանը, եթե քննչական տեխնիկայի կամ անձնակազմին սպառնացող վտանգի նկատառումներից ելնելով դա արգելված է:

54.9. Անվտանգությունն ու ապահովությունը պաշտպանելու պարտավորությունը պետք է հավասարակշռելի լինի այցելուների անձեռնմխելիության հետ:

54.10. Մասնագետ այցելուների՝ իրավական ներկայացուցիչների, սոցիալական աշխատողների, բուժաշխատողների և այլոց նկատմամբ հսկողություն իրականացնելիս անհրաժեշտ է խորհրդակցել նրանց գործունեության համար պատասխանատու մարմինների հետ՝ անվտանգության ու ապահովության և մասնագիտական գործունեության գաղտնիության իրավունքի միջև հավասարակշռություն ապահովելու նպատակով:

Քրեական արարքներ

55. Բանտում կատարված ենթադրյալ քրեական արարքը պետք է քննվի նույն կերպ, ինչ ազատ հասարակությունում կատարված լինելու դեպքում՝ ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կարգապահություն և տույժեր

56.1. Կարգապահական ընթացակարգերը պետք է կիրառվեն որպես վերջին միջոց:

56.2. Բանտային մարմինները պետք է բանտարկյալների հետ կամ նրանց միջև ծագած վեճերը լուծելիս հնարավորության սահմաններում գործի դնեն վնասի հարթման և մեղիացիայի մեխանիզմներ:

57.1. Կարգապահական խախտում կարող է համարվել միայն կարգուկանոնին, ապահովությանը կամ անվտանգությանը սպառնալու հավանականություն ենթադրող գործողությունը:

57.2. Ներպետական օրենսդրությամբ պետք է սահմանվեն.

ա. բանտարկյալների այն գործողություններն ու անգործությունը, որոնք կարգապահական խախտումներ են համարվում,

բ. կարգապահական վարույթի համար սահմանված ընթացակարգերը,

գ. տույժի կիրառելի տեսակները և տևողությունը,

դ. տույժի տվյալ տեսակը կիրառելու իրավասություն ունեցող մարմինը,

ե. բողոքարկման հնարավորությունը և բողոքարկման գործընթացի համար պատասխանատու մարմինը:

58. Բանտարկյալի կողմից կարգապահական կանոնների խախտման վերաբերյալ ցանկացած պնդման մասին պետք է անհապաղ տեղեկացնել իրավասու մարմնին, որը պետք է առանց անհարկի ձգձգումների քննության առնի դրանք:

59. Կարգապահական խախտման մեջ մեղադրվող բանտարկյալները պետք է.

ա. իրենց համար հասկանալի լեզվով անհապաղ և մանրամասն տեղեկացվեն իրենց ներկայացված մեղադրանքի բնույթին,

բ. ունենան բավարար ժամանակ և հնարավորություններ՝ պաշտպանությանը պատրաստվելու համար,

գ. հնարավորություն ունենան անձամբ կամ, երբ դա բխում է արդարադատության շահերից՝ իրավական օգնության միջոցով իրականացնելու իրենց պաշտպանությունը,

դ. հնարավորություն ունենան միջնորդություն ներկայացնելու՝ վկաների ներկայությունն ապահովելու և նրանց անձամբ հարցեր ուղղելու կամ իրենց անունից նրանց հարցաքննելու վերաբերյալ,

է. օգտվել թարգմանչի անվճար օգնությունից, եթե չեն հասկանում վարույթի ընթացքում կիրառվող լեզուն կամ չեն խոսում այդ լեզվով:

60.1. Կարգապահական խախտման համար ցանկացած տույժի նշանակումը պետք է իրականացվի ներպետական օրենսդրությանը համապատասխան:

60.2. Տույժի խստությունը պետք է համարժեք լինի կատարված խախտմանը:

60.3. Խմբային կամ մարմնական տույժերը, մութ խցում տեղավորելը և անմարդկային կամ նվաստացնող պատժի այլ եղանակներն արգելվում են:

60.4. Տույժը չպետք է ընտանիքի հետ շփման լիակատար արգելում ենթադրի:

60.5. Մենախցում տեղավորելը որպես տույժի միջոց կարող է կիրառվել բացառիկ դեպքերում և միայն որոշակի ժամկետով, որը պետք է հնարավորինս կարճատև լինի:

60.6. Զսպամիջոցները երբևէ չպետք է որպես տույժի միջոց կիրառվեն:

61. Կարգապահական խախտման համար մեղավոր ճանաչված բանտարկյալը պետք է կարողանա բողոք ներկայացնել իրավասու և անկախ վերադաս մարմնին:

62. Որևէ բանտարկյալ չի կարող բանտում կարգապահական բնույթի աշխատանք կատարել կամ նման լիազորություններով օժտվել:

Կրկնակի պատասխանատվությունը

Բանտարկյալը չպետք է երբևէ կրկնակի պատժվի միևնույն գործողության կամ արարքի համար:

Ուժի գործադրումը

64.1. Բանտի անձնակազմը չպետք է ուժ գործադրի բանտարկյալների դեմ, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է ինքնապաշտպանության, փախուստի փորձը կանխելու, օրինական կարգին ցուցաբերվող ակտիվ կամ պասիվ ֆիզիկական դիմադրությունը հաղթահարելու համար, և այն էլ՝ բացառապես որպես ծայրահեղ միջոց:

64.2. Ուժը պետք է գործադրվի նվազագույն անհրաժեշտ չափով՝ նվազագույն անհրաժեշտ տևողությամբ:

65. Անհրաժեշտ է ունենալ ուժի գործադրման մանրամասն ընթացակարգեր, որոնք պետք է սահմանեն.

ա. գործադրվող ուժի տարբեր տեսակները,

բ. հանգամանքները, որոնց առկայության դեպքում ուժի տվյալ տեսակը կարող է գործադրվել,

գ. անձնակազմի այն անդամները, ովքեր իրավասու են կիրառել տույժի այս կամ այն տեսակը,

դ. լիազորությունների մակարդակը՝ նախքան ուժի որևէ տեսակի գործադրումը,

է. ուժի գործադրման պարագայում ներկայացվող զեկուցագրերը:

66. Բանտարկյալների հետ անմիջական առնչություն ունեցող անձնակազմը պետք է վերապատրաստում անցնի ագրեսիվ բանտարկյալներին ուժի նվազագույն գործադրմամբ զսպելու վերաբերյալ:

67.1. Բանտի ներսում բանտարկյալների նկատմամբ գործողություններին իրավապահ այլ գերատեսչությունների անձնակազմը պետք է ներգրավվի բացառիկ դեպքերում:

67.2. Բանտային մարմինների և իրավապահ այլ գերատեսչությունների միջև պետք է պաշտոնական համաձայնագիր կնքվի, եթե նրանց փոխհարաբերություններն արդեն իսկ կարգավորված չեն ներպետական օրենսդրությամբ:

67.3. Այդ համաձայնագիրը պետք է անդրադառնա հետևյալ հարցերին.

ա. այն դեպքերը, երբ իրավապահ այլ գերատեսչությունների ներկայացուցիչները կարող են մուտք գործել բանտ կամ զբաղվել կոնֆլիկտների հաղթահարմամբ,

բ. լիազորությունների սահմանները, որոնցով իրավապահ այլ գերատեսչություններն օժտվում են բանտում գտնվելու ընթացքում, և նրանց առնչությունը բանտի տնօրենին,

գ. ուժի տարբեր տեսակները, որ այդ գերատեսչությունների ներկայացուցիչները կարող են գործադրել,

դ. հանգամանքները, երբ ուժի այս կամ այն տեսակը կարող է գործադրվել,

է. լիազորությունների մակարդակը՝ նախքան ուժի որևէ տեսակի գործադրումը,

զ. ուժի գործադրման պարագայում ներկայացվող զեկուցագրերը:

Զսպամիջոցներ

68.1. Շղթաների և երկաթե գամերի կիրառումն արգելվում է:

68.2. Ձեռնաշղթաների, զսպաշապիկների և մարմնական այլ զսպամիջոցների կիրառումն արգելվում է, բացառությամբ այն դեպքերի, երբ.

ա. դա անհրաժեշտ է փոխադրման ժամանակ փախուստը կանխելու համար՝ պայմանով, որ դրանք հանվեն բանտարկյալին դատական կամ վարչական մարմին ներկայացնելու ժամանակ, եթե այդ մարմինը հակառակը չի որոշում,

բ. առկա է տնօրենի հրամանն այդ մասին, եթե հսկողության այլ միջոցները ձախողվել են, և դա անհրաժեշտ է բանտարկյալին ինքնախեղումից կամ այլ անձանց վնաս պատճառելուց հետ պահելու, գույքի վնասումը կանխելու համար՝ պայմանով, որ նման դեպքերում տնօրենն անմիջապես տեղյակ պահի բուժաշխատողին և զեկուցի վերադաս բանտային մարմնին:

68.3. Զսպամիջոցները չպետք է կիրառվեն ավելի երկար տևողությամբ, քան խիստ անհրաժեշտ է:

68.4. Զսպամիջոցների կիրառման եղանակը պետք է սահմանվի ներպետական օրենսդրությամբ:

Զենք

69.1. Բանտային անձնակազմը չպետք է մահացու զենք կրի քանոթի տարածքում, բացառությամբ օպերատիվ արտակարգ իրադրության դեպքերի:

69.2. Արգելվում է բանտի տարածքում զենքի այլ տեսակների, ներառյալ՝ մահակների բացահայտ կրումը բանտարկյալների հետ շփում ունեցող անձանց կողմից, եթե ապահովության կամ անվտանգության նկատառումներից ելնելով՝ այս կամ այն դեպքի կապակցությամբ նման հրահանգ չի տրվել:

69.3. Անձնակազմին չպետք է զենք տրամադրվի, քանի դեռ նրանք չեն վերապատրաստվել դրանց կիրառման վերաբերյալ:

Դիմումներ և բողոքներ

70.1. Բանտարկյալները, անհատապես կամ խմբի կազմով, պետք է բանտի տնօրենին կամ իրավասու այլ մարմնին դիմումներ և բողոքներ ներկայացնելու տարատեսակ հնարավորություններ ունենան:

70.2. Մեղիացիայի նպատակահարմարության դեպքում անհրաժեշտ է նախնառաջ դիմել այդ մեթոդին:

70.3. Դիմումը չընդունելու կամ բողոքը մերժելու դեպքում պետք է բանտարկյալին հայտնել պատճառների մասին, իսկ բանտարկյալը պետք է անկախ մարմնին այդ մասին բողոք ներկայացնելու իրավունք ունենա:

70.4. Բանտարկյալները չպետք է պատժվեն դիմում կամ բողոք ներկայացնելու կապակցությամբ:

70.5. Իրավասու մարմինը պետք է ուշադրության առնի բանտարկյալի ազգականների կողմից ներկայացված գրավոր բողոքները, եթե հիմքեր կան ենթադրելու, որ բանտարկյալի իրավունքները ոտնահարվել են:

70.6. Իրավական ներկայացուցիչը կամ բանտարկյալների բարեկեցությանն առնչվող կազմակերպությունները չեն կարող բանտարկյալի անունից բողոք ներկայացնել, եթե տվյալ բանտարկյալը տեղյակ չէ այդ մասին:

70.7. Բանտարկյալներն իրավունք ունենան իրավական խորհրդատվություն ստանալ բողոքներ ներկայացնելու, ինչպես նաև, արդարադատության շահերից ելնելով՝ իրավական օգնություն ստանալու ընթացակարգերի վերաբերյալ:

Մաս V

Վարչակազմը և անձնակազմը

Բանտում աշխատանքը՝ որպես հանրային ծառայություն

71. Բանտերը պետք է գտնվեն ռազմական, ոստիկանական կամ քրեական հետախուզության ծառայություններից առանձին պետական մարմինների ենթակայության ներքո:

72.1. Բանտերը պետք է ղեկավարվեն էթիկական այնպիսի սկզբունքներով, որոնց պայմաններում ընդունվում է բոլոր բանտարկյալների հանդեպ մարդ արարածի արժանապատվությանը հարիիր մարդասիրական և հարգալից վերաբերմունք ցուցաբերելու պարտավորությունը:

72.2. Անձնակազմը պետք է բանտային համակարգի նպատակների հստակ իմացություն ցուցաբերի: Վարչակազմը պետք է այդ նպատակներին հասնելու հարցում ուղղորդի անձնակազմին:

72.3. Անձնակազմի պարտականություններն ավելին են, քան պարզապես վերակացու լինելը, և անձնակազմը պետք է հաշվի առնի պատժի ժամկետը լրանալուց հետո հասարակությունում բանտարկյալների վերաինտեգրումը բարենպաստ խնամքի և օժանդակության ծրագրի միջոցով խթանելու անհրաժեշտությունը:

72.4. Անձնակազմն իր գործունեության ընթացքում պետք է առաջնորդվի բարձր մասնագիտական և անձնական ստանդարտներով:

73. Բանտային մարմինները պետք է կարևորեն անձնակազմին վերաբերող կանոնների պահպանումը:

74. Հատուկ ուշադրություն պետք է դարձվի բանտարկյալների հետ անմիջական շփում ունեցող բանտային անձնակազմի և նրանց խնամքի ներքո գտնվող բանտարկյալների միջև փոխհարաբերությունների կառավարմանը:

75. Անձնակազմը մշտապես պետք է դրսևորի այնպիսի վարքագիծ և իր պարտականությունները կատարի այնպես, որպեսզի բանտարկյալների համար դրական օրինակ հանդիսանա և վաստակի նրանց հարգանքը:

Բանտային անձնակազմի ընտրությունը

76. Անձնակազմը պետք է խնամքով ընտրվի, աշխատանքի ամենասկզբից և շարունակաբար պատշաճ վերապատրաստում անցնի, արժանանա արհեստավարժ աշխատողներին հարիր վերաբերմունքի և ունենա քաղաքացիական հասարակության հարգանքին արժանի կարգավիճակ:

77. Նոր անձնակազմ ընտրելիս բանտային մարմինները պետք է շեշտը դնեն ազնվության, մարդասիրության, մասնագիտական կարողությունների և նրանցից ակնկալվող դժվարին աշխատանքին անձնական համապատասխանության վրա:

78. Արհեստավարժ բանտային անձնակազմը, որպես կանոն, պետք է նշանակվի մշտական հիմունքներով և ունենա պետական ծառայության կարգավիճակ ու աշխատանքի անվտանգության երաշխիքներ՝ լավ վարքագծի, արդյունավետության, լավ ֆիզիկական և հոգեկան առողջության և կրթության պատշաճ ստանդարտների առկայության պայմանով:

79.1. Աշխատավարձը պետք է բավարար լինի այդ աշխատանքի համար հարմար անձնակազմ գրավելու և պահպանելու համար:

79.2. Աշխատանքի արտոնությունները և պայմանները սահմանելիս պետք է հաշվի առնել իրավապահ գերատեսչությունում աշխատանքի պահանջկոտ բնույթը:

80. Ոչ մշտական հիմունքներով աշխատող անձնակազմ ներգրավելու անհրաժեշտության դեպքում այս չափանիշները պետք է հնարավորության սահմաններում կիրառվեն նրանց նկատմամբ:

Բանտային անձնակազմի վերապատրաստումը

81.1. Նախքան պարտականություններն ստանձնելը անձնակազմը պետք է ընդհանուր դասընթաց անցնի իր ընդհանուր և հատուկ պարտականությունների վերաբերյալ և տեսական և գործնական ստուգարքներ հանձնի:

81.2. Վարչակազմը պետք է ապահովի, որպեսզի կարիերայի ընթացքում անձնակազմը պահպանի և կատարելագործի իր գիտելիքներն ու մասնագիտական կարողությունները՝ համապատասխան պարբերականությամբ կազմակերպվող, ծառայությանը գույրնթաց վերապատրաստումների և կատարելագործման միջոցով:

81.3. Բանտարկյալների հատուկ խմբերի՝ օտարերկրացիների, կանանց, անչափահասների կամ հոգեկան հիվանդություններով տառապողների հետ աշխատելու համար նախատեսված անձնակազմը պետք է հատուկ վերապատրաստում անցնի իրենց մասնագիտացված աշխատանքի վերաբերյալ:

81.4. Անձնակազմի բոլոր անդամների վերապատրաստումները պետք է ներառեն հրահանգավորում մարդու իրավունքների միջազգային և տարածաշրջանային փաստաթղթերի և ստանդարտների, հատկապես՝ Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիայի և Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիայի, ինչպես նաև՝ Եվրոպական բանտային կանոնների կիրառման վերաբերյալ:

Բանտի վարչակազմը

82. Անձնակազմը պետք է ընտրվի և նշանակվի հավասար հիմունքներով՝ առանց սեռի, ռասայի, մաշկի գույնի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային կամ սոցիալական ծագման, ազգային փոքրամասնությանը պատկանելու, գույքային, ծննդյան կամ այլ կարգավիճակի հետ կապված խտրականության:

83. Բանտային մարմինները պետք է ընդունեն կազմակերպման և ղեկավարման այնպիսի համակարգեր, որոնք.

ա. ապահովում են բանտերի կառավարումը մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային և տարածաշրջանային փաստաթղթերին համապատասխանող բարձր ստանդարտների հիման վրա,

բ. խթանում են բանտերի և այս կամ այն բանտի տարատեսակ անձնակազմի միջև լավ հաղորդակցությունը և պատշաճ համակարգումը բանտի ներսում և դրսում գործող, բանտարկյալներին, հատկապես՝ բանտարկյալների խնամքի և վերաինտեգրման ծառայություններ մատուցող տարբեր ստորաբաժանումների միջև:

84.1. Յուրաքանչյուր բանտ պետք է ունենա տնօրեն, ով իր բնավորությամբ, վարչական կարողություններով, համապատասխան մասնագիտական վերապատրաստումներով և փորձառությամբ համապատասխանում է այդ պաշտոնին:

84.2. Տնօրենները պետք է նշանակվեն մշտական հիմունքներով և իրենց ողջ ժամանակը տրամադրեն իրենց պաշտոնեական պարտականություններին:

84.3. Բանտային մարմինները պետք է ապահովեն, որպեսզի յուրաքանչյուր բանտ մշտապես համալրված լինի տնօրենով, փոխտնօրենով և իրավասու այլ պաշտոնյաներով:

84.4. Եթե տնօրենը պատասխանատու է մեկից ավելի բանտերի համար, անհրաժեշտ է ի լրումն ունենալ դրանցից յուրաքանչյուրի համար պատասխանատու ևս մեկ պաշտոնյա:

85. Բանտային անձնակազմում տղամարդ և կին աշխատողների թիվը պետք է հավասարակշռված լինի:

86. Վարչակազմը պետք է անձնակազմի՝ որպես մեկ միասնական մարմնի հետ ընդհանուր հարցեր քննարկելու հնարավորություններ ունենա, հատկապես՝ նրանց աշխատանքային պայմանների հետ կապված հարցերով:

87.1. Անհրաժեշտ է վարչակազմի, այլ անձնակազմի, դրսի գերատեսչությունների և բանտարկյալների միջև հնարավորինս լավ հաղորդակցությունը խրախուսելու հնարավորություններ ունենալ:

87.2. Բանտի տնօրենը, վարչակազմը և այլ անձնակազմի մեծամասնությունը պետք է կարողանա խոսել բանտարկյալների մեծամասնության խոսակցական կամ նրանց համար հասկանալի լեզվով:

88. Մասնավոր բանտերի առկայության դեպքում դրանցում պետք է կիրառվեն Եվրոպական բանտային կանոնների բոլոր դրույթները:

Մասնագիտացված անձնակազմը

89.1. Անձնակազմում հնարավորության սահմաններում պետք է ներգրավվեն բավարար թվով այնպիսի մասնագետներ, ինչպիսիք են՝ հոգեբույժները, հոգեբանները, սոցիալական աշխատողները և սոցիալական ապահովության ոլորտի աշխատողները, մանկավարժները, մասնագիտական ուսուցման, ֆիզիկական պատրաստականության և մարզական հրահանգիչները:

89.2. Հնարավորության դեպքում պետք է խրախուսել ոչ մշտական հիմունքներով աշխատողների և կամավորների ներգրավումը բանտարկյալների հետ կապված միջոցառումներին:

Հանրային իրազեկությունը

90.1. Բանտային մարմինները պետք է շարունակաբար հանրությանը տեղեկացնեն բանտային համակարգի և բանտային անձնակազմի կողմից կատարվող աշխատանքի նպատակների մասին, որպեսզի խթանեն հասարակությունում բանտի ունեցած դերի առավել ճիշտ ընկալումը:

90.2. Բանտային մարմինները պետք է խրախուսեն հանրության անդամներին՝ ըստ անհրաժեշտության բանտերում կամավորության հիմունքներով ծառայություններ մատուցելու հարցում:

Հետազոտություն և գնահատում

91. Բանտային մարմինները պետք է աջակցեն բանտի նպատակների, ժողովրդավարական հասարակությունում դրա զբաղեցրած դերի և իր նպատակներին ծառայելու աստիճանի վերաբերյալ հետազոտությունների և գնահատման ծրագրի իրականացմանը:

Մաս VI

Տեսչական ստուգումները և մոնիթորինգը

Պետական տեսչական ստուգումները

92. Բանտերը պետք է պետական համապատասխան գերատեսչության կողմից պարբերաբար տեսչական ստուգումների ենթարկվեն՝ ներպետական և միջազգային օրենսդրության պահանջներին և սույն կանոնների դրույթներին համապատասխան:

Անկախ մոնիթորինգը

93.1. Բանտարկյալների հանդեպ վերաբերմունքը և բանտարկության պայմանները պետք է մոնիթորինգի ենթարկվեն անկախ մարմնի կամ մարմինների կողմից, որոնց եզրակացությունները պետք է հրապարակվեն:

93.2. Անհրաժեշտ է խրախուսել նման անկախ մոնիթորինգի մարմնի կամ մարմինների համագործակցությունը միջազգային այնպիսի գործակալությունների հետ, որոնք իրավասու են բանտեր այցելել:

Մաս VII

Չդատապարտված բանտարկյալները

Չդատապարտված բանտարկյալների կարգավիճակը

94.1. Սույն կանոնների իմաստով՝ չդատապարտված բանտարկյալներն այն բանտարկյալներն են, ովքեր դատական մարմնի կողմից կալանավորվել են՝ նախքան դատավարությունը, դատապարտումը կամ պատժի կատարումը:

94.2. Պետությունը կարող է դատապարտված կամ պատժի ենթարկված բանտարկյալներին համարել որպես չդատապարտվածներ, եթե վերջիններիս բողոքները վերջնական լուծում չեն ստացել:

Չդատապարտված բանտարկյալներին ցուցաբերվող մոտեցումը

95.1. Չդատապարտված բանտարկյալների նկատմամբ կիրառվող ռեժիմը որոշելիս չպետք է առաջնորդվել քրեական հանցագործություն կատարելու համար հետագայում դատապարտվելու հավանականությամբ:

95.2. Սույն մասում ներառված կանոնները լրացուցիչ երաշխիքներ են տրամադրում չդատապարտված բանտարկյալներին:

95.3. Չդատապարտված բանտարկյալների նկատմամբ իրենց գործողություններում բանտային մարմինները պետք է առաջնորդվեն բոլոր բանտարկյալների նկատմամբ կիրառելի կանոններով և չդատապարտված բանտարկյալներին թույլ տան մասնակցել սույն կանոններով սահմանված տարբեր միջոցառումներին:

Կացարանային ապահովումը

96. Չդատապարտված բանտարկյալներին պետք է հնարավորության սահմաններում առաջարկել տեղավորվել մենախցում, եթե չդատապարտված այլ բանտարկյալների հետ միասին միևնույն

կացարանում պահվելը չի բխում նրանց շահերից կամ եթե դատարանը հատուկ որոշում չի կայացրել այս կամ այն բանտարկյալի տեղավորման կապակցությամբ:

Հագուստը

97.1. Չդատապարտված բանտարկյալներին հարկավոր է թույլատրել կրել սեփական հագուստը, եթե այն հարմար է բանտում կրելու համար:

97.2. Սեփական հարմար հագուստը չունեցող չդատապարտված բանտարկյալներին հարկավոր է տրամադրել այնպիսի հագուստ, որը չպետք է լինի նույնը, ինչ դատապարտված բանտարկյալների համար նախատեսված համազգեստը:

Իրավական խորհրդատվությունը

98.1. Չդատապարտված բանտարկյալները պետք է մանրամասն տեղեկացվեն իրավական խորհրդատվություն ստանալու իրենց իրավունքի մասին:

98.2. Հարկավոր է տրամադրել անհրաժեշտ բոլոր հնարավորությունները, որոնք կօգնեն չդատապարտված բանտարկյալներին՝ իրենց պաշտպանությունը պատրաստելու և իրենց իրավական ներկայացուցիչներին հանդիպելու հարցերում:

Կայան արտաքին աշխարհի հետ

99. Եթե դատական մարմնի կողմից տվյալ դեպքի համար որոշակի ժամկետով հատուկ արգելանք դրված չէ՝ չդատապարտված բանտարկյալները՝

ա. կարող են տեսակցել և հաղորդակցվել ընտանիքի անդամների և այլ անձանց հետ՝ դատապարտված բանտարկյալների համար սահմանված կարգով.

բ. կարող են լրացուցիչ տեսակցություններ ունենալ և լրացուցիչ օգտվել հաղորդակցության այլ միջոցներից,

գ. կարող են օգտվել գրքերից, լրագրերից և լրատվական այլ միջոցներից:

Աշխատանքը

100.1. Չդատապարտված բանտարկյալներին կարելի է աշխատանք առաջարկել, սակայն չի կարելի պահանջել կատարել այդ աշխատանքը:

100.2. Եթե չդատապարտված բանտարկյալները որոշում են աշխատել, ապա թիվ 26 կանոնի բոլոր դրույթները կիրառելի են նրանց նկատմամբ, այդ թվում՝ աշխատավարձի մասով:

Դատապարտված բանտարկյալների համար սահմանված ռեժիմից օգտվելու հնարավորությունը

101. Եթե չդատապարտված բանտարկյալը խնդրում է, որպեսզի իր նկատմամբ կիրառվի դատապարտված բանտարկյալների համար նախատեսված ռեժիմը, բանտային մարմինները պետք է հնարավորության սահմաններում բավարարեն այդ խնդրանքը:

Մաս VIII

Դատապարտված բանտարկյալները

Դատապարտված բանտարկյալների համար սահմանված ռեժիմի նպատակը

102.1. Բոլոր բանտարկյալների նկատմամբ կիրառելի կանոններից բացի, դատապարտված բանտարկյալների համար սահմանված ռեժիմը պետք է նախատեսված լինի նրանց դեպի պատասխանատու և հանցավորությունից զերծ կյանք ուղղորդելու համար:

102.2. Բանտարկությունը, պայմանավորված ազատությունից զրկելու հանգամանքով, ինքնին պատիժ է, ուստի դատապարտված բանտարկյալների համար սահմանված ռեժիմը չպետք է է՛լ ավելի ծանրացնի բանտարկությանը բնորոշ տառապանքը:

Դատապարտված բանտարկյալների համար սահմանված ռեժիմի իրականացումը

103.1. Դատապարտված բանտարկյալների համար սահմանված ռեժիմը սկսվում է այն պահից, երբ անձը դատապարտված բանտարկյալի կարգավիճակով ընդունվում է բանտ (եթե այն ավել վաղ չի սկսվել):

103.2. Ընդունումից հետո հնարավորինս վաղ՝ հարկավոր է դատապարտված բանտարկյալների մասին հաշվետվություններ կազմել, որոնք կնկարագրեն նրանց անձնական իրադրությունը, նրանցից յուրաքանչյուրի մասով պատժի իրականացման առաջարկվող ծրագիրը և ազատմանը նախապատրաստելու ռազմավարությունը:

103.3. Հարկավոր է խրախուսել դատապարտված բանտարկյալների մասնակցությունը իրենց պատժի իրականացման ծրագրի մշակմանը:

103.4. Այդ ծրագրերը պետք է հնարավորության սահմաններում ներառեն.

ա. աշխատանքը,

բ. կրթությունը,

գ. այլ միջոցառումները,

դ. ազատման նախապատրաստումը:

103.5. Սոցիալական աշխատանքը, բժշկական և հոգեբանական խնամքը ևս կարող են ներառվել դատապարտված բանտարկյալների համար սահմանված ռեժիմում:

103.6. Որպես դատապարտված բանտարկյալների համար սահմանված ռեժիմի մի մաս՝ հարկավոր է ունենալ բանտից արձակումների համակարգ:

103.7. Բանտարկյալները սեփական համաձայնությամբ կարող են մասնակցել վերականգնողական արդարադատության ծրագրի և հարթել իրենց հանցագործությամբ պատճառված վնասը:

103.8. Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ցմահ ազատազրկման դատապարտվածների և տևական ժամկետով դատապարտված այլ բանտարկյալների համար պատժի իրականացման պատշաճ ծրագրեր և ռեժիմներ ապահովելուն:

Դատապարտված բանտարկյալների ազատազրկումը կազմակերպելու խնդիրները

104.1. Հնարավորության սահմաններում, ինչպես նաև՝ թիվ 17 կանոնի պահանջներին համապատասխան, բանտարկյալների հատուկ խմբերի նկատմամբ տարբեր ռեժիմների կիրառման նպատակով հարկավոր է օգտագործել առանձին բանտեր կամ բանտի առանձին մասնաշենքեր:

104.2. Անհրաժեշտ է ունենալ համապատասխան հաշվետվությունների վերանայումից, անձնակազմի համապատասխան անդամների միջև և համապատասխան բանտարկյալների հետ լիարժեք խորհրդակցությունից հետո պատժի իրականացման անհատական ծրագրերը պարբերաբար վերանայելու ընթացակարգեր, որոնց տվյալ բանտարկյալները պետք է հնարավորինս ներգրավվեն:

104.3. Այդ հաշվետվությունները պետք է ներառեն տվյալ բանտարկյալի համար պատասխանատու անձնակազմի զեկուցագրերը:

Դատապարտված բանտարկյալների աշխատանքը

105.1. Հարկավոր է ունենալ աշխատանքի համակարգված ծրագիր, որը պետք է նպաստի դատապարտված բանտարկյալների համար սահմանված ռեժիմի նպատակների իրականացմանը:

105.2. Կենսաթոշակային տարիքի չհասած դատապարտված բանտարկյալները կարող են ներգրավվել աշխատանքի, եթե բուժաշխատողի կարծիքով նրանց ֆիզիկական և հոգեկան առողջությունը թույլ է տալիս:

105.3. Եթե դատապարտված բանտարկյալները ներգրավվում են աշխատանքի, այդ աշխատանքի պայմանները պետք է համապատասխանեն դրսում՝ համայնքում կիրառվող ստանդարտներին:

105.4. Իրենց ծրագրված ռեժիմի շրջանակներում աշխատանքային ժամերին կրթական կամ այլ ծրագրերի մասնակցելիս դատապարտված բանտարկյալները պետք է վարձատրվեն այնպես, ինչպես վարձատրվում են աշխատելու դեպքում:

105.5. Դատապարտված բանտարկյալների դեպքում նրանց վարձատրության կամ խնայողությունների մի մասը կարող է դատարանի որոշմամբ կամ տվյալ բանտարկյալի համաձայնությամբ օգտագործվել վնասի հարթման նպատակներով:

Դատապարտված բանտարկյալների կրթությունը

106.1. Բանտարկյալների ընդհանուր կրթական մակարդակի բարձրացման և նրանց դեպի պատասխանատու և հանցավորությունից զերծ կյանք ուղղորդելու նպատակ հետապնդող կրթության, այդ թվում՝ հմտությունների ուսուցման համակարգված ծրագիրը պետք է բոլոր դատապարտված բանտարկյալների համար սահմանված ռեժիմի մի մասը կազմի:

106.2. Դատապարտված բոլոր բանտարկյալներին հարկավոր է խրախուսել կրթական և վերապատրաստման ծրագրերին մասնակցելու համար:

106.3. Դատապարտված բանտարկյալների համար նախատեսված կրթական ծրագրերը պետք է կազմվեն բանտում նրանց գտնվելու ողջ ժամանակահատվածի համար:

Դատապարտված բանտարկյալների ազատումը

107.1. Դատապարտված բանտարկյալները ազատվելուց բավականաչափ առաջ պետք է աջակցություն ստանան այնպիսի ընթացակարգերի ու հատուկ ծրագրերի միջոցով, որոնք նրանց թույլ կտան բանտային կյանքից անցում կատարել օրինապահ համայնքային կյանքի:

107.2. Երկարատև ազատազրկման դատապարտված բանտարկյալների պարագայում անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել ազատ հասարակությունում կյանքին նրանց աստիճանական վերադարձն ապահովելու ուղղությամբ:

107.3. Այդ նպատակին կարելի է հասնել բանտում ազատմանը նախապատրաստելու ծրագրեր իրականացնելու կամ արդյունավետ սոցիալական աջակցության հետ զուգակցված հսկողության ներքո մասնակի կամ պայմանական ազատելու միջոցով:

107.4. Բանտային մարմինները պետք է սերտ գործակցեն ազատված բանտարկյալներին վերահսկող և օժանդակող ծառայությունների և գերատեսչությունների հետ՝ դատապարտված բոլոր բանտարկյալներին համայնքում վերահաստատվելու, մասնավորապես՝ ընտանեկան կյանքի և աշխատանքի հնարավորություն ընձեռելու նպատակով:

107.5. Նման սոցիալական ծառայությունների կամ գերատեսչությունների ներկայացուցիչները պետք է բանտ այցելելու և բանտարկյալներին տեսակցելու բոլոր հնարավորություններն ունենան, ինչը նրանց թույլ կտա օժանդակել ազատմանը նախապատրաստվելու և ազատվելուց հետո խնամքի ծրագրերը կազմելու գործին:

Մաս IX

Կանոնների վերանայումը

108. Եվրոպական բանտային կանոնները պետք է պարբերաբար վերանայվեն:

Վերապահում¹ Սույն հանձնարականն ընդունելիս, ի կատարումն Փոխնախարարների հանդիպումների ընթացակարգային կանոնների 10.2գ հոդվածի, Դանիայի ներկայացուցիչը հիշատակեց սույն հանձնարարականի հավելվածի թիվ 43 կանոնի 2-րդ պարբերությանը համապատասխանելու կամ չհամապատասխանելու՝ իր կառավարության իրավունքը, քանզի գտնում էր, որ պատժախցում բանտարկյալին տեղավորելու դեպքում բուժաշխատողի կողմից ամեն օր այցելելու պահանջը լուրջ էթիկական մտահոգություններ է առաջ բերում՝ կապված անձնակազմի այդ անդամի՝ պատժախցում պահելը շարունակելու վերաբերյալ կարծիք հայտնելու պարտավորության պատշաճ իրականացման հետ: